ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1.

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի կարգավորման առարկան

Սույն օրենսգիրքը սահմանում է վարչական պատասխանատվության հիմնական սկզբունքները, վարչական իրավախախտումները (զանցանքները) և դրանց համար նախատեսվող վարչական տույժի տեսակները, վարչական տույժերի նշանակման ու կատարման կարգը, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կարգը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինները:

Հոդված 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը և նպատակները

1. Վարչական իրավախախտումները և դրանց համար պատասխանատվությունը սահմանվում են միայն սույն օրենսգրքով: Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների առանձին հատկանիշներ կարող են սահմանվել այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով,

սույն օրենսգրքով, ինչպես նաև դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի վրա տարածվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության նպատակներն են՝ վարչական իրավախախտումներից մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, մարդու արժանապատվությունը, իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը, սեփականությունը, շրջակա միջավայրը, կառավարման սահմանված կարգը, պետական և հասարակական կարգն ու անվտանգությունը պաշտպանելը, իրավախախտին ուղղելը, ինչպես նաև վարչական իրավախախտումների կանխումը:

Հոդված 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի գործողությունը տարածության մեջ և ըստ անձանց շրջանակի

1. Հայաստանի Հանրապետության տարածքում, անկախ վարչական իրավախախտման կատարման վայրից, անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

2. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս Հայաստանի Հանրապետության դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ Հայաստանի Հանրապետության տարբերանշանը կրող օդանավի կամ օդային այլ սարքի վրա վարչական իրավախախտում կատարած անձը, անկախ դրանց գտնվելու վայրից, ենթակա է վարչական պատասխանատվության սույն օրենսգրքին համապատասխան, եթե միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3. Միջազգային պայմանագրերի համաձայն անձեռնմխելիությունից օգտվող անձանց վարչական պատասխանատվության հարցը՝ նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում վարչական իրավախախտում կատարելու դեպքում, լուծվում է միջազգային պայմանագրերին համապատասխան:

4. Օտարերկրացիները կամ օտարերկրյա իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված վարչական իրավախախտումների համար

պատասխանատվության են ենթարկվում սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով, եթե միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

5. Սույն օրենսգրքի իմաստով օտարերկրացի է հանդիսանում «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված անձը:

Հոդված 4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի գործողությունը ժամանակի մեջ

1. Անձը ենթակա է վարչական պատասխանատվության վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործող օրենքին համապատասխան:

2. Վարչական իրավախախտում կատարելու ժամանակը կոնկրետ վարչական իրավախախտումը կատարելու պահն է, իսկ անգործության դեպքում, այն պահը, երբ պետք է համապատասխան գործողությունը կատարվեր, սակայն չի կատարվել անկախ հետևանքներն առաջանալու հանգամանքից:

3. Վարչական իրավախախտում կատարելու պահը տևող վարչական իրավախախտման դեպքում համարվում է վարչական իրավախախտումն այն կատարողի կողմից դադարեցնելու կամ այլ հանգամանքների ուժով դադարելու պահը, իսկ շարունակվող իրավախախտման դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահը:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացման ժամանակ գործող օրենքին համապատասխան:

5. Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող, ինչպես նաև անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը վարչական իրավախախտում կատարած անձի վրա, եթե անձի նկատմամբ նշանակված վարչական տույժը մինչև տվյալ օրենքի ուժի մեջ մտնելը չի կատարվել:

6. Վարչական իրավախախտման համար պատասխանատվություն սահմանող կամ այն խստացնող կամ անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

7. Վարչական իրավախախտումը վարչական զանցակցությամբ կատարելու դեպքում զանցակիցներից յուրաքանչյուրը ենթակա է վարչական պատասխանատվության իր կողմից կատարված արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով:

8. Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն պատասխանատվությունը մեղմացնող մասով:

ԳԼՈՒԽ 2.

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 5. Օրինականությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինները (այսուհետ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմին) պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի պահանջները:

2. Սույն օրենսգիրքը՝ նյութական իրավունքի մասով կիրառելիս օրենքի կամ իրավունքի անալոգիան, ի վնաս վարչական իրավախախտում կատարած անձի, արգելվում է:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնին արգելվում է վարչական տույժի տարբեր տեսակներ կամ չափեր նշանակել միատեսակ փաստական հանգամանքներում վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքներում վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ:

4. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը միևնույն փաստական հանգամանքներով միևնույն վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ նշանակել է որոշակի վարչական տույժի տեսակ կամ չափ, ապա հետագայում, այդպիսի վարչական իրավախախտում կատարվելու դեպքում, պարտավոր է նշանակել նույն վարչական տույժի տեսակը և չափը: Սույն սահմանափակումից վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը կարող է հրաժարվել միայն բավարար հիմնավորման դեպքում և, եթե հետագայում մտադիր է մշտապես նշանակել նոր վարչական տույժի տեսակն ու չափը:

Հոդված 6. Օրենքի առջև հավասարությունը

1. Վարչական իրավախախտում կատարած ֆիզիկական անձը ենթակա է վարչական պատասխանատվության անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

2. Վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձը ենթակա է վարչական պատասխանատվության անկախ գտնվելու վայրից, կազմակերպական-իրավական ձևից, հիմնադիրների (մասնակիցների) իրավական վիճակից կամ գտնվելու վայրից, իրականացվող գործունեության տեսակից, նպատակներից, խնդիրներից կամ այլ հանգամանքներից:

Հոդված 7. Անմեղության կանխավարկածը

1. Անձը համարվում է վարչական իրավախախտում չկատարած, քանի դեռ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ուժի մեջ մտած և անբողոքարկելի դարձած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշմամբ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով չի հաստատվել, որ նա կատարել է վարչական իրավախախտում:

2. Անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Վարչական իրավախախտում կատարելու փաստի առկայությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի թույլատրելի և վերաբերելի ապացույցների բավարար ամբողջությամբ: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ այն անձի, ում վերագրվում է վարչական իրավախախտման կատարումը:

Հոդված 8. Անձնական պատասխանատվությունը

1. Ֆիզիկական անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն իր կատարած վարչական իրավախախտման համար:

Հոդված 9. Համաչափությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինների կողմից նշանակվող վարչական տույժի տեսակները կամ չափերը և կիրառվող վարչական

հարկադրանքի օժանդակ միջոցները պետք է համապատասխանեն կատարված վարչական իրավախախտման բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, վարչական իրավախախտում կատարած անձին, պիտանի, անհրաժեշտ և չափավոր լինեն նրան ուղղելու ու նոր վարչական իրավախախտումները կանխելու համար:

2. Սույն օրենսգրքով սահմանվող վարչական տույժի տեսակներն ու չափերը պետք է համաչափ լինեն համապատասխան վարչական իրավախախտման վտանգավորության աստիճանին:

3. Իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող տույժի տեսակներն ու չափերը չպետք է հանգեցնեն այդ իրավաբանական անձի հարկադրված լուծարմանը:

Հոդված 10. Նույն արարքի համար կրկին վարչական պատասխանատվության ենթարկելու անթույլատրելիությունը

1. Անձը չի կարող կրկին ենթարկվել վարչական պատասխանատվության նույն արարքի համար: Նույն արարք չի համարվում այն վարչական իրավախախտումը, որի կրկին կատարման համար սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

2. Վարչական տույժ նշանակելու, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելը մերժելու մասին անբողոքարկելի դարձած որոշումների առկայության դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված նոր կամ նոր երևան եկած հանգամանքների դեպքում:

Հոդված 11. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնելիս այլ սկզբունքների կիրառելիությունը

Սույն օրենսգրքով սահմանված սկզբունքները սպառիչ չեն և չեն կարող արգելք լինել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինների կողմից այդ սկզբունքների վրա հիմնված կամ դրանցից բխող կամ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան այլ սկզբունքների կիրառման համար:

ԲԱԺԻՆ 2.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 3.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ

Հոդված 12. Վարչական իրավախախտման հասկացությունը և տեսակները

1. Վարչական իրավախախտում է ֆիզիկական անձի հակաիրավական, մեղավորությամբ կատարված արարքը կամ իրավաբանական անձի կողմից կատարված այն հակաիրավական արարքը, որի համար սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

2. Եթե սույն օրենսգրքով սահմանված իրավախախտումների համար քրեական օրենսդրությամբ նախատեսված է նաև քրեական պատասխանատվություն, ապա կիրառվում է քրեական պատասխանատվություն, իսկ վարչական պատասխանատվություն առաջանում է այդ իրավախախտումների միայն այն տեսակների համար, որոնք պատճառված վնասի չափի կամ այլ չափանիշներով չեն բովանդակում հանցագործության հատկանիշներ:

3. Շարունակվող վարչական իրավախախտումը միասնական դիտավորությամբ միավորված երկու և ավելի նույնական արարքների համակցությունն է:

4. Տևող վարչական իրավախախտումը արտահայտվում է անձի վրա օրենքով դրված վարչական իրավախախտման հանգեցնող որևէ պարտականության տևական, անընդհատ չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ:

5. Վարչական իրավախախտումը կարող է դրսևորվել գործողությամբ կամ անգործությամբ: Անգործությամբ կատարված վարչական իրավախախտումը պատասխանատվություն է առաջացնում, եթե անձի վրա իրավական ակտով դրված է եղել գործողություն կատարելու պարտականություն կամ այդ պարտականությունը բխել է նրա մասնագիտական պարտականություններից, ստանձնած պարտավորությունից, և եթե անձը տվյալ իրադրությունում կարող էր կատարել իր պարտականությունը:

6. Վարչական իրավախախտում է համարվում ավարտված վարչական իրավախախտումը, վարչական իրավախախտման փորձը, ինչպես նաև վարչական իրավախախտմանը զանցակցելը:

Հոդված 13. Վարչական իրավախախտման փորձը

1. Վարչական իրավախախտման փորձ է համարվում դիտավորությամբ կատարված այն արարքը, որն անմիջականորեն ուղղված է վարչական իրավախախտում կատարելուն, եթե այն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:

2. Վարչական իրավախախտման փորձի համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն սույն օրենսգրքի հատուկ մասով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

Հոդված 14. Վարչական իրավախախտումների համակցությունը

1. Վարչական իրավախախտումների համակցություն է համարվում սույն օրենսգրքի հատուկ մասի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով սահմանված երկու կամ ավելի վարչական իրավախախտում կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը վարչական պատասխանատվության ենթարկված չի եղել:

2. Վարչական իրավախախտումների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր վարչական իրավախախտման համար՝ սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով:

ԳԼՈՒԽ 4.
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հոդված 15. Վարչական պատասխանատվության սուբյեկտները

1. Վարչական պատասխանատվության ենթակա են ֆիզիկական և իրավաբանական անձինք:

2. Եթե սույն օրենսգրքի հատուկ մասում ուղղակիորեն նշված չէ պատասխանատվության ենթակա անձը (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), ապա վարչական պատասխանատվությունը կիրառելի է և ֆիզիկական, և իրավաբանական անձի նկատմամբ, բացառությամբ այն նորմերի, որոնք իրենց նշանակությամբ վերաբերում են և կիրառելի են միայն ֆիզիկական անձի նկատմամբ:

3. Եթե իրավաբանական անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության, ապա տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձը չի ազատվում վարչական պատասխանատվությունից, այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից չի ազատում իրավաբանական անձին:

Հոդված 16. Ֆիզիկական անձի վարչական պատասխանատվությունը

1. Վարչական պատասխանատվության ենթակա է այն մեղսունակ անձը, ում 16 տարին լրացել է սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումը կատարելու պահին:

2. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված տարիքի հասած, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ ղեկավարելու ունակություն չունեցող անձը ենթակա չէ պատասխանատվության:

3. Պաշտոնատար անձը ենթակա է վարչական պատասխանատվության այն վարչական իրավախախտման համար, որը կապված է օրենքով և այլ իրավական ակտով սահմանված կարգով դրված՝ իր պաշտոնեական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ:

4. Սույն օրենսգրքի իմաստով վարչական պատասխանատվության ենթակա պաշտոնատար անձ է հանդիսանում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը:

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների ծառայողները, զինծառայողները, ինչպես նաև զորահավաքների կանչված զինապարտները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, մաքսանենգության, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար սույն մասում նշված անձինք վարչական պատասխանատվություն են կրում սույն օրենսգրքով սահմանված կարգով: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, մաքսանենգության համար նշված անձանց նկատմամբ վարչական տուգանք չի կիրառվում, իսկ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար նշված անձանց նկատմամբ վարչական տուգանք չի կիրառվում, եթե վարչական իրավախախտումը կատարվել է ծառայողական տրանսպորտային միջոցներով: Սույն մասում նշված անձանցից բացի մյուս անձինք, որոնց վրա տարածվում է կարգապահական կանոնագրքերի կամ կարգապահության վերաբերյալ հատուկ կանոնադրությունների գործողությունը, դրանցով ուղղակիորեն նախատեսված

դեպքերում վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական, իսկ մնացած դեպքերում վարչական պատասխանատվություն՝ ընդհանուր հիմունքներով: Սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը կարող է վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

Հոդված 17. Իրավաբանական անձի վարչական պատասխանատվությունը

1. Իրավաբանական անձը ենթակա է վարչական պատասխանատվության, եթե վարչական իրավախախտումը կատարվել է ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի՝ այն ֆիզիկական անձի կողմից, որը՝

1) գործել է իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից, կամ տվյալ իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչն է կամ.

2) տվյալ իրավաբանական անձի ղեկավարն է, կամ.

3) տվյալ իրավաբանական անձի աշխատակիցն է կամ պաշտոնատար անձը, որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով կամ աշխատանքային պայմանագրով դրված են կոնկրետ պարտականություններ, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը:

2. Իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում վարչական պատասխանատվության ենթակա է իրավահաջորդ իրավաբանական անձը:

3. Օտարերկրյա իրավաբանական անձը (օտարերկրյա կազմակերպությունը, օտարերկրյա կամ միջազգային կազմակերպության Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը) Հայաստանի Հանրապետության տարածքում վարչական իրավախախտում կատարելու դեպքում վարչական պատասխանատվության են ենթարկվում ընդհանուր հիմունքներով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

4. Սույն օրենսգրքի իմաստով իրավաբանական անձ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված անձը, ինչպես նաև՝ իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը:

5. Սույն հոդվածը չի տարածվում Հայաստանի Հանրապետության, համայնքների և պետական հիմնարկների վրա:

6. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից վերահսկվող ֆինանսական խմբի կողմից վարչական իրավախախտում կատարելիս վարչական պատասխանատվության է ենթարկվում Կենտրոնական բանկի որոշմամբ ֆինանսական խմբի կազմի մեջ մտնող իրավաբանական անձը կամ իրավաբանական անձինք:

7. Ի շահ կամ ի օգուտ (իրավաչափ կամ ոչ իրավաչափ) տվյալ իրավաբանական անձի կատարված է համարվում այն վարչական իրավախախտումը, որի նպատակն է գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը տվյալ իրավաբանական անձի համար, այդ թվում՝ եկամուտ ստանալը, եկամտի չափերն ավելացնելը, ծախսերից խուսափելը, ծախսերը նվազեցնելը, կատարված վարչական իրավախախտման արդյունքում օրենսդրությամբ սահմանված այլ պատասխանատվությունից ազատվելը կամ այլ իրավախախտում կատարելը թաքցնելը, գույքային իրավունքներ ձեռքբերելը կամ գույքային բնույթի պարտականություններից ազատվելը:

Հոդված 18. Զանցակցությունը և զանցակիցների տեսակները

1. Զանցակցություն է համարվում երկու կամ ավելի ֆիզիկական անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ վարչական իրավախախտմանը:

2. Կատարողի հետ մեկտեղ զանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը:

3. Կատարող է այն անձը, ով անմիջականորեն կատարել է վարչական իրավախախտումը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև վարչական իրավախախտումը կատարել է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր սույն օրենսգրքի համաձայն ենթակա չեն վարչական պատասխանատվության կամ վարչական իրավախախտումը կատարել են անզգուշությամբ:

4. Կազմակերպիչ է այն անձը, ով կազմակերպել կամ ղեկավարել է վարչական իրավախախտման կատարումը:

5. Դրդիչ է այն անձը, ով մեկ ուրիշ անձի դրդել է կատարելու վարչական իրավախախտում՝ համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ որևէ այլ եղանակով:

6. Օժանդակող է այն անձը, ով վարչական իրավախախտմանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել վարչական իրավախախտում կատարողին, վարչական իրավախախտման միջոցները կամ գործիքները, հետքերը կամ ապօրինի ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները:

7. Համակատարողները ենթակա են վարչական պատասխանատվության սույն օրենսգրքի հատուկ մասի նույն հոդվածով:

8. Կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը ենթակա են վարչական պատասխանատվության կատարված վարչական իրավախախտումը սահմանող հոդվածով՝ հղում կատարելով սույն հոդվածին, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք միաժամանակ եղել են վարչական իրավախախտման համակատարողներ:

9. Սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածում նշված վարչական իրավախախտման հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման կատարմանը, տվյալ վարչական իրավախախտման համար կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող:

10. Զանցակիցներ ենթակա են վարչական պատասխանատվության վարչական իրավախախտման միայն այն ծանրացնող հանգամանքների համար, որոնք գիտակցվել են նրանց կողմից:

11. Զանցակիցներին վարչական պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում վարչական իրավախախտմանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը:

Հոդված 19. Վարչական իրավախախտման հատուկ սուբյեկտը

1. Վարչական իրավախախտման հատուկ սուբյեկտը վարչական իրավախախտում կատարած այն անձն է, որը բացի վարչական իրավախախտման ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից օժտված է սույն օրենսգրքի հատուկ մասով սահմանված լրացուցիչ հատկանիշներով, որոնք հիմք են տալիս նրան ենթարկելու վարչական պատասխանատվության սույն օրենսգրքի հատուկ մասով սահմանված համապատասխան վարչական իրավախախտման համար:

2. Անձը ենթակա չէ վարչական պատասխանատվության հատուկ սուբյեկտով վարչական իրավախախտման համար, եթե անձը՝

1) ոչ իրավաչափ է հատուկ սուբյեկտի կարգավիճակ ստացել և կատարել է հատուկ սուբյեկտով վարչական իրավախախտում, կամ.

2) հատուկ սուբյեկտի հատկանիշներով օժտված է եղել նախքան վարչական իրավախախտման կատարումը, սակայն վարչական իրավախախտում կատարելու պահին այդ հատկանիշները բացակայել են:

ԳԼՈՒԽ 5.
ՄԵՂՔԸ

Հոդված 20. Մեղքը

1. Վարչական պատասխանատվության ենթակա է այն անձը, ով սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումը կատարել է մեղավորությամբ, բացառությամբ իրավաբանական անձի:

2. Վարչական իրավախախտումը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը, այսինքն՝ որ այն հակասում է օրենսդրության պահանջներին կամ, թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել:

3. Վարչական իրավախախտումը կարող է կատարվել դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

4. Սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտում կատարած անձն արարքի հակաիրավականությունը չգիտակցելու հիմքով ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ նրա անունից հանդես եկող անձը կամ պաշտոնատար անձը գրավոր ձևով սխալ տեղեկություն են տվել կամ սխալ են մեկնաբանել իրավական նորմը կամ իրավական ակտը պատշաճ կարգով չի տրամադրվել իրեն կամ այլ օբյեկտիվ հանգամանքների ուժով անձը հնարավորություն չի ունեցել գիտակցելու իր արարքի հակաիրավականությունը:

Հոդված 21. Վարչական իրավախախտումը դիտավորությամբ կատարելը

1. Դիտավորությունը դրսևորվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

2. Վարչական իրավախախտումը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր արարքի զանցակազմի հատկանիշ հանդիսացող փաստական հանգամանքները և այդ արարքը կատարելը նրա նպատակն է:

3. Վարչական իրավախախտումը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր արարքի զանցակազմի հատկանիշ հանդիսացող փաստական հանգամանքները, և այդ արարքը կատարելը չի եղել նրա նպատակը:

4. Եթե վարչական իրավախախտման ավարտը կապված է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա վարչական իրավախախտումը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե այդ հետևանքները անձի նպատակն են եղել կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը:

5. Եթե վարչական իրավախախտման ավարտը կապված է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա վարչական իրավախախտումը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե զանցակազմի հատկանիշ համարվող հետևանքներն անձի նպատակը չեն եղել, սակայն նա նախատեսել է այդ հետևանքների առաջացման իրական հնարավորությունը:

6. Վարչական իրավախախտման՝ սույն օրենսգրքով սահմանված ծանրացնող հանգամանքները անձին վերագրվում են միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է այդ հանգամանքները:

7. Եթե դիտավորյալ վարչական իրավախախտման ծանրացնող հանգամանք է սահմանված անզգուշությամբ հանրորեն վտանգավոր հետևանքներ առաջացնելը, ապա այդ ծանրացնող հանգամանքն անձին վերագրվում է այն դեպքում, երբ առկա է այդ հետևանքների նկատմամբ անձի անզգուշությունը:

Հոդված 22. Վարչական իրավախախտումն անզգուշությամբ կատարելը

1. Անզգուշությունը դրսևորվում է ինքնավստահությամբ կամ անփութությամբ:

2. Վարչական իրավախախտումը համարվում է ինքնավստահությամբ կատարված, եթե անձը, գիտակցելով իր կողմից կատարվող արարքին նման արարքներից վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, առանց բավարար հիմքերի համոզված է լինում, որ տվյալ դեպքում դրանք կկանխվեն կամ չեն առաջանա:

3. Վարչական իրավախախտումը համարվում է անփութությամբ կատարված, եթե անձը չի նախատեսում իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել:

4. Անզգուշությամբ կատարված արարքը վարչական իրավախախտում է, եթե այն նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասում:

ԳԼՈՒԽ 6.
ԱՐԱՐՔԻ ՀԱԿԱՀԻՐԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 23. Արարքի հակահիրավականությունը և վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները

1. Արարքի հակահիրավականությունը և վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքներն են՝

1) անմեղսունակությունը.
2) անհրաժեշտ պաշտպանությունը.
3) ծայրահեղ անհրաժեշտությունը.
4) ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը.
5) անհաղթահարելի ուժը.
6) հիմնավորված ռիսկը.
7) հանձնարարականը կատարելը.
8) օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.
9) մասնագիտական գործառույթների իրականացումը:

Հոդված 24. Անմեղսունակություն

1. Անձն անմեղսունակ է, եթե վարչական իրավախախտում կատարելու պահին հոգեկան և վարքային խանգարումների հետևանքով չէր կարող գիտակցել իր արարքի հակահիրավականությունը կամ ղեկավարել այն:

2. Անմեղսունակության վիճակում վարչական իրավախախտում կատարած, ինչպես նաև վարչական իրավախախտումը կատարելուց հետո անմեղսունակ ճանաչված անձը ենթակա չէ վարչական պատասխանատվության:

3. Անձը ենթակա է վարչական պատասխանատվության այն դեպքում, երբ վարչական իրավախախտում կատարելու նպատակով ինքն է իրեն դնում անմեղսունակության վիճակում կամ գիտակցում է կամ պարտավոր էր գիտակցել վարչական իրավախախտման կատարման պահին իր մոտ անմեղսունակության վիճակի առկայության հնարավորությունը:

4. Մեղսունակ անձը, ով վարչական իրավախախտումը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր արարքի հակաիրավականությունը կամ ղեկավարել այն, համարվում է սահմանափակ մեղսունակ և ենթակա է պատասխանատվության:

5. Սահմանափակ մեղսունակությունը, որպես մեղմացնող հանգամանք, հաշվի է առնվում վարչական տույժ նշանակելիս:

Հոդված 25. Անհրաժեշտ պաշտպանությունը

1. Վարչական իրավախախտում չի համարվում այն արարքը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության շահերը հակաիրավական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

2. Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ հակաիրավական արարքից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից կամ պաշտոնեական դիրքից:

3. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում է համարվում դիտավորյալ այնպիսի արարք կատարելը, որը, պաշտպանվողի համար ակնհայտ, չի համապատասխանում հակաիրավական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

4. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված արարքը վարչական իրավախախտում է, եթե նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով:

Հոդված 26. Ծայրահեղ անհրաժեշտությունը

1. Վարչական իրավախախտում չի համարվում այն արարքը, որը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը

վերացնելու համար, եթե այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցում:

2. Ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցում է համարվում դիտավորությամբ այնպիսի արարք կատարելը, որն ակնհայտորեն չի համապատասխանում սպառնացող վտանգի բնույթին ու աստիճանին և սպառնացող վտանգը վերացնելու հանգամանքներին, եթե պատճառվել է կանխված վնասի համեմատությամբ հավասար կամ ավելի մեծ վնաս:

3. Ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցումը բացակայում է, եթե կանխված վնասի համեմատությամբ հավասար կամ ավելի մեծ վնաս է պատճառվել այն դեպքում, երբ անմիջական վտանգ է սպառնում անձի կամ նրա մերձավորի կյանքին կամ առողջությանը: Այս դրույթը չի վերաբերում այն անձանց, ում մասնագիտական պարտականությունների մեջ է մտնում այլ անձանց կյանքի, առողջության, իրավունքների, հասարակության կամ պետության շահերի պաշտպանությունը:

4. Ծայրահեղ անհրաժեշտության վիճակը բացակայում է, եթե վտանգը ստեղծվել է այն կանխող անձի կողմից կատարած արարքի հետևանքով: Այս դեպքում վտանգի կանխմանն ուղղված նրա ջանքերը հաշվի են առնվում որպես վարչական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

5. Եթե ծայրահեղ անհրաժեշտության վիճակում վնաս պատճառող անձին չի հաջողվում կանխել սպառնացող վտանգը, ապա վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության անզգուշությամբ վնաս պատճառելու համար, եթե նա կարող էր գիտակցել, որ իր կողմից ձեռնարկված միջոցները բավարար չեն վտանգը կանխելու համար:

Հոդված 27. Անհաղթահարելի ուժ, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք

1. Վարչական իրավախախտում չի համարվում անհաղթահարելի ուժի պայմաններում կատարված արարքը:

2. Վարչական իրավախախտում չի համարվում ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ կատարված արարքը, եթե դրա հետևանքով անձը չէր կարող գիտակցել կամ ղեկավարել իր արարքը:

3. Անձը չի կարող ազատվել վարչական պատասխանատվությունից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված հիմքերով, եթե վարչական իրավախախտում կատարելու նպատակով ինքն է ստեղծել անհաղթահարելի ուժ կամ մեկ ուրիշին դրդել է իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք իրականացնելու՝ հետագայում իր կողմից վարչական իրավախախտում կատարելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնելու համար:

Հոդված 28. Հիմնավորված ռիսկ

1. Վարչական իրավախախտում չի համարվում անձի, հասարակության կամ պետության համար օգտակար, իրավաչափ նպատակի հասնելու համար գործադրված հիմնավորված ռիսկի ժամանակ կատարված արարքը:

2. Ռիսկը համարվում է հիմնավորված, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակին չէր կարելի հասնել առանց ռիսկի դիմելու և ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել վնաս պատճառելը կանխելու համար:

3. Ռիսկը հիմնավորված չի համարվում, եթե դա ակնհայտորեն զուգորդված է եղել այլ անձի զոհվելու վտանգով, տեխնածին կամ բնական աղետի սպառնալիքով:

Հոդված 29. Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջները կատարելը

1. Վարչական իրավախախտում չի համարվում արարքի կատարումն այն անձի կողմից, ով դրանով կատարել է օրենքով կամ այլ իրավական ակտերով իր վրա դրված պարտականությունները կամ լիազորությունները, եթե պահպանվել են այդ պարտականությունները կատարելու կամ լիազորություններն իրականացնելու՝ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պայմանները:

Հոդված 30. Մասնագիտական գործառույթների իրականացումը

1. Վարչական իրավախախտում չի համարվում արարքի կատարումը՝ անձի օրինական մասնագիտական գործառույթներն իրականացնելիս:

2. Եթե անձի կողմից չեն պահպանվել օրինական մասնագիտական գործունեության սահմանված կանոնները, ապա կատարված վարչական իրավախախտման համար նա ենթակա է վարչական պատասխանատվության;

Հոդված 31. Հանձնարարական կատարելը

1. Վարչական իրավախախտում չի համարվում արարքի կատարումն այն անձի կողմից, ով գործել է ի կատարումն իր համար պարտադիր՝ սահմանված կարգով տրված հանձնարարականի: Այդ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն է կրում հանձնարարական տված անձը:

2. Եթե անձը գիտակցել է սույն հոդվածի 1-ին մասով տրված հանձնարարականի ոչ իրավաչափ լինելը և կատարել է այն, ապա ենթակա է պատասխանատվության դիտավորյալ վարչական իրավախախտման համար:

3. Ակնհայտ ապօրինի հանձնարարական չկատարելը բացառում է վարչական պատասխանատվությունը:

Հոդված 32. Վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերը

1.Վարչական պատասխանատվությունից վարչական իրավախախտում կատարած անձին ազատելու հիմքերն են՝

1) գործուն զղջալը.
2) իրադրության փոփոխությունը.
3) վաղեմության ժամկետն անցնելը.
4) նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտում կատարելը.
5) մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված լինելը:

Հոդված 33. Վարչական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու հիմքով

1.Առաջին անգամ վարչական իրավախախտում կատարած անձը կարող է ազատվել վարչական պատասխանատվությունից, եթե նա կամովին աջակցել է վարչական իրավախախտումը բացահայտելուն և հատուցել կամ այլ կերպ հարթել է վարչական իրավախախտմամբ պատճառված վնասը:

Հոդված 34. Վարչական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխության հիմքով

1.Վարչական իրավախախտում կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե իրադրության փոփոխության հետևանքով այդ անձը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց:

Հոդված 35. Վարչական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով

1. Վարչական իրավախախտում կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե անցել են սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

2. Զանցակցությամբ վարչական իրավախախտում կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե կատարողի կողմից վարչական իրավախախտումն ավարտված համարելուն հաջորդող օրվանից անցել է սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը:

Հոդված 36. Վարչական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտման դեպքում

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտման կատարման դեպքում կարող է վարչական իրավախախտում կատարած անձին ազատել վարչական պատասխանատվությունից՝ բավարարվելով զգուշացմամբ՝ հաշվի առնելով վարչական իրավախախտման բնույթն ու վարչական իրավախախտում կատարողի անձը:

2. Վարչական իրավախախտումը համարվում է նվազ նշանակություն ունեցող, երբ տվյալ վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով որպես վարչական տույժ կարող է նշանակվել նախազգուշացում, կամ տուգանք, որի համար սահմանված առավելագույն չափը չի գերազանցում տաս հազար դրամը:

Հոդված 37. Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը

1. Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձն ազատվում է այն վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից, որը կատարել է հարկադրաբար՝ իր նկատմամբ իրականացված մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում:

ԲԱԺԻՆ 3.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԸ, ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՕԺԱՆԴԱԿ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 7.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 38. Վարչական տույժի հասկացությունը և նպատակները

1. Վարչական տույժը վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակված վարչական պատասխանատվության միջոց է:

2. Վարչական տույժը կիրառվում է անձին ուղղելու և նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով:

Հոդված 39. Վարչական տույժի տեսակները

1. Վարչական տույժի տեսակներն են՝

1) նախազգուշացումը.

2) վարչական տուգանքը.

3) հանրօգուտ աշխատանքը.

4) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավումը.

5) լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցում.

6) լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցում.

7) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկումը.

8) հատուկ իրավունքից զրկումը.

9) իրավաբանական անձի գործունեության դադարեցումը:

2. Ֆիզիկական անձի նկատմամբ կարող են նշանակվել սույն հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերում նշված վարչական տույժերը:

3. Իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել սույն հոդվածի 1-ին մասի 1-2-րդ, 4-6-րդ և 9-րդ կետերում նշված վարչական տույժերը:

Հոդված 40. Հիմնական և լրացուցիչ վարչական տույժեր

1. Սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 9-րդ կետերում նշված վարչական տույժերը կարող են նշանակվել միայն որպես հիմնական վարչական տույժ:

2. Սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված վարչական տույժը կարող է նշանակվել միայն որպես լրացուցիչ վարչական տույժ:

3. Սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 5-8-րդ կետերում նշված վարչական տույժերը կարող են նշանակվել ինչպես հիմնական, այնպես էլ որպես լրացուցիչ վարչական տույժ:

4. Սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված տույժի տեսակն այլընտրանքային տույժի տեսակ է:

5. Մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել միայն մեկ հիմնական վարչական տույժ՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի:

6. Սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների դեպքում հիմնական տույժի հետ միասին կարող է նշանակվել մեկ կամ մի քանի լրացուցիչ վարչական տույժ:

Հոդված 41. Նախազգուշացումը

1. Նախազգուշացումը վարչական իրավախախտում կրկնելու անթույլատրելիության մասին պաշտոնական զգուշացում է: 2. Նախազգուշացումը տրվում է գրավոր:

3. Սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների համար նշանակված նախազգուշացմամբ տրվում է նաև թույլ տված խախտումը Կենտրոնական բանկի սահմանած ժամկետում վերացնելու և (կամ) հետագայում այդպիսի խախտումը չկրկնելու և (կամ) հետագայում այդպիսի խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ (իրավիճակի շտկման նպատակով վերահսկողական միջոցառումներ՝ ինչպիսիք են հանդիպումը, նամակագրությունը, բացատրական աշխատանքները) ձեռնարկելու հանձնարարական: Այդ հանձնարարականով կարող են նախատեսվել նաև իրավախախտում կատարած անձանց կողմից կնքվող որոշակի գործարքների և (կամ) գործառնությունների դադարեցում և (կամ) դրանց պայմանների փոփոխություն և (կամ)

նրանց գործունեությունն օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանեցնելու վերաբերյալ անհրաժեշտ այլ միջոցառումների իրականացման ցուցումներ:

Հոդված 42. Վարչական տուգանքը

1. Վարչական տուգանքը (այսուհետ՝ տուգանք) դրամական տուժանք է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ դրամ) ու նշանակվում է սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և չափերով: Սույն օրենսգրքի հատուկ մասով սահմանված դեպքերում տուգանքը կարող է սահմանվել նաև այլ չափանիշներով:

2. Տուգանքը նշանակվում է՝ հաշվի առնելով վարչական իրավախախտում կատարած անձի գույքային դրությունը:

3. Վարչական իրավախախտում կատարելու պահին նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող տուգանքի չափերը չեն փոխկապակցվում գույքային դրության հետ:

4. Անչափահասի նկատմամբ տուգանքը նշանակվում է ինքնուրույն եկամտի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է բռնագանձում տարածվել:

5. Սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների որոշ տեսակների համար տուգանքի չափը սահմանում է Կենտրոնական բանկը, եթե դա ուղղակիորեն նախատեսված է սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված համապատասխան հոդվածով: Տուգանքի չափը սահմանելիս Կենտրոնական բանկը հաշվի է առնում՝

1) իրավախախտման բնույթը, դիտավորության առկայությունը կամ անզգուշությունը.

2) իրավախախտմամբ այլ անձանց հասցված վնասի առկայությունը և դրա չափը.

3) անհիմն հարստացման աստիճանը՝ հաշվի առնելով այլ անձանց տրված հատուցումները.

4) նախկինում նույն անձի կողմից նույն կամ որևէ այլ իրավախախտում թույլ տալը և դրա համար պատասխանատվության ենթարկվելը.

5) տվյալ իրավախախտման համար ստեղծված իրավիճակի շտկման նպատակով խախտումը բացառելուն ուղղված միջոցառումների իրականացման և (կամ) նախազգուշացում վարչական տույժի միջոցի կիրառման արդյունքում իրավախախտում

կատարած անձի կողմից չի անհրաժեշտ և արդյունավետ քայլեր խախտումների վերացման ուղղությամբ չիրականացնելը.

6) նույն և այլ անձանց կողմից նման իրավախախտումները հետագայում բացառելու անհրաժեշտության աստիճանը և այլն:

Հոդված 43. Հանրօգուտ աշխատանքները

1. Հանրօգուտ աշխատանքները վարչական իրավախախտում կատարած անձի կողմից ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում հանրության համար օգտակար բնույթ կրող, չվարձատրվող, մարդու արժանապատվությանը չնվաստացնող աշխատանքների կատարումն է իրավասու մարմնի կողմից որոշված վայրում:

2. Հանրօգուտ աշխատանքները նշանակվում են որպես տուգանքի այլընտրանք, եթե մինչև տուգանքը նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալը վարչական պատասխանատվության ենթարկված անձն այդ մասին գրավոր դիմում է ներկայացնում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

3. Հանրօգուտ աշխատանքները նշանակվում են առավելագույնը՝ մինչև չորս հարյուր ժամ ժամկետով՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հաշվարկման կանոններով: Հանրօգուտ աշխատանքների օրական ժամկետը չի կարող գերազանցել 8 ժամը:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը տուգանքը փոխարինում է հանրօգուտ աշխատանքներով՝ յուրաքանչյուր ժամի հաշվարկի հիմքում դնելով օրենսդրությամբ ընդունված նվազագույն աշխատավարձի չափից բխող մեկ ժամվա համար նախատեսված վճարի չափը: Եթե մեկ վարչական իրավախախտման համար նշանակված տուգանքը հանրօգուտ աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում հանրօգուտ աշխատանքների ժամկետը գերազանցում է չորս հարյուր ժամը, ապա նշանակվում է չորս հարյուր ժամ հանրօգուտ աշխատանքներ:

5. Հանրօգուտ աշխատանքները չեն նշանակվում վարչական տույժը նշանակելու օրվա դրությամբ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, հանրօգուտ աշխատանքները կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություն ունեցող անձանց, մինչև տասնութ տարեկան անչափահասների, կենսաթոշակային տարիքի հասած անձանց, հղի կանանց, իրենց խնամքի տակ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ:

6. Հանրօգուտ աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հանրօգուտ աշխատանքների չկրած մասը կատարողական մարմնի գրավոր ծանուցման հիման վրա

փոխարինում է տուգանքով՝ սույն օրենսգրքի 155–րդ հոդվածով սահմանված կարգով և չափով:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումներն ի հայտ գալու դեպքում, ինչպես նաև հարգելի պատճառներով հանրօգուտ աշխատանքները կատարելու անհնարինության դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հանրօգուտ աշխատանքները կատարողական մարմնի գրավոր ծանուցման հիման վրա հանրօգուտ աշխատանքների չկրած մասը փոխարինում է տուգանքով՝ սույն օրենսգրքի 154–րդ հոդվածով սահմանված կարգով և չափով:

Հոդված 44. Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավում

1. Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավումը վարչական իրավախախտում կատարած անձին սեփականության իրավունքով պատկանող վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության կամ համայնքի:

2. Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի, բացառությամբ որսորդական ողորկափող հրացանի և փամփուշտների, բռնագրավում չի կարող կիրառվել, եթե դրանք տվյալ վարչական իրավախախտում կատարած անձի ապրուստի հիմնական միջոց են:

Հոդված 45. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը

1. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական կամ համայնքային կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ լիցենզիա կամ թույլտվություն չպահանջող որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է:

2. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես հիմնական տույժ սահմանվում է 6 ամսից մինչև երկու տարի ժամկետով, իսկ որպես լրացուցիչ տույժ՝ 3 ամսից մինչև մեկ տարի ժամկետով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ անձի կողմից կատարված վարչական իրավախախտումը պայմանավորված է նրա զբաղեցրած պաշտոնով կամ նրա կողմից որոշակի գործունեությամբ զբաղվելով, և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, ելնելով ապագայում նման վարչական իրավախախտումները կանխելու անհրաժեշտությունից, հնարավոր չի համարում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու նրա իրավունքը:

4. Սույն հոդվածով սահմանված վարչական տույժ նշանակելիս կարող է արգելվել միայն այն գործունեությունը, որի իրականացման արդյունքում կատարվել է վարչական իրավախախտումը: Վարչական տույժ նշանակելու մասին որոշմամբ պետք է հստակ սահմանվի՝ կոնկրետ որ գործունեությունն է արգելվում:

Հոդված 46. Լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցումը

1. Լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցումը օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով լիցենզավորված կամ թույլտվություն ստացած անձին լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով կամ թույլտվությամբ վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

2. Սույն հոդվածով սահմանված վարչական տույժ նշանակելու որոշմամբ պետք է հստակ սահմանվեն կասեցվող գործողությունը կամ գործառույթը, կասեցման ժամկետները, որոնք չեն կարող գերազանցել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենսդրական ակտերով լիցենզավորման կամ թույլտվության գործողության կասեցման համար սահմանված ժամկետներին:

Հոդված 47. Լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցումը

1. Լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցումը օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով լիցենզավորված կամ թույլտվություն ստացած անձին լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով կամ թույլտվությամբ վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից զրկումն է:

2. Սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների համար նշանակված լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել ամբողջությամբ կամ՝ ըստ առանձին ծառայությունների տեսակների: Ըստ առանձին ծառայությունների

տեսակների՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում անձը զրկվում է տվյալ տեսակի ծառայություն մատուցելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են տվյալ ծառայության մատուցման կապակցությամբ նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, կամ միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը: Տվյալ վարչական տույժի նշանակումից առաջ Կենտրոնական բանկը կարող է որոշակի ժամկետ սահմանել վարչական իրավախախտումը կատարած անձի համար, որի ընթացքում վերջինս պարտավոր է վերացնել տվյալ վարչական տույժի նշանակման համար հիմք հանդիսացող խախտումները:

Հոդված 48. Հատուկ իրավունքից զրկումը

1. Հատուկ իրավունքից զրկումը անձին վարորդական իրավունքից կամ որսորդության իրավունքից ժամանակավոր զրկելն, ինչպես նաև որակավորման վկայականից զրկելն է:

2. Վարորդական իրավունքից կամ որսորդության իրավունքից զրկումը կարող է նշանակվել 15 օրից մինչև 2 տարի ժամկետով:

3. Որսորդության իրավունքից զրկում չի կարող նշանակվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

4. Վարորդական իրավունքից զրկում չի կարող նշանակվել այն անձի նկատմամբ, ով տրանսպորտային միջոցից օգտվում է հաշմանդամության վիճակից ելնելով, բացառությամբ ոչ սթափ վիճակում կատարված վարչական իրավախախտման:

5. Հատուկ իրավունքից վարորդը զրկվում է նաև սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված 25 տուգանային միավոր հավաքելու դեպքում:

Հոդված 49. Իրավաբանական անձի գործունեության դադարեցումը

1. Իրավաբանական անձի գործունեության դադարեցումը վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձի հարկադիր լուծարումն է:

2. Եթե սույն օրենսգրքի հատուկ մասի նորմերով սահմանված չէ իրավաբանական անձի գործունեության դադարեցում, ապա որպես լրացուցիչ վարչական տույժ այն կարող է նշանակվել այն դեպքում, երբ հիմնավորվում է, որ տվյալ իրավաբանական անձը ստեղծվել է վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ, եթե իր լիազորությունները չա-
րաշահում է վարչական իրավախախտումներ կատարելու համար, կամ վարչական իրավա-

խախտումների կատարումն իր գործունեության հիմնական մասն է կազմում և հիմնավորվում է մյուս վարչական տույժերի նշանակման անարդյունավետությունը:

3. Իրավաբանական անձի գործունեության դադարեցումը չի կարող նշանակվել այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց գործունեության դադարեցման առանձնահատկություններ են սահմանված այլ օրենքներով:

ԳԼՈՒԽ 8.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ

Հոդված 50. Վարչական տույժի նշանակումը

1. Վարչական տույժը նշանակվում է սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտման համար՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով և սահմաններում:

2. Վարչական տույժի տեսակը և չափը որոշվում է՝ հաշվի առնելով վարչական իրավախախտման՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, վարչական իրավախախտում կատարած անձին բնութագրող տվյալները:

3. Զանցակիցների նկատմամբ վարչական տույժ նշանակելիս հաշվի են առնվում վարչական իրավախախտմանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը:

4. Վարչական տույժի նշանակումը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականությունների կատարումից, որոնք չկատարելու համար նշանակվել է վարչական տույժը:

5. Անձի կողմից սույն օրենսգրքի նույն հոդվածով կամ հոդվածի նույն մասով երկու կամ ավելի վարչական իրավախախտում կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է դրանցից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին: Այդ դեպքում վերջնական տույժը որոշվում է նվազ խիստ տույժն ավելի խիստ տույժով կլանելու կամ նշանակված տույժերը լրիվ կամ մասնակի գումարելու միջոցով, այն հաշվով, որ այն չգերազանցի յուրաքանչյուր վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով սահմանված տուգանքի առավելագույն չափի տասնապատիկը:

6. Անձի կողմից սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով երկու կամ ավելի վարչական իրավախախտում կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է դրանցից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին:

7. Վարչական իրավախախտումների համակցության դեպքում հիմնական տույժին կարող է միացվել կատարված վարչական իրավախախտումներից ցանկացածի համար սահմանված լրացուցիչ տույժերից մեկը:

8. Անզգույշ վարչական իրավախախտման համար պետք է սահմանվեն և նշանակվեն առավել մեղմ վարչական տույժի տեսակներ և չափեր, քան դիտավորությամբ նույն վարչական իրավախախտումը կատարելու դեպքում:

9. Եթե առկա են վարչական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները և բացակայում են սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները, ապա նշանակվում է սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով սահմանված վարչական տույժի առավել մեղմ տեսակը կամ նվազագույն չափը կամ նվազագույն չափի մեկ երրորդից ոչ ավելի:

10. Եթե առկա են սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները և բացակայում են վարչական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ապա կարող է նշանակվել է սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով սահմանված վարչական տույժի առավել խիստ տեսակը, իսկ վարչական տույժի տեսակի չափը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով սահմանված վարչական տույժի տեսակի առավելագույն չափի երկու երրորդից:

11. Եթե բացակայում են վարչական պատասխանատվությունը ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքները, ապա չի կարող նշանակվել սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով սահմանված վարչական տույժի առավել խիստ տեսակը, կամ առավելագույն չափը:

12. Եթե առկա են վարչական պատասխանատվությունը ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքներ, ապա չի կարող նշանակվել սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով սահմանված վարչական տույժի առավել մեղմ կամ առավել խիստ տեսակը, կամ նվազագույն կամ առավելագույն չափը:

Հոդված 51. Վարչական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները

1. Վարչական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներն են՝

1) մեղայականով ներկայանալը կամ գործուն զղջալը և վարչական իրավախախտման բացահայտմանն աջակցելը.

2) վարչական իրավախախտումն առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելը,

3) վարչական իրավախախտման արդյունքում առաջացած վտանգավոր հետևանքները կանխելը, վերացնելը կամ վնասը հատուցելը.

4) վարչական իրավախախտում կատարելու կամ վարչական տույժ նշանակելու պահին հղի կամ իր խնամքի տակ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձի կողմից.

5) վարչական իրավախախտում կատարելը անչափահասի կողմից.

6) վարչական իրավախախտում կատարելը հոգեկան կամ ֆիզիկական հարկադրանքի կամ նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցության տակ.

7) վարչական իրավախախտում կատարելը հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության տակ կամ անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների ազդեցությամբ.

8) վարչական իրավախախտում կատարելը՝ արարքի հակաիրավականությունը կամ վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները խախտելով:

2. Վարչական տույժ նշանակելիս կարող են հաշվի առնվել նաև սույն հոդվածի 1-ին մասում չնշված վարչական պատասխանատվությունը մեղմացնող այլ հանգամանքներ:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքները չեն կարող համարվել մեղմացուցիչ հանգամանքներ, եթե սույն օրենսգրքի հատուկ մասի նորմերում դրանք սահմանված են որպես վարչական իրավախախտման հատկանիշներ:

Հոդված 52. Վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները

1. Վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներն են՝

1) վարչական իրավախախտման կատարումը շարունակելը՝ չենթարկվելով դրա դադարեցումը պահանջելու լիազորություն ունեցող իրավասու անձի պահանջներին.

2) վարչական իրավախախտումը կատարելուն կասկածյալի համար ակնհայտ հոգեկան խանգարումներ ունեցող կամ ոչ սթափ վիճակում գտնվող կամ վարչական պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած անձանց ներգրավելը.

3) վարչական իրավախախտում կատարելը մի խումբ անձանց կողմից.

4) վարչական իրավախախտում կատարելը՝ ռազմական կամ արտակարգ դրության, բնական կամ տեխնածին այլ աղետի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով.

5) վարչական իրավախախտում կատարելն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով.

6) վարչական իրավախախտում կատարելը հանցագործություն կամ մեկ այլ վարչական իրավախախտում թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով.

7) վարչական իրավախախտում կատարելը ակնհայտ հղի կնոջ, ակնհայտ անչափահասի, անօգնական կամ կասկածյալից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ:

8) վարչական իրավախախտումը ալկոհոլի, թմրամիջոցների կամ հոգեմետ այլ նյութերի ազդեցության տակ կատարելը.

9) վարչական իրավախախտումը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը:

2. Վարչական տույժ նշանակելիս չեն կարող հաշվի առնվել սույն հոդվածի 1-ին մասում չնշված վարչական պատասխանատվությունը ծանրացնող այլ հանգամանքներ:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքները չեն կարող համարվել ծանրացուցիչ հանգամանքներ, եթե սույն օրենսգրքի հատուկ մասի նորմերում դրանք սահմանված են որպես վարչական իրավախախտման հատկանիշներ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, վարչական իրավախախտման բնույթից ելնելով, կարող է ծանրացնող չհամարել:

Հոդված 53. Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը

1. Անձը վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել վարչական իրավախախտումն ավարտելուց ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների դեպքում՝ վարչական

իրավախախտումը հայտնաբերելու պահից ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում, իսկ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումը դատարան ներկայացնելու պահից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

2. Տևող վարչական իրավախախտման դեպքում վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը (այսուհետ՝ վաղեմության ժամկետ) հաշվարկվում է վարչական իրավախախտումն այն կատարողի կողմից կամ այլ հանգամանքների ուժով դադարեցնելու, իսկ շարունակվող վարչական իրավախախտման դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից:

3. Եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց օրենքին համապատասխան ստուգում, դիտարկում կամ որևէ այլ եղանակով ուսումնասիրություն կատարելու, ապա անձը վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել վարչական իրավախախտումը ստուգմամբ, դիտարկմամբ կամ որևէ այլ եղանակով ուսումնասիրությամբ բացահայտելու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

4. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կասեցման ընթացքում՝ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի վերսկսումը.

2) եթե վարչական իրավախախտում կատարած անձն ունի անձեռնմխելիության իրավունք՝ մինչև այդ անձին անձեռնմխելիության իրավունքից զրկելը կամ այդ իրավունքի դադարումը.

3) վարչական իրավախախտում կատարած անձը խուսափում է վարույթից՝ մինչև անձին ձերբակալելու կամ նրա ներկայանալու պահը: Տվյալ դեպքում անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել, եթե վարչական իրավախախտումն ավարտված համարելու օրվանից անցել է մեկ տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել իր կողմից կատարված նոր համասեռ վարչական իրավախախտմամբ:

5. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր համասեռ վարչական իրավախախտում:

6. Քրեական հետապնդման հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում, եթե տվյալ անձի արարքում առկա են վարչական իրավախախտման հատկանիշներ, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ կարող է հարուցվել

քրեական հետապնդման հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 9.
ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 54. Վարչական հարկադրանքի օժանդակ միջոցները և վարչաիրավական ներգործության միջոցները

1.Վարչական հարկադրանքի օժանդակ միջոցներն են՝

1) վարչական ձերբակալումը.

2) դաստիարակչական հսկողությունը.

3) գույքի արգելադրումը.

4) տրանսպորտային միջոց վարելուց հեռացնելը և (կամ) տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելը.

5) սթափության վիճակի ստուգումը:

2. Վարչական հարկադրանքի օժանդակ միջոցները կարող են կիրառվել այն անձի նկատմամբ, ում մեղսագրվում է վարչական իրավախախտումը:

3. Իրավաբանական անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վարչական հարկադրանքի օժանդակ միջոցը:

4. Վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքի բռնագրավվումը վարչաիրավական ներգործության միջոց է, որը կիրառվում է սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական իրավախախտում կատարելու դեպքում:

Հոդված 55. Վարչական ձերբակալում

1. Վարչական ձերբակալումը անձի ազատության իրավունքի՝ մինչև 3 ժամ տևողությամբ սահմանափակումն է՝ առանց դատարանի որոշման, որը կարող է զուգորդվել անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ, եթե օրենքով սահմանված այլ միջոցներով հնարավոր չէ ապահովել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված նպատակների կատարումը:

2. Վարչական ձերբակալում կարող է կիրառվել անձի կողմից վարչական իրավախախտման կատարումը կանխելու նպատակով, վարչական իրավախախտում կատարած անձի ինքնությունը պարզելու նպատակով, եթե այլ միջոցներով հնարավոր չէ պարզել անձի ինքնությունը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն

կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված 3 ժամից ավելի տևողությամբ ժամկետով, բայց ոչ ավել քան 48 ժամը, կարող են ձերբակալվել՝

1) ոչ սթափ վիճակում գտնվող անձինք՝ մինչև սթափվելը.

2) սահմանային կամ մաքսային ռեժիմը կամ պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտող անձինք՝ մինչև ինքնությունը պարզելը:

4. Վարչական ձերբակալման ժամկետը հաշվարկվում է անձին ազատությունից փաստացի զրկելու պահից:

5. Անձը չի կարող անազատության մեջ պահվել ավելին, քան այն նպատակի կատարումը, որի իրագործման ապահովման նպատակով անձը ձերբակալվել է, բայց ոչ ավելի քան սույն հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված ժամկետը:

6. Վարչական ձերբակալում կարող են իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ ոստիկանություն), սահմանապահ զորքերը, մաքսային մարմինները, պահպանվող օբյեկտի գտնվելու վայրի ռազմականացված պահպանության ավագ պաշտոնատար անձը՝ սույն օրենսգրքով իրենց իրավասությանը վերապահված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներով: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող այլ մարմինները ձերբակալման իրականացման համար կարող են դիմել ոստիկանությանը:

Հոդված 56. Ձերբակալման արձանագրությունը

1. Ձերբակալվածին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի վարչական շենք բերելուց անմիջապես հետո ձերբակալում իրականացրած պաշտոնատար անձը սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմում է ձերբակալման արձանագրություն:

2. Ձերբակալման արձանագրության մեջ նշվում են՝

1) ձերբակալվածի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, օրը, հաշվառման և փաստացի բնակության հասցեն,

2) ձերբակալվածին ազատությունից փաստացի զրկելու օրը, ժամը, որպեն, վայրը, պայմանները, սույն օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված վարչական իրավախախտման կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը,

3) ձերբակալում իրականացրած պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը,

4) ձերբակալման պահին կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին բերելուց հետո կատարված անձնական զննությամբ անձից

վերցված առարկաների և (կամ) փաստաթղթերի անվանումը և նկարագրությունը՝ առկայության դեպքում,

5) ձերբակալվածի մարմնի կամ հագուստի վրա տեսանելի վնասվածքները՝ առկայության դեպքում, ինչպես նաև նրա ֆիզիկական և հոգեկան առերևույթ վիճակը,

6) ձերբակալվածի հայտարարությունները, այդ թվում՝ սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի վերաբերյալ,

7) ձերբակալվածին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի վարչական շենք բերելու և արձանագրություն կազմելու օրը, ժամը և րոպեն:

3. Ձերբակալման արձանագրությունը ստորագրում են ձերբակալում իրականացրած պաշտոնատար անձը և ձերբակալվածը: Արձանագրությունը ձերբակալվածի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով: Ձերբակալման արձանագրության պատճենը ստորագրությամբ առձեռն հանձնվում է ձերբակալվածին: Եթե ձերբակալվածը հրաժարվում է ստանալ արձանագրության օրինակը, ապա այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ և ներկայացվում ձերբակալման որոշումը վերացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

4. Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կայացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին որոշում:

5. Ձերբակալում իրականացրած պաշտոնատար անձը ձերբակալման արձանագրությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 1 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին:

Հոդված 57. Ձերբակալվածի իրավունքները և պարտականությունները

1. Ձերբակալվածն իրավունք ունի՝

1) ազատությունից փաստացի զրկվելու պահին բանավոր, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին՝ նաև գրավոր, տեղեկացվել սույն հոդվածով սահմանված իր իրավունքների և պարտականությունների մասին.

2) իրեն հասկանալի լեզվով իմանալ իրեն ազատությունից զրկելու հիմքերի մասին, առարկություններ ներկայացնել դրանց վերաբերյալ.

3) պահպանել լռություն.

4) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.

5) հրավիրել պաշտպան, որը հանդես է գալիս, որպես ձերբակալվածի ներկայացուցիչ և իրականացնում օրենսդրությամբ վերապահված լիազորությունները.

6) անհրաժեշտության դեպքում ստանալ բժշկական օգնություն և սպասարկում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքներից ձերբակալված անձը կարող է օգտվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահից, եթե այդ իրավունքից ակնհայտորեն հնարավոր չէր օգտվել ազատությունից փաստացի զրկվելու պահից:

3. Ձերբակալվածը պարտավոր է ենթարկվել ձերբակալումն իրականացնող անձի և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի օրինական կարգադրություններին:

Հոդված 58. Ձերբակալում իրականացնող պաշտոնատար անձի պարտականությունները

1. Ձերբակալումն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է՝

1) ձերբակալվածին պարզաբանել նրա իրավունքները, պարտականությունները և նրան ազատությունից զրկելու հիմքերը, իսկ այդ մարմնի վարչական շենք բերելուց հետո՝ անհապաղ նրան տրամադրել իր իրավունքների և պարտականությունների ցանկը,

2) ձերբակալվածի համար ապահովել իր գտնվելու վայրի մասին իր նախընտրած անձի տեղեկացնելու և պաշտպան հրավիրելու համար հեռախոսազանգեր կատարելու կամ կապի մատչելի որևէ եղանակով իրազեկելու հնարավորություն,

3) ձերբակալվածի պահանջի դեպքում ապահովել նրա բժշկական օգնություն և սպասարկում ստանալը,

4) ապահովել թարգմանչի ներկայությունը, եթե ձերբակալվածը չի տիրապետում հայերենին:

2. Եթե անձը խուլ կամ համր է, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է թարգմանչի օգնությամբ ապահովել ձերբակալվածի՝ սույն հոդվածի 1-ին մասում սահմանված իրավունքները:

Հոդված 59. Ձերբակալվածին ազատելը

1. Ձերբակալվածը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի որոշմամբ պետք է ազատ արձակվի, եթե՝

1) վերացել է անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը.

2) անձն ազատությունից զրկվել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ.

3) չի հաստատվել առերևույթ վարչական իրավախախտում կատարելու առկայությունը.

4) լրացել է ձերբակալման սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը:

2. Ձերբակալվածին ազատ արձակելու մասին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի կամ դատախազի որոշման պատճենն անհապաղ հանձնվում է ազատված անձին: Որոշման մեջ նշվում են անձին ազատելու հիմքը և ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը):

3. Ձերբակալվածին ազատ արձակելու մասին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի որոշումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն անհապաղ ուղարկում է դատախազին:

Հոդված 60. Դաստիարակչական հսկողությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում անչափահաս կասկածյալի պատշաճ վարքագիծը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ծանուցմամբ նրա ներկայանալը և սույն օրենսգրքով նախատեսված այլ պարտականություններ կատարելն ապահովելու նպատակով նրա նկատմամբ հսկողությունը հանձնարարվում է անչափահասի ծնողներին, հոգաբարձուին կամ համապատասխան հիմնարկի վարչակազմին, որտեղ նա գտնվում է:

2. Անչափահաս կասկածյալի նկատմամբ որպես վարչական հարկադրանքի օժանդակ միջոց դաստիարակչական հսկողությունը կիրառելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողին, հոգաբարձուին, համապատասխան հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելով դրա պատճենը և բացատրելով դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար նախատեսված վարչական պատասխանատվության մասին, ինչի վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

3. Ծնողները, հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվել անչափահաս կասկածյալի նկատմամբ դաստիարակչական հսկողություն իրականացնելուց, որի վերաբերյալ նշում է կատարվում արձանագրությունում, իսկ հիմնավորումը կցվում է արձանագրությանը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում անչափահաս կասկածյալի հսկողությունը հանձնարարվում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին սույն հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 61. Գույքի արգելադրումը

1. Գույքի արգելադրումը (գույքի վրա արգելանք դնելը) կիրառվում է վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի,

ինչպես նաև վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքի բռնագրավումն ապահովելու համար:

2. Գույքը կարող է արգելադրվել, եթե առկա է հիմնավոր կասկած առ այն, որ այն կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել, ինչը կարող է հետագայում անհնարին դարձնել վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի, ինչպես նաև վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքի բռնագրավումը:

3. Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի, ինչպես նաև վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքի բռնագրավումն ապահովելու համար արգելադրում կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե առկա է հիմնավոր կասկած առ այն, որ արգելադրվող գույքը վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ է կամ ձեռք է բերվել վարչական իրավախախտման արդյունքում:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կարող է արգելադրել վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքը, ինչպես նաև կասկածյալին սեփականության իրավունքով պատկանող գույքը: Համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում արգելադրումը կիրառվում է կասկածյալի բաժնի վրա:

5. Արգելադրման ենթակա չէ այն գույքը, որի վրա օրենքի համաձայն չի կարող բռնագրավվել, բռնագանձվել կամ առգրավվել:

6. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը գույքն արգելադրելու մասին կայացնում է որոշում, որում նշվում են արգելադրման ենթակա գույքը, դրա սեփականատերը, գույքի գտնվելու վայրը, գույքի տեսակը և չափը, որոշման կայացման անհրաժեշտության հիմնավորումը:

7. Գույքն արգելադրելու մասին որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Գույքի արգելադրումը պահպանվում է մինչև վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման կատարումը, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ մինչև որոշման ուժի մեջ մտնելը: Այդ ժամկետը լրանալու պահից գույքն արգելադրելու մասին որոշումը կորցնում է իրավական ուժը: Գույքի արգելադրման ժամկետը կասեցվում է վարույթի կասեցման դեպքում:

9. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում գույքը արգելադրումից հանելու մասին, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են գույքի արգելադրումը վերացնելու անհրաժեշտության մասին:

Հոդված 62. Տրանսպորտային միջոց վարելուց հեռացնելը և տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կարող է հեռացնել տրանսպորտային միջոց վարող անձին տրանսպորտային միջոց վարելուց, ինչպես նաև տրանսպորտային միջոցը բերման ենթարկել հատուկ պահպանվող տարածք, եթե՝

1) առկա է հիմնավոր կասկած առ այն, որ տրանսպորտային միջոց վարող անձը ոչ սթափ վիճակում է,

2) տրանսպորտային միջոց վարող անձը չունի տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք կամ զրկված է այն վարելու իրավունքից կամ վարում է առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի.

3) տրանսպորտային միջոցը վարող անձը կատարել է սույն օրենսգրքի 447-րդ, 450-րդ հոդվածի 1-4-րդ, 6-րդ, 7-րդ, 453-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումները:

2. Տրանսպորտային միջոցի բերման ենթարկումը տրանսպորտային միջոցի օգտագործումը դադարեցնելու ժամանակավոր հարկադիր միջոց է, որը ներառում է վերջինիս տեղափոխումը հատուկ տարածք: Տրանսպորտային միջոցի տեղափոխումը հատուկ տարածք իրականացնում է իրավասու վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը անձամբ կամ մեկ այլ տրանսպորտային միջոցի օգնությամբ:

3. Տրանսպորտային միջոց վարելուց հեռացնելը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հատուկ պահպանվող տարածք տվյալ տրանսպորտային միջոցը բերման ենթարկելն իրականացվում է «Ճանապարհային երթևեկության անվտագության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Տրանսպորտային միջոց վարելուց հեռացնելու և (կամ) հատուկ պահպանվող տարածք տրանսպորտային միջոցը բերման ենթարկելու վերաբերյալ սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են այն կազմող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, արձանագրությունը կազմելու վայրը, օրը, ամիսը, տարին, կասկածյալի և տրանսպորտային միջոցի տվյալները, կասկածյալի կողմից ոչ սթափ

վիճակում լինելու դեպքում կասկած առաջացնող հանգամանքները, բերման ենթարկված տրանսպորտային միջոցի մեջ գտնվող իրերի ցուցակը:

5. Սույն հոդվածով սահմանված արձանագրությունը ստորագրում են արձանագրությունը կազմող պաշտոնատար անձը և կասկածյալը: Արձանագրությունը կասկածյալի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:Հատուկ պահպանվող տարածք տրանսպորտային միջոցը բերման ենթարկելու դեպքում արձանագրության պատճենը հանձնվում է նաև հատուկ տարածքում տրանսպորտային միջոցի պահպանման համար պատասխանատու անձին:

Հոդված 63. Սթափության վիճակի ստուգումը

1.Սթափության վիճակի ստուգումն իրականացվում է՝

1) սույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում.

2) երբ ոչ սթափ վիճակում իրավախախտում կատարելը կարող է գնահատվել որպես վարչական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք.

3) երբ ոչ սթափ վիճակում գտնվելը վարչական իրավախախտման հատկանիշ է:

2. Անձի սթափության վիճակի զննությունը անցկացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի ոչ սթափ վիճակում լինելու փաստի որոշումը կարող է իրականացվել օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական միջոցով կամ բժշկական փորձաքննությամբ: Անձի արյան մեջ մաքուր ալկոհոլի կամ արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակությամբ ոչ սթափ վիճակը որոշվում է օրենսդրությամբ սահմանված կարգով տրված բժշկական եզրակացությամբ:

4. Սթափության վիճակի զննության ենթարկելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են դա կազմող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, արձանագրությունը կազմելու վայրը, օրը, ամիսը, տարին, կասկածյալի կողմից ոչ սթափ վիճակում լինելու կասկած առաջացնող հանգամանքները: Արձանագրությունը ստորագրում են արձանագրությունը կազմող պաշտոնատար անձը և կասկածյալը: Արձանագրությունը կասկածյալի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Եթե անձը առանց հիմնավոր պատճառների հրաժարվում է ենթարկվել սթափության վիճակի զննության, ապա զննության ենթարկվելն իրականացվում է հարկադրաբար:

6. Սույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում կազմվում է տրանսպորտային միջոց վարելուց հեռացնելու և սթափության վիճակի զննության ենթարկելու միասնական արձանագրություն՝ ներառելով սույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով և սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

Հոդված 64. Վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքի բռնագրավվում

1. Վարչական իրավախախտման կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած, ստացված կամ ձեռքբերված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի վարչական իրավախախտման կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, բացառությամբ սույն օրենսգրքի 44-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը ենթակա է բռնագրավվման հօգուտ պետության՝ բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի և տուժողին վարչական իրավախախտմամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի:

2. Սույն հոդվածի իմաստով բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել վարչական իրավախախտում կատարելու նպատակներով, ինչպես նաև այն անձը, որը գույքն այլ անձից ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքը առաջացել, ստացվել կամ ձեռք է բերվել վարչական իրավախախտման ճանապարհով:

3. Սույն հոդվածի իմաստով գույք են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

4. Սույն օրենսգրքի 410-րդ հոդվածի 2-րդ մասով և 411-րդ հոդվածի 2-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների կատարման արդյունքում բռնագրավվում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ գների չհիմնավորված բարձրացման արդյունքում ստացված շահույթը (եկամուտը):

5. Վարչական իրավախախտմամբ ձեռքբերված սույն օրենսգրքով սահմանված կարգով արգելադրված գույքի բռնագրավման համար վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը դիմում է դատարան:

6. Վարչական իրավախախտմամբ ստացված գույքը տնօրինվում է օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 4.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ

ԳԼՈՒԽ 10.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Հոդված 65. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք

Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք են՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցները՝

ա. կասկածյալը՝ վարչական իրավախախտման կատարման մեջ կասկածվող անձ, ում վերագրվում է առերևույթ վարչական իրավախախտման կատարումը.

բ. տուժողը.

գ. կասկածյալի, տուժողի օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին օժանդակող անձինք՝ վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ:

3) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը:

Հոդված 66. Կասկածյալի իրավունքներն ու պարտականությունները

1. Կասկածյալն իրավունք ունի՝

1) իրեն հասկանալի լեզվով տեղեկանալ իրեն վերագրվող վարչական իրավախախտման մասին, վերագրվող արարքի փաստական կողմին և իրավաբանական որակմանը,

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում հանդես գալ ինքնուրույն, ներկայացուցչի միջոցով կամ նրա հետ միասին,

3) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու պահից իր ընտրությամբ ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն, պաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար միջոցներ չունենալու դեպքում՝ ունենալ պետական միջոցների հաշվին նշանակված պաշտպան,

4) տալ ցուցմունք կամ պահպանել լռություն, մինչև ցուցմունք տալը գրավոր տեղեկացվել իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու, այդ թվում՝ նյութեր չտրամադրելու իր իրավունքի մասին,

5) ներկայացնել ապացույցներ, միջնորդություններ, հայտնել բացարկներ,

6) ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նյութերին, դրանցից պատճեններ հանել և դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն,

7) առարկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ և պահանջել դրա վերաբերյալ իր դիտողությունները ներառել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արձանագրության մեջ,

8) ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կազմված արձանագրություններին և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության վերաբերյալ,

9) ելույթ ունենալ մայրենի լեզվով և անվճար օգտվել թարգմանչի ծառայություններից, եթե չի տիրապետում հայերենին,

10) բողոքարկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (անգործությունը) կամ որոշումները,

11) հետ վերցնել իր կամ իր պաշտպանի ներկայացրած բողոքը,

12) ստանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ապօրինի գործողությունների (անգործության) կամ որոշումների հետևանքով պատճառված վնասի հատուցումը,

13) հարցեր տալ իր վերաբերյալ ցուցմունք տված վկաներին և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մյուս մասնակիցներին,

14) օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

2. Կասկածյալը պարտավոր է՝

1) ներկայանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ծանուցմամբ,

2) օրենքով նախատեսված կարգով ենթարկվել անձնական զննության, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի մարմնի պաշտոնատար անձի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման,

3) ենթարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի այլ օրինական պահանջներին:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի մարմնի պաշտոնատար անձի պարտավոր է կասկածյալի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու պահից բացատրել նրա իրավունքներն ու պարտականությունները և ապահովել նրա՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

4. Կասկածյալին չի կարելի հարկադրել ցուցմունք տալ կամ որևէ կերպ աջակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

5. Կասկածյալ իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը:

6. Եթե կասկածյալը համաձայնվում է ցուցմունք տալ, ապա պարտավոր է տալ ճշմարտացի ցուցմունքներ:

7. Ցուցմունք տվող կասկածյալը նախազգուշացվում է սուտ ցուցմունք տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

8. Սույն օրենսգրքի իմաստով մերձավոր ազգականներ են համարվում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձինք:

Հոդված 67. Տուժողը

1. Տուժող է այն անձը, որին առերևույթ վարչական իրավախախտմամբ պատճառվել է կամ կարող էր պատճառվել ֆիզիկական, նյութական կամ բարոյական վնաս:

2. Տուժող ճանաչելու մասին որոշումը կայացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը:

3. Անձը կարող է դիմել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին՝ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում իրեն տուժող ճանաչելու միջնորդությամբ, որի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը 3-օրյա ժամկետում որոշում է կայացնում անձին տուժող ճանաչելու կամ միջնորդությունը մերժելու մասին:

4. Տուժողն իրավունք ունի՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում հանդես գալ ինքնուրույն, ներկայացուցչի միջոցով կամ նրա հետ միասին,

2) տալ ցուցմունքներ, մինչև ցուցմունք տալը գրավոր տեղեկացվել իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու, այդ թվում՝ նյութեր չտրամադրելու իր իրավունքի մասին,

3) ներկայացնել ապացույցներ, միջնորդություններ, հայտնել բացարկներ,

4) ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նյութերին, դրանցից պատճեններ հանել և դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն,

5) առարկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ և պահանջել դրա վերաբերյալ իր դիտողությունները ներառել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արձանագրության մեջ,

6) ելույթ ունենալ մայրենի լեզվով և անվճար օգտվել թարգմանչի ծառայություններից, եթե չի տիրապետում հայերենին,

7) ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կազմված արձանագրություններին և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության վերաբերյալ,

8) բողոքարկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (անգործությունը) և որոշումները,

9) օրենքով սահմանված կարգով ստանալ վարչական իրավախախտմամբ պատճառված վնասի փոխհատուցումը,

10) հետ վերցնել իր կամ իր լիազոր ներկայացուցչի ներկայացրած բողոքը,

11) ստանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում,

12) հետ ստանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցված և իրեն պատկանող գույքը և փաստաթղթերի բնօրինակները,

13) օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

5. Տուժողը պարտավոր է՝

1) ներկայանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ծանուցմամբ,

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջով տալ ճշմարտացի ցուցմունքներ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի,

3) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջով ներկայացնել իր մոտ եղած վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցները, բացառությամբ 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի,

4) ենթարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի այլ օրինական պահանջներին:

6. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է տուժողին բացատրել նրա իրավունքներն ու պարտականությունները:

7. Տուժողի մահվան դեպքում նրա իրավունքներն ու պարտականություններն սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է նրա ժառանգը (իրավահաջորդը) կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին տուժող ճանաչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրած մահացածի մերձավոր ազգականը: Միջնորդություն չներկայացնելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը տուժող է ճանաչում մահացածի մերձավոր ազգականներից որևէ մեկին՝ վերջինիս համաձայնությամբ:

8. Տուժողն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է այդ իրավունքների և պարտականությունների բնույթին: Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

9. Տուժող իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականություններն սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը:

10. Ցուցմունք տվող տուժողը նախազգուշացվում է սուտ ցուցմունք տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

Հոդված 68. Ֆիզիկական անձի օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները

1. Օրինական ներկայացուցիչներ են համարվում ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում ներկայացնում են համապատասխան անչափահաս կամ անգործունակ կասկածյալի, տուժողի կամ վկայի օրինական շահերը:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն իր որոշմամբ թույլատրում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, որպես համապատասխան տուժողի կամ կասկածյալի օրինական ներկայացուցիչներ մասնակցել նրանցից յուրաքանչյուրի ծնողներից, որդեգրողներից, խնամակալներից կամ հոգաբարձուներից մեկին, որի թեկնածությունն իր համաձայնության առկայության դեպքում պաշտպանում են մյուս բոլոր օրինական ներկայացուցիչները: Հակառակ դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, որպես օրինական ներկայացուցիչ մասնակցող անձին, ընտրում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը տուժողի կամ կասկածյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմնի իրավասու աշխատակցին:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին անչափահաս կասկածյալի օրինական ներկայացուցչի մասնակցությունը համարել պարտադիր:

4. Օրինական ներկայացուցիչն իրականացնում է կասկածյալի կամ տուժողի սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անխզելիորեն կապված են նրանց անձի հետ, և կրում են սույն օրենսգրքով նրանց համար նախատեսված պարտականությունները:

5. Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի նաև՝

1) ծանուցվել ներկայացվող անձին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին հրավիրելու մասին և ուղեկցել նրան.

2) մասնակցել ներկայացվող անձի մասնակցությամբ կատարվող վարութային այլ գործողություններին:

6. Վկայի օրինական ներկայացուցիչը, սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքներից բացի, իրավունք ունի նաև՝

1) հարուցել միջնորդություններ.

2) առարկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ և պահանջել դրա վերաբերյալ իր դիտողությունները ներառել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արձանագրության մեջ.

3) ծանոթանալ վկայի ցուցմունքների գրառումներին, դրանց լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք ներառվում են արձանագրության մեջ:

7. Օրինական ներկայացուցիչը իրավունք չունի կատարելու ներկայացվողի շահերին հակասող որևէ գործողություն:

8. Կասկածյալի, տուժողի կամ վկայի ներկայացուցիչներ են հանդիսանում այն անձինք, որոնք կասկածյալի, տուժողի կամ վկայի կողմից լիազորված են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում ներկայացնելու նրանց օրինական շահերը:

9. Ներկայացուցչին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում թույլատրվում է մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման կամ անձի ձերբակալման պահից:

10. Ներկայացուցիչը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացնում է կասկածյալի, տուժողի կամ վկայի համար սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները, բացառությամբ վերջիններիս անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների, և կրում է սույն օրենսգրքով նրանց համար նախատեսված պարտականությունները: Ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու ներկայացվողի շահերին հակասող որևէ գործողություն:

11. Որպես տուժողի ներկայացուցիչ կարող է մասնակցել փաստաբանը կամ տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից տրված լիազորագիր ունեցող այլ անձ: Որպես վկայի ներկայացուցիչ կարող է մասնակցել փաստաբանը:

Հոդված 69. Իրավաբանական անձանց ներկայացուցիչները

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրավաբանական անձանց իրավունքները ու օրինական շահերը իրականացնում և պաշտպանում են դրանց ներկայացուցիչները:

2. Իրավաբանական անձի ներկայացուցիչ է հանդիսանում օրենքի կամ լիազորագրի կամ կանոնադրության ուժով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրավաբանական անձի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձը:

3. Իրավաբանական անձի ներկայացուցիչը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնին ներկայացնում է իր պաշտոնեական կարգավիճակը կամ լիազորությունները հավաստող փաստաթղթեր:

4. Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա գործադիր մարմնի ղեկավարի կամ կանոնադրությամբ իրավաբանական անձն առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձի ստորագրությամբ:

5. Իրավաբանական անձի ներկայացուցիչներն իրականացնում են կասկածյալի կամ տուժողի՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և պարտականությունները:

6. Ներկայացուցիչն իրավունք չունի կատարելու իրավաբանական անձին շահերին հակասող որևէ գործողություն:

Հոդված 70. Վկան

1. Վկա կարող է լինել յուրաքանչյուր ֆիզիկական անձ, որին կարող է հայտնի լինել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում պարզելու ենթակա որևէ փաստական հանգամանք:

2. Որպես վկա չեն կարող հանդես գալ՝

1) անձինք, որոնք առողջական վիճակի հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու կամ վերարտադրելու պարզման ենթակա հանգամանքները.

2) պաշտպանը և փաստաբանները՝ այն հանգամանքների մասին, որոնք նրանց կարող են հայտնի լինել իրավաբանական օգնություն մատուցելու հետ կապված.

3) անձը, ում տվյալ վարույթին վերաբերող տեղեկությունները հայտնի են դարձել որպես տուժողի ներկայացուցիչ, վկայի ներկայացուցիչ մասնակցելու կապակցությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս համաձայն են ցուցմունք տալ.

4) ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ խոստովանության ժամանակ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին.

5) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս համաձայն է ցուցմունք տալ՝ ի օգուտ կասկածյալի:

3. Վկան իրավունք ունի՝

1) իմանալ, վարչական իրավախախտման վերաբերյալ ինչ վարույթով է հանդես գալիս որպես վկա,

2) հրաժարվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց, այդ թվում՝ նյութեր տրամադրելուց,

3) անձամբ շարադրել իր ցուցմունքները, ցուցմունքներ տալիս վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ օգտվել փաստաթղթերից և իր գրավոր նշումներից,

4) ծանոթանալ իր ցուցմունքների գրառումներին, դրանց լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք ներառվում են արձանագրության մեջ,

5) առարկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ և պահանջել դրա վերաբերյալ իր դիտողությունները ներառել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արձանագրության մեջ,

6) ստանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում,

7) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմին ներկայանալ ներկայացուցչի հետ,

8) հետ ստանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից իրենից վերցված առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը,

9) օգտվել թարգմանչի ծառայությունից:

4. Վկան պարտավոր է՝

1) տալ ճշմարտացի ցուցմունքներ,

2) ներկայանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով՝ ծանուցագրում նշված օրը և ժամին,

3) ենթարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի այլ օրինական պահանջներին:

5. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է վկային բացատրել նրա իրավունքներն ու պարտականությունները:

6. Վկան նախազգուշացվում է սուտ ցուցմունք տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

Հոդված 71. Փորձագետը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կարող է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների միջնորդությամբ կամ իր

նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել մասնագիտացված փորձագիտական հաստատությանը կամ փորձագետին:

2. Փորձագետը (փորձագիտական հաստատությունը) իրավունք ունի՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնից եզրակացություն տալու համար պահանջել անհրաժեշտ նմուշներ և այլ նյութեր,

2) ծանոթանալ եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ,

3) մասնակցել վարութային գործողություններին, որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար,

4) ստանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում,

5) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված վարույթային գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ իր հաղորդած տեղեկությունների կամ գործողությունների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված ներկայացնել դիտողություններ:

3. Փորձագետը պարտավոր է՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր հատուկ որակավորումը հաստատող փաստաթղթերը,

2) իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ տալ հիմնավորված և օբյեկտիվ եզրակացություն,

3) հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե առաջադրված հարցերը դուրս են գալիս իր հատուկ գիտելիքների շրջանակներից կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար,

4) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի օրինական պահանջով ներկայացնել փորձաքննության կատարման ծախսերի նախահաշիվ և կատարած ծախսերի մասին հաշվետվություն,

5) ներկայանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ծանուցմամբ՝ եզրակացության բովանդակությունը պարզաբանելու համար,

6) տեղեկություններ հայտնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց հետ իր հարաբերությունների մասին,

7) առանց վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները,

8) ենթարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի օրինական այլ պահանջներին:

4. Փորձագետը նախազգուշացվում է կեղծ եզրակացություն տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

Հոդված 72. Թարգմանիչը

1. Թարգմանիչը նշանակվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից, եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձը չի տիրապետում հայերենին:

2. Թարգմանիչը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթով չշահագրգռված այն անձն է, որին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն իրականացնելու համար: Թարգմանիչ է համարվում նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:

3. Թարգմանիչը պետք է պատշաճ տիրապետի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը: Վարույթին մասնակցող այլ անձինք իրավունք չունեն թարգմանիչ լինել:

4. Թարգմանիչն իրավունք ունի՝

1) թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց,

2) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված թարգմանության գրառումներին, դրանց լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են համապատասխան արձանագրության մեջ,

3) ստանալ համապատասխան վարձատրություն և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

5. Թարգմանիչը պարտավոր է՝

1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ծանուցմամբ,

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանչի՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը,

3) տեղեկություններ հայտնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց հետ իր հարաբերությունների մասին,

4) թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին,

5) առանց վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները,

6) ենթարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի այլ օրինական պահանջներին,

7) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ վարութային գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև վարույթի մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

6. Թարգմանիչը նախազգուշացվում է սխալ թարգմանության համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

Հոդված 73. Պաշտպանի մասնակցության հիմքերը և պայմանները, պարտադիր մասնակցությունը

1. Փաստաբանը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին որպես պաշտպան մասնակցում է՝

1) կասկածյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի հրավերով, ինչպես նաև այլ անձանց հրավերով՝ կասկածյալի հետագա գրավոր համաձայնությամբ.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գրավոր պահանջի հիման վրա:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է պաշտպան նշանակել ՝

1) եթե սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում պաշտպանի մասնակցությունը վարույթին պարտադիր է՝ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված պարտադիր դարձնող համապատասխան հիմքն ի հայտ գալուց անմիջապես հետո, իսկ կասկածյալը պաշտպան չունի.

2) կասկածյալի միջնորդությամբ, երբ կասկածյալի չունի բավարար միջոցներ պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում պաշտպանի նշանակում նախաձեռնելուց առաջ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին առաջարկել նրա ընտրությամբ հրավիրել պաշտպան:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որպես պաշտպան հրավիրելու համար երաշխավորել որևէ փաստաբանի:

5. Պաշտպանության ստանձնումը հաստատելու համար պաշտպանը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է՝

1) անձը հաստատող փաստաթուղթ,

2) փաստաբան լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը,

3) իր լիազորությունները հաստատող և սույն օրենսգրքով պաշտպան հրավիրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ վավերացված փաստաթուղթը կամ պաշտպան նշանակելու մասին իրավասու մարմնի որոշումը:

6. Պաշտպանը վարչական իրավախախտման վերաբերյալ նույն վարույթի ընթացքում կարող է իրականացնել մի քանի կասկածյալների պաշտպանությունը, եթե նրանց շահերի միջև հակասություն չկա:

7. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից կասկածյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

1) կասկածյալի համար դժվար է ինքնուրույն պաշտպանվել հոգեկան կամ ֆիզիկական ոչ լիարժեքության, ինչպես նաև բացահայտ մտավոր թերզարգացածության հետևանքով.

2) վարչական իրավախախտումը կատարելու պահին կասկածյալն անչափահաս է կամ ժամկետային զինծառայող.

3) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով կասկածյալը ճանաչվել է անգործունակ:

Հոդված 74. Պաշտպանի մասնակցության դադարեցումը

1. Պաշտպանը դադարում է մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, եթե՝

1) կասկածյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը դադարեցրել են հրավիրված պաշտպանի լիազորութ յունները.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, սույն հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով, ընդունել է կասկածյալի հրաժարումը պաշտպանից, բացառությամբ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի:

2. Պաշտպանից հրաժարվելն անձի հայտարարությունն է՝ առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության իր պաշտպանությունն իրականացնելու վերաբերյալ: Պաշտպանից հրաժարվելու մասին կազմվում է արձանագրություն:

3. Պաշտպանից հրաժարվելը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ անձի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և երբ նրան պարզաբանել են պաշտպան ունենալու նրա իրավունքը: Անձը պարտավոր չէ բացահայտել պաշտպանից հրաժարվելու պատճառները: Այն դեպքում, երբ պաշտպանից հրաժարվելը պայմանավորված է կասկածյալի անվճարունակությամբ, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, սույն օրենսգրքով նախատեսված կարգով անհապաղ պահանջում է պաշտպան նշանակել պետական միջոցների հաշվին:

4. Պաշտպանից հրաժարված կասկածյալն իրավունք ունի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ցանկացած փուլում փոխել պաշտպանից

հրաժարվելու վերաբերյալ իր դիրքորոշումը: Տվյալ դեպքում, նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը վերսկսելու համար: Նոր պաշտպան ունենալու անձի կամաարտահայտությունը պարտադիր չէ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի համար, եթե անձն ակնհայտորեն չարաշահում է պաշտպան ունենալու իր իրավունքը. այս դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից հրաժարվելը:

Հոդված 75. Պաշտպանի իրավունքները և պարտականությունները

1. Պաշտպանը, կասկածյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, ունի սույն օրենսգրքով կասկածյալի համար սահմանված իրավունքները, ինչպես նաև՝

1) իմանալ իր պաշտպանյալին վերագրվող վարչական իրավախախտման, արարքի փաստական կողմի և իրավաբանական որակման մասին,

2) մասնակցել պաշտպանյալից ցուցմունքներ վերցնելուն,

3) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տևողության սահմանափակման,

4) մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ցանկացած գործողությանը,

5) ձեռք բերել և ներկայացնել ապացույցներ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար,

6) համաձայնության դեպքում հարցման ենթարկել ֆիզիկական անձանց,

7) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ նրանց համաձայնությամբ, ստանալ փաստաթղթեր կամ տեղեկություններ, եթե դրանք չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք,

8) հետ վերցնել իր ներկայացրած բողոքը՝ բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի,

9) իրականացնել սույն օրենսգրքով և այլ օրենքներով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2. Պաշտպանը իրավունք չունի՝

1) կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն.

2) հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ,

3) հրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու ընթացքում, եթե դրանք կարող են օգտագործվել պաշտպանյալի շահերի դեմ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

4) ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները որպես այդպիսին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

5) խոչընդոտել այլ պաշտպան հրավիրելուն, նշանակելուն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին վերջինիս մասնակցելուն,

6) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցելու իր լիազորությունները վերալիազորել այլ անձի:

3. Պաշտպանը պարտավոր է՝

1) անձի իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կանչով անձամբ,

2) ենթարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական կարգադրություններին,

3) պաշտպանությունը ստանձնելուց անմիջապես հետո այդ մասին տեղյակ պահել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին,

4) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցելուց իրեն ազատելու խնդրանքով դիմել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին, եթե դա չանելն անխուսափելիորեն կվնասի պաշտպանյալի իրավաչափ շահերին:

Հոդված 76. Բացարկը և ինքնաբացարկը, վարույթին մասնակցելուց հեռացնելը

1. Բացարկը կամ ինքնաբացարկը հայտարարվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա:

2. Բացարկը, ինքնաբացարկը կամ վարույթին մասնակցելուց ազատելու միջնորդությունը պետք է լինի փաստարկված: Նույն անձին նույն փաստարկմամբ բացարկ կարող է հայտնվել միայն մեկ անգամ:

3. Բացարկը կարող է հայտնվել մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն ավարտվելը՝ վարույթի այն փուլում, երբ բացարկ հայտնողին հայտնի է դառնում սույն օրենսգրքով սահմանված որևէ հիմքի առկայությունը:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, պաշտպանը, տուժողի ներկայացուցիչը, թարգմանիչը, փորձագետը, որոնց հայտնի են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին իրենց մասնակցությունը բացառող հանգամանքներ, պարտավոր են դրանց մասին հայտնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին, իսկ այն դեպքում, երբ նրանք կասկածում են իրենց մասնակցությամբ գործի պատշաճ քննության հնարավորությանը՝ հայտարարել ինքնաբացարկ:

5. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի իր իրավասության սահմաններում լուծել հայտնված բացարկների, ինքնաբացարկների հարցը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին համապատասխան անձի մասնակցությունը բացառող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ հեռացնել նրան վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցելուց:

6. Ինքնաբացարկի, բացարկի կամ վարույթին մասնակցելուց ազատելու վերաբերյալ կայացվում է որոշում, որի պատճենն ուղարկվում է տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց:

7. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի բացարկի, ինքնաբացարկի, նրա կողմից գործը քննելու, լուծելու անհնարինության հիմքերի և կարգի վրա տարածվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-26-րդ հոդվածները:

8. Պաշտպանը, տուժողի կամ վկայի ներկայացուցիչը չեն կարող մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կամ անձնական, ծառայողական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցում կամ մասնակցել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցել է որպես վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին, փորձագետ կամ վկա.

3) օրենքով կամ դատական ակտով իրավունք չունի լինելու պաշտպան կամ ներկայացուցիչ.

4) տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հետ կապված իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, ում շահերը հակասում են վստահորդի շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ, եթե վստահորդը չի առարկում:

9. Թարգմանիչը կամ փորձագետը չեն կարող մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, եթե՝

1) առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 24-26-րդ հոդվածներով սահմանված հանգամանքներից որևէ մեկը.

2) օրենքով կամ դատական ակտով իրավունք չունի լինելու թարգմանիչ, կամ փորձագետ.

3) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հետ գտնվում է ազգակցական, անձնական, ծառայողական կամ այլ կախվածության հարաբերությունների մեջ.

4) գտնվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակցից, նրա օրինական ներկայացուցչից կամ ներկայացուցչից ծառայողական կախվածության մեջ.

5) առկա են նրա ձեռնհասությունը կամ անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանքներ:

10. Որպես թարգմանիչ կամ փորձագետ՝ անձի նախորդ մասնակցությունը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, որպես այդպիսին նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ, բացառությամբ, եթե փորձագետի եզրակացության ճշտության վերաբերյալ ծագած կասկածի հիման վրա կատարվում է կրկնակի փորձաքննություն:

Հոդված 77. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում վարչական հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում հսկողություն իրականացնող դատախազը «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, ծանոթանում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի այն նյութերին, ստուգում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինների այն գործողությունների և որոշումների օրինականությունը, որոնք վերաբերում են անձին ազատությունից զրկելու վարչական հարկադրանքի օժանդակ միջոցներ կիրառելուն, ինչպես նաև բերման ենթարկելու վարույթային գործողությանը:

2. Դատախազը, խախտումներ հայտնաբերելու դեպքում, միջնորդում է վերանայելու կամ վերացնում է այդ որոշումները:

ԳԼՈՒԽ 11.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 78. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և իրականացնելու իրավասությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և (կամ) իրականացնելու իրավասությամբ օժտված են սույն օրենսգրքի հատուկ մասով սահմանված վարչական իրավախախտումների համապատասխան բնագավառներում օրենքների և իրավական այլ ակտերի պահանջների կամ պայմանների կատարման նկատմամբ օրենքով իրենց վերապահված տեսչական գործունեություն, հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ օրենքով սահմանված այլ իրավասու մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմինների կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և իրականացնելու իրավասությունը

սույն գլխով սահմանված ենթակայության կանոններին համապատասխան իրականացվում է նշված մարմինների կանոնադրություններով կամ այլ համապատասխան իրավական ակտերով նախատեսված պաշտոնատար անձանց կամ կառուցվածքային կամ այլ ստորաբաժանումների միջոցով, եթե դրանք նախատեսված չեն սույն օրենսգրքով:

Հոդված 79. Վարչական դատարանը

1. Վարչական դատարանը քննում է՝

1) սույն օրենսգրքի 348-րդ, 368-րդ, 553-րդ, 556-560-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող համապատասխան մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 562-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 372-րդ, 531-րդ, 539-րդ, 545-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

4) սույն օրենսգրքի 555-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 43-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայցադիմումով:

2. Սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ կամ 9-րդ կետերով սահմանված վարչական տույժ նշանակելու դեպքում սույն օրենսգրքի 80-84-րդ հոդվածներով նախատեսված ենթակայության կանոններին համապատասխան վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինը (պաշտոնատար անձը) համապատասխան հայցադիմում է ներկայացնում վարչական դատարան՝ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3. Վարչական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվող անձի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սույն օրենսգրքի 80-84-րդ հոդվածներով նախատեսված ենթակայության կանոններին համապատասխան մարմինը, որը սույն օրենսգրքի 109-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունքներով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով

սահմանված կարգով համապատասխան հայցադիմում է ներկայացնում վարչական դատարան:

Հոդված 80. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները

1. Սույն օրենսգրքի 195-րդ հոդվածով, 204-րդ, 211-րդ, 216-217-րդ հոդվածներով, 224-232-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, 234-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, 318-319-րդ հոդվածով, 320-րդ հոդվածով (բացառությամբ 4-րդ մասի) 321-րդ հոդվածի 1-ին մասով, 338-րդ հոդվածով, 339-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, 341-342-րդ հոդվածներով, 344-րդ հոդվածով, 349-րդ հոդվածով (բացառությամբ՝ 1-2-րդ, 4-5-րդ, 10-14-րդ, 16-րդ, 18-19-րդ, 20-22-րդ մասերով), 352-րդ հոդվածով, 409-րդ հոդվածի 12-րդ մասով, 427-րդ հոդվածով բացառությամբ 1-ին մասի, 429-430-րդ հոդվածով (արտաքին գովազդի մասով),, 470-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները:

2. Սույն օրենսգրքի 317-րդ հոդվածի 1-ին մասով, 318-րդ հոդվածներով, 320-րդ հոդվածի 4-րդ մասով, 321-րդ հոդվածի 2-րդ մասով, 339-րդ հոդվածի 4-րդ մասով, 340-րդ հոդվածի 2-րդ մասով, 381-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավարները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը:

Հոդված 81. Հանձնաժողովներ

1. Սույն օրենսգրքի 426-րդ հոդվածով, 427-րդ հոդվածով բացառությամբ 2-րդ մասի (հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում), 429-430-րդ հոդվածով (հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում), 568-570-րդ հոդվածներով (հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում) սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը:

2. Սույն օրենսգրքի 250-253-րդ հոդվածներով (ջրային համակարգի մասով), 424-425-րդ հոդվածներով, 461-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

3. Սույն օրենսգրքի 36-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը:

4. Սույն օրենսգրքի 541-544-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

5. Սույն օրենսգրքի 526-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը:

Հոդված 82. Հայաստանի Հանրապետության նախարարությունների ենթակա մարմինները

1. Սույն օրենսգրքի 359-րդ հոդվածով, 532-րդ հոդվածով, 554-րդ հոդվածով, 561-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մարմինները:

2. Սույն օրենսգրքի 44-րդ գլխով սահմանված, ինչպես նաև 446-րդ հոդվածով, 453-454-րդ հոդվածներով, 455-րդ հոդվածի 1-ին մասով (Հայաստանի Հանրապետության զինված ուժերի տրանսպորտային միջոցների զինծառայող վարորդների և վարժական հավաքների կանչված զինապարտ վարորդների կողմից կատարված), սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մարմինները:

3. Սույն օրենսգրքի 177-188-րդ հոդվածներով, 515-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարմինները;

4. Սույն օրենսգրքի 350-րդ հոդվածի 5-րդ մասով, 431-440-րդ հոդվածներով, 458-րդ հոդվածով, 460-րդ հոդվածով, 472-րդ հոդվածի 1-ին մասով, 473-րդ հոդվածով (երկաթուղային տրանսպորտի մասով), 475-րդ հոդվածով, 477-րդ հոդվածի 2-րդ 1-ին մասով, 478-489-րդ հոդվածներով , 491-509-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության մարմինները:

5. Սույն օրենսգրքի 349-րդ հոդվածի 16-րդ, 18-19-րդ, 21-րդ մասերով, 350-րդ հոդվածի 1-4-րդ մասերով, 361-րդ հոդվածով, 374-րդ հոդվածով, 513-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մարմինները:

6. Սույն օրենսգրքի 191-րդ հոդվածով, 193-195-րդ հոդվածով, 349-րդ հոդվածի 14-րդ մասով, 551-րդ հոդվածի 3-4-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների

վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մարմինները:

7. Սույն օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով, 237-242-րդ հոդվածներով, 243-րդ հոդվածի 2-րդ մասով, 244-245-րդ հոդվածներով, 246-րդ հոդվածով (բացառությամբ 3-րդ մասի), 247-248-րդ հոդվածներով, 263-րդ հոդվածով (ստորերկրյա հանքային ջրերի մասով), 421-423-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության մարմինները:

8. Սույն օրենսգրքի 35-րդ գլխով (բացառությամբ 409-րդ հոդվածի 12-րդ մասի), 369-րդ հոդվածով, 373-րդ հոդվածով, 375-377-րդ հոդվածներով, 533-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մարմինները:

9. Սույն օրենսգրքի 34-րդ գլխով, 317-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում մաքսային մարմինները: Սույն օրենսգրքի 32-րդ գլխով, 192-րդ հոդվածով, 349-րդ հոդվածի 11-րդ մասով, 354-358-րդ հոդվածներով, 365-367-րդ հոդվածներով, 370-371-րդ, 385-386-րդ հոդվածներով, 428-րդ հոդվածով, 599-րդ հոդվածի 1-3-րդ մասերով (իր կողմից լիցենզավորած անձանց նկատմամբ) սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում հարկային մարմինները:

10. Սույն օրենսգրքի 196-199-րդ հոդվածներով, 202-203-րդ հոդվածներով, 205-210-րդ, 212-215-րդ, 249-259-րդ հոդվածներով (ջրային համակարգերի մասով՝ բացառությամբ սույն օրենսգրքի 250-253-րդ հոդվածների), 261-262-րդ հոդվածներով (ջրային համակարգերի մասով), 349-րդ հոդվածի 1-2-րդ, 4-5-րդ, 10-րդ, 12-13-րդ, 20-րդ, 22-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության մարմինները:

11. Սույն օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասով, 243-րդ հոդվածի 1-ին մասով, 246-րդ հոդվածի 3-րդ մասով, 351-րդ հոդվածով, 445-րդ հոդվածի 1-ին մասով, 525-րդ հոդվածով, 530-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մարմինները:

12. Սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով, 534-538-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության մարմինները:

13. Սույն օրենսգրքի 317-րդ հոդվածի 1-ին մասով, 322-337-րդ հոդվածներով, 339-րդ հոդվածի 1-ին մասով, 340-րդ հոդվածով (բացառությամբ 2-րդ մասի), 343-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության մարմինները:

14. Սույն օրենսգրքի 218-223-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածի 1-ին մասով, 234-րդ հոդվածի 1-ին մասով, 247-րդ հոդվածով, 249-259-րդ (ջրային ռեսուրսների մասով), 260-րդ հոդվածով, 261-262-րդ հոդվածներով (ջրային ռեսուրսների մասով), 263-314-րդ հոդվածներով, 341-343-րդ հոդվածներով, 552-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության մարմինները:

15. Սույն օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սանիտարական հսկողություն իրականացնող բժշկական ծառայությունները:

Հոդված 83. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինները

1. Սույն օրենսգրքի 189-րդ հոդվածով, 200-201-րդ հոդվածներով, 345-348-րդ հոդվածներով, 353-րդ հոդվածով, 446-457-րդ հոդվածներով, 459-րդ հոդվածով, 462-469-րդ հոդվածներով, 471-րդ, 472-րդ հոդվածի 2-րդ մասով, 473-րդ հոդվածով (բացառությամբ երկաթուղային և օդային տրանսպորտում կատարված վարչական իրավախախտումների), 474-րդ հոդվածով, 510-512-րդ հոդվածներով, 514-րդ հոդվածով, 516-524-րդ հոդվածներով, 529-րդ հոդվածներով, 540-րդ հոդվածով, 544-550-րդ հոդվածներով, 551-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում ոստիկանությունը:

2. Սույն օրենսգրքի 442-444-րդ հոդվածներով, 445-րդ հոդվածի 2-րդ մասով, 473-րդ հոդվածի 2-րդ մասով (օդային տրանսպորտի մասով), 476-րդ հոդվածով,477-րդ հոդվածի 2-րդ մասով, 490-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն:

3. Սույն օրենսգրքի 418-420-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն:

4. Սույն օրենսգրքի 235-րդ հոդվածով, 315-316-րդ հոդվածներով, 362-364-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

Հոդված 84. Այլ մարմինները

1. Սույն օրենսգրքի 360-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը:

2. Սույն օրենսգրքի 387-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում համապատասխան վերահսկող մարմինը, բացառությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կայացման, որը կայացնում է վերահսկող մարմնի ղեկավարը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան վերահսկող մարմնի բացակայության դեպքում՝ այդ հոդվածով, 388-րդ հոդվածով, ինչպես նաև 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ է հարուցում և իրականացնում Կենտրոնական բանկը:

4. Սույն օրենսգրքի 527-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում ստուգում իրականացնող պետական մարմինները:

5. Սույն օրենսգրքի 528-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ են հարուցում և իրականացնում համապատասխան վարչական վարույթ իրականացնող իրավասու վարչական մարմինը:

ԳԼՈՒԽ 12.

ԱՊԱՑՈՒՅՑԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ

Հոդված 85. Ապացույցի հասկացությունը և տեսակները

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում ապացույց է ցանկացած փաստական տվյալ, որի հիման վրա օրենքով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարզում է սույն օրենսգրքով սահմանված ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում ապացույցներ են՝

1) կասկածյալի ցուցմունքը.

2) տուժողի ցուցմունքը.

3) վկայի ցուցմունքը.

4) փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը.

6) իրեղեն ապացույցները.

7) վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում կազմված արձանագրությունները.

8) այլ փաստաթղթերը:

3. Օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքները վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում կարող են օգտագործվել որպես ապացույց, եթե համապատասխանում են սույն օրենսգրքով ապացույցներին ներկայացվող պահանջներին:

Հոդված 86. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը

1. Ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հանում է դրանք ապացույցների կազմից:

2. Ապացույցի ոչ վերաբերելի կամ անթույլատրելի լինելը հաստատում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը սեփական նախաձեռնությամբ կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակցի միջնորդությամբ:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, ներառյալ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների ներկայացրած ապացույցները, համարվում են թույլատրելի, քանի դեռ հակառակը չի հաստատվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից:

4. Օրենքի էական խախտմամբ ձեռք բերված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

5. Օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները կամ առարկաները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե առկա է դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները կամ հատկանիշները պարունակող հետքերը փոփոխած լինելու ողջամիտ կասկած, որը չի բացառվել:

6. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի թույլ տված՝ օրենքի պահանջների կամ սույն օրենսգրքով սահմանված սկզբունքների խախտմամբ ձեռքբերված տվյալները, կարող են կասկածյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջնորդությամբ օգտագործվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը կարող է օգտագործվել միայն ի շահ տվյալ կասկածյալի:

7. Որպես ապացույց չեն կարող օգտագործվել այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝

1) տվյալ վարույթն իրականացնելու իրավասություն չունեցող վարչական մարմնի կողմից.

2) բացարկման ենթակա անձի մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ ողջամտորեն պետք է իմանար վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին.

3) սույն օրենսգրքով նախատեսված ընթացակարգերի խախտմամբ, եթե հնարավոր չէ դրա հետևանքը վերացնել այլ վարույթային գործողության կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության պատշաճ կատարմամբ.

4) այն անձից, ով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները.

5) որոնց ձեռքբերման կամ օգտագործման շրջանակը սահմանափակված է օրենքով:

Հոդված 87. Ապացուցման ենթակա հանգամանքները

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա են հետևյալ հանգամանքները՝

1) վարչական իրավախախտման առկայությունը և այն կատարելու հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) վարչական իրավախախտում կատարած անձը բնութագրող հանգամանքները.

3) վարչական իրավախախտման՝ սույն օրենսգրքով նախատեսված հատկանիշները.

4) վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը.

5) վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքների առկայությունը.

6) վարչական պատասխանատվությունից ազատելու հանգամանքների առկայությունը.

7) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար անհրաժեշտ այլ հանգամանքներ:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում ապացուցված են համարվում՝

1) հանրահայտ փաստերը.

2) փաստը, որը անձին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ նորմատիվ ակտերով սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունների կապակցությամբ.

3) միևնույն կողմերի մասնակցությամբ քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը.

4) քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված որոշակի գործողությունների կատարման փաստը և դրանք կատարած անձինք:

3. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանցից մեկը վիճարկում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստերի հավաստիությունը, այն ապացուցելու պարտականությունը կրում է այն վիճարկող կողմը:

Հոդված 88. Կասկածյալի, տուժողի և վկայի ցուցմունքները

1. Կասկածյալի, տուժողի և վկայի ցուցմունքները ցուցմունք վերցնելու վարութային գործողության ընթացքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ բանավոր կամ գրավոր նրանց հաղորդած և սույն օրենսգրքով սահմանված պատշաճ կարգով արձանագրված տվյալներն են:

Հոդված 89. Փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը

1. Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն առաջադրած, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց փորձագետը հանգել է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համապատասխան նյութերը, առարկաները կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելով:

2. Փորձագետի ցուցմունքն իր եզրակացությունը ներկայացնելուց հետո այդ եզրակացության ճշգրտման կամ պարզաբանման նպատակով, ինչպես նաև իր լիազորությունների առնչությամբ վարութային գործողությունների կատարմանն աջակցելիս նրա ընկալած փաստերի վերաբերյալ սույն օրենսգրքով սահմանված կարգով գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

3. Փորձագետի ցուցմունքը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Հոդված 90. Իրեղեն ապացույցները

1. Իրեղեն ապացույցներ են ճանաչվում՝

1) այն առարկաները, որոնք առերևույթ վարչական իրավախախտման գործիք են ծառայել կամ իրենց վրա վարչական իրավախախտման հետքեր են պահպանել.

2) առերևույթ վարչական իրավախախտմամբ ձեռքբերված դրամը, արժեթղթերը, այլ արժեքները և այլ առարկաները.

3) այն առարկաները, որոնք առերևույթ վարչական իրավախախտման օբյեկտ են եղել,

4) այն առարկաները, այդ թվում՝ տեսագրությունը, ձայնագրությունը, լուսանկարը, որոնք կարող են ապացուցման ենթակա հանգամանքները բացահայտելու միջոցներ ծառայել:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված առարկաները վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան

արձանագրությամբ ճանաչվում են իրեղեն ապացույց և կցվում վարչական իրավախախտման վերաբերյալ գործին:

Հոդված 91. Իրեղեն ապացույցների պահպանումը և տնօրինումը

1. Իրեղեն ապացույցները պահվում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հետ, մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումների բողոքարկման ժամկետներն անցնելը, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի: Իրեղեն ապացույցների տնօրինման վերաբերյալ հարցը սույն հոդվածով սահմանված կարգով լուծվում է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումներով:

2. Շուտ փչացող ապրանքներ կամ արտադրանք հանդիսացող իրեղեն ապացույցները, որոնք դժվար է պահել, կամ որոնց պահելու ծախսերը ողջամտորեն արդարացված չեն, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերադարձվում են օրինական տիրապետողին: Օրինական տիրապետողին վերադարձնելու անհնարինության դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք հանձնվում են իրացման: Իրացման արդյունքում ստացված միջոցները փոխանցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի դեպոզիտային հաշվին՝ մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրեղեն ապացույցները փչացել կամ կորցրել են պիտանիությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ դրանք ոչնչացվում են, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

4. Եթե իրեղեն ապացույցը երկարատև պահելը կարող է վտանգավոր լինել մարդու կյանքի, առողջության կամ շրջակա միջավայրի համար, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հետազոտություններն անցկացնելուց այն հանձնվում է տեխնոլոգիական վերամշակման կամ ոչնչացվում է: Իրեղեն ապացույցի տեխնոլոգիական վերամշակման կամ ոչնչացման մասին կազմվում է արձանագրություն:

5. Եթե իրեղեն ապացույցը մեծածավալության, մեծաքանակության կամ այլ պատճառներով չի կարող պահվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հետ

կամ դրա պահպանման ծախսերը ողջամտորեն արդարացված չեն, ապա այդ ապացույցը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝

1) վերադարձվում է օրինական տիրապետողին, եթե դա չի կարող վնասել պատշաճ ապացուցմանը կամ եթե դրա չվերադարձնելը վնաս կպատճառի օրինական տիրապետողի կամ այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին.

2) լուսանկարահանվում կամ տեսանկարահանվում է, հնարավորության դեպքում նաև կնքվում է, և պահվում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ սահմանված վայրում, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ գործին կցվում է այդ իրեղեն ապացույցի գտնվելու վայրի մասին փաստաթուղթ.

3) օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է իրացման, որից ստացած միջոցները փոխանցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի դեպոզիտային հաշվին՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

6. Իրեղեն ապացույց հանդիսացող դրամը, արժեթղթերը կամ այլ արժեքները ՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերադարձվում են օրինական տիրապետողին, եթե դա չի կարող վնասել պատշաճ ապացուցմանը կամ եթե անհատական հատկանիշներն ապացուցման համար նշանակություն չունեն.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ պահպանման են հանձնվում բանկին կամ այլ վարկային կազմակերպությանը,

3) պահվում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հետ, եթե անհատական հատկանիշներն ապացուցման համար նշանակություն ունեն:

7. Սույն հոդվածով սահմանված իրեղեն ապացույցը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հետ պահպանելու անհնարինության դեպքերում գործին հնարավորության դեպքում կցվում է տվյալ իրեղեն ապացույցի նմուշը:

8. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործին կցված իրեղեն ապացույցի նկատմամբ իրավունքի մասին վեճը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով, ապա տվյալ առարկան պահվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հետ մինչև քաղաքացիական գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

9. Իրեղեն ապացույցների տնօրինման հարցը լուծվում է հետևյալ կանոններով՝

1) վարչական իրավախախտում կատարած անձին պատկանող վարչական իրավախախտման գործիքները բռնագրավվում են կամ հանձնվում են համապատասխան հաստատություն կամ ոչնչացվում են, իսկ անզգույշ վարչական իրավախախտման դեպքում՝ կարող են վերադարձվել սեփականատիրոջը.

2) շրջանառությունից հանված առարկաները հանձնվում են համապատասխան հաստատություն կամ ոչնչացվում են.

3) արժեք չներկայացնող առարկաները շահագրգիռ անձի միջնորդությամբ տրվում են նրան, իսկ միջնորդության բացակայության դեպքում՝ ոչնչացվում.

4) վարչական իրավախախտմամբ ձեռքբերված դրամը, այլ արժեքները և գույքը, ինչպես նաև դրանցից ստացված եկամուտները վերադարձվում են սեփականատիրոջը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

5) փաստաթղթերը պահվում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործում, իսկ շահագրգիռ անձի միջնորդությամբ տրվում են այդ անձին.

6) մյուս առարկաները հանձնվում են սեփականատիրոջը, իսկ եթե սեփականատերը պարզ չէ, ապա դարձվում են պետության սեփականություն.

7) սույն օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված գույքը ենթակա է բռնագրավման՝ բացառությամբ սույն մասի 4-րդ կետով նախատեսված դեպքերի:

Հոդված 92. Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում կազմվող արձանագրությունները

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում կազմվող արձանագրություններն են՝ սույն օրենսգրքով նախատեսված գրավոր կազմված փաստաթղթերը, որոնք արտացոլում են վարութային գործողությունների կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության կատարման ընթացքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները, այդ թվում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ հաղորդում ընդունելու արձանագրությունը:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն ինքնին ապացույց չէ, բացառությամբ սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված արագացված դատաքննություն կիրառելու դեպքերի:

Հոդված 93. Այլ փաստաթղթերը

1. Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում կամ պատկեր, որը պարունակում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների մասին տվյալներ:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված փաստաթուղթը պարունակում է սույն օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանված հատկանիշներ, ապա այն ճանաչվում է որպես իրեղեն ապացույց:

Հոդված 94. Փաստաթղթերի պահպանումը

1. Փաստաթուղթը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից կցվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործին և պահվում գործի հետ:

2. Այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործին կցված փաստաթղթերն օրինական տիրապետողին անհրաժեշտ են, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի նրան ժամանակավոր տրամադրում է այդ փաստաթղթերը կամ թույլատրում է դրանք պատճենահանել:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ գործում առկա փաստաթղթերի բնօրինակները, դրանց օրինական տիրապետողների խնդրանքով, վերադարձվում են նրանց: Այդ դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործում պահվում է փաստաթղթի պատճենը, որի ճշտությունը հաստատում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը:

Հոդված 95. Ապացուցումը

1. Ապացուցումը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով:

3. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցությամբ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լուծման համար բավարարության տեսանկյունից:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն ապացույցները գնահատում է դրանց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ:

5. Ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից չպետք է որևէ ապացույցի մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տրվի՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ԳԼՈՒԽ 13.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 96. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթներն են՝

1) առերևույթ վարչական իրավախախտման մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումները.

2) առերևույթ վարչական իրավախախտման մասին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ դրանց պաշտոնատար անձանց հաղորդումները.

3) վարչական իրավախախտման փաստի հայտնաբերումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս, այդ թվում՝ հատուկ տեխնիկական միջոցների օգնությամբ:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առիթների առկայության դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

3. Զանգվածային լրատվության միջոցներով առերևույթ վարչական իրավախախտման մասին հրապարակված տեղեկությունները կարող են վարչական

իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի համար վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթ հանդիսանալ:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվում է՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն տեղում կազմելու պահից.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու պահից.

3) անձին սույն օրենսգրքով սահմանված կարգով ձերբակալելու պահից.

4) եթե օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացված ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում վարչական իրավախախտման փաստ է հայտնաբերվել՝ ստուգման ակտ կազմելու պահից:

5. Մինչ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը առերևույթ վարչական իրավախախտման կատարման փաստի հավաստիությունը ստուգելու նպատակով կարող է կատարել նախնական ուսումնասիրություններ, այդ թվում՝ պահանջել և ստանալ տեղեկություններ, որոնք չեն կարող ներառել այնպիսի գործողություններ, որոնք խախտում կամ սահմանափակում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու ազատությունները: Նախնական ուսումնասիրություններն իրականացում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով այնքանով, որքանով այն չի հակասում սույն օրենսգրքին:

6. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ չի կարող հարուցվել, եթե վարչական իրավախախտման մասին հաղորդումը ստացվել է սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված, այդ թվում՝ անհայտ կամ չբացահայտված աղբյուրից:

Հոդված 97. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է անհապաղ վարչական իրավախախտման բացահայտումից հետո՝ սույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում՝ բացառությամբ սույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կարող է կազմվել նաև տեղում վարչական իրավախախտումը կատարելու վայրում՝ կասկածյալի ներկայությամբ:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են՝

1) արձանագրությունը կազմելու ամսաթիվը, տարեթիվը, վայրը, ժամանակը.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի անվանումը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը,

3) կասկածյալի (իրավաբանական անձի դեպքում՝ ներկայացուցչի) անունը (իրավաբանական անձի անվանումը), ազգանունը, բնակության վայրը (գտնվելու վայրը), իսկ սույն օրենսգրքի 32-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների դեպքում՝ ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, ԱԱՀ վճարողների դեպքում՝ նաև ԱԱՀ վճարողի հաշվառման համարը, արձանագրությունը կազմելու պահին այդ տեղեկությունները հայտնի լինելու դեպքում.

4) վարչական իրավախախտման կատարման վայրը, ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը) և նկարագրությունը, սույն օրենսգրքի այն հոդվածը կամ հոդվածի մասը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ վարչական իրավախախտման համար, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթը.

5) վկաների և տուժողների անունները, ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան,

6) կասկածյալի (իրավաբանական անձի դեպքում՝ ներկայացուցչի) ցուցմունքները, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար անհրաժեշտ այլ տեղեկությունները:

4. Սույն հոդվածով սահմանված արձանագրությունը կազմելիս պահպանվում են սույն օրենսգրքի 104-րդ հոդվածի սահմանված կանոնները՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

5. Եթե սույն հոդվածով սահմանված արձանագրության կազմմանը ներկա է նաև տուժողը, ապա կասկածյալին վերաբերող սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված

կանոնները վերաբերում են նաև տուժողին: Տուժողի ներկա չլինելու դեպքում արձանագրության պատճենը ուղարկվում է նրան այն կազմելուց հետո 3-օրյա ժամկետում:

6. Սույն հոդվածով սահմանված արձանագրությունը կազմելուց հետո 3-օրյա ժամկետում այն ուղարկվում է տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության համար լիազորված մարմնին:

Հոդված 98. Ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները

1. Առերևույթ վարչական իրավախախտման մասին ֆիզիկական անձի հաղորդումը կարող է լինել գրավոր կամ բանավոր: Բանավոր հաղորդման վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն, որը ստորագրում են հաղորդում ներկայացնողը և հաղորդումն ընդունող պաշտոնատար անձը:

2. Հաղորդման մեջ պետք է նշվի հաղորդում ներկայացնողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, բնակության հասցեն, նրա առնչությունը վարչական իրավախախտմանը և իրազեկման աղբյուրը, ինչպես նաև տեղեկություններ նրա կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթերի մասին:

3. Եթե հաղորդում ներկայացնող ֆիզիկական անձի 16 տարին լրացել է, ապա նա նախազգուշացվում է սուտ հաղորդման համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

4. Իրավաբանական անձի հաղորդումը պետք է լինի գրավոր, ձևաթղթի վրա շարադրված պաշտոնական նամակի ձևով և ստորագրված լինի իրավաբանական անձի գործադիր մարմնի կողմից: Հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած իրավաբանական անձի լրիվ անվանումը, հասցեն, ինչպես նաև իրավաբանական անձի առնչությունը վարչական իրավախախտմանը և բացահայտի իրազեկման աղբյուրը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Գրավոր հաղորդումը կարող է ուղարկվել նաև փոստով: Գրավոր հաղորդումը պետք է ունենա նամակի, վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև:

6. Հաղորդմանը կարող են կցվել վարչական իրավախախտման կատարումը հաստատող նյութեր, այդ թվում՝ լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ և այլն:

7. Սույն հոդվածը, բացառությամբ 3-րդ մասի, տարածվում է նաև հաղորդում ներկայացնողի կողմից կատարված վարչական իրավախախտման մասին հաղորդման վրա:

8. Եթե զանգվածային լրատվության միջոցը հաղորդում է ներկայացնում, ապա հաղորդումը ներկայացվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 99. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդումը

1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդումը պետք է ունենա ձևաթղթի վրա շարադրված և կնիքով հաստատված պաշտոնական նամակի, վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև: Հաղորդմանը կարող են կցվել այն հաստատող նյութեր:

2. Հաղորդումը պետք է պարունակի այն ներկայացրած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը և հասցեն կամ համապատասխան պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև բացահայտի համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի այն գործունեությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ վարչական իրավախախտման փաստը: Հաղորդմանը կարող են կցվել այն հաստատող նյութեր, այդ թվում՝ լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ և այլն:

3. Քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական վարույթը կարճելու որոշում կայացնելու դեպքում, երբ անձի գործողություններում առկա են վարչական իրավախախտման հատկանիշներ, քրեական վարույթն իրականացնող մարմինը նման որոշում կայացնելուց ոչ ուշ, քան 3-օրյա ժամկետում այն ուղարկում է վարչական մարմին՝ ըստ ենթակայության:

Հոդված 100. Հաղորդումների քննարկման արդյունքում ընդունվող որոշումները

1. Հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելը մերժելու մասին.

3) հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելու մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշում կայացնելու դեպքում որոշման պատճենը 3-օրյա ժամեկտում ուղարկվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ կետերով նախատեսված որոշում կայացնելու դեպքում՝ որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է հաղորդում ներկայացրած անձին:

Հոդված 101. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշման մեջ նշվում են՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի անվանումը.

2) որոշումը կազմելու վայրը և ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը).

3) որոշումը կազմող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը և հայրանունը.

4) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթը.

5) վարչական իրավախախտման փաստը վկայող ապացույցները (առկայության դեպքում).

6) վարչական իրավախախտման կատարման վայրը, ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը) և նկարագրությունը, սույն օրենսգրքի այն հոդվածը կամ մասը, որը պատասխանատվություն է սահմանում տվյալ վարչական իրավախախտման համար.

7) կասկածյալի (իրավաբանական անձի դեպքում՝ ներկայացուցչի) անունը (իրավաբանական անձի անվանումը), ազգանունը, բնակության վայրը (գտնվելու վայրը), իսկ սույն օրենսգրքի 32-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների դեպքում՝ ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում, ԱԱՀ վճարողների դեպքում՝ նաև ԱԱՀ վճարողի

հաշվառման համարը,, արձանագրությունը կազմելու պահին այդ տեղեկությունները հայտնի լինելու դեպքում.

8) վկաների և տուժողների անունները, ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան,

9) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար անհրաժեշտ այլ տվյալներ:

Հոդված 102. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքի ամրագրումը և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքը և դրա արդյունքներն ամրագրվում են արձանագրություններում:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքն ամրագրելիս կարող են կատարվել լուսանկարահանում, ձայնագրում, տեսագրում, ինչպես նաև գույքագրում և չափագրում: Տեխնիկական միջոցների կիրառման արդյունքում ստացված լուսանկարները, ձայնագրությունները, տեսագրությունները, կազմված գծագրերը, պլանները կցվում են արձանագրությանը:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի բոլոր նյութերը, այդ թվում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումները, վարչական հարկադրանքի օժանդակ միջոցների կիրառման որոշումներն ու արձանագրությունները, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և վարութային գործողությունների արձանագրությունները պահվում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործում:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերը պահվում են մեկ կամ մեկից ավելի մատյաններում՝ յուրաքանչյուրի կազմի վրա համապատասխան գրառումներով և նրանցում պարունակվող նյութերի ցուցակով:

5. Այն առարկաները և փաստաթղթերը, որոնք իրենց բնույթով կամ մեծածավալությամբ չեն կարող պահվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործում, պահվում են այդ գործից առանձին՝ որպես նրա անբաժան մաս, իսկ դրանց ցուցակը կցվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործին:

Հոդված 103. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների միացումը և անջատումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն իր որոշմամբ կարող է մեկ վարույթի շրջանակներում միացնել նույն անձի կողմից կատարված մեկից ավելի վարչական իրավախախտումների կամ մեկից ավելի անձանց կողմից

կատարված համասեռ կամ նույն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները, եթե այն չի կարող բացասաբար անդրադառնալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինների սույն օրենսգրքով սահմանված ենթակայության, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լրիվության և օբյեկտիվության վրա:

2. Մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ մեկից ավելի վարչական իրավախախտումների կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն անջատվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, եթե այն անհրաժեշտ է վարույթի հանգամանքներից ելնելով և չի կարող բացասաբար անդրադառնալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինների սույն օրենսգրքով սահմանված ենթակայության, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լրիվության ու օբյեկտիվության վրա:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները միացնելու կամ անջատելու վերաբերյալ որոշումների մասին 3-օրյա ժամկետում ծանուցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցները:

Հոդված 104. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կազմվող արձանագրությունները

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում կազմվող արձանագրության մեջ նշվում են՝

1) արձանագրությունը կազմելու ամսաթիվը, տարեթիվը, վայրը ու ժամանակը,

2) վարութային գործողության կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության կատարման վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, սկսելու և ավարտելու ժամանակը.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի անվանումը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը.

3) վարութային գործողությանը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվն ու ամսաթիվը, կարգավիճակը, անհրաժեշտության դեպքում՝ հասցեն և այլ տվյալներ:

2. Արձանագրության մեջ նշվում են տեղեկություններ այն կազմելու ընթացքում կիրառված տեխնիկական միջոցների, դրանց օգտագործման կարգի և պայմանների, այն օբյեկտների, որոնց նկատմամբ տեխնիկական միջոցները կիրառվել են, և ստացված արդյունքների, ինչպես նաև վարչական վարույթին մասնակցող անձանց՝ տեխնիկական միջոցների կիրառման մասին նախազգուշացնելու վերաբերյալ:

3. Արձանագրությունը կազմվում է ձեռագիր կամ համակարգչային եղանակով: Արձանագրության տեքստը պետք է գրված լինի պարզ, հստակ և ընթեռնելի: Արձանագրության տեքստում ջնջումները, լրացումներն ու ուղղումները, դիտողությունները պետք է լինեն ծանոթագրված, դրանում չպետք է թողնվեն դատարկ և հետագայում լրացման համար նախատեսված չլրացված մասեր կամ այլ չծանոթագրված ուղղումներ:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող գործողություններն արձանագրության մեջ նկարագրվում են այն հաջորդականությամբ, որով դրանք տեղի են ունեցել: Արձանագրության մեջ նշվում են նաև համապատասխան գործողության արդյունքում ձեռք բերված և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները, շարադրվում են վարութային գործողության կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության մասնակիցների դիտողությունները:

5. Արձանագրությունը ներկայացվում է վարութային գործողությանը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողությանը մասնակցած անձանց՝ ծանոթացման համար: Նշված անձանց բացատրվում է արձանագրությունում դիտողություններ կատարելու իրենց իրավունքը: Արձանագրությունում դիտողություններ կատարելու վերաբերյալ բոլոր հայտարարությունները ստորագրում են նշված գործողությանը մասնակցած անձինք:

6. Արձանագրության բոլոր էջերը ստորագրում են այն կազմող անձը և վարութային գործողությանը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողությանը մասնակցող անձինք:

7. Վարութային գործողությանը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողությանը մասնակցած որևէ անձի՝ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում այն կազմող անձը արձանագրությունում այդ մասին կատարում է համապատասխան գրառում: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվող անձին հնարավորություն է տրվում բացատրելու հրաժարման պատճառները կամ պատճառները բացատրելուց հրաժարվելը, ինչը նույնպես արձանագրվում է: Եթե վարութային գործողության կամ վարչական

իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության մասնակիցը ֆիզիկական թերությունների կամ առողջական վիճակի կամ անգրագիտության հետևանքով զրկված է արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա արձանագրությունը տվյալ անձին ծանոթության է ներկայացվում այդ գործողության մյուս մասնակիցների ներկայությամբ, որոնք իրենց ստորագրություններով հաստատում են արձանագրության բովանդակության համապատասխանությունն իրականությանը և համապատասխան անձի կողմից այն ստորագրելու անհնարինությունը:

8. Արձանագրությունը պետք է բովանդակի գրառումներ՝ վարութային գործողության կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության մասնակիցներին՝ իրենց իրավունքներն ու պարտականությունները բացատրելու, պարտականությունները չկատարելու հետևանքները պարզաբանելու մասին, ինչը հավաստվում է վարութային գործողությանը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ մասնակիցների ստորագրություններով:

9. Արձանագրությունը կազմող պաշտոնատար անձը արձանագրությունը կազմելիս կասկածյալին բացատրում է նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ: Արձանագրությունը տրամադրվում է կասկածյալին ծանոթացման համար, և նրան բացատրվում է նաև արձանագրությունում դիտողություններ ներկայացնելու իր իրավունքի մասին, որոնք ներկայացնելու դեպքում մտցվում են արձանագրության մեջ: Եթե կասկածյալը հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց, ապա այդ մասին կատարվում է համապատասխան գրառում: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվող անձն իրավունք ունի բացատրել հրաժարման պատճառները, ինչը ներառվում է արձանագրության մեջ, ինչպես նաև ներկայացնել արձանագրությանը կցվող դիտողություններ արձանագրության բովանդակության վերաբերյալ: Եթե կասկածյալը ֆիզիկական թերությունների կամ առողջական վիճակի կամ անգրագիտության հետևանքով զրկված է արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա ստորագրելու անհնարինության մասին նշում է կատարվում արձանագրությունը մեջ: Արձանագրությունը կազմելուց անմիջապես հետո մեկ օրինակը ստորագրությամբ առձեռն հանձնվում է կասկածյալին: Եթե կասկածյալը հրաժարվում է ստանալ արձանագրության օրինակը, այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

10. Վարութային գործողության կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողությունների կատարման կարգը կանոնակարգող նորմերով կարող են նախատեսվել կոնկրետ վարութային գործողության

կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողության արձանագրությանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

Հոդված 105. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը բացառող հանգամանքները և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու հիմքերը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է վարչական իրավախախտման դեպքը կամ զանցակազմը.

2) նույն արարքի առնչությամբ հարուցվել է քրեական վարույթ. կամ նույն արարքի համար անձը ենթարկվել է քրեական պատասխանատվության.

3) կասկածյալը սույն օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման վարչական պատասխանատվությունից.

4) կասկածյալը վարչական իրավախախտումը կատարելու պահին չի հասել վարչական պատասխանատվության համար սահմանված տարիքին.

5) ուժը կորցրել է տվյալ վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվություն սահմանող սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմը.

6) անցել է վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը.

7) կասկածյալի նկատմամբ առկա է նույն իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու կամ քրեական հետապնդում հարուցելու մասին չվերացված որոշում.

8) կասկածյալը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար.

9) իրավաբանական անձը լուծարվել է.

10) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է սույն օրենսգրքով չնախատեսված աղբյուրից ստացված հաղորդման հիման վրա.

11) անձը օգտվում է վարչական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից և իրավասու մարմինը պատշաճ իրավական ընթացակարգի արդյունքում նրան չի զրկել այդ անձեռնմխելիությունից:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճվում է նաև, եթե սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու օրվանից անցել է մեկ տարի, բացառությամբ սույն օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված դեպքերի:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կարճման մասին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը կայացնում է որոշում, որը 3-օրյա ժամկետում ուղարկվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

Հոդված 106. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կասեցման հիմքերը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն ամբողջությամբ կամ համապատասխան մասով կասեցնել, եթե՝

1) հայտնի չէ վարչական իրավախախտում կատարած անձը.

2) անձը թաքնվել է կամ նրա բնակության կամ գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ, եթե առանց նրա մասնակցության վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացումն անհնար է.

3) անձը հիվանդ է այնպիսի ծանր հիվանդությամբ կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որի պատճառով չի կարող մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին, եթե առանց նրա մասնակցության վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացումն անհնար է.

4) անձը օգտվում է վարչական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից.

5) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքին.

6) անհնարին է տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքում որոշման ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում կայացնելը:

7) փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան սույն օրենսգրքով սահմանված վաղեմության ժամկետի ավարտը՝ մինչև համապատասխան փորձագիտական եզրակացությունն ստանալը:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կարող է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնել նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարող է կասեցվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար անհրաժեշտ հնարավոր բոլոր գործողությունները կատարելուց հետո:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցվում է մինչև այն կասեցնելու հիմք հանդիսացած հանգամանքները վերանալը: Դրանց վերանալուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը վերսկսվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Հոդված 107. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերը քրեական հետապնդման մարմնին հանձնելը

1. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը գալիս է այն եզրակացության, որ կատարված արարքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա կասեցնում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը և վարույթի նյութերը սույն օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված կարգով և իր պատճառաբանված որոշմամբ անհապաղ հանձնում համապատասխան քրեական հետապնդման մարմնին: Որոշման պատճենը կայացումից հետո 3-օրյա ժամկետում ուղարկվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

2. Եթե քրեական հետապնդման մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով մերժում է քրեական հետապնդման հարուցումը, ապա քրեական հետապնդման մարմնից որոշումը ստանալու պահից սույն օրենսգրքի 106-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը վերսկսվում է:

3. Եթե քրեական հետապնդման մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով հարուցում է քրեական վարույթ, ապա քրեական հետապնդման մարմնից որոշումը ստանալու պահից կասեցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը սույն օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է կարճման: Հարուցված տվյալ

քրեական վարույթը օրենսդրությամբ սահմանված կարգով կարճելու դեպքում, երբ անձի գործողություններում առկա են վարչական իրավախախտման հատկանիշներ, քրեական վարույթն իրականացնող մարմինը նման որոշում կայացնելուց ոչ ուշ, քան 3-օրյա ժամկետում այն ուղարկում է վարչական մարմին՝ ըստ ենթակայության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ սույն օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված կարգով կարճված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը վերսկսելու համար:

Հոդված 108. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերը ըստ ենթակայության ուղարկելու մասին որոշում

1. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարզում է, որ տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնելու իրավասությամբ օժտված չէ, ապա անհապաղ որոշում է կայացնում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերն ըստ ենթակայության ուղարկելու մասին՝ նշելով այն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, որին ուղարկվում է տվյալ վարույթը, և որոշման պատճենը կայացումից հետո 3-օրյա ժամկետում ուղարկում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

Հոդված 109. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմում դատարան ներկայացնելու մասին որոշումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը վարչական վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու պահից մեկ ամսյա ժամկետում որոշում է կայացնում դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմում դատարան ներկայացնելու մասին, սույն օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հայցադիմումը դատարան է ներկայացվում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար անհրաժեշտ վարութային կամ վարչական իրավախախտման վերաբերյալ այլ գործողությունները կատարելուց հետո:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ներկայացված հայցադիմումի քննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 110. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նշանակելու մասին որոշումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննություն նշանակելու մասին որոշումը պետք է բովանդակի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասին տվյալները, հրավիրվող անձանց ցանկը և նրանց կարգավիճակը, տեղեկություններ գործի քննության տեղի և ժամանակի մասին, գործի քննությանը չներկայանալու հետևանքների մասին և սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դռնփակ քննություն անցկացնելու մասին:

2. Սույն հոդվածով սահմանված որոշման պատճենը ուղարկվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվանից առնվազն 10 օր առաջ:

Հոդված 111. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության հրապարակայնությունը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը պետք է անցկացվի դռնբաց՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը կամ դրա մի մասը կարող է անցկացվել դռնփակ հասարակական կարգի, պետական անվտանգության, բարոյականության, օրենքով պահպանվող գաղտնիքի, մասնակիցների մասնավոր կյանքի կամ անչափահասների պաշտպանության նպատակով:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի որոշումները բոլոր դեպքերում հրապարակվում են: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը դռնփակ անցկացնելու դեպքում չեն հրապարակվում որոշման այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել գործի քննությունը դռնփակ անցկացնելու համար:

Հոդված 112. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության վայրը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է՝ ըստ վարչական իրավախախտման կատարման վայրի կամ՝ ըստ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող մարմնի գտնվելու վայրի: Տարածքային այլընտրանքային ենթակայության դեպքում կասկածյալի միջնորդությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարող է քննվել՝ ըստ նրա բնակության վայրի:

2. Սույն օրենսգրքի 446-466-րդ, կամ 469-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը կարող են քննվել նաև ըստ տրանսպորտային միջոցների կամ դրանք վարող անձանց հաշվառման վայրի:

Հոդված 113. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների չներկայանալու հետևանքները և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների մասնակցությամբ:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարող է քննվել նրանց բացակայությամբ միայն այն դեպքերում, երբ նրանք միջնորդել են գործը քննել իրենց բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա կամ, գործի քննության ժամանակի և վայրի մասին ծանուցված լինելով՝ չեն ներկայացրել գործի քննության հետաձգման մասին միջնորդություն կամ այդ միջնորդությունը մերժվել է:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն իր նախաձեռնությամբ կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակցի միջնորդությամբ կարող է պատճառաբանված որոշմամբ հետաձգել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը՝ ծանուցելով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին օժանդակող անձանց գործի քննությանը չներկայանալու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը, լսելով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների կարծիքները, նրանց բացակայությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու հնարավորության մասին, կայացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը շարունակելու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու մասին որոշում:

5. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք պատշաճ ծանուցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հաջորդ քննության ժամանակի և վայրի մասին:

Հոդված 114. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության կարգը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում՝

1) հայտարարվում է, թե ով է քննում գործը (կոլեգիալ կազմի դեպքում՝ ինչ կազմով է քննվում գործը), ինչ գործ է քննվում, ով է կասկածյալը.

2) պարզվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների և գործի քննությանը կանչված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին օժանդակող անձանց ներկայության կամ բացակայության փաստը, պարզվում նրանց բացակայության պատճառները, որի հիման վրա սույն օրենսգրքով սահմանված կարգով ընդունվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը նրանց բացակայությամբ քննելու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու մասին որոշում.

3) ստուգվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների ներկայացուցիչների, պաշտպանի լիազորությունները հավաստող փաստաթղթերը.

4) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցող անձանց բացատրվում են նրանց իրավունքները և պարտականությունները.

5) քննարկվում և լուծվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների ներկայացրած միջնորդությունները և բացարկները.

6) հրապարակվում է վարչական իրավախախտման մասին արձանագրությունը, ստուգման ակտը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը.

7) հետազոտվում են ապացույցները.

8) լսվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցները.

9) անհրաժեշտության դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ իրականացվում են սույն օրենսգրքով նախատեսված այլ գործողություններ:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է վարչական իրավախախտման

վերաբերյալ գործը քննող պաշտոնատար անձը (անձինք): Արձանագրությունը պետք է կազմվի գործի քննությունից հետո առնվազն երեք օրվա ընթացքում: Արձանագրությանը կարող են ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք և ներկայացնել դիտողություններ:

Հոդված 115. Վարչական իրավախախտման վերաբերյալ արագացված վարույթը

1. Եթե կասկածյալը սույն օրենսգքրի 97-րդ հոդվածով կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը ծանոթանալուց հետո դիտողություններ չի ներկայացնում, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կարող է վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կայացնել արագացված կարգով՝ վարչական իրավախախտման արձանագրությունը կազմելուց անմիջապես հետո, եթե կասկածյալը չի առարկում:

2. Սույն հոդվածով սահմանված կարգը չի կիրառվում, եթե՝

1) այն կարող է ազդել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի լրիվության և օբյեկտիվության վրա,

2) բացի նախազգուշացում և տուգանք վարչական տույժերի տեսակներից, տվյալ վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքի հատուկ մասով սահմանված է վարչական տույժի այլ տեսակ.

3) անձը օգտվում է վարչական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից:

4. Արագացված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ որոշում կայացնելիս ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարվում, իսկ մեղավորության հիմնավորվածությունը ենթակա չէ բողոքարկման, ինչի մասին գրավոր պարզաբանվում է կասկածյալը:

5. Արագացված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման կայացման արդյունքում կասկածյալի նկատմամբ նշանակվում է տվյալ վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքի հատուկ մասով սահմանված առավել մեղմ վարչական տույժի տեսակը կամ նվազագույն չափը:

Հոդված 116. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումները

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին.

3) վարույթն ըստ ենթակայության ուղարկելու մասին:

2. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում ի հայտ են գալիս սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կասեցման հիմքեր, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշում է ընդունում սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կասեցնելու և նյութերը քրեական հետապնդման մարմնին հանձնելու մասին:

3. Սույն հոդվածով սահմանված որոշումը ստորագրում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող պաշտոնատար անձը, իսկ կոլեգիալ մարմնի որոշումը՝ նիստին ներկա անդամները:

4. Սույն հոդվածով սահմանված որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունից անմիջապես հետո: Որոշման պատճենը հրապարակումից հետո 3-օրյա ժամկետում ուղարկվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

ԳԼՈՒԽ 14.

ՎԱՐՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 117. Ցուցմունք տալու ընդհանուր կարգը

1. Ցուցմունք, վերցնելն իրականացվում է վարչական իրավախախտման կատարման վայրում կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնում: Եթե տարիքի կամ հիվանդության պատճառով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին անձի ներկայանալն անհնար է, ցուցմունք վերցնելը կատարվում է ցուցմունք տվողի գտնվելու վայրում:

2. Խուլ, համր կամ կույր անձից ցուցմունք վերցնելը կատարվում է նրա հաղորդակցության նշանները հասկացող կամ նրա հետ նշաններով բացատրվելու ունակ թարգմանչի մասնակցությամբ:**:**

3. Ցուցմունք տալու փաստը, ընթացքը և արդյունքները արտացոլվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմված արձանագրությունում:

4. Ցուցմունքը և առաջադրված հարցերին տրված պատասխանները գրի են առնվում առաջին դեմքով և հնարավորության սահմաններում բառացիորեն: Հարցերը, դրանց պատասխանները, ինչպես նաև հարցերին պատասխանելուց հրաժարվելու պատճառները գրի են առնվում նույն հաջորդականությամբ, ինչ տրվել են ցուցմունք տալու ընթացքում:

5. Ցուցմունք տվող անձն իրավունք ունի ցուցմունք տալ բանավոր կամ ցուցմունքը գրել իր ձեռքով, որի մասին արձանագրության մեջ նշում է կատարվում: Գրավոր ցուցմունքին ծանոթանալուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը նրան կարող է տալ լրացուցիչ հարցեր: Հարցերը և տրվող պատասխանները ներառվում են արձանագրության մեջ:

6. Ցուցմունք տալու ավարտից հետո արձանագրությունը ցուցմունք տվող անձի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Ցուցմունք վերցնելը չի կարող տևել անընդմեջ երեք ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի դեպքում՝ երկու ժամից ավելի: Բժշկական եզրակացության հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:

Հոդված 118. Կասկածյալի ցուցմունք տալու կարգը

1. Կասկածյալը ցուցմունք է տալիս իրեն վերագրվող վարչական իրավախախտման և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների մասին:

2. Ցուցմունք վերցնելուց առաջ, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կասկածյալին պարզաբանում է պաշտպանի մասնակցությամբ ցուցմունք տալու նրա իրավունքը կամ պաշտպանից հրաժարվելու իրավունքը, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի, և ստորագրությամբ տրամադրում սույն օրենսգրքով սահմանված նրա իրավունքների և պարտականությունների ցանկը, եթե այն մինչ այդ չի տրամադրվել:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կասկածյալին բացատրում է լռելու նրա իրավունքը և պարզաբանում, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս իրեն, ինչպես նաև հայտնում է, որ նրա ցուցմունքը կարող է օգտագործվել որպես ապացույց: Եթե կասկածյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախազգուշացնում կեղծ ցուցմունք տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին: Այդ փաստը հավաստվում է կասկածյալի ստորագրությամբ:

4. Ձերբակալված կասկածյալից վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է անհապաղ ցուցմունք վերցնել: Ցուցմունք տալուց առաջ կասկածյալին իր ցանկությամբ հնարավորություն է տրվում առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ:

5. Անչափահաս կասկածյալից ցուցմունք վերցնելիս կարող է ներկա գտնվել նրա օրինական ներկայացուցիչը:

Հոդված 119. Վկայի ցուցմունք տալու կարգը

1. Վկան ցուցմունք տալու համար կանչվում է ծանուցագրով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակցի միջնորդությամբ:

2. Ցուցմունք տալու համար կանչված անձը պարտավոր է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին ներկայանալ նշանակված ժամկետում անձը հաստատող փաստաթղթով կամ նախապես իրազեկել չներկայանալու պատճառները: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում անձը նախազգուշացվում է, որ չներկայանալու դեպքում սույն օրենսգրքով սահմանված կարգով բերման կենթարկվի, որից հետո դարձյալ չներկայանալու դեպքում սույն օրենսգրքով սահմանված կարգով կարող է բերման ենթարկվել:

3. Վկայից կարելի է ցուցմունք վերցնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքի, այդ թվում՝ կասկածյալի, տուժողի, այլ վկաների վերաբերյալ:

4. Վկան ցուցմունք է տալիս այլ վկաներից անջատ:

5. Ցուցմունք տալուց առաջ, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ վարույթով է նա կանչվել: Վկան նախազգուշացվում է հարցերին ճշմարտացի պատասխանելու պարտականության, ցուցմունք տալուց հրաժարվելու, սուտ ցուցմունք տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին: Վկային պարզաբանվում է, իր տված ցուցմունքը կարող է օգտագործվել որպես ապացույց և որ նա պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Այնուհետև, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարզում է կասկածյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցեր տալ:

6. Եթե վկան ցուցմունք տալու համար ներկայացել է փաստաբանի հետ, որը հրավիրվում է վկայի կողմից՝ վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, ապա փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու ցուցմունք վերցնելուն ու խորհրդատվություն տալ վկային, սակայն իրավասու չէ մեկնաբանելու նրա պատասխանները: Վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքերում փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմված արձանագրությունում:

7. Եթե փաստաբանի հետ ցուցմունք տալուն ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան ցուցմունք տալուն ներկայացել է առանց փաստաբանի, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել ցուցմունք վերցնելը:

8. Այն դեպքում, երբ վկան տվյալ վարույթին առնչվող մեկ այլ վարույթում կասկածյալ է, ապա այդ վկայից ցուցմունք վերցնելը կատարվում է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված կարգով:

9. Անչափահաս վկայից անկախ տարիքից, կարող ցուցմունք վերցվել, եթե նա կարող է հաղորդել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող տեղեկություններ:

10.Տասնվեց տարին չլրացած վկային բացատրվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին առնչվող հանգամանքների մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար սույն օրենսգրքով սահմանված պատասխանատվության մասին: Տասնվեց տարին չլրացած վկայից ցուցմունք է վերցվում նրա օրինական ներկայացուցչի պարտադիր ներկայությամբ:

11. Անչափահաս վկայից ցուցմունք վերցնելիս ներկա գտնվելու իրավունք ունի նաև նրա օրինական ներկայացուցիչը:

Հոդված 120. Տուժողի ցուցմունք տալու կարգը

1. Տուժողից, ինչպես նաև անչափահաս տուժողից ցուցմունք վերցնելը կատարվում է վկայից, ինչպես նաև անչափահաս վկայից ցուցմունք վերցնելու համար՝ սույն օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված կանոններով:

2. Եթե տուժողը ցուցմունք տալու համար ներկայացել է ներկայացուցչի հետ, ապա ներկայացուցիչն իրավունք ունի ներկա գտնվելու ցուցմունք վերցնելուն ու խորհրդատվություն տալ նրան, սակայն իրավասու չէ մեկնաբանելու նրա պատասխանները: Տուժողի՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքերում ներկայացուցիչն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմված արձանագրությունում:

3. Այն դեպքում, երբ տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում տուժողն ունի նաև կասկածյալի կարգավիճակ, ապա այդ տուժողից ցուցմունք վերցնելը կատարվում է սույն օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 121. Փորձագետի ցուցմունք տալու կարգը

1. Ցուցմունք տալուց առաջ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը հավաստիանում է փորձագետի ինքնության մեջ, տեղեկացնում՝ որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կապակցությամբ է նա հրավիրվել և նախազգուշացնում է հարցերին ճշմարտացի պատասխանելու պարտականության, ցուցմունք տալուց հրաժարվելու, սուտ ցուցմունք տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին: Փորձագետին պարզաբանվում է նաև, որ իր տված ցուցմունքը կարող է օգտագործվել որպես ապացույց:

Հոդված 122. Փորձաքննություն նշանակելը

1. Փորձաքննություն նշանակվում և կատարվում է, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ:

2. Փորձաքննությունը կատարվում է անկախ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց մոտ հատուկ գիտելիքների առկայությունից:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը որոշում է կայացնում փորձաքննություն նշանակելու մասին: Փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ պետք է նշվեն՝

1) առերևույթ վարչական իրավախախտման համառոտ նկարագրությունը, որի առնչությամբ պետք է կատարվի փորձաքննությունը.

2) փորձաքննություն նշանակելու հիմքերը.

3) փորձագիտական հիմնարկի անվանումը կամ այն անձի անունը, ազգանունը, որին հանձնարարվում է փորձաքննության կատարումը.

4) փորձագետին առաջադրվող հարցերը.

5) փորձաքննության համար անհրաժեշտ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերը:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը փորձաքննություն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, փորձաքննության համար անհրաժեշտ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերն ուղարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարին, իսկ եթե փորձաքննությունը կատարվում է հիմնարկից դուրս, ապա՝ փորձագետին:

5. Եթե փորձաքննությունը կատարվում է փորձագիտական հիմնարկից դուրս, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո իր մոտ է կանչում այն անձին, ում հանձնարարված է փորձաքննությունը, հավաստիանում է նրա ինքնության և

ձեռնհասության մեջ, պարզում է փորձագետի հարաբերությունները կասկածյալի, տուժողի, հետ և ստուգում է, փորձագետին բացարկ հայտնելու հիմքերի առկայությունը:

6. Փորձագիտական հիմնարկի ղեկավարը, իսկ եթե փորձաքննությունը կատարվում է փորձագիտական հիմնարկից դուրս՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը, փորձագետին ծանոթացնում է սույն օրենսգրքով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնում է փորձագիտական եզրակացություն տալուց հրաժարվելու կամ կեղծ եզրակացություն տալու համար սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության մասին, կազմակերպում է փորձաքննության կատարումը, սակայն իրավունք չունի փորձագետին տալ ցուցումներ, որոնք կանխորոշում են հետազոտությունների ընթացքը և հետևությունների բովանդակությունը:

7. Մինչև փորձաքննություն նշանակելու մասին որոշումը կատարման ուղարկելը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը այն ծանոթացնում է կասկածյալին, տուժողին և բացատրում սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված նրանց իրավունքները:

8. Փորձաքննություն նշանակելիս ու կատարելիս կասկածյալը և տուժողը իրավունք ունեն՝

1) բացարկ հայտնել փորձագետին.

2) միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշած անձանց թվից.

3) փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն.

4) փորձագետին առաջադրել լրացուցիչ հարցեր.

5) ներկա գտնվել փորձաքննության կատարմանը.

6) պարզաբանումներ տալ փորձագետին.

7) ծանոթանալ փորձագետի եզրակացությանը.

8) մասնակցել իր միջնորդությամբ կատարվող՝ փորձագետից ցուցմունքներ վերցնելուն:

8. Փորձագետին առաջադրված հարցերը և տրված եզրակացությունը չեն կարող դուրս գալ փորձագետի հատուկ գիտելիքի սահմաններից:

9. Անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո փորձագետը կազմում է գրավոր եզրակացություն և հաստատում է այն իր ստորագրությամբ, որն ուղարկվում է փորձաքննություն նշանակող անձին:

10. Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը) և ինչի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ովքեր են մասնակցել, վարույթի որ նյութերն է

փորձագետն օգտագործել կամ հետազոտել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, վարույթի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ:

11. Փորձագետի եզրակացությանը պետք է կցվեն հետազոտված իրեղեն ապացույցները, նմուշները և այլ նյութեր, ինչպես նաև փորձագետի հետևությունները պարզաբանող լուսանկարները, սխեմաները և այլ տեխնիկական կամ փաստաթղթային միջոցները:

12. Եթե ներկայացված բոլոր նյութերն անբավարար են և դրանք փորձագետի միջնորդությամբ լրացնելու հնարավորությունները սպառվել են կամ հարցի լուծումը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից, փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում:

13. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը համաձայն չի փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, իսկ փորձագետի ցուցմունքները բավարար չեն լինում անհրաժեշտ պարզություն ապահովելու համար, կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ այլ փորձագետի:

14. Երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման սահմանված կանոնները, նշանակվում է կրկնակի փորձաքննություն, որը պետք է կատարվի մեկ այլ փորձագետի կողմից: Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետին կարող է առաջադրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: Կրկնակի փորձաքննություն կատարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու հիմքերը: Նախկին փորձաքննությունը կատարած փորձագետները կարող են ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն հետազոտմանը և եզրակացություն կազմելիս նրանք չեն մասնակցում:

15. Հետազոտության բարդությունից ելնելով՝ կարող է նշանակվել հանձնաժողովային փորձաքննություն, որը կատարվում է նույն բնագավառում հատուկ գիտելիքներ և հմտություններ ունեցող մի քանի փորձագետի կողմից:

16. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների և հմտությունների կամ հետազոտության տարբեր բնագավառների

մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա նշանակվում է համալիր փորձաքննություն:

17. Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին առանց հանձնաժողովային կամ համալիր փորձաքննության պահանջի, ապա հիմնարկի ղեկավարը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ, իրավասու է կազմակերպել հանձնաժողովային կամ համալիր փորձաքննություն և համապատասխան փորձագետների բացակայության դեպքում՝ ներգրավել փորձագետների:

18. Հանձնաժողովային փորձաքննություն կատարելիս միասնական հետևության հանգելու դեպքում եզրակացությունը ստորագրում են փորձաքննությունը կատարած բոլոր փորձագետները: Տարաձայնության դեպքում յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ դրանում ընդգրկելով տարաձայնություններ առաջացրած հարցերը:

19. Համալիր փորձաքննության կատարման ընթացքում պարզված հանգամանքների համակցության հիման վրա փորձագետներից յուրաքանչյուրն իր հատուկ գիտելիքների և հմտությունների սահմաններում մասնակցում է ընդհանուր եզրակացության ձևավորմանը: Յուրաքանչյուր փորձագետ ստորագրում է համալիր փորձաքննության եզրակացության այն մասը, որն իր գիտական իրավասության սահմաններում է:

Հոդված 123. Փորձաքննության համար նմուշներ վերցնելը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կամ նրա հանձնարարությամբ փորձագետը մինչև փորձաքննություն նշանակելը կամ դրա կատարման ընթացքում իրավասու է վերցնել պատրաստի արտադրանքի, հումքի, ապրանքների, նյութերի, ձեռագրերի, ստորագրության, զենքի, պարկուճի և այլ նյութերի կամ օբյեկտների հատկությունները բնութագրող նմուշներ, եթե դրանք անհրաժեշտ են փորձաքննության կատարման համար:

2. Նմուշներ վերցնելու մասին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը կայացնում է պատճառաբանված որոշում, որտեղ նշում է որոշումը կայացնողի պաշտոնը, անունը և ազգանունը, նմուշներ ստացող անձի պաշտոնը, անունը և ազգանունը, ումից պետք է ստացվի նմուշը, ինչ չափով, ինչ կոնկրետ նմուշներ պետք է վերցվեն, երբ և ում պետք է ներկայանա անձը նմուշներ ստանալու համար, որտեղ, ում և ինչ նպատակով պետք է ներկայացվեն նմուշները՝ դրանք ստանալուց հետո և փորձաքննության հարցերով պայմանավորված անհրաժեշտ այլ հանգամանքներ:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցների ներկայությամբ կատարում է բոլոր անհրաժեշտ գործողությունները և վերցնում նմուշներ:

Անհրաժեշտության դեպքում նմուշները կարող են վերցվել փորձագետի մասնակցությամբ: Նմուշները փաթեթավորվում և կնքվում են:

4. Նմուշներ վերցնելու մասին սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմվում է համապատասխան արձանագրություն, որում նշվում է նաև վերցված նմուշների տեսակները, կիրառված մեթոդներն ու միջոցները, նկարագրվում են նմուշներ ստանալու համար ձեռնարկված բոլոր գործողություններն այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են: Ստացված նմուշները կցվում են արձանագրությանը:

Հոդված 124. Առարկայի, փաստաթղթի կամ տրանսպորտային միջոցը ճանաչման ներկայացնելու կարգը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում կասկածյալը, տուժողը կամ վկան կարող են հաստատել որոշակի օբյեկտի՝ առարկայի, փաստաթղթի կամ տրանսպորտային միջոցի նույնականությունը՝ այն ներկայացնում է ճանաչման:

2. Որևէ օբյեկտ ճանաչման ներկայացնելու անհրաժեշտության դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը ճանաչողից նախապես սույն օրենսգրքով սահմանված կարգով ցուցմունք է վերցնում՝ այդ օբյեկտի նշանների և դրա հանգամանքների վերաբերյալ: Ցուցմունք վերցնելուց հետո ճանաչման ենթակա օբյեկտը հնարավորության սահմաններում միատեսակ այլ օբյեկտների հետ ներկայացվում է ճանաչողին, առաջարկվում մատնացույց անել դրանցից մեկը և բացատրել, թե ինչ նշաններով ու առանձնահատկություններով ճանաչեց այն, բացառությամբ այն օբյեկտների, որոնց նման այլ օբյեկտներ անհնար է կամ դժվար է ձեռք բերել: Այն օբյեկտները, որոնց նման այլ օբյեկտներ անհնար է կամ դժվար է ձեռք բերել ճանաչման է ներկայացվում մեկ օրինակով: Ճանաչման ներկայացնելու պայմանները հնարավորինս պետք է մոտ լինեն այն պայմաններին, որոնցում ճանաչողը տեսել է ճանաչման ներկայացված օբյեկտը, իսկ անհրաժեշտության դեպքում այն կարող է մաքրվել կողմնակի նյութերից:

3. Ճանաչման ներկայացնելու և արդյունքների վերաբերյալ սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որում նշվում են նաև ճանաչման ներկայացված օբյեկտի նկարագրությունը՝ մանրամասն շարադրելով այն հատկանիշները, որոնցով կատարվել է դրանց ճանաչումը: Արձանագրությունը ստորագրվում է, ճանաչողի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 125. Անձնական զննություն

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը, բավարար հիմքեր ունենալով կասկածելու, որ անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա կարող են գտնվել առերևույթ վարչական իրավախախտմանն առնչվող առարկաներ, նյութեր կամ փաստաթղթեր, դրանք հայտնաբերելու նպատակով կատարում է անձնական զննություն: Անձնական զննությունը կատարվում է միայն սույն օրենսգրքով սահմանված առերևույթ վարչական իրավախախտումների կատարման դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված կարգով անձին ձերբակալելիս:

2. Անձնական զննությունը կատարվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի՝ զննության ենթարկվողի հետ նույն սեռին պատկանող պաշտոնատար անձի կողմից:

3. Անձնական զննության արդյունքում կազմվում է սույն օրենսգրքով սահմանված կարգով արձանագրություն, որում նշվում են նաև անձնական զննության արդյունքում հայտնաբերված և վերցված վարչական իրավախախտմանն առնչվող առարկաներ, նյութեր կամ փաստաթղթեր՝ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշներն ու այլ առանձնահատկություններ: Արձանագրությունը ստորագրվում է, զննության ենթարկված անձի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Արձանագրության պատճենը ստորագրությամբ առձեռն հանձնվում է զննության ենթարկված անձին, իսկ ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

Հոդված 126. Առարկայի, փաստաթղթի, տեղանքի, շինության և տրանսպորտային միջոցի զննությունը

1. Առարկայի (արժեքների, նյութերի, ապրանքների), փաստաթղթի, տեղանքի, շինության և տրանսպորտային միջոցի զննությունը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով դրանց տեսողական ուսումնասիրությունն ու հետազոտումն է:

2. Զննությունը կատարվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինների կողմից:

3. Տրանսպորտային միջոցի զննությունն իրականացվում է առանց դրա կառուցվածքային ամբողջականության խախտման: Եթե տրանսպորտային միջոցներում պահվում են մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքներ կամ հատուկ պատրաստված գաղտնարաններ, որոնք օգտագործվում են գաղտնի ճանապարհով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով

ապրանքներ տեղափոխելու նպատակով, ապա մաքսային մարմինները իրավունք ունեն նաև դրանք զննելու:

4. Ֆիզիկական անձի մոտ գտնվող առարկայի կամ փաստաթղթի զննությունը իրականացվում է՝ նրա ներկայությամբ, իսկ իրավաբանական անձին պատկանող առարկայի կամ փաստաթղթի զննությունը՝ իրավաբանական անձի ներկայացուցչի ներկայությամբ: Տեղանքի, շինության, դրանց տարածքում գտնվող առարկաների և փաստաթղթերի զննությունը հնարավորության դեպքում կատարվում է դրա սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի, իսկ իրավաբանական անձին պատկանող տեղանքի, շինության կամ այնտեղ գտնվող առարկաների կամ փաստաթղթերի զննությունը՝ նրա ներկայացուցչի ներկայությամբ: Տրանսպորտային միջոցի զննությունը կատարվում է դրա սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի կամ օրենքով սահմանված կարգով այն օգտագործելու թույլտվություն ունեցող անձի, իսկ իրավաբանական անձին պատկանող տրանսպորտային միջոցի զննությունը՝ նրա ներկայացուցչի ներկայությամբ:

5. Զննության ժամանակ անհրաժեշտության դեպքում կատարվում է զննվող առարկայի, տեղանքի, շինության և առանձին օբյեկտների չափումներ, կազմվում են հատակագծեր, գծագրեր, սխեմաներ, որի մասին նշվում է արձանագրության մեջ և դրանք կցվում են արձանագրությանը:

6. Զննության արդյունքում սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որում նշվում են նաև, այն ամենը ինչ հայտնաբերվել է՝ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկություններ, այն անձի տվյալները, որի տիրապետման ներքո գտնվում է զննվող տրանսպորտային միջոցը, տրանսպորտային միջոցի տիպը, մակնիշը, մոդելը, հաշվառման համարանիշը, տրանսպորտային միջոցի այլ նույնացնող նշանները, տեսակն ու քանակը, ինչպես նաև տրանսպորտային միջոցի զննման ժամանակ հայտնաբերված փաստաթղթերի վավերապայմանները: Արձանագրությունը ստորագրվում է, զննությանը մասնակցող անձանց ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Արձանագրության պատճենը ստորագրությամբ առձեռն հանձնվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված անձին, իսկ ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

Հոդված 127. Առարկաներ և փաստաթղթեր վերցնելը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինների կողմից սույն օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված զննության ժամանակ հայտնաբերված վարչական իրավախախտման գործիքները կամ անմիջական

օբյեկտ հանդիսացող առարկաները, վարչական իրավախախտմամբ ձեռք բերված առարկաները (արժեքները, նյութերը, ապրանքները), ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող փաստաթղթերը ենթակա են վերցման:

2. Վերցնելն իրականացվում է անձի, ում մոտ կատարվում է վերցնելը և նրա ներկայացուցչի ներկայությամբ, եթե ներկայացուցչի ներկայությունը հնարավոր է ապահովել:

3. Անձը իրավունք չունի հրաժարվել հանձնելու սույն հոդվածով սահմանված վերցման ենթակա այն առարկաները, փաստաթղթերը կամ դրանց պատճենները, որոնք պահանջվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինների կողմից: Եթե պահանջվող առարկան կամ փաստաթուղթը գտնվում է այլ քրեական, քաղաքացիական, վարչական վարույթի կամ այլ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերում, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին կարող է տրամադրվել հնարավորության դեպքում տվյալ առարկայի լուսանկարը կամ փաստաթղթի պատճենը:

4. Սույն օրենսգրքով սահմանված այնպիսի վարչական իրավախախտում կատարելը, որի համար սույն օրենսգրքին համապատասխան կարող է նշանակվել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկում վարչական տույժի տեսակը, վարորդից վերցվում է վարորդական իրավունքի վկայականը մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործով որոշում կայացնելը և տրվում է համապատասխան տեսակի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշվում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ: Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու մասին որոշում կայացնելու դեպքում վարորդական վկայականը չի վերադարձվում, իսկ համապատասխան տեսակի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվության իրավունքը գործում է մինչև վարչական տույժ նշանակելու մասին որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

5. Սույն օրենսգրքի 39-րդ գլխով սահմանված իրավախախտում կատարած անձանց օտարերկրյա պետության կողմից տրված և Հայաստանի Հանրապետությունում գործող վարորդական վկայականները վերցվում են մինչև գործով կայացված որոշման կատարումը:

6. Այնպիսի փաստաթղթեր վերցնելը, որոնք բովանդակում են պետական, ծառայողական, բանկային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք, իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

7. Վերցնելու վերաբերյալ սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որում նշվում են նաև վերցրած փաստաթղթերի քանակը, տեսակը և վավերապայմանները, վերցրած առարկաների քանակը, չափը, քաշը, անհատական այլ հատկանիշները, նկարագրությունը և առանձնահատկությունները: Արձանագրությունը

ստորագրվում է, վերցնելուն մասնակցող անձանց ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով: Արձանագրության պատճենը ստորագրությամբ առձեռն հանձնվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված անձին, իսկ ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

8. Վերցնելու ժամանակ անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել լուսանկարում, ձայնագրառում, տեսագրումներ և այլ եղանակով ամրագրում, որի մասին նշվում է արձանագրության մեջ: Դրանք կցվում են արձանագրությանը:

9. Վերցրած առարակներն ու փաստաթղթերը փաթեթավորվում և կնքվում են դրանք վերցնելու վայրում:

10. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ավարտից հետո վերցրած առարկաները ու փաստաթղթերը պահվում են, վերադարձվում են կամ բռնագրավվում են, կամ սահմանված կարգով ոչնչացվում են կամ տնօրինվում են սույն օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված կարգով:

11. Սույն հոդվածին համապատասխան վերցված առարկաների գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գործող գների, իսկ վերջիններիս վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում՝ փորձագետների եզրակացության հիման վրա:

12. Սույն հոդվածին համապատասխան վերցված օտարերկրյա արժույթի վերահաշվարկը հայկական դրամի՝ կատարվում է վարչական իրավախախտման հայտնաբերման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Հոդված 128. Բերման ենթարկելը

1. Բերման ենթարկելն առանց հարգելի պատճառի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմին չներկայացած կասկածյալին, վկային, տուժողին, օրինական ներկայացուցչին, փորձագետին, թարգմանիչին սույն օրենսգրքով սահմանված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով նրան հարկադրաբար վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելն է, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

2. Բերման ենթարկված անձը չի կարող անազատության մեջ պահվել ավելի, մինչև այն պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով անձը բերման է ենթարկվել, բայց ոչ ավելի քան 3 ժամը:

3. Անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու կամ սույն հոդվածով սահմանված առավելագույն ժամկետը լրանալու դեպքում անձն անհապաղ

ազատ է արձակվում: Ազատ արձակելու հիմքերը և ժամանակը նշվում են սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արձանագրության մեջ:

4. Բերման ենթարկելուց անմիջապես հետո սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմվում է արձանագրություն, որում նշվում են նաև այն կազմելու ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը, րոպեն), վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, բերման ենթարկվողի մասին տվյալները: Արձանագրությունը ստորագրվում է, բերման ենթարկված անձի ծանոթացմանը և ստորագրմանը ներկայացվում է՝ սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով սահմանված կարգով: Արձանագրության պատճենը ստորագրությամբ առձեռն հանձնվում է բերման ենթարկված անձին, իսկ ստանալուց հրաժարվելու դեպքում, այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

5. Բերման ենթարկելու արձանագրությունն անհապաղ ուղարկվում է դատախազին:

6. Բերման ենթարկելու լիազորություն ունեն սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները՝ սույն օրենսգրքով իրենց ենթակայությանը վերապահված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով: Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների կողմից բերման ենթարկելն անհնարին է, ապա կարող են դիմել ոստիկանությանը:

7. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անձինք իրենց ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին պարտավոր են տեղյակ պահել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

8. Չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 16 տարեկան անչափահասներին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց:

ԳԼՈՒԽ 15.
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

Հոդված 129. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում գաղտնիության պահպանումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակցի վերաբերյալ՝ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունները

վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինները կարող են ստանալ միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում ձեռնարկվում են օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման օրենքով նախատեսված միջոցներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում առանց օրենքով սահմանված անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ: Օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունները հետազոտվում են դռնփակ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձի միջնորդությամբ:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձը, որին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք բովանդակող տեղեկություններ, չեն կարող, վկայակոչելով օրենքով պահպանվող գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց:

4. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք, ինչպես նաև այլ անձինք, որոնց ծանոթացման համար ներկայացվում կամ այլ կերպ հաղորդվում են օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի պահանջով պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն: Ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում պաշտպանը և ներկայացուցիչները, բացի օրինական ներկայացուցչից, հեռացվում են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցելուց: Չհրապարակելու մասին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձի պարտավորությունը նրան չի խոչընդոտում միջնորդելու օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունները հետազոտել դռնփակ:

Հոդված 130. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետները և դրա հաշվարկը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ժամկետը՝ սույն օրենսգրքով սահմանված ժամանակահատվածն է (պահը), որի ընթացքում (կամ որի վրա հասնելու պահից) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինները,

վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք իրավունք ունեն կամ պարտավոր են կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանք կատարելուց:

2. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով: Ժամկետը հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետի ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա ժամը քսանչորսից և ավարտվում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը ավարտվում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան օր, ժամկետը ավարտվում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնվում մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, իսկ բժշկական հաստատությունում գտնվող անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը բժշկական հաստատության վարչակազմին հանձնվում է մինչև ժամկետի վերջին օրվա աշխատանքային ժամը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:

5. Պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի փաստաթղթերում համապատասխան նշումով: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործին կցված նրանց ստորագրությամբ, իսկ փոստով ուղարկված լինելու դեպքում այդ մասին հետադարձ ծանուցման առկայությամբ:

Հոդված 131. Ժամկետը բաց թողնելու հետևանքները և վերականգնման կարգը

1. Ժամկետն անցնելուց հետո կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնի գործողություններն ու ընդունված որոշումներն անվավեր են:

2. Բաց թողնված ժամկետի վերականգնման համար շահագրգիռ անձը միջնորդությամբ դիմում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

3. Հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ:

4. Այն որոշման կատարումը, որը բողոքարկված է սահմանված ժամկետի բացթողումով, շահագրգիռ անձի միջնորդությամբ կարող է կասեցվել մինչև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը:

5. Բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձը կարող է բողոք ներկայացնել 15 օրվա ընթացքում՝ նշելով ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառներ): Վարչական մարմինը, որի վարույթում է գտնվում վարչական բողոքը, վերականգնում է բաց թողնված ժամկետը, և բողոքն ըստ էության քննարկում և լուծում է, եթե բողոքով կամ բողոքի քննարկման ընթացքում հիմնավորվում է բողոք բերողից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) բողոքարկման ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

6. Բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձը կորցնում է բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու հիմնավորմամբ բողոք բերելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ:

7. Բաց թողնված ժամկետը վերականգնելուց վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի մերժումը կարող է բողոքարկվել նրա վերադասին կամ դատարան:

Հոդված 132. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում փաստաթղթերը հանձնելը (ծանուցելը)

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում փաստաթղթերը (որոշումներ, արձանագրություններ, ծանուցագրեր և այլն) վարույթին մասնակցող անձանց հանձնվում են ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով կամ «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կամ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով նախատեսված, եթե սույն օրենսգրքով հանձնման հատուկ կարգ նախատեսված չէ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով հանձնելու (ծանուցելու) անհնարինության դեպքում (հասցեն անհայտ է, անձը չի բնակվում տվյալ հասցեում և այլն) անձը ծանուցվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցագիրը տեղադրելու միջոցով, որից մեկ ամիս անց անձը համարվում է ծանուցված:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք կարող են համաձայնվել ծանուցվել այլ եղանակով (ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով):

4. Ֆիզիկական անձինք ծանուցվում են բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեով, իսկ իրավաբանական անձինք՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նշված հասցեով, եթե չեն միջնորդում ծանուցելու իրենց համար նախընտրելի հասցեով:

5. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք պարտավոր են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին հայտնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրենց հասցեի փոփոխության մասին:

6. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին անձը հրավիրում է ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է՝

1) հրավիրվող անձի անունը, ազգանունը, հասցեն և կարգավիճակը.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի, անվանումը և հասցեն.

3) ներկայանալու տեղը և ժամը, ինչպես նաև այն վարութային գործողությունը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում իրականացվող այլ գործողությունը, որին մասնակցելու համար անձը հրավիրվում է.

4) վարչական իրավախախտման կատարման վայրը, ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը) և նկարագրությունը, սույն օրենսգրքի այն հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ վարչական իրավախախտման համար,

5) չներկայանալու իրավական հետևանքները:

7. Ծանուցագիրը հանձնվում է դրանում նշված օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ: Ծանուցագիրը ստորագրությամբ հանձնվում է անձամբ հրավիրվող անձին և ստորագրության համար առանձնացված հատվածում նշվում է նաև դրա ստացման ժամանակը: Հրավիրվող անձի բացակայության դեպքում ծանուցագիրը ներկայացնող անձը ծանուցագրի՝ ստորագրության համար առանձնացված հատվածում այդ մասին նշում է կատարում, ինչպես նաև նշում է նրա գտնվելու վայրը և վերադառնալու հնարավոր ժամկետները և վերադարձվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին: Եթե հրավիրվող անձը հրաժարվում է ընդունել ծանուցագիրը, ծանուցագիրը ներկայացնողն այդ մասին նշում է կատարում ծանուցագրի՝ ստորագրության համար հատկացված մասում և ծանուցագիրը վերադարձնում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին:

ԲԱԺԻՆ 5.

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

ԳԼՈՒԽ 16.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Հոդված 133. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման բողոքարկման և վերանայման կարգը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ գործն ըստ էության լուծող որոշումը, ինչպես նաև գործողությունն ու անգործությունը (սույն գլխում այսուհետ՝ որոշում, բացառությամբ այն հոդվածների, որոնցով գործողությունն ու անգործությունն առանձացված են որոշումից) կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով՝ կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

2. Որոշումը վարչական կարգով բողոքարկվում է որոշումն ընդունած վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի վերադաս վարչական մարմնին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմնին:

3. Այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը չունի վերադաս վարչական մարմին, որոշումը կարող է բողոքարկվել միայն դատական կարգով:

4. Եթե որոշումը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման:

5. Եթե բողոքը ներկայացվում է որոշումը ընդունած վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին, ապա վերջինս բողոքը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում այն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը մյուս նյութերի հետ միասին ուղարկում է վերադասին:

6. Բողոքարկման ժամկետը բաց թողնված լինելու դեպքում բողոքը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը կայացնում է բողոքարկման վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում, եթե չի ներկայացվել ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն կամ այդ միջնորդությունը մերժվել է:

7. Որոշման վերաբերյալ բողոքի բացակայության դեպքում այդ որոշումն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը (պաշտոնատար անձը), վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ, իրավունք ունի վերանայել ստորադաս վարչական մարմնի ընդունած որոշումը՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Հոդված 134. Վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումների, այդ թվում՝ միջանկյալ որոշումների դեմ վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցները՝ եթե համարում են, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող

մարմնի կայացրած որոշմամբ խախտվել է կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակից չհանդիսացող այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել:

Հոդված 135. Վարչական կարգով բողոք ներկայացնելու ժամկետը

1. Վարչական կարգով ներկայացված բողոքը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բողոք բերելու դեպքերի, կարող է բերվել՝

1) որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում.

3) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջանկյալ որոշումները վարչական կարգով կարող են բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում:

3. Բաց թողնված ժամկետը կարող է վերականգնվել սույն օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված անձանց համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները սկսում են հոսել այն օրվանից սկսած, երբ իմացել են կամ կարող էին իմանալ այդ որոշման կայացման մասին:

Հոդված 136. Վարչական կարգով ներկայացվող բողոքի բովանդակությունը

Վարչական կարգով ներկայացվող բողոքը կազմվում է գրավոր և պետք է բովանդակի՝

1) այն մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը.

2) տվյալներ բողոք բերած անձի մասին (բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի

անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը).

3) բողոքարկվող որոշման կայացման տարին, ամիսը, օրը և այդ որոշումը կայացրած մարմնի (պաշտոնատար անձի) անվանումը.

4) բողոքարկման առարկան.

5) բողոք բերողի պահանջը.

6) բողոքին կից ներկայացվող նյութերի ցանկը.

7) բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը՝ դրա առկայության դեպքում:

Հոդված 137. Վարչական կարգով բողոք ներկայացնելու հետևանքը

1. Որոշման դեմ վարչական կարգով բողոք ներկայացնելը կասեցնում է այդ որոշման կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ կատարումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գրավոր հիմնավորմամբ անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով, այդ թվում՝ եթե անմիջականորեն վտանգվել է կամ կարող է վտանգվել անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը, և այդ վտանգը կանխելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հարկադրված կլինի ձեռնարկել անհամաչափ միջոցներ:

Հոդված 138. Վարչական կարգով ներկայացված բողոքի հիման վրա վարչական վարույթի հարուցման ժամկետը

Վարչական կարգով ներկայացված բողոքի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվում է բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից 3 օրվա ընթացքում: Այդ ժամկետում վարչական մարմնի կողմից բողոքարկման վարույթի հարուցումը չմերժելու դեպքում կայացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցելու որոշում:

Հոդված 139. Վարչական կարգով ներկայացված բողոքի քննության կարգը և ժամկետը

1. Վարչական կարգով ներկայացված բողոքը քննվում է սույն օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ, և այդ դրույթներն իրենց էությամբ կիրառելի են բողոքարկման վարույթի նկատմամբ:

2. Բողոքը ենթակա է քննության բողոքը քննող վարչական մարմնի կողմից այն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, իսկ լրացուցիչ ուսումնասիրում և ստուգում պահանջող վարույթներով՝ 30-օրյա ժամկետում:

3. Բողոքը քննող վարչական մարմինը բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

Հոդված 140. Բողոքի քննության արդյունքում ընդունվող որոշումները

1. Վարչական բողոքի քննության արդյունքում բողոքը քննող վարչական մարմինը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) մերժում է բողոքը և որոշումը թողնում անփոփոխ: Այն դեպքում, երբ որոշումը թերի կամ սխալ է պատճառաբանված, բողոքը քննող վարչական մարմինը պատճառաբանում է անփոփոխ թողնված որոշումը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է բողոքը ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ բեկանելով որոշումը և փոփոխելով այն: Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է կասկածյալի կողմից, որոշումը փոփոխվում է այնպես, որ նշանակված վարչական տույժը չխստացվի կամ այլ կերպ չվատթարացվի նրա վիճակը.

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է որոշումը և կարճում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն, եթե առկա է սույն օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, իսկ չբեկանված մասով որոշումը թողնում է անփոփոխ.

4) բեկանում է որոշումը և գործն ուղարկում նոր քննության, եթե բողոքը քննող վարչական մարմնի կողմից կատարված գործի քննությունը բավարար չէ սույն մասի 2-րդ կամ 3-րդ կետերով նախատեսված որոշումներից մեկը կայացնելու համար.

5) բավարարում է վարչական բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով բողոքարկվող գործողությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրավաչափ՝ դադարեցնելով տվյալ գործողությունը, եթե բողոքի վերաբերյալ դիմում ընդունելու պահին այն շարունակվել է.

6) բավարարում է բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն և կատարելու հայցվող գործողությունը համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով գործը նոր քննության ուղարկելիս տվյալ գործը քննած վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը չի կարող այն քննել կամ մասնակցել դրա քննությանը:

Հոդված 141. Որոշման փոփոխման կամ բեկանման հիմքերը

1. Որոշման փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր, և դա հանգեցրել է գործի սխալ լուծմանը.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր և դա հանգեցրել է գործի սխալ լուծմանը.

3) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը և դա հանգեցրել է գործի սխալ լուծման.

4) գործը քննել է դրա լիազորությունը չունեցող վարչական մարմինը (նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը) կամ դրա պաշտոնատար անձը, կամ համապատասխան պաշտոնատար անձը ինքնաբացարկ չի հայտնել սույն օրենսգրքով սահմանված կարգով նախատեսված պարտադիր հիմքերի դեպքում .

5) որոշումը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացրած պաշտոնատար անձի (անձինք) կողմից ստորագրված չլինելը կամ ստորագրելու լիազորություն չունեցող անձի (անձինք) կողմից ստորագրված լինելը.

6) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել գործի քննության ժամանակի և վայրի մասին.

7) որոշումը շոշափում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները.

8) առկա են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը բացառող կամ այն կարճելու սույն օրենսգրքով սահմանված հիմքերը.

9) որոշումը ընդունվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ, ըստ էության, պետք է ընդունվեր այլ որոշում:

10) որոշումից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել, ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

11) որոշմամբ կասկածյալի վրա դրվում է ոչ իրավաչափ պարտականություն կամ տրամադրվում է ոչ իրավաչափ իրավունք:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ըստ էության ճիշտ որոշումը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Հոդված 142. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջանկյալ որոշումների բողոքարկումը

1. Միջանկյալ որոշումների բողոքարկման կարգի վրա տարածվում են սույն գլխի կանոնները՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

2. Վարչական բողոքը ենթակա է քննության բողոքարկման վարույթի հարուցումից հետո 5 օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 17.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՎ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ

Հոդված 143. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու կարգը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործն ըստ էության լուծող անբողոքարկելի դարձած որոշումը (սույն գլխում այսուհետ՝ որոշում) նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերանայում է որոշումը կայացրած վարչական իրավախախտման

վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կամ այդ մարմնի վերադասը,,կամ օրենքով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշումը նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերանայում է դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ:

3. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով որոշումները վերանայելիս իրավասու վարչական մարմինները վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննում են սույն օրենսգրքով սահմանված կանոններին համապատասխան, եթե սույն գլխով այլ կանոններ սահմանված չեն:

Հոդված 144. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման վերանայումը նոր երևան եկած հանգամանքներով

1. Նոր երևան եկած հանգամանքներով որոշումը վերանայվում է, եթե՝

1) օրինական ուժի մեջ մտած դատական կամ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշմամբ հաստատված է վկայի, տուժողի ցուցմունքների կեղծ լինելը, ինչպես նաև թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության կեղծ լինելը.

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի ոչ իրավաչափ գործողությունները կամ անգործությունը, որոնք նա թույլ է տվել տվյալ գործը քննելիս.

3) ի հայտ են եկել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են անձի անմեղությունը կամ նրա կատարած արարքի անհամապատասխանությունն այն վարչական իրավախախտմանը, որի համար նա վարչական պատասխանատվության է ենթարկվել, կամ ապացուցում են այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճվել է, ապացույցների կեղծված լինելը, որոնք հանգեցրել են ոչ իրավաչափ որոշում կայացնելուն:

Հոդված 145. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման վերանայումը նոր հանգամանքներով

1. Նոր հանգամանքներով որոշումը վերանայվում է, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ գործով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կիրառած օրենքի կամ այլ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ համարել է, որ այդ դրույթն իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է Սահմանադրությանը հակասող այլ մեկնաբանությամբ.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանը կայացրել է դատական ակտ, որով հաստատվել է տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

3) ուժի մեջ է մտել համապատասխան արարքի համար վարչական պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենք.

4) վարչական դատարանը օրենքով սահմանված կարգով կայացրել է որոշում, որով անվավեր է ճանաչվել այն իրավական ակտը կամ դրա որևէ նորմ, որը կիրառվել է տվյալ գործով որոշում կայացնելիս:

2. Որոշումը սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով կարող է վերանայվել, եթե նշանակված վարչական տույժը դեռ չի կատարվել:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում եռամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտն այդ դատարանի կանոնակարգերով սահմանված կարգով այդ դատարան դիմած անձի կողմից այն ստանալու օրվանից:

Հոդված 146. Դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձինք և ժամկետները

1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով որոշման վերանայման դիմում ներկայացնելու իրավունք ունեն՝

1) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցները, ինչպես նաև նրանց իրավահաջորդները, եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն.

2) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակից չհանդիսացող այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կայացրել է որոշումը:

2. Դիմում ներկայացնելու իրավունք ունեն ինչպես այն անձը, որի դիմումների հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի կամ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացվել է նոր հանգամանք հանդիսացող դատական ակտ, այնպես էլ այն անձը, որը՝

1) օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, ունեցել են այդ իրավունքն իրացնելու հնարավորություն կամ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զրկված են եղել ՀՀ սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից դատական ակտի կայացման պահին, միջազգային պայմանագրին համապատասխան, ունեցել են միջազգային դատարան դիմելու իրավունք:

3. Որոշման վերանայումը այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս ֆիզիկական անձի անմեղությունը կամ իրավաբանական անձի կողմից տվյալ վարչական իրավախախտումը կատարած չլինելը, ժամկետներով սահմանափակված չէ:

4. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով որոշումը վերանայելու համար դիմում կարող է ներկայացվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ դիմում ներկայացնող անձն իմացել էր կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

5. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու վերաբերյալ որոշման վերանայումը թույլատրվում է միայն վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում:

6. Վարչական իրավախախտում կատարած ֆիզիկական անձի մահը կամ իրավաբանական անձի լուծարումն արգելք չէ որոշումը վերանայելուն՝ անմեղությունը

հաստատելու կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով: Այդ դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում հանդես է գալիս իրավահաջորդը:

7. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակից հանդիսացող անձի իրավահաջորդը որոշման վերանայման դիմում կարող է ներկայացնել իրավահաջորդ ճանաչվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, եթե սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում իրավանախորդը չի իրացրել դիմում ներկայացնելու իր իրավունքը մահվան կամ լուծարման պատճառով:

8. Որոշման վերանայման դիմում չի կարող ներկայացվել, եթե որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է 10 տարի:

Հոդված 147. Դիմումին ներկայացվող պահանջները

1. Նոր հանգամանքներով կամ նոր երևան եկած հանգամանքներով որոշումը վերանայելու դիմումը պետք է բովանդակի՝

1) դիմումը ներկայացրած անձի անունը, ազգանունը, բնակության կամ աշխատանքի վայրի հասցեն, պաշտոնը.

2) այն վարչական մարմնի անվանումը, որին հասցեագրվում է դիմումը.

3) վերանայման ենթակա որոշման կայացման տարին, ամիսը, օրը.

4) որոշման վերանայման համար հիմք ծառայած նոր հանգամանքի կամ նոր երևան եկած հանգամանքի շարադրանքը.

5) դիմումը ներկայացրած անձի պահանջը.

6) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը.

7) դիմումը ներկայացրած անձի ստորագրությունը:

2. Դիմումին կցվում են նոր հանգամանքը կամ կամ նոր երևան եկած հանգամանքը հաստատող նյութերը և այլ անհրաժեշտ նյութեր:

3. Դիմումը ներկայացնող անձը՝ դիմումի պատճենը, նոր հանգամանքը կամ կամ նոր երևան եկած հանգամանքը հաստատող նյութերի պատճենների հետ պատշաճորեն ուղարկում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

4. Որոշման վերանայման վարույթ հարուցելու դիմում կարող է ներկայացնել սույն օրենսգրքի 146-րդ հոդվածով սահմանված դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձի լիազորած անձը, որը դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացնի նաև իր լիազորությունները հաստատող փաստաթուղթը:

Հոդված 148. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման վերանայման վարույթ հարուցելը և գործի քննությունը

1. Որոշումը նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերանայվում է՝ վերանայման վարույթ հարուցելու մասին որոշման հիման վրա:

2. Դիմումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում, համապատասխան վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում վերանայման վարույթ հարուցելու կամ վարույթ հարուցելը մերժելու մասին, որի պատճենը՝ որոշումը կայացնելու օրվանից 3-օրյա ժամկետում, հաձնվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին:

3. Իր նախաձեռնությամբ վերանայման վարույթ հարուցելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը՝ ոչ ուշ, քան 3-օրյա ժամկետում, վարույթ հարուցելու մասին որոշման պատճենը հանձնում է վարույթի մասնակիցներին:

4. Վերանայման վարույթի հարուցումը մերժվում է, եթե՝

1) դիմումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 147-րդ հոդվածի պահանջներին.

2) առերևույթ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքը.

3) որոշումը վերանայելու համար հիմք հանդիսացող նոր կամ նոր երևան եկած հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէ նման հանգամանքի առկայությունը.

4) դիմումը ներկայացվել է դրա համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետի խախտմամբ, և այն վերականգնելու մասին միջնորդություն չի ներկայացվել:

5. Վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

6. Վերանայման վարույթի արդյունքում որոշումը բեկանվում կամ փոփոխվում է, եթե հաստատվում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքը ազդել է որոշման իրավաչափության վրա:

ԲԱԺԻՆ 6.
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԳԼՈՒԽ 18.
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 149. Վարչական տույժ նշանակելու մասին որոշման պարտադիր լինելը

1. Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը պարտադիր է կատարման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

Հոդված 150. Վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարումը

1. Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման անբողոքարկելի դառնալու, իսկ բողոքարկվելու դեպքում՝ դատարանի կամ բողոքը քննող վարչական մարմնի վերջնական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից (այսուհետ՝ կատարման օր) հետո՝ սույն գլխով սահմանված կարգով:

2. Վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարումն իրականացնում է այդ որոշումը կայացրած մարմինը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

3. Եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարումը վերապահված է այլ մարմնի, ապա որոշումը կայացրած մարմինը կատարման օրվան հաջորդող 3-օրյա ժամկետում որոշումն ուղարկում է այն կատարելու իրավասություն ունեցող մարմնին:

4. Եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կայացրել է դատարանը, ապա դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում դատարանը այն ուղարկում է դատարան դիմած վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարումն ապահովելու համար:

5. Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ենթակա չէ կատարման, եթե կատարման օրվանից անցել է մեկ տարի:

Հոդված 151. Վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարման վարույթի կարճումը

1. Վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարման վարույթն այն կայացրած վարչական մարմինը կարճում է հետևյալ դեպքերում՝

1) տվյալ արարքի համար վարչական պատասխանատվություն սահմանող իրավական նորմը կորցրել է իրավաբանական ուժը.

2) մահացել կամ օրենքով սահմանված կարգով մահացած է ճանաչվել վարչական պատասխանատվության ենթարկված ֆիզիկական անձը.

3) լրացել է սույն օրենսգրքով սահմանված որոշման կատարման ժամկետը.

4) լուծարվել կամ սնանկ է ճանաչվել վարչական պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձը:

2. Վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարման վարույթը կարճելու վերաբերյալ ընդունվում է որոշում, որը սույն օրենսգրքի 150-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ուղարկվում է որոշումը կատարելու իրավասություն ունեցող մարմնին:

Հոդված 152. Նախազգուշացում նշանակելու մասին որոշման կատարումը

Նախազգուշացում նշանակելու մասին որոշումը համարվում է կատարված, եթե այն սույն օրենսգրքով սահմանված կարգով հանձնվել է այն անձին, ում նկատմամբ կայացվել է նախազգուշացում նշանակելու մասին որոշումը:

Հոդված 153. Տուգանք նշանակելու մասին որոշման կատարումը

1. Տուգանք նշանակելու մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում այն ենթակա կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով:

2. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո որոշումը չի ուղարկում հարկադիր կատարելու իրավասություն ունեցող մարմնի, ապա տուգանք նշանակելու մասին որոշման կատարման վարույթը համարվում է ավարտված:

3. Եթե մինչև սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետը լրանալու օրվան նախորդող օրը անձը դիմում է որոշումը կայացրած մարմնին տուգանքի վճարումը՝ գույքային դրությամբ պայմանավորված հիմքով տարաժամկետելու խնդրանքով, ապա որոշում կայացրած մարմինը իր որոշմամբ տարաժամկետում է վճարումը դիմումի մեջ նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 6 ամիս: Այդ ժամկետում տուգանքի գումարը չվճարելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը ժամկետը լրանալու օրը որոշումն ուղարկում է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով:

4. Պետական մարմինների կողմից նշանակված տուգանքի գումարը, վճարվում է պետական բյուջե, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նշանակված տուգանքի գումարը՝ համայնքի բյուջե: Որոշման մեջ նշվում է այն հաշվեհամարը, որին պետք է վճարվի տուգանքի գումարը:

5. Սույն օրենսգրքի 39-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ուղարկելու պահից վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ սահմանվում են տուգանային միավորներ, հետևյալ հաշվարկով՝

1) 10-ից մինչև 30 հազար դրամ տուգանք սահմանող վարչական իրավախախտում կատարելու դեպքում՝ 1 միավոր.

2) 30-ից մինչև 50 հազար դրամ տուգանք սահմանող վարչական իրավախախտում կատարելու դեպքում՝ 2 միավոր.

3) 50-ից մինչև 100 հազար դրամ տուգանք սահմանող վարչական իրավախախտում կատարելու դեպքում՝ 3 միավոր.

4) 100 և 100-ից բարձր չափով տուգանք սահմանող վարչական իրավախախտում կատարելու դեպքում՝ 4 միավոր:

6. Տուգանային միավորները զրոյանում են՝ վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ սահմանելու պահից մեկ տարվա ընթացքում սույն օրենսգրքի 39-րդ գլխով նախատեսված վարչական իրավախախտումներ չկատարելու դեպքում:

7. Տուգանային միավորների՝ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված առավելագույն միավոր հավաքելու դեպքում վարորդը զրկվում է վարորդական իրավունքից սույն օրենսգրքի 158-րդ հոդվածով սահմանված կարգով:

8. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված տուգանքը անձը կարող է վճարել վարչական իրավախախտում կատարելու տեղում: Տվյալ դեպքում անձին տուգանքի գանձման մասին տրվում է Հանրապետության կառավարության կողմից սահմանված նմուշի անդորրագիր, որը ֆինանսական խիստ հաշվետվության փաստաթուղթ է:

Հոդված 154. Հանրօգուտ աշխատանքներ նշանակելու մասին որոշման կատարումը

1. Հանրօգուտ աշխատանքների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումը:

2. Անձը պարտավոր է հանրօգուտ աշխատանքների կատարումն ապահովող մարմին ներկայանալ նրա նկատմամբ նշանակված տուգանքը հանրօգուտ աշխատանքներով փոխարինելու գրավոր ծանուցում ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում:

3. Հանրօգուտ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը հաշվարկվում է վարչական պատասխանատվության ենթարկված անձին՝ հանրօգուտ աշխատանքներին փաստացի ներգրավելու պահից:

4. Վարչական պատասխանատվության ենթարկված անձը պարտավոր է հանրօգուտ աշխատանքների կատարման ողջ ժամանակահատվածի ընթացքում պահպանել այն մարմինների կամ կազմակերպությունների աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, որտեղ նա կատարում է հանրօգուտ աշխատանքները, աշխատել իր համար որոշված վայրերում, ինչպես նաև բնակության վայրը փոխելու դեպքում այդ մասին տեղյակ պահել որոշումը կատարող մարմնին:

5. Սույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումներն ի հայտ գալու կամ հարգելի պատճառներով հանրօգուտ աշխատանքները կատարելու անհնարինության դեպքում որոշումը կատարող մարմինն այդ մասին գրավոր ծանուցում է վարչական տույժ նշանակած մարմնին՝ հանրօգուտ աշխատանքների չկրած մասը նշանակված տուգանքով փոխարինելու համար՝ հանրօգուտ աշխատանքների չկրած մասի և նշանակված տուգանքի տարբերության հաշվառմամբ կամ ազատելով աշխատանքների չկրած մասը կատարելուց հաշվի առնելով նշված սահմանափակումների ծանրության աստիճանը և հանրօգուտ աշխատանքների կատարման անհնարինության պատճառները:

6. Վարչական պատասխանատվության ենթարկված անձի՝ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչվելու դեպքում հանրօգուտ աշխատանքների ձևով վարչական տույժի կատարումը զինվորական կամ այլընտրանքային ծառայության ժամկետով կասեցվում է:

Հոդված 155. Հանրօգուտ աշխատանքները կատարելուց խուսափելը

1. Անձի կողմից հանրօգուտ աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում հանրօգուտ աշխատանքների կատարումն ապահովող մարմինն այդ մասին գրավոր ծանուցում է վարչական տույժ նշանակած մարմնին՝ հանրօգուտ աշխատանքները նշանակված նախկին տուգանքի չափին 10 տոկոս ավելացած չափով փոխարինելու համար:

2. Հանրօգուտ աշխատանքների ձևով տույժը կրելուց խուսափող է համարվում այն անձը, ով՝

1) մեկ ամսվա ընթացքում կատարել է իր համար նախատեսված հանրօգուտ աշխատանքների իննսուն տոկոսից պակաս հանրօգուտ աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի.

2) մեկ ամսվա ընթացքում երկու և ավելի անգամ կոպտորեն խախտել է տվյալ տվյալ մարմնի կամ կազմակերպության աշխատանքային կարգապահության ներքին կանոնները.

3) ծանուցվելու դեպքում երկու և ավելի անգամ անընդմեջ չի ներկայացել կատարող մարմին՝ առանց հարգելի պատճառի:

Հոդված 156. Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավման մասին որոշման կատարումը

1. Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավման մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշումն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում այն ուղարկում է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով:

2. Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող բռնագրավված առարկաները կամ գույքը տնօրինվում են օրենքով սահմանված կարգով:

Հոդված 157. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մասին որոշման կատարումը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մասին որոշումը՝ որոշումն անբողոքարկելի դառնալուն օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում ուղարկում է կատարման՝ վարչական պատասխանատվության ենթարկված անձի աշխատավայրի վարչակազմին կամ այդպիսի գործունեությամբ զբաղվելու իրավունք տվող մարմիններին:

2. Որոշման պատճենը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում վարչական տույժի ենթարկված անձի աշխատավայրի վարչակազմը և որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունք տալու իրավասություն ունեցող մարմինը միջոցներ են ձեռնարկում վարչական տույժի ենթարկված անձին արգելված պաշտոնները զբաղեցնելու կամ արգելված գործունեությամբ զբաղվելու հետ կապված բոլոր իրավունքներից և արտոնություններից զրկելու ուղղությամբ՝ այդ մասին 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ժամկետի հաշվարկը սկսվում է կատարման օրվանից:

Հոդված 158. Հատուկ իրավունքից զրկելու մասին որոշման կատարումը

1. Հատուկ իրավունքից զրկելու մասին որոշումը՝ որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո կատարվում է այդ իրավունքը հավաստող վկայականը վերցնելու միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

2. Հատուկ իրավունքից զրկելու ժամկետի հաշվարկը սկսվում է կատարման օրվանից:

3. Վարչական տույժի ենթարկված անձը պարտավոր է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ծանուցումը ստանալու օրվանից հետո 5-օրյա ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին հանձնել իրավունքը հավաստող վկայականը: Սույն պարտականությունը չկատարելու դեպքում հատուկ իրավունքից զրկելու ժամկետը, բացառությամբ որակավորման վկայականից զրկման, երկարացվում է սույն հոդվածով նախատեսված պարտականությունը չկատարելու ժամանակահատվածով:

4. Եթե անձը զրկվում է ոչ բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, ապա վկայականը չի վերցվում, այլ դրանում նշվում է, թե տրանսպորտային միջոցների ինչպիսի տեսակներ վարելու իրավունքից է նա զրկվում և ինչ ժամկետով: Այդ դեպքում վարչական պատասխանատվության ենթարկված անձը պարտավոր է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել վկայականը՝ նշումը կատարելու համար:

5. Հատուկ իրավունքից զրկելու ժամկետը լրանալուց հետո անհապաղ հատուկ իրավունքը հավաստող վկայականը վերադարձվում է վարչական տույժի ենթարկված անձին:

Հոդված 159. Լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցման և դադարեցման մասին որոշման կատարումը

1. Լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցման և լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցման մասին որոշումները՝ որոշումներն անբողոքարկելի դառնալուց հետո 3-օրյա ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ միջնորդագիր է ներկայացնում լիցենզավորող կամ թույլտվություն տվող մարմին, եթե ինքն օժտված չէ համապատասխան լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցման կամ դադարեցման լիազորությամբ:

2. Լիցենզավորող կամ թույլտվություն տվող մարմինը որոշման կատարման արդյունքների մասին 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

3. Լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կասեցված կամ դադարեցված է համարվում այդ մասին լիցենզավորող կամ թույլտվություն տվող մարմնի որոշումը լիցենզավորված կամ թույլտվություն ունեցող անձին պատշաճ հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրվանը հաջորդող օրվանից, եթե լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշմամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

4. Լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից:

5. Լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը դադարեցվում է լիցենզիան կամ թույլտվությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Հոդված 160. Իրավաբանական անձի գործունեության դադարեցման մասին որոշման կատարումը

1. Իրավաբանական անձի գործունեության դադարեցման մասին որոշումը որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո 3-օրյա ժամկետում հանձնվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցում իրականացնող մարմնին՝ իրավաբական անձի լուծարումը գրանցելու համար:

2. Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցում իրականացնող մարմինը որոշման կատարման արդյունքների մասին 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին:

ԲԱԺԻՆ 7.
ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 19.
ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 161. Առանձին տեսակի վարչական իրավախախտումների վերաբերյալ հատուկ վարույթների առանձնահատկությունները կարգավորող նորմերի կիրառումը

1. Առանձին տեսակի վարչական իրավախախտումների վերաբերյալ հատուկ վարույթների առանձնահատկությունները սահմանվում են սույն բաժնով:

2. Առանձին տեսակի վարչական իրավախախտումների վերաբերյալ հատուկ վարույթն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով այնքանով, որքանով սույն բաժնով այլ կանոններ նախատեսված չեն:

ԳԼՈՒԽ 20.
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 162. Կարգավորման ոլորտը

Սույն գլխի նորմերը տարածվում են սույն օրենսգրքի 36-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների վրա:

Հոդված 163. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները

1. Վարչական տույժ նշանակելիս վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հաշվի է առնում նաև վարչական իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, կասկածյալի կողմից նախկինում «Տնտեսական մրցակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտումներ թույլ տալու հանգամանքը, կասկածյալի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը, և հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, խառը):

2. Սույն օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում ընդունել տնտեսվարող սուբյեկտին վարչական պատասխանատվությունից ազատելու մասին, եթե տնտեսվարող սուբյեկտը, մինչև տվյալ համաձայնության առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը, իր նախաձեռնությամբ առաջինն է դիմում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին և կամավոր պարտավորվում դադարեցնել

այդ հակամրցակցային համաձայնությանն իր մասնակցությունը և հետագայում բացառել այն՝ միաժամանակ ներկայացնելով տվյալ հակամրցակցային համաձայնությանը վերաբերող այնպիսի ապացույցներ, որոնք՝ ըստ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի, բավարար հիմք են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար: Տնտեսվարող սուբյեկտն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին հայտնում է իր անվանում և հասցեն, ինչպես նաև տրամադրում է հետևյալ ապացույցները՝

1) հակամրցակցային համաձայնությանը մասնակցող (մասնակցած) բոլոր տնտեսվարող սուբյեկտների անվանումները և դրանց վերաբերող այլ տեղեկությունները.

2) հակամրցակցային համաձայնության մանրամասն նկարագրությունը, ներառյալ՝ դրա նպատակը, դրսևորման եղանակը, համաձայնության առարկա հանդիսացող ապրանքը, հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) ամսաթիվը, տևողությունը, վայրը և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին առնչվող այլ տվյալներ.

3) բոլոր այն անձանց անունները, պաշտոնները, հասցեները, որոնք ներգրավված են, ներգրավված են եղել կամ կարող են ներգրավված լինել հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) գործընթացում.

4) հակամրցակցային համաձայնությանն առնչվող՝ դիմողի տնօրինության տակ գտնվող այլ ապացույցներ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտը չի կարող ազատվել վարչական պատասխանատվությունից, եթե նա չի կատարել հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

1) տնտեսվարող սուբյեկտը դիմումը ներկայացնելու պահից սկսած վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվող վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում պատշաճ կերպով չի օժանդակում հակամրցակցային համաձայնության փաստի բացահայտմանը, մասնավորապես, չի ներկայացնում հակամրցակցային համաձայնությանն առնչվող՝ իր տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը (ապացույցները) և (կամ) օպերատիվ կերպով չի տրամադրում դրանք, չի ընձեռնում իր աշխատակիցներից համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորություն, ողջամտորեն չի խոչընդոտել

հակամրցակցային համաձայնությանն առնչվող տեղեկատվության (ապացույցների) ոչնչացմանը, կեղծմանը, դրանց կամ իր դիմումում առկա տվյալների տարածմանը, հրապարակումից՝ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշման կայացումը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի համաձայնությունը.

2) տնտեսվարող սուբյեկտը դիմում ներկայացնելուց հետո անհապաղ չի դադարեցնում իր մասնակցությունը հակամրցակցային համաձայնությանը:

3. Սույն օրենսգրքի 412-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման կատարման համար վարչական տույժ նշանակելիս վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը կիրառում նաև արգելված համակենտրոնացման կամ գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացման օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարում (լուծում, դադարեցում) վարչաիրավական ներգործության միջոցը:

ԳԼՈՒԽ 21.
ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 164. Կարգավորման ոլորտը

1. Սույն գլխի նորմերը տարածվում են սույն օրենսգրքի 39-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների վրա, եթե իրավախախտումը հայտնաբերվել է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով (բացառությամբ, եթե վարչական իրավախախտումը հայտանաբերվել է նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական կառավարման լիազոր մարմնի աշխատակցի կողմից և իրականացվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ, անկախ տվյալ վարչական իրավախախտումը տեխնիկական միջոցով ամրագրված լինելու հանգամանքից):

Հոդված 165. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը վարելը, ապացույցները, դրանք պահպանելը և ծանոթացման տրամադրելը

1. Սույն օրենսգրքի 164-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումները (այսուհետ՝ սույն գլխում՝ վարչական իրավախախտում) հիմնավորող ապացույցը

իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

2. Վարչական իրավախախտումն ամրագրած տեսանյութում կամ լուսանկարում այլ անձանց պատկերները մթնեցվում են (բացառությամբ վարչական իրավախախտում կատարած անձի) և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի վերաբերյալ գործում, ոստիկանության համացանցի կայքէջում և ընդհանուր պահոցում պահվում են այդ պատկերով: Կասկածյալին հանձնվող վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման մեջ (այդ թվում՝ ոստիկանության համացանցի կայքէջում տեղադրված) արձանագրված վարչական իրավախախտումն ամրագրած տեսանյութի կադրում կամ լուսանկարում անձանց պատկերները մթնեցվում են:

3. Տեսանյութի կամ լուսանկարի կրիչը փաթեթավորվում և կնքվում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կնիքով՝ սույն օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:

4. Վարչական տույժ նշանակելու մասին որոշմանն իրազեկվելու պահից վարչական իրավախախտում կատարած անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը նրանց է տրամադրում տեսանյութի պատճենը՝ դիմումը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում: Պատճենահանումը կատարվում է դիմումատուի տրամադրած կրիչների վրա: Տեսանյութի պատճենը հանձնվում է առձեռն, և հանձնման փաստն ամրագրվում է վարչական իրավախախտում կատարած անձի կամ նրա ներկայացուցչի կողմից դիմումում կատարված գրառմամբ: Եթե վարչական իրավախախտում կատարած անձը կամ նրա ներկայացուցչը գրավոր դիմելուց հետո սահմանված ժամկետում չի ներկայացել, ապա նրանց չներկայանալու փաստն ամրագրվում է դիմումում կատարված գրառմամբ: Չներկայանալն արգելք չէ կրկին վարչական մարմնին դիմելու համար՝ տեսանյութի պատճենը տրամադրելու պահանջով:

5. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ընդհանուր հիմունքներով տրամադրել տեսանյութի պատճենը, եթե այն սահմանված կարգով չի ոչնչացվել:

6. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը վարվում են էլեկտրոնային եղանակով՝ վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանների միջոցով:

7. Ապացույցները վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման հետ պահվում են վարչական իրավախախտման վերաբերյալ էլեկտրոնային գործում:

8. Վարչական իրավախախտման վերաբերյալ էլեկտրոնային գործերը շտեմարանի ընթացիկ հատվածում պահպանվում են մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ավարտը, ավարտից հետո տեղափոխվում շտեմարանի արխիվ, իսկ

օրենսդրությամբ՝ արխիվում պահպանման համար սահմանված ժամկետի ավարտից հետո ոչնչացվում են (հեռացվում են շտեմարանից):

Հոդված 166. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները

1. Վարչական իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և վարչական իրավախախտման հատկանիշների համադրման արդյունքում դրանց համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում՝ մեկնաբանվում է հօգուտ կասկածյալի:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը սահմանափակվում է ամրագրված արարքի հատկանիշների և վարչական իրավախախտման հատկանիշների համադրման արդյունքներով վարչական իրավախախտման վերաբերյալ որոշում ընդունելով՝ առանց վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու:

3. Վարչական իրավախախտման հատկանիշները պարզվում են 15 օրում: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը պարտավոր է ընդունել վարչական իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ 2 օրվա ընթացքում, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հարցում կատարելու դեպքում՝ նույն մասով նախատեսված պատասխանն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ կապույտ գույնի առկայծող փարոսիկով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցներով կատարված և տեխնիկական միջոցներով հայտնաբերված սույն օրենսգրքի 164-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական վարույթ չի հարուցվում:

5. Եթե վարչական իրավախախտումը կատարվել է պետական (պետական մարմին, պետական կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպությանն ամրացված (պատկանող) տրանսպորտային միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների, ապա վարչական իրավախախտումը կատարած անձին պարզելու նպատակով, վարչական իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը գրավոր հարցում է կատարում համապատասխան կազմակերպությանը: Հարցումը կարող է ուղարկվել նաև

կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային փոստին: Հարցումն ստացած պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած պաշտոնատար անձը պարտավոր է հնգօրյա ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին գրավոր հայտնել, թե վարչական իրավախախտման կատարման պահին ով է վարել տրանսպորտային միջոցը: Գրավոր կամ էլեկտրոնային պատասխանում նշվում են անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, բնակության վայրը, վարորդական վկայականի սերիան և համարը, կցվում է աշխատանքային պայմանագրի և տրանսպորտային միջոցի ամրացման փաստաթղթի պատճենը:

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ոստիկանության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության՝ սույն հոդվածի 4-րդ մասով չնախատեսված տրանսպորտային միջոցներով կատարված և տեխնիկական միջոցներով հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի նյութերը 15-օրյա ժամկետում ուղարկվում է համապատասխան պետական կառավարման մարմին՝ կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար:

7. Վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չի ապացուցվում, որ վարչական իրավախախտումը կատարել է այլ անձ: Վարչական իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստը կարող է ապացուցվել սույն օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարչական իրավախախտում կատարած անձի կողմից բողոք ներկայացնելու կամ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հարցմանը՝ նույն մասով սահմանված կարգով պատասխանելու միջոցով:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված բողոքը, բացի սույն օրենսգրքով նախատեսված պարտադիր հատկանիշներից, պետք է բովանդակի նաև վարչական իրավախախտումը կատարելու պահին տրանսպորտային միջոցը վարող անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, վարորդական վկայականի սերիան, համարը, բացառությամբ, այն դեպքերի, երբ տրանսպորտային միջոցը նրա տիրապետումից դուրս է եկել այլ անձանց անօրինական գործողությունների արդյունքում, ինչպես նաև տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթերի պատճենները, առկայության դեպքում՝ նաև տրանսպորտային միջոցը վարելու՝ ստորագրությամբ հավաստված

համաձայնությունը: Եթե տրանսպորտային միջոցն օգտագործվում է գրավոր պայմանագրի հիման վրա, ապա պետք է կցվի նաև պայմանագրի պատճենը:

9. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված բողոք ներկայացվելու կամ տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելու փաստը հաստատվելու, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում սույն օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը սկսում է հոսել համապատասխանաբար տրանսպորտային միջոցն այլ անձի կողմից վարելու փաստը հաստատվելու կամ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հարցման պատասխանն ստանալու օրվանից:

10. Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ներառում է՝

1) նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարը.

2) անհատական ծածկագիրը (թվային և (կամ) տառային պայմանանշանների հաջորդականությունը, որոնք մուտքագրելով ոստիկանության համացանցային կայքէջում՝ կասկածյալը կարող է դիտել որոշումը և դիտել (բեռնել) վարչական իրավախախտումն ամրագրած տեսանյութը):

3) լուսանկարը, եթե վարչական իրավախախտման փաստն ամրագրվել է լուսանկարահանմամբ, կամ տեսանյութից կադր, եթե վարչական իրավախախտման փաստն ամրագրվել է տեսանկարահանմամբ.

4) վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին առնչվող այլ տվյալներ:

11. Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում այն կասկածյալի կողմից ստանալու պահից 15–րդ օրը, եթե այդ ժամկետում նա չի ներկայացնում իր անհամաձայնությունը այդ որոշմանը: Եթե կասկածյալը նշված ժամկետում անհամաձայնություն է ներկայացնում է, ապա վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Հոդված 167. Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթն իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով:

2. Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցով որպես վարորդ Հայաստանի Հանրապետության սահմանը հատող անձը:

3. Եթե վարչական իրավախախտումը կատարվել է օտարերկրացիների կողմից, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը, ինչպես նաև կատարման կարգի և չկատարելու իրավական հետևանքների մասին Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված ձևի հուշաթերթիկը հասցեատիրոջը հանձնվում է Հայաստանի Հանրապետությունից դեպի այլ երկիր սահմանը հատելու (այդ թվում՝ առանց տրանսպորտային միջոցի) ժամանակ՝ մինչև սահմանը հատելու թույլտվություն տալը, իսկ այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կայացվել է Հայաստանի Հանրապետությունից դեպի այլ երկիր սահմանը հատելուց հետո, ապա այլ երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն հաջորդ անգամ սահմանը հատելու ժամանակ՝ մինչև սահմանը հատելու թույլտվություն տալը, եթե մինչ այդ սույն օրենսգրքով սահմանված կարգով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը չի հանձնվել:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման կատարման՝ սույն օրենսգրքի 150-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է՝ որոշումը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հանձնելու օրվանից:

ԳԼՈՒԽ 22.
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 168. Կարգավորման ոլորտը

1. Սույն օրենսգրքի 466-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների (այսուհետ սույն գլխում՝ վարչական իրավախախտում) վերաբերյալ վարույթների վրա տարածվում են սույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-8-րդ մասերը և սույն գլխով սահմանված առանձնահատկությունները:

2. Սույն գլխի նորմերը չեն տարածվում այն վարչական իրավախախտումների վրա, որոնք արձանագրվել են ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական կառավարման լիազոր մարմնի աշխատակցի կողմից և իրականացվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ՝ անկախ տվյալ վարչական իրավախախտումը նաև տեղեկատվական համակարգից ստացված տեղեկությունների հիման վրա հայտնաբերված լինելու հանգամանքից:

Հոդված 169. Ապացույցները և դրանք պահպանելը

1. Վարչական իրավախախտումը հիմնավորող ապացույցը տեղեկատվական համակարգից ստացված տեղեկությունն է՝ տվյալ ժամանակահատվածում ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ գործող՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ սույն գլխում ԱՊՊԱ) պայմանագրի բացակայության, տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) շտեմարանում առկա տեղեկատվությունը՝ ավտոտրանսպորտային միջոցը հաշվառված լինելու մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ապացույցները պահպանվում և տրամադրվում են սույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված կարգով:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնելիս համադրում է տեղեկատվական համակարգից ստացված տեղեկությունները և իր տվյալների բազայում առկա տվյալները՝ վարչական իրավախախտման հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով:

4. Վարչական տույժի ենթարկված անձն իրավունք ունի չվճարելու սույն օրենսգրքի 466-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը, եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում մինչև ենթադրյալ վարչական իրավախախտման օրը կնքված և համապատասխան ժամանակահատվածի համար գործող ԱՊՊԱ պայմանագիրը:

ԳԼՈՒԽ 23.
ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 170. Կարգավորման ոլորտը

1. Սույն գլխի նորմերը տարածվում են սույն օրենսգրքի 34-րդ գլխով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների վրա:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի գործողություններն իրականացվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն գլխում սահմանված առանձնահատկությունները:

Հոդված 171. Ֆիզիկական անձանց ուղեբեռի զննումը

1. Տարածաշրջանային մաքսատան կամ մաքսային կետի պաշտոնատար անձն իրավունք ունի կատարելու ուղեբեռի զննում՝ բացելով այն, երբ բավարար հիմքեր կան կասկածելու, որ ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխում է այնպիսի ապրանքներ, որոնք այլ պետական մարմինների կողմից ենթակա են հսկողության, հաշվառման կամ մաքսային վճարներով հարկման, ինչպես նաև ապրանքներ, որոնց տեղափոխումն արգելված կամ սահմանափակված է:

2. Մաքսային մարմիններն իրավունք ունեն կատարելու Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տարանցիկ ուղևորություն կատարող ֆիզիկական անձանց ուղեբեռի զննում, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ դրանք պարունակում են տարանցիկ փոխադրման համար արգելված ապրանքներ:

3. Ֆիզիկական անձի ուղեբեռի զննումը կատարվում է միայն նրա կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի ներկայությամբ: Ֆիզիկական անձի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի բացակայության դեպքում ուղեբեռի զննումը կատարվում է դրա փոխադրումը, առաքումը կամ պահպանումն իրականացնող կազմակերպության ներկայացուցչի ներկայությամբ

4. Եթե ֆիզիկական անձը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը բացակայում է, ապա ուղեբեռի զննումը կատարվում է՝

1) եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ ուղեբեռը պարունակում է մարդու կյանքին և առողջությանը, կենդանիների ու բույսերի համար վտանգ ներկայացնող կամ անձանց նյութական վնաս պատճառող ապրանքներ.

2) ուղեբեռի ստացման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆիզիկական անձի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի չներկայանալու դեպքում.

3) միջազգային փոստային առաքումով ապրանքների առաքման դեպքում:

Հոդված 172. Անձի քննումը

1. Անձի քննումն իրականացվում է միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ այլ եղանակներով կանխել մաքսանենգությունը կամ մաքսային այլ կանոնների խախտումը:

2. Անձի քննումը թույլատրվում է կատարել տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատան, մաքսային կետի պետի կամ նրանց տեղակալների գրավոր

որոշմամբ, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ուղևորվող կամ մաքսային հսկողության գոտում կամ միջազգային օդանավակայանի տարանցիկ ուղևորության գոտում ֆիզիկական անձն իր մոտ թաքցնում է մաքսանենգության օբյեկտ հանդիսացող ապրանքներ կամ այնպիսի ապրանքներ, որոնք մաքսային կանոնների խախտման անմիջական առարկա են կամ արգելված են Հայաստանի Հանրապետության տարածքում տարանցիկ փոխադրման համար:

3. Քննումն սկսելուց առաջ տարածաշրջանային մաքսատան կամ մաքսային կետի պաշտոնատար անձը պարտավոր է ֆիզիկական անձին ներկայացնել տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատան, մաքսային կետի պետի կամ նրա տեղակալի գրավոր որոշումը, նրան ծանոթացնել քննության ընթացքում իր իրավունքներին ու պարտականություններին և առաջարկել կամավոր հանձնել թաքցրած ապրանքները:

4. Անձի քննումը կատարվում է սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող մեկուսացված սենյակում՝ տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատան կամ մաքսային կետի՝ քննվողի հետ նույն սեռի պաշտոնատար անձի մասնակցությամբ: Քննմանը չմասնակցող ֆիզիկական անձանց մուտքն այդ սենյակ պետք է բացառվի: Անձի մարմնի քննումը կատարվում է միայն բուժաշխատողի կողմից: Քննման ընթացքում չի թույլատրվում կատարել անձի կյանքի և առողջության համար վտանգավոր գործողություններ:

5. Անգործունակ, ինչպես նաև 16 տարին չլրացած ֆիզիկական անձանց քննումն իրականացվում է վերջիններիս օրինական ներկայացուցիչների ներկայությամբ:

6. Անձի քննումն իրականացվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված գրավոր որոշման հիման վրա, որում նշվում են անձին քննման ենթարկելու հիմքերը և ինչ առարկաներ պետք է հայտնաբերվի: Եթե ֆիզիկական անձը հրաժարվում է կամավոր հանձնել հայտարարագրման ենթակա, սակայն՝ չհայտարարագրված ապրանքները կամ առարկաները կամ դրանք հանձնելուց հետո մաքսատան կամ մաքսային կետի պաշտոնատար անձը ունի հիմնավոր կասկածներ, որ ֆիզիկական անձն ամբողջությամբ չի հանձնել հայտարարագրման ենթակա, սակայն չհայտարարագրված ապրանքները կամ առարկաները, ապա կարող է սկսել անձի քննման գործողությունը, որի ընթացքում քննումն իրականացնողը կարող է կատարել անձնական զննություն և վերցնել քննման ենթարկվող անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա գտնվող առարկաները և փաստաթղթերը, որոնք տվյալ վարույթով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն:

7. Անձին քննման ենթարկելու մասին արձանագրությունը կազմվում և ծանոթացման է ներկայացվում սույն օրենսգրքի 104-րդ սահմանված կարգով:

8. Եթե քննվողի մոտ հայտնաբերվում են մաքսանենգության առարկաներ կամ այնպիսի առարկաներ, որոնք մաքսային կանոնների խախտման օբյեկտներ են կամ արգելված են Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման

համար, ապա դրանք մանրամասն պետք է նկարագրվեն, փաթեթավորվեն և կնքվեն՝ առարկան փոխելու, առանձնահատկությունները և հատկանիշները փոփոխելու հնարավորությունը բացառելու համար:

9. Անձին քննման ենթարկելու ընթացքում հայտնաբերված կամ կամավոր հանձնված ապրանքների կամ առարկաների նկարագրության, փաթեթավորման և կնքման համար կազմվում է առանձին արձանագրություն, որը կցվում է անձին քննման ենթարկելու մասին արձանագրությանը: Սույն մասում նշված արձանագրությունը կազմվում է 3 օրինակից, որից մեկը հանձնվում է քննվող անձին: Հայտնաբերված առարկաները կամ ապրանքները կցվում են անձին քննման ենթարկելու մասին արձանագրությանը:

10. Եթե քննվող անձի մոտ չեն հայտնաբերվում չհայտարարագրված կամ օրենքով սահմանված կարգով արգելված առարկաներ կամ ապրանքներ, ապա քննություն կատարող պաշտոնատար անձը ներողություն է խնդրում, և օրենքով սահմանված կարգով հատուցվում է քննման հետևանքով ֆիզիկական անձին պատճառված վնասը:

Հոդված 173. Ապրանքներ, տրանսպորտային միջոցներ և փաստաթղթեր վերցնելը

1. Մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները, մաքսային սահմանով դրանց տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցները, Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպատակով պատրաստված գաղտնարանները, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը ենթակա են վերցման: Վերցնելն իրականացվում է անձի, ում մոտ կատարվում է վերցնելը և նրա ներկայացուցչի ներկայությամբ, եթե ներկայացուցչի ներկայությունը հնարավոր է ապահովել: Վերցնելը կատարվում է անհրաժեշտության դեպքում՝ նաև թարգմանչի և մասնագետի մասնակցությամբ:

2. Վերցնելն ի կատար ածելու համար մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն պահանջել բացել փակված շինություններն ու պահեստարանները, իսկ պահանջը չկատարելու դեպքում՝ ինքնուրույն բացել և մուտք գործել այնտեղ: Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ֆիզիկական անձանց բնակարաններ մուտք գործելու կարգը սահմանվում է օրենքով: Վերցված բոլոր ապրանքները, տրանսպորտային միջոցները և փաստաթղթերը ներկայացվում են վերցման մասնակիցներին, մանրամասն նկարագրվում սույն օրենսգրքով կազմված արձանագրության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կնքվում:

3. Վերցնելն ավարտելուց հետո սույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով կազմվում է համապատասխան արձանագրություն: Արձանագրության պատճենը ստորագրությամբ առձեռն հանձնվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անձին, իսկ ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

Հոդված 174. Գործի քննության վայրը

1. Վերադաս մաքսային մարմնի ղեկավարը, գործի քննության արդյունավետությունից ելնելով, կարող է գործի քննությունը տարածքային մեկ մաքսային մարմնից վերցնել և հանձնարարել մեկ այլ տարածքային մաքսային մարմնի:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի իրավասու պաշտոնատար անձը կարող է վարույթի առանձին գործողությունների կատարումը հանձնարարել այլ մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ տարածքային կարգով կատարելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հանձնարարությունը պարտադիր է կատարման այն ստանալու պահից 5-օրյա ժամկետում:

ԳԼՈՒԽ 24.
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ, ԳՐԱՆՑՎՈՂ, ՀԱՇՎԱՌՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 175. Կարգավորման ոլորտը

1. Սույն գլխի նորմերը տարածվում են սույն օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների վրա:

Հոդված 176. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները

Սույն օրենսգրքի 175-րդ հոդվածով սահմանված իրավախախտումների վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող, գրանցվող կամ հաշվառվող սուբյեկտների, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող սուբյեկտների գործունեության ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորող այլ նորմատիվ ակտերով:

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 8.

ԳԼՈՒԽ 25.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 177. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու պահանջները խախտելը

1. Բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցելը առողջապահական ոլորտում համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում կամ շարունակական մասնագիտական հավաստագիր չունեցող անձի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Մասնագիտական կրթություն, որակավորում, մասնագիտացում կամ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր չունեցող անձին, բացառությամբ առաջին անգամ մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և մասնագիտացում ունեցող անձին, բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցել թույլատրելը, վերապահումով հավաստագիր ունեցող անձին ինքնուրույն բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցելը թույլատրելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում, անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքն ունեցող անձից բժշկական օգնության և սպասարկման համար վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

4. Մարդուն կամ նրա օրինական ներկայացուցչին իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման կամ բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների կամ բուժման արդյունքների մասին մատչելի ձևով տեղեկություն չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

5. Մարդու բժշկի դիմելու փաստի, առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկության մասին առանց նրա կամ օրինական ներկայացուցչի համաձայնության այլ անձի հայտնելը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

6. Պացիենտի վարման գործելակարգով, պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչներով սահմանված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

7. Բժշկական փաստաթղթեր (բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության թերթիկների) չվարելը կամ դրանց լրացման կամ շրջանառության պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

8. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լրացման կամ տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Բժշկական փորձաքննության (բացառությամբ ախտաբանաանատոմիական փորձաքննության) իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազարից՝ երեք հարյուր հազար դրամի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև մեկ տարի ժամկետով կամ առանց դրա:

10. Ախտաբանաանատոմիական հերձումների, փորձաքննությունների կամ հետազոտությունների անցկացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև վեց ամիս ժամկետով կամ առանց դրա:

11. Սույն հոդվածի 1-8-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

12. Սույն հոդվածի 9-10-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկմամբ՝ սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված առավելագույն ժամկետով:

Հոդված 178. Մարդուն օրգան և հյուսվածք փոխպատվաստելու կարգը խախտելը

1. Մարդուն օրգանի կամ հյուսվածքի փոխպատվաստման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Փոխպատվաստման նպատակով դիակային դոնորից օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

3. Փոխպատվաստման նպատակով կենդանի դոնորից օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 179. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության ու փոխներարկումային բժշկական օգնության կարգը խախտելը

1. Արյան ռեեստրում դոնորների վերաբերյալ գրանցված տեղեկությունների տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանող արյան դոնորից արյուն վերցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ արյուն կամ արյան բաղադրամաս հանձնելու համար սահմանված հաճախականությունը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Արյան դոնորին տեղեկատվության տրամադրման կամ նրա համաձայնության ստացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

5. Արյան կամ դրա բաղադրամասը վերցնելու ընթացակարգը կամ արյան հետազոտության իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Արյան կամ դրա բաղադրամասերի պահպանման կամ տեղափոխման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Դոնորական արյան պատրաստուկների արտադրության կամ շրջանառության օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

8. Օրենսդրությամբ սահմանած կարգով դոնորին տրվող արտոնությունները չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

9. Փոխներարկումային բժշկական օգնության իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

10. Արյան կամ դրա բաղադրամասերի արտահանման կամ ներմուծման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

11. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից արյան նվազագույն պաշարները չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

12. Օրենսդրությամբ սահմանած կարգով արյան կամ դրա բաղադրամասերի որակի ներքին ընթացակարգ չսահմանելը կամ այդ ընթացակարգի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

13. Սույն հոդվածի 1-12-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 180. Մարդու վերարտադրողական առողջության պահպանման կարգը խախտելը

1. Հղիության արհեստական ընդհատման կամ բժշկական ամլացման իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ:

2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման օրենսդրությամբ սահմանված կարգը, մեթոդների տարատեսակները կամ բժշկական գործելակերպը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 181. Հոգեբուժական օգնության մատուցման կարգը խախտելը

1. Հոգեբուժական օգնության մատուցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Հոգեկան խանգարումով տառապող անձի հոժարակամ հոսպիտալացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Հոգեկան խանգարումով տառապող անձի ոչ հոժարակամ հոսպիտալացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 182. Դեղերի շրջանառության կարգը խախտելը

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած դեպքերի) կամ գրանցումն օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցված կամ օրենսդրության խախտմամբ դեղեր ներմուծելը, արտադրելը, պահպանելը, բաշխելը, իրացնելը կամ կիրառելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝ մինչև 10 փաթեթի դեպքում՝ հարյուր հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով, 10-ից մինչև 30 փաթեթի դեպքում՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, 30 և ավելի փաթեթի համար՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքը օրենսդրության խախտմամբ արտադրելը, ներմուծելը, իրացնելը, պահպանելը կամ բաշխելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ արտադրանքի համար՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Դեղատներից իրացման կամ բաց թողնման ենթակա հիմնական դեղերի ցանկին համապատասխան նվազագույն տեսականի չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում:

4. Դեղատների առևտրի սրահներում կամ սպասասրահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Դեղատներում կաթիլաներարկման լուծույթներ պատրաստելը բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

6. Դեղատոմսով բաց թողնվող դեղի՝ առանց դեղատոմսի իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի համար՝ հինգ հազար դրամի չափով:

7. Դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացումը, դուրս գրումը կամ իրացումը՝ օրենսդրությամբ չսահմանված ձևաթղթերի վրա՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

8. Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատած դեղագրությունների պահանջները խախտելը կամ պատրաստված դեղերի որակի, ձևավորման, փաթեթավորման, պիտակավորման, պահպանման, իրացման պահանջները խախտելը կամ դեղատանը պատրաստված դեղերն առանց պիտանիության ժամկետի նշման բաց թողնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ կողմից գրանցված դեղերի վնասակար կողմնակի ազդեցության վերաբերյալ արձանագրված դեպքերի վերաբերյալ չհայտնելը կամ դրանց վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը՝ առանց նախապես

կամ միաժամանակ առողջապահության բնագավառի լիազոր պետական կառավարման մարմնին հայտնելու՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

10. Դեղի մակնշման մեջ, ընդհանուր բնութագրում և ներդիր թերթիկում Հայաստանի Հանրապետությունում դեղի մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը ներառելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

11. Դեղ չհամարվող ցանկացած արտադրանքի այդ թվում՝ գեղարարական (կոսմետիկ) միջոցների, կենսակտիվ հավելումների, փաթեթի վրա կամ օգտագործման հրահանգում բուժական ցուցումների նշումը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ արտադրանքի համար՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

12. Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի կամ հետազոտվող դեղագործական արտադրանքի փաթեթավորմանը, պիտակավորմանը կամ մակնշմանը ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի կամ արտադրանքի համար հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

13. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ առանց հայերեն ներդիր-թերթիկի դեղերի իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանման համար քսան հազար դրամի չափով:

14. Դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ կողմից գրանցված արտադրանքի անվտանգության, արդյունավետության, որակի վերաբերյալ հետգրանցումային շրջանում հայտնաբերված կամ կատարված յուրաքանչյուր նոր տվյալի կամ փոփոխության մասին գրավոր կարգով առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

15. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պիտանիության ժամկետն անցած դեղեր կիրառելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

16. Օրենսդրությամբ սահմանված կարգով դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառությունը չդադարեցնելը կամ շրջանառությունից չհանելը (հետկանչ չիրականացնելը)՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի կամ արտադրանքի համար հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

17. Դեղատոմսով բաց թողնվող դեղի՝ դեղատանը առկա նույն ակտիվ բաղադրատարրը պարունակող նույն դեղաչափով և դեղաձևով փոխադարձաբար փոխարինելի բոլոր դեղերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազարի դրամի չափով:

18. Դեղերի գները կարգավորող մարմնի որոշումները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

19. Դեղերի արտադրություն կամ մեծածախ իրացում իրականացնողների կողմից օրենսդրությամբ սահմանված հաշվետվություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

20. Դեղերի առաքման տեխնիկական կամ մասնագիտական պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

21. Դեղատներում կամ դեղատնային կրպակներում գնորդին (սպառողին) վաճառված պատշաճ որակի դեղերը փոխարինելը կամ հետ վերցնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

22. Դեղատներում ոչ դեղագիտական խորհրդատվության տրամադրումը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

23. Սույն հոդվածի 1-22-րդ մասերով (բացառությամբ 3-րդ մասի) սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

24. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանում դեղի համար՝ հինգ հազար դրամի չափով:

Հոդված 183. Դեղերի կլինիկական փորձարկումների կարգը խախտելը

1. Դեղերի կլինիկական փորձարկումների օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը, եթե դա վնաս չի պատճառել փորձարկվողի առողջությանը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Դեղերի կլինիկական փորձարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 184. Առողջապահության ոլորտում, ինչպես նաև հատուկ նշանակության սննդամթերքի, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդի կարգը խախտելը

1. Առանց առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի թույլտվության կամ թույլտվության պայմանների խախտմամբ՝ գովազդատուի կողմից բուժտեխնիկայի կամ բուժական մեթոդի գովազդը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Գովազդատուի կողմից արյան կամ դրա բաղադրամասերի դոնորության կամ փոխներարկումային բժշկության՝ առևտրային բնույթ կրող գովազդը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Առանց անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության կամ առանց առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու՝ գովազդատուի կողմից հատուկ նշանակության սննդամթերք գովազդելը

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Գովազդատուի կողմից ալկոհոլային խմիչքներ գովազդելը՝ այդ ապրանքատեսակի գովազդման օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

5. Գովազդատուի կողմից ծխախոտ գովազդելը՝ այդ ապրանքատեսակի գովազդման օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

6. Գովազդատուի կողմից բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնողների գովազդման ժամանակ գովազդում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը չնշելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Մանկական կամ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների կամ մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերք կամ հարակից ապրանքներ գովազդելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

8. Հավելյալ մանկական սննդի գովազդ իրականացնելը՝ այդ ապրանքատեսակի գովազդման օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Սույն հոդվածի 1-8-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 185. Դեղերի գովազդին և դեղերի մասին տեղեկատվությանը ներկայացվող պահանջները խախտելը

1. Գովազդատուի կողմից դեղ գովազդելը՝ առանց առողջապահության բնագավառի լիազոր պետական կառավարման մարմնի թույլտվության կամ այդ թույլտվության պայմանների խախտմամբ կամ դեղի արտաքին գովազդը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի համար հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Գովազդատուի կողմից Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող կամ հսկվող կամ դեղատանը՝ ըստ դեղատոմսի կամ ըստ դեղագրությունների պատրաստվող դեղի կամ բժշկի հատուկ նշանակում պահանջող դեղի գովազդը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի համար հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Գովազդատուի կողմից դեղ չհամարվող ցանկացած արտադրանքի՝ որպես բուժման միջոցի գովազդելը կամ գովազդատուի կողմից գովազդի նպատակով դեղն ուղղակիորեն սպառողին տրամադրելը կամ բժշկական գործունեությամբ զբաղվող անձին գովազդի նպատակով դեղերի անվճար նմուշների տրամադրումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Դեղատոմսով իրացվող կամ բաց թողնվող դեղերի մասին տեղեկատվության տարածումը զանգվածային լրատվության միջոցներով՝

առաջացնում է տուգանք՝ տեղեկատվությունը տարածողի նկատմամբ յուրաքանչյուր անվանմամբ դեղի համար երկու հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 186. Պարտադիր բժշկական զննում չանցած կամ բժշկական հակացուցումներ ունեցող անձին աշխատանքի ընդունելը կամ աշխատանքի թույլատրելը

1. Պարտադիր նախնական բժշկական զննություն չանցած կամ բժշկական հակացուցումներ ունեցող անձին աշխատանքի ընդունելը կամ աշխատանքի թույլատրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր անձի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 187. Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները խախտելը

1. Առողջապահության բնագավառում օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնները կամ հիգիենիկ նորմատիվները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 188. Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության կանոնները խախտելը

1. Մանկական սննդի կամ հարակից ապրանքների վաճառքը՝ առողջապահական կազմակերպությունների կողմից՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ընդգրկված բուժաշխատողի կողմից մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը կամ իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկուհարյուր հազար դրամի չափով:

3. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման, մանկական սննդի կամ հարակից ապրանքների վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական

տեղեկատվական կամ ուսուցողական նյութեր պատրաստելը կամ տարածելը օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Մանկական սննդի կամ հարակից ապրանքների պիտակավորման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Մինչև վեց ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի վաճառքը՝ կամ որպես պիտանի 6 ամսականից փոքր մանուկների կերակրման համար ներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

6. Մանկական սննդի կամ հարակից ապրանքների պահպանման համապատասխան պայմաններ չունեցող առեւտրի օբյեկտի, սպառողական ապրանքների շուկայի, շրջիկ առեւտրի կետի կամ առեւտրի կենտրոնի կողմից դրանց վաճառքը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

7. Սույն հոդվածի 1-6-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 189. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելը

1. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

3. Այն անձը, որն առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու կապակցությամբ բժշկական օգնություն ստանալու համար կամովին դիմել է համապատասխան բժշկական կազմակերպություն, ազատվում է սույն հոդվածով սահմանված վարչական պատասխանատվությունից:

ԳԼՈՒԽ 26.
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 190. Կրթության բնագավառում օրենսդրության պահանջները խախտելը

1. Ուսումնական հաստատություններում ուսումնական պլանները կամ առարկայական ծրագրերը, ուսումնական զարգացման կամ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրերը չկատարելը, ինչպես նաև տարեկան ուսումնական ժամանակացույցերը կամ դասացուցակները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով:

2. Ուսումնական հաստատության սովորողների կամ շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման կամ գնահատման, կամ ամփոփիչ ատեստավորման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով:

3. Ուսումնական հաստատության սովորողների ընդունելության, տեղափոխման, փոխադրման, ազատման կամ ավարտման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր սովորողի համար:

4. Ուսումնական հաստատության ավարտական պետական փաստաթղթերի տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսանից երեսուն հազար դրամի չափով:

5. Հանրակրթական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գործունեության ամենամյա ինքնավերլուծության գնահատումը կամ հրապարակումը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

6. Կրթական վճարովի ծառայություններ մատուցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

7. Ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 191. Աշխատանքային օրենսդրության պահանջները խախտելը

1. Գործատուի կողմից՝ 14 տարին չլրացած անձի հետ օրենքով չսահմանված ոլորտներում կամ առանց ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնության, կամ 14-ից մինչև 16 տարեկան անձի հետ առանց ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնության, աշխատանքային պայմանագիր կնքելը՝

առաջացնում է տուգանք՝ յոթանասուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

2. Գործատուի կողմից օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ սահմանված կարգով (չափով) արձակման նպաստ չվճարելը, կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ կարգով (չափով) աշխատողին վնասի հատուցում չվճարելը, կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար օրենսդրությամբ, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված ծանուցման ժամկետները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

3. Գործատուի կողմից աշխատանքի վայրում աշխատողի մահվան դեպքում՝ ապահովագրողին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և աշխատանքի անվտանգության ապահովման հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին անհապաղ չտեղեկացնելը, ինչպես նաև դժբախտ դեպքի ծառայողական քննություն սահմանված կարգով և ժամկետում չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր երեսուն հազար դրամի չափով:

4. Գործատուի կողմից մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) ծառայողական քննության ընթացքում՝ ծառայողական քննություն անցկացնող համապատասխան հանձնաժողովին քննության համար անհրաժեշտ տեղեկություն կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ հանձնաժողովի աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ չապահովելը, կամ ծառայողական քննության արդյունքների հիման վրա հանձնաժողովի կողմից տրված գրավոր հանձնարարականը չկատարելը, կամ գրավոր հանձնարարականը կատարելու մասին սահմանված ժամկետում հանձնաժողովին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր երեսուն հազար դրամի չափով:

5. Գործատուի կողմից աշխատողների օրական կամ շաբաթական աշխատաժամանակի ստույգ հաշվառում չիրականացնելը, աշխատանքի և հանգստի ժամանակացույց չհաստատելը, հաստատված ժամանակացույցը խախտելը, աշխատողի օրական կամ շաբաթական աշխատաժամանակի տևողության կամ հանգստի ժամանակի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

6. Գործատուի կողմից օրենսդրությամբ չսահմանված դեպքերում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելը, որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու կամ աշխատանքային պայմանագիր կնքելիս փորձաշրջան սահմանելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

7. Գործատուի կողմից աշխատանքի ժամանակացույցով չնախատեսված՝ հանգստյան, օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատողներին աշխատանքում ներգրավելու դեպքում ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով վճարում չկատարելը, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում վճարովի այլ հանգստյան օր չտրամադրելը, կամ այդ օրն ամենամյա արձակուրդին չավելացնելը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, օրական կամ շաբաթական աշխատաժամանակի առավելագույն տևողության օրենսդրությամբ սահմանված ժամանակը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

8. Գործատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ամենամյա արձակուրդ չտրամադրելը, ամենամյա արձակուրդը օրենսդրությամբ սահմանված դեպքերում չերկարաձգելը, ամենամյա արձակուրդի համար միջին աշխատավարձը օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարելը, չօգտագործված ամենամյա արձակուրդը դրամական հատուցմամբ փոխարինելը կամ չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դրամական հատուցում չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

9. Գործատուի կողմից աշխատողների համար օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսվածից նվազ բարենպաստ պայմաններ սահմանելը, կամ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գրքույկները չվարելը կամ դրանք խախտումով վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով յուրաքանչյուր խախտման համար:

9. Գործատուի կողմից աշխատողին՝ գործադուլի մասնակցելուն կամ դրան մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսունից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

10. Սույն հոդվածի 1-8-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով

Հոդված 192. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատող պահելը

1. Գործատուի կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ ընդունելու աշխատող (չձևակերպված աշխատող) պահելը, կամ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի բովանդակության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջները չներառող աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատող պահելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսունից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի իմաստով «չձևակերպված աշխատող» է հանդիսանում նաև այն անձը, որն առերևույթ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա գործատուի օգտին աշխատանքներ է կատարում, սակայն վարչական մարմինը վերաբերելի և թույլատրելի ապացույցներով հիմնավորում է, որ ծառայությունների մատուցումը կրում է ձևական բնույթ, անձը, ըստ էության, կատարում է գործատուի անհատական ակտով հաստատած հաստիքային միավորին հատկանշական աշխատանք, աշխատանքները կատարում է գործատուի հաստատած աշխատանքային ժամանակացույցին համապատասխան, հերթափոխների ժամանակացույցով (դրանց առկայության դեպքում), օգտվում է հանգստի ժամանակացույցից (օրական և շաբաթական), ենթարկվում է

գործատուի ներքին կարգապահական կանոններին, կամ տվյալ անձի կատարած աշխատանքն իր բնույթով հանդիսանում է գործատուի կողմից կազմակերպվող փուլային աշխատանքի անբաժանելի բաղկացուցիչ, որի բացակայությունը անխուսափելիորեն կհանգեցնի աշխատանքների ողջ փուլի խաթարմանը:

Հոդված 193. Գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը

1. Գործատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը, պակաս վճարելը, ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ համապատասխան վճարում չկատարելը կամ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից պակաս աշխատավարձ սահմանելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աշխատողի մասով համապատասխանաբար չվճարված, պակաս վճարված կամ պակաս սահմանված աշխատավարձի չափի մեկ քառորդի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աշխատողի մասով համապատասխանաբար չվճարված, պակաս վճարված կամ պակաս սահմանված աշխատավարձի չափի մեկ երկրորդի չափով:

Հոդված 194. Աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման պահանջները խախտելը

1. Գործատուի կողմից աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր չընդունելը, աշխատողներին աշխատանքի անվտանգության ուսուցում կամ հրահանգավորում չանցկացնելը կամ աշխատողներին կոլեկտիվ կամ անհատական պաշտպանության միջոցներով չապահովելը՝

առաջացնում է տուգանք երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով:

2. Գործատուի կողմից մինչև տասնութ տարեկան անձին աշխատանքային օրենսդրությամբ արգելված աշխատանքներում ներգրավել, հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց աշխատանքային օրենսդրությամբ արգելված աշխատանքներում, ինչպես նաև աշխատանքի վնասակար կամ վտանգավոր գործոնների առկայության պայմաններում աշխատանքի ներգրավելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքների որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

ԳԼՈՒԽ 27.
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 195. Ցանքերի արածավերումը, դաշտում գտնվող գյուղատնտեսական կուլտուրաների հավաքված բերքը փչացնելը, ոչնչացնելը, կամ տունկերը վնասելը

1. Ընտանի կենդանիների (տնային անասունների կամ թռչունների) կողմից ցանքերի արածավերումը, կամ դաշտում գտնվող գյուղատնտեսական կուլտուրաների հավաքած բերքը փչացնելը կամ ոչնչացնելը, կամ տունկերը վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ ընտանի կենդանիների սեփականատիրոջ նկատմամբ՝ տասը հազար դրամի չափով:

2. Ցանքերի կամ տունկերի միջով գյուղատնտեսական տեխնիկայի կամ ինքնագնաց գյուղատնտեսական մեքենայի կամ այլ տրանսպորտային միջոցով (վտանգի աղբյուր հանդիսացող գույքով) անցնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 196. Բույսերի կարանտինի վնասակար օրգանիզմների կամ բույսերի կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների վնասազերծման կարգը խախտելը

1. Բույսերի կարանտինի վնասակար օրգանիզմների վնասազերծման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի չափով, իսկ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամի չափով:

2. Հողօգտագործողների կողմից բույսերի կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների վնասազերծման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հինգ հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամի չափով, իսկ պաշտոնատար անձի նկատմամբ՝ քառասուն հազար դրամի չափով:

Հոդված 197. Կարանտինային ստուգման կամ համապատասխան մշակման չենթարկված նյութեր դուրս բերելը

1. Արտասահմանյան երկրներից ներմուծված՝ կարանտինային ստուգման կամ համապատասխան մշակման չենթարկված նյութերը սահմանային երկաթուղային կայարաններից, ավտոկայարաններից (ավտոկայաններից), օդանավակայաններից և այլ կետերից դուրս բերելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 198. Օգտագործումն արգելված, ժամկետանց, անորակ պեստիցիդներ կամ ագրոքիմիկատներ վաճառելը, պեստիցիդների կամ ագրոքիմիկատների վաճառքի կանոնները խախտելը կամ պեստիցիդների կամ ագրոքիմիկատների թույլատրելի մնացորդային առավելագույն քանակները գերազանցելը

1. Օգտագործումն արգելված, ժամկետանց կամ անորակ պեստիցիդներ կամ ագրոքիմիկատներ վաճառելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

2. Պեստիցիդների կամ ագրոքիմիկատների վաճառքի՝ օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով:

3. Հողօգտագործողի կողմից հողում կամ բուսական ծագում ունեցող մթերքներում պեստիցիդների կամ ագրոքիմիկատների թույլատրելի մնացորդային առավելագույն քանակները գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազարից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 199. Բուսասանիտարական անձնագրի տրման կարգը խախտելը

1. Բուսասանիտարական անձնագրի տրման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից՝ հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 200. Թմրամիջոցներ պարունակող ցանքերի հսկողության իրականացման կարգը խախտելը

1. Կանեփի կամ ձիթախաշխաշի ցանքերի, դրանց կուլտուրաների բերքի պահատեղերի կամ վերամշակման օրենսդրությամբ սահմանված հսկողություն չիրականացնելը կամ դրա իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը, կամ թմրամիջոցներ պարունակող հնձած արտերի մնացորդների կամ արտադրության թափոնների ոչնչացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 201. Մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը

1. Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով սահմանված թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսեր՝ մանր չափերով ցանելը կամ աճեցնելը ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից ութսուն հազարից դրամի չափով:

2. Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով սահմանված թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսեր զգալի չափերով ցանելը կամ աճեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից հարյուր հիսուն դրամի չափով:

3. Սույն հոդվածի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսերի՝ մանր և զգալի չափեր են համարվում սույն օրենսգրքի N 2 հավելվածով սահմանված չափերը:

Հոդված 202. Գյուղատնտեսական տեխնիկան սահմանված կարգով կամ ժամկետներում հաշվառման չներկայացնելը կամ առանց վարման համապատասխան իրավունքի այն շահագործելը

1. Գործարանային արտադրության կամ ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկան (ինքնագնաց գյուղատնտեսական մեքենան) սեփականատիրոջ կողմից սահմանված ժամկետներում հաշվառման չներկայացնելը կամ սահմանված կարգով չհաշվառված գյուղատնտեսական տեխնիկան շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ տասը հազար դրամի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի չափով:

2. Շահագործող անձի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գյուղատնտեսական տեխնիկան առանց վարման համապատասխան իրավունքի շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքների որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 203. Անասնաբուժական գործունեություն իրականացման կարգը խախտելը

1. Անասնաբուժական գործունեություն իրականացնող անձի կողմից հակաանասնահամաճարակային միջոցառումների և անասնաբուժական գործունեության գրանցամատյաններում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

2. Անասնաբուժական գործունեություն իրականացնող անձի կողմից յուրաքանչյուր նոր գրանցված գյուղատնտեսական կենդանու անասնաբուժական անձնագրի տվյալները սահմանված ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Անասնաբուժական գործունեություն իրականացնող անձի կողմից կենդանիների վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգի, կենդանիների հիվանդացության կամ անկման դեպքում անհապաղ լիազոր մարմնին չծանուցելը և հիվանդությունների կանխարգելման ու վերացման համապատասխան հրահանգներ չտալը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

4. Անասնաբուժական գործունեություն իրականացնող անձի կողմից կենդանիների առողջության վրա անասնաբուժական դեղամիջոցի, բժշկական պրեպարատներով հագեցած կերերի կիրառման խախտումների կամ դադարեցման ժամանակահատվածի ազդեցության մասին կենդանիների սեփականատերերին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով:

5. Անասնաբուժական գործունեություն իրականացնող անձի կողմից անկած կենդանիների հավաքման, ոչնչացման կամ թաղման կարգի խախտումների հայտնաբերման դեպքերի մասին լիազոր մարմնին անմիջապես չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

6. Անասնաբուժական գործունեություն իրականացնող անձի կողմից կենդանիների բուժման կամ զոոտեխնիկական նպատակներով հորմոնալ արտադրանքներ չկիրառելը, բետա-անտագոնիստների, թիրեոստատիկ կամ այլ անասնաբուժական դեղամիջոցների կամ անասնաբուժական միջոցների օգտագործման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

7. Սույն հոդվածի 1-6-րդ մասերով սահմանված արարքների որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 204. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրում ընդգրկված կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ պատվաստումներ, ախտորոշման նպատակով արյունառում կամ օրենդրությամբ սահմանված այլ անասնաբուժական միջոցառումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից կենդանիների հաշվառում, համարակալում չիրականացնելը կամ, օրենսդրությամբ սահմանված՝ կենդանիների անձնագրերի, կենդանիների հաշվառման և անասնաբուժական միջոցառումների գրանցամատյաններ չվարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից կատարված հակաանասնահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվությունը և հաշվետվությունը լիազոր մարմնին չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

4. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից գյուղատնտեսական կենդանիների նախասպանդային և հետսպանդային զննում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

5. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից անասնաբուժության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ լիազոր մարմնին տեղեկատվության չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

6. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից կենդանիների պաշտպանությանն ուղղված անասնաբուժական գործունեություն չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

7. Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրվող անասնաբուժական պետական վերահսկողության ենթակա ապրանքների համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

8. Սույն հոդվածով 1-7 սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 205. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ

1. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման հրահանգներով սահմանված միջոցառումներ չիրականացված և չհամարակալված մթերատու կենդանիներ տեղաշարժելը կամ տեղափոխելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից գյուղատնտեսական կենդանիների անհատական ականջանշանների կամ այլ տեսակի համարակալումների հանումը կամ մեղվի փեթակների նշանների ջնջումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից առանց անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայության մթերատու կենդանիների, իսկ խոշոր եղջերավոր և միասմբակավոր անասունների դեպքում՝ նաև առանց անձնագրի տեղափոխումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

4. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից թափոնների հավաքման համար հատուկ հատկացված տեղերում անասնապահությունը, կենդանիների բուծումը կամ կերակրումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

5. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից հիվանդ կամ հնարավոր վարակակիր

կենդանիների տեղափոխումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն իրականացվում է անասնաբույժի գրավոր ցուցումով կամ լիազոր մարմնի թույլտվությամբ՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից կենդանիների կերակրումը սննդի մնացորդներով, բացառությամբ այն կենդանիների, որոնք բուծվում են մորթու արտադրության համար՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

7. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից հասարակական արոտավայրերի կամ ջրելատեղերի օգտագործումը չհամարակալված կամ հակաանասնահամաճարակային տարեկան միջոցառումներում չներառված մթերատու կենդանիների կողմից՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամի չափով:

8. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից խոզերի արոտախոտային աճեցումը, կամ վերամշակված կենդանական ծագման սպիտակուցներով արոտների պարարտացումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

9. Անասնաբուժական դեղամիջոցների կիրառումը անասնաբուժական կրթություն չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

10. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հրահանգներով արգելված սատկած կենդանիների մաշկազերծումը, դիահերձումը կամ այդ հիվանդություններով հիվանդ կենդանիների սանիտարական սպանդը կամ մորթը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից անասնաբուժական դեղամիջոցների արտադրության համար նախատեսված անասնաբուժական դեղամիջոց հանդիսացող ակտիվ կամ այլ նյութերի կիրառումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

12. Անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների շրջանառության փուլերում գործունեություն իրականացնող անձի կողմից շների կամ կատուների կաշիների արտադրությունը, ներմուծումը կամ արտահանումը:

առաջացնում է տուգանք ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

13. Սույն հոդվածի 1-12-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 206. Կենդանական ծագման հումքի և մթերքի արտադրության, վերամշակման, պահման, փոխադրման, առևտրի, իրացման, օգտահանման և ոչնչացման կարգը խախտելը

1. Օրենսդրությամբ սահմանած՝ կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային կամ բնակչության կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման արտադրանքին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Անասնաբուժական հետազոտման, նախասպանդային և հետսպանդային զննման չենթարկված կամ անասնահամաճարակային տեսակետից անապահով վայրերի տնտեսություններից ծագող, կամ կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեպքերի կամ դրանց կասկածների հետևանքով արգելքների կամ սահմանափակումների ենթարկված կենդանիներից՝ մարդկանց կողմից սպառման համար նախատեսված կենդանական ծագման հումք կամ մթերք արտադրելը՝

առաջացնում է տուգանք ՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

2. Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնում չհաշվառված անձի կողմից՝ մարդկանց կողմից սպառման ենթակա կենդանական ծագման հումքի կամ մթերքի արտադրությունը, վերամշակումը կամ վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանք ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Կենդանական ծագման կողմնակի արտադրանքից ստացված՝ մարդկանց կողմից սպառման ոչ ենթակա կենդանական ծագման հումքի և մթերքի արտադրությունը, վաճառքը կամ շուկայում տեղակայումն օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնում հաշվառված հաստատություններից դուրս իրականացնելը

առաջացնում է տուգանք ՝ հարյուր հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 207. Կենդանական ծագման հումքի կամ մթերքի շրջանառության կարգը խախտելը

1. Կենդանական ծագման հումքի, մթերքի արտադրությամբ, վերամշակմամբ, առևտրով կամ իրացմամբ զբաղվող անձի կողմից անասնաբուժական դեղամիջոցով բուժվող, թիրեոստատիկ կամ բետա-ագոնիստներ ընդունած կենդանիներից մինչև դրանց ազդեցության դադարեցման ժամանակահատվածը լրանալը ստացված կամ սոմատոտրոպ հորմոնային պրեպարատներով բուժված կթու կենդանիներից կամ վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կամ անասնաբուժական դեղամիջոցի մնացորդների առավելագույն թույլատրելի չափաքանակների գերազանցում հայտնաբերված կենդանիներից ստացված արատադրանքի արտադրությունը, վերամշակումը, առևտուրը կամ իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Բուժիչ և զոոտեխնիկական նպատակներով հորմոնալ անասնաբուժական դեղամիջոցների, թիրեոստատիկներ կամբետա-ագոնիստների կիրառման օրենսդրությամբ սահմանված կարգը ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Կենդանական ծագման հումքի և մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի փոխադրումն իրականացնող լիազոր մարմնում հաշվառված ապրանքափոխադրողներ չհամարվող անձի կողմից այդ արտադրանքների փոխադրում իրականացնելը, կենդանական ծագման հումքի կամ մթերքի փոխադրում իրականացնելը ոչ համապատասխան տրանսպորտային փոխադրամիջոցներով, փոխադրմանը օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 208. Կենդանիներ պահելիս կենդանիների կամ մարդկանց համար վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացման կարգը խախտելը

1.Կենդանիներ պահելիս կենդանիների կամ մարդկանց համար վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ պայմաններ չստեղծելը կամ կատարված հակաանասնահամաճարակային միջոցառումների մասին օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ, անասնագլխաքանակի արհեստական սերմնավորման, հաշվառման, շարժի վերաբերյալ տվյալներ, կենդանական ծագման մթերքի կամ հումքի, վերամշակված կերերի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև լրացակերեր տեղափոխող, պահպանող, իրացնող անձի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը անասնաբուժական պետական տեսուչին չտրամադրելը կամ այդ կենդանիներին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամի, իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 209. Անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված կենդանական ծագման մթերքի կամ հումքի, վերամշակված կերերի, լրացակերերի, սննդում օգտագործվող սնկերի իրացումը

1. Անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված կենդանական ծագման մթերքի կամ հումքի, վերամշակված կերերի, լրացակերերի կամ սննդում օգտագործվող սնկերի իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի, իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 210. Անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված կենդանական ծագման մթերքի կամ հումքի, վերամշակված կերերի, լրացակերերի արտադրությունը, վերամշակումը, պետական գրանցում չստացած անասնաբուժական դեղամիջոցների արտադրությունը, իրացումը կամ առանց ծագումը և ձեռքբերումը հավաստող փաստաթղթերի պետական գրանցում ստացած անասնաբուժական դեղամիջոցների իրացումը

1. Անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված կենդանական ծագման մթերքի, հումքի, վերամշակված կերերի կամ լրացակերերի արտադրությունը, վերամշակումը, պետական գրանցում չստացած անասնաբուժական դեղամիջոցների արտադրությունը, իրացումը կամ առանց ծագումը և ձեռքբերումը հավաստող փաստաթղթերի՝ պետական գրանցում ստացած անասնաբուժական դեղամիջոցների իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 211. Կենդանիների համաճարակների դեմ պայքարի առնչությամբ կարանտին սահմանելու հարցերով տարածքային կառավարման մարմինների որոշումները խախտելը

1. Կենդանիների համաճարակների դեմ պայքարի առնչությամբ կարանտին սահմանելու հարցերով տարածքային կառավարման մարմինների որոշումները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամի, իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 212. Կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, անասնաբուժական պետական հսկողության ենթակա այլ բեռների միջազգային փոխադրումների կարգը խախտելը

1. Կենդանիների, կենդանական ծագման մթերքի կամ հումքի, անասնաբուժական պետական հսկողության ենթակա այլ բեռների միջազգային փոխադրումներ (ներմուծում, արտահանում կամ տարանցում) իրականացնելիս դրանք անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկելը կամ անասնաբուժական այլ կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների (բեռների) տեղափոխումը, ընդունումը, պահպանումը կամ իրացումը՝ առանց անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 213. Կենդանիների սպանդին, սանիտարական սպանդին, մորթին և գյուղատնտեսական կենդանիների փոխադրման կարգը խախտելը

1. Կենդանիների սպանդին, սանիտարական սպանդին, մորթին և գյուղատնտեսական կենդանիների փոխադրմանը օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 214. Հակաանասնահամաճարակային կանխարգելիչ և հարկադիր միջոցառումների և անասնաբուժական ծառայության աշխատանքների իրականացման կարգը խախտելը

1. Հակաանասնահամաճարակային կանխարգելիչ կամ հարկադիր միջոցառումների, անասնաբուժական ծառայության աշխատանքների իրականացման ՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամի, իրավաբանական անձի կամ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

Հոդված 215. Մշակաբույսերի սերմերի արտադրության, պահպանության, փոխադրման կամ վերարտադրության կարգը խախտելը

1. Մշակաբույսերի սերմերի արտադրությամբ, պահպանությամբ, փոխադրումներով, վերարտադրությամբ, իրացմամբ զբաղվող կամ հավաստագրման գործընթացն իրականացնող անձի կողմից սերմերի սորտային մաքրության, սորտային և դասային պատկանելիության փաստաթղթերի պահպանության օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը կամ հավաստագրման ընթացակարգի, սերմնաբուծության հերթագայության, տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների կամ սերմնաբուծության օրենսդրությամբ սահմանված պահանջների ճշգրիտ իրականացումն ու համապատասխան փաստաթղթերի ձևակերպումը չապահովելը՝

առաջացնում է տուգանք ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Մշակաբույսերի հավաստագրված սերմերի արտադրությամբ, պահպանությամբ, փոխադրումներով, վերարտադրությամբ, իրացմամբ զբաղվող և հավաստագրման գործընթացն իրականացնող անձի կողմից սերմերի որակի փաստաթղթերում արձանագրված սորտային մաքրության, սորտային կամ դասային պատկանելիության համապատասխանությունն իրացվող սերմերի հավաստագրի համապատասխան ցուցանիշները խախտելը, սերմերի սորտային մաքրության, սորտային կամ դասային պատկանելիության ցուցանիշների փոփոխություններ առաջացնելը, սերմերի որակական ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ սահմանված ժամկետում լիազորված մարմին համապատասխան տեղեկատվություն չներկայացնելը, կամ հավաստագրում ամրագրված ցուցանիշների և սերմերի խմբաքանակի համապատասխան փաստացի ցուցանիշների միջև անհամապատասխանության առաջացնելը՝

առաջացնում է տուգանք ՝ հարյուր հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 216. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը

1. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որի հետևանքով վնաս է պատճառվել այլ անձի գույքին կամ առողջությանը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 217. Արգելված տեղերում գյուղատնտեսական կենդանիներ պահելը

1. Գյուղատնտեսական կենդանիների սեփականատիրոջ կողմից օրենսդրությամբ սահմանված արգելված տեղերում գյուղատնտեսական կենդանիներ պահելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 28.
ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 218. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական դրական եզրակացության՝ փորձաքննության ենթակա գործունեության թույլատրման մասին որոշում ընդունելը

1. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական դրական եզրակացության՝ փորձաքննության ենթակա գործունեության թույլատրման մասին որոշում ընդունելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 219. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական դրական եզրակացության գործունեություն իրականացնելը

1. Առանց փորձաքննական դրական եզրակացության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա Ա կատեգորիայի գործունեության տեսակների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Առանց փորձաքննական դրական եզրակացության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա Բ կատեգորիայի գործունեության տեսակների իրականացումը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

3. Առանց փորձաքննական դրական եզրակացության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա Գ կատեգորիայի գործունեության տեսակների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 220. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտներին և բնութագրերին օրենսդրությամբ ներկայացվող պահանջները խախտելը

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտներին կամ բնութագրերին օրենսդրությամբ ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 221. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա գործունեության մասին չիրազեկելը, հիմնադրութային և նախագծային փաստաթղթերը չհրապարակելը, հասարակական քննարկումների անցկացման կարգը խախտելը

1. Ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների կամ փորձաքննական եզրակացության նախագծի մասին սահմանված կարգով կամ ժամկետում հանրությանը չծանուցելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների մասին սահմանված կարգով կամ ժամկետում հանրությանը չծանուցելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված ծանուցումը, հիմնադրութային և նախագծային փաստաթղթերը լիազոր մարմնի կայքում սահմանված կարգով կամ ժամկետում չտեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրային քննարկումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը կամ ժամկետները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության ներկայացրած հիմնավոր կարծիքը փորձաքննական եզրակացությունը հաստատելիս հաշվի չառնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 222. Բնապահպանության ոլորտի հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները խախտելը

1. Բնապահպանության ոլորտի վարչական վիճակագրական հաշվետվությունները կամ բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ յոթանասուն հազար դրամի չափով:

Հոդված 223. Շենքերի և շինությունների շահագործման, շահագործումից դուրս բերելու ընթացքում բնապահպանական պահանջները չպահպանելը

1. Տարածքային պլանավորման, քաղաքաշինական գոտիավորման, տարածքի պլանավորման, ճարտարապետա-շինարարական նախագծման, շինարարության, կապիտալ վերանորոգման, վերակառուցման, շենքերը, շինությունները և կապիտալ շինարարության այլ օբյեկտները շահագործման հանձնելու, շահագործման կամ շահագործումից դուրս բերելու ընթացքում օրենսդրությամբ սահմանված բնապահպանական պահանջները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 224. Հողամասի նպատակային, գործառնական նշանակության և հողատեսքերի իրավական ռեժիմը խախտելը

1. Հողամասի՝ ըստ նպատակային կամ գործառնական նշանակության կամ հողատեսքերի օգտագործման օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Հողամասի նպատակային կամ գործառնական նշանակությունն ինքնակամ փոխելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Հողամասի նպատակային կամ գործառնական նշանակության ինքնակամ փոփոխումը չկանխելը իրավասու վարչական մարմնի կողմից՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Համայնքի ղեկավարի կողմից հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին սահմանված ժամկետում կամ կարգով լիազոր մարմնին չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 225. Հողաշինարարական փաստաթղթերի կազմման կարգը խախտելը

1. Հողաշինարարական տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ փաստաթղթերի կամ հողաշինարարական փաստաթղթերի կազմման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 226. Ներտնտեսային հողաշինարարության նախագծերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը

1. Ներտնտեսային հողաշինարարության նախագծերի օրենսդրությամբ սահմանված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով:

2. Ներտնտեսային հողաշինարարության նախագծերի պահանջներն առանց լիազոր մարմնի համաձայնության փոփոխելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 227. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման կարգը խախտելը

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կամ հողերի գոտիավորման, օգտագործման սխեմաները սահմանված նորմատիվների կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ մշակելը ՝

առաջացնում է տուգանք ՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 228. Հողօգտագործման սահմանները խախտելը և սահմանանիշերը ոչնչացնելը

1. Հողօգտագործման սահմանները խախտելը, ինչպես նաև սահմանանիշերը ոչնչացնելը կամ չտեղադրելը

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամից չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով:

Հոդված 229. Հողամասի կադաստրի վարման, պետական հաշվառման, մոնիթորինգի, գնահատման կարգը խախտելը

1. Հողամասի կադաստրի վարման, պետական հաշվառման, մոնիթորինգի կամ գնահատման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ քառասուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 230. Հողամասի հարկադիր սերվիտուտը խախտելը

1. Հասարակական կարիքների համար սահմանված հողամասի հարկադիր սերվիտուտի ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 231. Ախտահարման ենթարկված հողամասում գյուղատնտեսական մթերքներ արտադրելը կամ դրանք իրացնելը

1. Տեխնածին, համաճարակային կամ այլ վնասակար երևույթների հետևանքով ախտահարման ենթարկված՝ ոչ պիտանի հողամասում սահմանված նորմերին համապատասխան արտադրանք ստանալու համար գյուղատնտեսական մթերքներ արտադրելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ ութսուն հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Տեխնածին, համաճարակային կամ այլ վնասակար երևույթների հետևանքով ախտահարման ենթարկված՝ ոչ պիտանի հողամասում սահմանված նորմերին համապատասխան արտադրանք ստանալու համար արտադրված մթերքներն իրացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 232. Պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի օտարման, օգտագործման տրամադրելու կարգը խախտելը

1. Պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի կամ պետական, համայնքային սեփականություն հանդիսացող շենքով,

շինությամբ զբաղեցված հողամասի օտարման կամ օգտագործման տրամադրելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք ՝ հարյուր հիսուն հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթ անցկացնելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 233. Հողերի պահպանության պահանջները չկատարելը

1. Հողամասի սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից ջրային, հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրության, սպառման թափոններով աղբոտումից, քիմիական նյութերով աղտոտումից, անապատացումից, սողանքներից կամ հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից հողամասի պահպանության պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից հարյուր ութսուն հազար դրամի չափով:

2. Հողամասի սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից հողերը ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, մանրէամակաբուծային, կարանտինային վնասատուների վարակումից, մոլախոտերից, թփուտներից կամ հողերի որակական վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից հողամասի պահպանության պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից հարյուր ութսուն հազար դրամի չափով:

3. Հողամասի սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից հողերի բերրիության վերականգման պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

4. Շենք, շինություն նախագծելիս, շահագործելիս, վերակառուցելիս կամ նոր տեխնոլոգիաներ ներդնելիս հողերի պահպանության պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 234. Հողերի բերրի շերտի պահպանման և հաշվառման կարգը խախտելը

1. Հողամասը օգտագործողի կողմից հողերի բերրի շերտի հանման, պահեստավորման, տեղափոխման, օգտագործման, պահման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Հողերի բերրի շերտը վաճառելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Հողերի բերրի շերտի հանման, պահեստավորման, տեղափոխման, օգտագործման կամ պահման մասին տվյալների հաշվառման մատյանը սահմանված կարգի խախտմամբ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 235. Հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կարգը խախտելը

1. Հողամասի կամ դրա վրա ամրակայված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 236. Առանց օգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացումը

1. Առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագրի կամ թույլտվության կամ համաձայնության կամ ընդերքօգտագործման պայմանագրի երկրաբանական ուսումնասիրության իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից յոթ հարյուր հազար դրամի չափով:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի օգտագործումն առանց թույլտվության կամ պայմանագրի կամ լեռնահատկացման ակտի կամ ընդերքաբանական փորձաքննության կամ տեխնիկական անվտանգության փորձաքննության՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 237. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կարգը խախտելը

1. Առանց իրավասու մարմնի համաձայնության ընդերքօգտագործողի կողմից ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն այլ անձի՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ:

Հոդված 238. Ընդերքի առանձին տեղամասերի տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը խախտելը

1. Ընդերքի տեղամասերը վաճառելը, այլ կերպ օտարելը կամ որպես գրավի առարկա օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով լիցենզիայի գործողության դադարեցմամբ:

2. Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումը այնպիսի հողամասերում, որտեղ կան գերեզմաններ, բնության, պատմության և մշակութային հուշարձաններ, Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր, կենդանիների բնակատեղեր կամ կենդանիների միգրացիոն ուղիներ՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը, որը կատարվել է անզգուշությամբ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Ընդերքի օգտագործումը ոչ այն նպատակներով, որի համար տրամադրվել է՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

5. Ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման կամ հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության կամ չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին սահմանված ժամկետում լիազոր մարմնին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 2-րդ, 4-5-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ վեց հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 239. Ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման կարգը խախտելը

1. Ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման կամ գրավի առարկա հանդիսացող ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 240. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման կարգը խախտելը

1. Երկրաբանական ուսումնասիրության թույլտվության կամ համաձայնության տրամադրման կամ պայմանագրի կնքման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար հատուկ թույլտվության տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 241. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի իրականացման կարգը խախտելը

1. Երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելիս՝ համաձայնությամբ կամ թույլտվությամբ կամ պայմանագրով սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված տեղամասի ընդլայնման մասին որոշման ընդունման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված տեղամասի ընդլայնման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

4. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի փոփոխման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված ընդերքի տեղամասից օգտակար հանածո տեղափոխելը կամ փորձնական հանույթ իրականացնելը և տեղամասից տեղափոխելը, եթե դա չի իրականացվում օգտակար հանածոյի արժեքը որոշելու և օգտակար հանածոյի փորձաքննություն անցկացնելու նպատակով՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 242. Երկրաբանական տեղեկատվության տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը խախտելը

1. Պետական ընդերքաբանական փորձաքննություն անցած երկրաբանական տեղեկատվությունն ընդերքօգտագործման իրավունքից բխող սահմանափակումների խախտմամբ տիրապետելը, օգտագործելը, տնօրինելը կամ այդ տեղեկատվությունը լիազոր մարմնին սահմանված կարգով կամ ժամկետում չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Երկրաբանական տեղեկատվությունը երրորդ անձի համար բացահայտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում սահմանված արարքն անզգուշությամբ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 243. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման և ընդերքի տեղամասի ընդլայնման կարգը խախտելը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրի կնքման, թույլտվության տրամադրման, լեռնահատկացման ակտի տրամադրման, ընդերքաբանական փորձաքննության կամ տեխնիկական անվտանգության փորձաքննության անցկացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնման մասին որոշման ընդունման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 244. Օգտակար հանածոների արդյունահանման պայմանների փոփոխման կարգը խախտելը

1. Առանց լիազոր մարնի հետ համաձայնեցման օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխումը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման կամ արդյունահանման նախագծի փոփոխման մասին որոշման կայացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Առանց լիազոր մարմնի որոշման օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող սուբյեկտի կողմից իրեն տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնումը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

4. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարման կամ ընդերքի տեղամասից հրաժարվելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 245. Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացման կարգը խախտելը

1. Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացման աշխատանքները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

2. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումները սահմանված ժամկետում կամ կարգով կամ չափով չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 246. Օգտակար հանածոների արդյունահանման պահանջները խախտելը

1. Ընդերքօգտագործողի կողմից հանքավայրի հարուստ տեղամասերի ընտրովի մշակելը կամ օգտակար հանածոների պաշարները ոչ լիակատար կորզելը կամ հիմնական, համատեղ գտնվող օգտակար հանածոները ոչ համալիր օգտագործելը կամ հանույթի ժամանակ օգտակար հանածոների գերնորմատիվ կորուստները կամ գերնորմատիվ աղքատացում թույլ տալը կամ օգտակար հանածոների պահեստավորման կամ պահման պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Օգտակար հանածոների հանքավայրերի մակերեսներն ինքնակամ կառուցապատելը կամ այդ մակերեսներն օգտագործելն օրենսդրությամբ, պայմանագրով

կամ դրանցով սահմանված կարգի խախտմամբ կամ թույլտվությամբ չնախատեսված նպատակներով՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

3. Լեռնային փորվածքների լցոնման, մեկուսացման, ցանկապատման պահանջները կամ հրդեհումից, հեղեղումից կամ օգտակար հանածոների որակը, հանքավայրերի արդյունաբերական արժեքը նվազեցնող գործընթացներից օգտակար հանածոների հանքավայրերի պահպանման պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկման հորատանցքերը կամ մարկշեյդերական կամ երկրաբաշխական նշանները ոչնչացնելը կամ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած սուբյեկտի կողմից արդյունահանում իրականացնելիս արդյունահանման պայմանագիրը կամ նախագիծը կամ օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման կամ վերամշակման ստանդարտները, նորմերը կամ անվտանգության կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

6. Առանց բնապահպանական կառավարման պլանի կամ մշտադիտարկման ծրագրի կամ հանքի փակման ծրագրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

7. Բնապահպանական կառավարման պլանի կամ մշտադիտարկման ծրագրի կամ հանքի փակման ծրագրի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

8. Սույն հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ վեց հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 247. Հանքավայրում կոնդիցիաները և պաշարները չվերագնահատելը, երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրություն, պաշարների շարժի գրանցամատյան չվարելը

1. Շահագործվող հանքավայրում (տեղամասերում) սահմանված ժամկետում կամ կարգով կոնդիցիաները, պաշարները չվերագնահատելը կամ լիազոր մարմին վերահաստատման չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Երկրաբանական, մարկշեյդերական, այլ փաստագրություն, օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյան չվարելը կամ չպահպանելը,

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Ուսումնասիրված, արդյունահանված և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, դրանցում պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին տվյալներ չհավաքելը կամ չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 248. Ընդերքօգտագործման գործունեության դադարեցման վերաբերյալ պահանջները չկատարելը

1. Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման համալիրն ապամոնտաժելիս հանքի փակման ծրագրի պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման հետ կապված լեռնային փորվածքների կամ կառույցների կոնսերվացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

3. Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի կամ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար սահմանված վճարումները սահմանված կարգով, չափով կամ ժամկետում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 249. Ջրային ռեսուրսների վերաբերյալ ընդունվող ակտերի մասին հանրությանը ծանուցելու կարգը խախտելը

1. Ջրի ազգային քաղաքականության կամ ազգային ծրագրի կամ կառավարման պլանների կամ թույլտվությունների կամ ստանդարտների կամ սակագնային ռազմավարության նախագծերի վերաբերյալ հասարակության ծանուցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 250. Առանց թույլտվության ջրային ռեսուրսների և ջրային համակարգի օգտագործումը

1. Առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսների օգտագործումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

2. Առանց թույլտվության՝ ոչ մրցակցային ջրամատակարարի կողմից ջրային համակարգի օգտագործումը, նոր ջրային համակարգի շինարարությունը կամ գոյություն ունեցող ջրային համակարգի վերակառուցումը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 251. Ջրօգտագործման և ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը խախտելը

1. Ջրօգտագործման կամ ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 252. Ազատ ջրօգտագործման, հատուկ ջրօգտագործման կամ ջրային համակարգերի օգտագործման թույլտվության պահանջները խախտելը

1.Ազատ ջրօգտագործումը, որը խախտում է ջրի ստանդարտները կամ ազատ ջրօգտագործման համար նախատեսված ջուրը՝ շահույթ ստանալու նպատակով օգտագործելը ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ ութսուն հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ջրօգտագործման կամ ջրային համակարգերի օգտագործման թույլտվության պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

3. Ջրօգտագործման թույլտվությունն օրենսդրությամբ սահմանված կարգի խախմամբ վաճառելը կամ այլ կերպ փոխանցելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

4. Ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Ջրային համակարգի օգտագործման թույլտվությամբ չնախատեսված ջրային համակարգի օգտագործման իրավունք ունեցող սուբյեկտի կողմից գետերը, աղբյուրները, լճերը կամ այլ ջրային ռեսուրսները ձևափոխելը կամ դրանց հունը, ափերը կամ եզրերը փոխելը,

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ

հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 253. Ջրօգտագործման և ջրային համակարգի օգտագործման պայմանագրերով նախատեսված պարտականությունները չկատարելը

1. Ջրային համակարգի օգտագործողի կողմից ջրամատակարարներին կամ ջրօգտագործողներին ջրօգտագործման պայմանագրով սահմանված ռեժիմի, որակի կամ քանակի ջրով չապահովելը, ստացվող կամ հատկացվող ջրի հաշվառում չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 254. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերի գրանցման կարգը խախտելը

1. Ջրօգտագործման թույլտվությունը, ջրային համակարգի օգտագործման թույլտվությունը կամ ջրօգտագործման իրավունքի կամ ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագիրը, դրանցում կատարվող փոփոխությունները, սերվիտուտը սահմանված կարգի խախտմամբ գրանցելը կամ սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 255. Ջրապահպան և սանիտարական գոտիների ստեղծման համար գետերի ողողահուներն ու ջրային հողերն օգտագործման տրամադրելու կարգը խախտելը

1. Ջրային համակարգերի օգտագործման իրավունք ունեցող սուբյեկտի կողմից տնտեսական գործունեության իրականացման նպատակով ջրապահպան կամ սանիտարական գոտիների ստեղծման համար գետերի ողողահուները կամ ջրային հողերն օգտագործման տրամադրելը՝ ջրօգտագործման թույլտվությամբ կամ ջրային համակարգի օգտագործման թույլտվությամբ սահմանված կարգի խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 256. Ջրօգտագործում իրականացնելիս ջրի որակին ներկայացվող ստանդարտները խախտելը

1. Ջրօգտագործման իրականացումը ջրի որակի ստանդարտների խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Խմելու ջրի մատակարարման որակի ստանդարտները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

3. Խմելու ջրի վերամշակման կամ ջրապատրաստման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր քսան հազար չափով:

Հոդված 257. Ջրառի և ջրային ռեսուրսներ թափվող ջրերի քանակին և որակին ներկայացվող պահանջները խախտելը

1. Սահմանված չափաքանակների գերազանցմամբ բնական ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման կամ ջրային ռեսուրսից վերցվող և այնտեղ թափվող ջրերի քանակության նախնական հաշվառման կամ ջրային օբյեկտ թափվող ջրերի որակի որոշման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 258. Ջրային ռեսուրսների որակական հատկանիշները վատթարացնող գործողություններ կատարելը

1. Ջրային ռեսուրսն աղբոտումից, աղտոտումից, վարակումից, հյուծումից չպահպանելը, ջրային ռեսուրսներ առանց թույլտվության կեղտաջրերի արտահոսք իրականացնելը, ջրային ռեսուրսների ջրապահպան գոտու տարածքում օրենսդրությամբ չնախատեսված աշխատանքներ իրականացնելը կամ ջրային ռեսուրսներ ռադիոակտիվ, վտանգավոր թափոններ արտանետելը, արտահոսք կամ թաղում իրականացնելը կամ ջրային ռեսուրսներ ռադիոակտիվ, թունավոր նյութերի արտահոսքով զուգորդվող միջուկային կամ այլ տեխնոլոգիաներով պայթեցման աշխատանքներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության կասեցմամբ կամ առանց դրա, թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Կեղտաջրերը կամ ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելված ջրային ռեսուրսները կամ դրանց մասերն օգտագործելը կամ կլանող հորատանցքեր կամ ջրհորներ կառուցելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 259. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիների իրավական ռեժիմը խախտելը

1. Ստորերկրյա ջրերի հանքավայրերի կամ ջրատար հորիզոնների սանիտարական պահպանման գոտիները՝ սահմանված պահանջների խախտմամբ ձևավորելը կամ հորատանցք հորատելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Ստորերկրյա ջրերի հանքավայրերի կամ ջրատար հորիզոնների սանիտարական պահպանման գոտիների ձևավորման նախագիծը լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

3. Ջրային համակարգերի վիճակի վրա ազդող ինքնակամ աշխատանքներ կատարելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

4. Սանիտարական պահպանման և անօտարելի գոտիների իրավական ռեժիմը խախտելը ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 260. Կեղտաջրերով գյուղտնտեսական հողատարածքների ոռոգման կարգը խախտելը

1. Կեղտաջրերով գյուղտնտեսական հողատարածքների ոռոգման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Կեղտաջրերով ոռոգվող հողերն օգտագործման հանձնելը կամ առանց ստորգետնյա ջրերի ռեժիմի դիտարկման համակարգի օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 261. Առանց ջրային ռեսուրսները վնասակար ազդեցությունից պահպանող սարքերի և միջոցների ջրային համակարգի օգտագործումը

1. Ջրային համակարգը, կոմունալ կամ այլ արդյունաբերական օբյեկտներն օգտագործման հանձնելը կամ դրանք շահագործելը՝ առանց ջրերի աղբոտումը, աղտոտումը, այլ վնասակար ազդեցությունը կանխող սարքերի, վերցվող կամ թափվող ջրերի հաշվառման միջոցների, անհրաժեշտ ձկնապաշտպան հարմարանքների, ջրային ռեսուրսները, ջրհավաք ավազաններն աղտոտումից պահպանող կառուցվածքների, գյուղատնտեսական կամ անասնապահական գործունեության ոլորտի համար նախատեսված սանիտարական գոտիների՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 262. Հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության կանոնները խախտելը

1. Հիդրոտեխնիկական կառույցներ կառուցելիս, օգտագործելիս, վերանորոգելիս, վերակառուցելիս, կոնսերվացնելիս, օգտագործումից դուրս բերելիս կամ քանդելիս անվտանգության կանոնները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Հիդրոտեխնիկական կառույցների վթարի հետևանքով առաջացող աղետների կանխման օրենսդրությամբ սահմանված միջոցառումներ չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 263. Ջրային ռեսուրսների օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառում չկատարելը

1. Ջրային ռեսուրսների օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 264. Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդեցություն ունեցող արգելված գործունեությամբ զբաղվելը

1. Սևանա լճի կենտրոնական, անմիջական կամ ոչ անմիջական ազդեցության գոտիներում լճի էկոհամակարգի վրա ազդեցություն ունեցող օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սևանա լճի էկոհամակարգում ջրային օրգանիզմների համար բարձր թունավոր նյութերի, սննդային շղթաներով փոխանցվող, բույսերի կամ կենդանիների օրգանիզմներում կուտակվող ոչ բարձր թունավոր նյութերի, Սևանա լճի կամ նրա մեջ թափվող գետերի, աղբյուրների ջրերում դանդաղ քայքայվող թունավոր նյութերի, Սևանա լճի էկոհամակարգի համար վտանգավոր նյութերի, թույլատրելի նորմերը գերազանցող կենսաձին տարրերի, ծանր մետաղների կամ նրանց միացությունների օգտագործումը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 265. Վտանգավոր և այլ թափոնների փոխադրման ու հեռացման կարգը խախտելը

1. Վտանգավոր կամ այլ թափոնների փոխադրման համար պատասխանատու անձի կողմից դրանց փոխադրման սկզբի կամ ավարտի մասին լիազոր պետական մարմնին սահմանված ժամկետում կամ կարգով չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Վտանգավոր կամ այլ թափոնների հեռացման համար պատասխանատու անձի կողմից դրանց ստացման կամ հեռացման մասին լիազոր պետական մարմնին սահմանված ժամկետում կամ կարգով չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 266. Վտանգավոր և այլ թափոնների շրջանառության կարգը խախտելը

1.Վտանգավոր և այլ թափոնների շրջանառության օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 267. Թափոնների անձնագրերը չհամաձայնեցնելը

1. Թափոններ առաջացնողների կողմից կազմված թափոնների անձնագրերը պետական կառավարման լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 268. Թափոնների ռեեստրային գրանցման թերթիկը և թափոնների ռեեստրային գրանցման հաշվետվություն չներկայացնելը

1. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկը կամ թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային

գրանցման հաշվետվությունը պետական կառավարման լիազոր մարմին սահմանված կարգով կամ ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 269. Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերը հաստատման չներկայացնելը

1. Թափոնների գոյացման նորմատիվների կամ դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերը պետական կառավարման լիազոր մարմնի օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետում հաստատմանը չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 270. Թափոնների տեղադրման կարգը խախտելը

1. Առանց հաստատված թափոնների գոյացման նորմատիվների կամ դրանց տեղադրման սահմանաքանակների թափոններ տեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Հատուկ հատկացված տեղերից դուրս թափոններ տեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Թափոնների տեղադրումը թափոնների տեղադրման հաստատված սահմանաքանակների խախտմամբ՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով՝ թույլտվության գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 271. Թափոնների պետական կադաստրի, մոնիթորինգի և ռեեստրի վարման կարգը խախտելը

1. Թափոնների պետական կադաստրի, մոնիթորինգի կամ ռեեստրի վարման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 272. Օզոնային շերտը քայքայող նյութեր արտադրելը, ներմուծելը կամ արտահանելը

1. Օզոնային շերտը քայքայող նյութեր արտադրելը կամ ներմուծելը «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության կողմ չհանդիսացող երկրներից և արտահանումն այդ երկրներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով օզոնային շերտը քայքայող նյութերի տարանցիկ փոխադրումը, եթե այդ նյութերն առաքվել են կողմ չհանդիսացող երկրից կամ առաքվում են կողմ չհանդիսացող երկիր՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 273. Օզոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման կարգը խախտելը

1. Օզոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 274. Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումը առանց լիազորված մարմնի թույլտվության կամ սահմանային թույլատրելի նորմատիվների գերազանցմամբ, մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները գերազանցելը

1. Առանց մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազորված պետական մարմինների թույլտվության մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

2. Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների գերազանցումը, մթնոլորտային օդն աղտոտող ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվների գերազանցումը կամ թույլտվություններով նախատեսված պայմանները կամ պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

3. Մթնոլորտային օդի վիճակի վրա ֆիզիկական վնասակար ներգործության տեսակները, չափերը չհաշվառելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ հաշվառելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների մաքրման, հսկողության համար տեղակայված կառույցներ, սարքավորումներ չունենալը կամ չօգտագործելը կամ դրանց շահագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 275. Մթնոլորտային օդի պահպանության պահանջները չբավարարող շինություն կամ այլ օբյեկտներ կառուցելը կամ շահագործելը

1. Մթնոլորտային օդի պահպանության պահանջները չբավարարող շինություններ կամ այլ օբյեկտներ կառուցելը կամ շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 276. Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող, վերակառուցվող կամ քանդվող օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումները կանխարգելող օրենսդրությամբ սահմանված միջոցառումներ չկատարելը

1. Կառուցվող, վերակառուցվող կամ քանդվող օբյեկտների շինարարության ընթացքում մթնոլորտային օդի պահպանման օրենսդրությամբ սահմանված պահանջները չկատարելը՝ փոշու արտանետումների կանխարգելման համար շինարարական հրապարակները չպարսպապատելով, շինությունները շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով չծածկելով, օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը խոնավ չպահելով, հողման աշխատանքներ իրականացնելիս փոշու արտանետումները բացառող սարքեր, տեխնոլոգիաներ չօգտագործելով, սորուն

նյութերը փակ տարածքներում չպահեստավորելով կամ, անթափանց թաղանթով չծածկելով կամ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը չլվանալով՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 277. Ավտոտրանսպորտային միջոցներով շինարարական նյութերի և աղբի տեղափոխման ժամանակ մթնոլորտային օդի պահպանության պահանջները խախտելը

1. Ավտոտրանսպորտային միջոցներով ավազի, ցեմենտի, գաջի, սորուն նյութերի կամ շինարարական աղբի տեղափոխումն առանց փոշու համար անթափանց ծածկոցների, ինչպես նաև համայնքի ղեկավարի սահմանած երթուղով շինարարական աղբը չտեղափոխելը կամ սահմանված կարգով հատկացված վայրում այն չտեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 278. Տրանսպորտային միջոցները, այլ փոխադրամիջոցները կամ կայանքները մթնոլորտային օդն աղտոտող նյութերի պարունակության, աղմուկի նորմատիվների գերազանցումով շահագործման հանձնելը կամ թույլատրելը

1. Տրանսպորտային միջոցները, այլ փոխադրամիջոցները կամ կայանքները շահագործման հանձնելը կամ թույլատրելը, որոնց արտանետումներում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի պարունակությունը կամ աշխատանքի ժամանակ դրանց առաջացրած աղմուկի մակարդակը գերազանցում են սահմանված նորմատիվները՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 279. Տրանսպորտային միջոցները կամ այլ փոխադրամիջոցները կամ կայանքները շահագործելը՝ դրանց արտանետումներում աղտոտող նյութերի պարունակության կամ աղմուկի նորմատիվների գերազանցումով

1. Տրանսպորտային միջոցները, այլ փոխադրամիջոցները կամ կայանքները շահագործելը, որոնց արտանետումներում աղտոտող նյութերի պարունակությունը կամ աշխատանքի ժամանակ դրանց առաջացրած աղմուկի մակարդակը գերազանցում են սահմանված նորմատիվները՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի, իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 280. Տրանսպորտային միջոցներից, այլ փոխադրամիջոցներից աղտոտող նյութերի արտանետումների նկատմամբ չափումներ չիրականացնելը կամ չափման կարգը խախտելը

1. Տրանսպորտային միջոցներից, այլ փոխադրամիջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումներ կատարելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից առանց չափումներ իրականացնելու այդ միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվների համապատասխանության կտրոն տրամադրելը կամ չափման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝ ՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 281. Արտադրության և սպառման թափոնների պահեստավորման, բույսերի պաշտպանության միջոցների, դրանց աճի խթանիչների, քիմիական նյութերի, հանքային պարարտանյութերի կամ այլ պատրաստուկների արտադրության, փոխադրման, պահպանության կամ օգտագործման կանոնները խախտելը

1. Արտադրության կամ սպառման թափոնների պահեստավորման, բույսերի պաշտպանության միջոցների, դրանց աճի խթանիչների, քիմիական նյութերի, հանքային պարարտանյութերի կամ այլ պատրաստուկների արտադրության, փոխադրման, պահպանության կամ օգտագործման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 282. Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառման կարգը խախտելը

1. Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 283. Արտադրության և սպառման թափոնները բնական միջավայրում, բնակավայրերում այրելը

1. Արտադրության կամ սպառման, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոնները բնական միջավայրում, բնակավայրերում, կամ դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում կամ այլ սարքերում այրելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 284. Խոզանները, բուսական մնացորդներով, չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում այրելը

1. Խոզանները, բուսական մնացորդներով, չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի կամ խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում այրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 285. Անտառային հողերն առանց թույլտվության այլ նպատակներով օգտագործելը, անտառային տարածքներն ինքնակամ զավթելը, ինչպես նաև անտառօգտագործման իրավունք տվող փաստաթղթերով նախատեսված նպատակներին չհամապատասխանող անտառօգտագործումը

1. Անտառային հողերն առանց թույլտվության օգտագործելը, այդ թվում՝ ճանապարհներ, խողովակաշարեր, շենքեր, շինություններ կառուցելը, հանքեր շահագործելը կամ այլ նպատակներով օգտագործելը, ինչպես նաև անտառային տարածքներն ինքնակամ զավթելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Անտառօգտագործման իրավունք տվող փաստաթղթերով նախատեսված նպատակներին կամ պահանջներին չհամապատասխանող անտառօգտագործումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 286. Անտառտնկարքների հատման, բնափայտի մթերման կամ դուրսբերման կարգը խախտելը

1. Անտառտնկարքների հատման, բնափայտի մթերման կամ դուրսբերման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավում և տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 287. Ծառերը, թփերը հատելը, արմատախիլ անելը, ոչնչացնելը, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը

1. Անտառային հողերում, ինչպես նաև անտառային հող չհամարվող տարածքներում ծառերը, թփերը հատելը, արմատախիլ անելը, կամ ոչնչացնելը, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազարից չորս հարյուր հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

Հոդված 288. Ապօրինի ձեռքբերված փայտանյութը և դրանից արտադրված արտադրանքը ձեռքբերելը, պահելը, տեղափոխելը, օտարելը կամ փոխանակելը

1. Ապօրինի ձեռքբերված փայտանյութը կամ դրանից արտադրված արտադրանքը (գերանը, չորսունը, տախտակը վառելափայտը, չմշակված մանրատախտակը, թափուկը, փայտածուխը) ձեռքբերելը, պահելը, տեղափոխելը, օտարելը կամ փոխանակելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 289. Ոչ բնափայտային և երկրորդական անտառանյութի մթերման կարգը խախտելը

1. Երկրորդական անտառանյութի (կոճղի, կեղևի, չորացած ճյուղերի, շիվերի, խեժի) մթերման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազարից հիսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

2. Ոչ բնափայտային անտառանյութի (վայրի պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի կամ դեղաբույսերի, տեխնիկական հումքի) մթերման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազարից հիսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

Հոդված 290. Անտառապատման, անտառների վերականգնման, բարելավման կամ հասունացած բնափայտի պաշարների օգտագործման կանոնները խախտելը

1. Անտառների վերականգնման, ոչ անտառածածկ հողերի անտառապատման, անտառների վիճակի կամ տեսակային կազմի բարելավման, սահմանված աշխատանքներ չկատարելը, ինչպես նաև անտառշինական նախագծերի, կանոնների, հրահանգների, անտառների վերականգնման, բարելավման կամ հասունացած բնափայտի պաշարների օգտագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 291. Անտառներում և պետական անտառային հողերում ինքնակամ խոտհունձ կատարելը, անասուններ արածեցնելը, կամ դրանց կանոնները խախտելը

1. Անտառներում կամ պետական անտառային հողերում ինքնակամ խոտհունձ կատարելը կամ անասուններ արածեցնելը կամ դրանց իրականացման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 292. Անտառային հողերի բերրի շերտը վնասելը կամ ոչնչացնել

1. Անտառային հողերի բերրի շերտը վնասելը կամ ոչնչացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 293. Պետական անտառներում կամ անտառային հողերում ոռոգման համակարգը վնասելը

1. Պետական անտառներում կամ անտառային հողերում ոռոգման համակարգը վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 294. Անտառները և անտառային հողերը թափոններով ու արտադրական կեղտաջրերով աղտոտելը

1. Անտառները կամ անտառային հողերը կենցաղային մնացուկներով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ հինգ հազար դրամի չափով:

2. Անտառները կամ անտառային հողերը արտադրական թափոններով, արդյունաբերական արտանետումներով կամ արտադրական կեղտաջրերով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ տասնհինգ հազար դրամի չափով:

3. Անտառները կամ անտառային հողերը շինարարական կամ հողածածկույթի քանդումից առաջացած թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ տասնհինգ հազար դրամի չափով:

4. Անտառները կամ անտառային հողերը քիմիական կամ ռադիոակտիվ նյութերով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ քսանհինգ հազար դրամի չափով:

Հոդված 295. Պետական անտառային հողերում ճահճակալած տարածքների ու դրենաժային չորացման առուների համակարգերն ու ճանապարհները ոչնչացնելը կամ վնասելը

1. Պետական անտառային հողերում ճահճակալած տարածքների կամ դրենաժային չորացման առուների համակարգերը կամ ճանապարհները ոչնչացնելը կամ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 296. Անտառային հողերում սահմանափակող անտառշինական և այլ նշանները ոչնչացնելը կամ վնասելը

1. Անտառային հողերում սահմանափակող անտառշինական կամ այլ նշանները ոչնչացնելը կամ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 297. Անտառը անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Կրակի, պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վարվելու հետևանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը, մշակաբույսերը կամ բուսածածկը ոչնչացնելը կամ վնասելը, եթե չի պատճառվել խոշոր գույքային վնաս անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության օրինական շահերին՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Անտառներում հրդեհային անվտանգության կանոնները խախտելը, եթե այն չի առաջացրել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հետևանքները՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն օրենսգրքում խոշոր և առանձնապես խոշոր չափ (պատճառված վնաս կամ գույքային վնաս) է համարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված խոշոր և առանձնապես խոշոր չափ (պատճառված վնաս կամ գույքային վնաս) համարվող գումարը (արժեքը):

Հոդված 298. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներն առանց թույլտվության օգտագործելը, այլ նպատակներով օգտագործման թույլտվություն տալը, ինչպես նաև այդ տարածքները զավթելը

1. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներն առանց թույլտվության օգտագործելը կամ այդ տարածքները զավթելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում այլ նպատակներով օգտագործման թույլտվություն տալը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 299. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման վայրերի ծառերը և թփերը ապօրինի հատելը, արմատախիլ անելը, ոչնչացնելը կամ էտելու կանոնները խախտելը, ինչպես նաև բուսածածքը ոչնչացնելը

1. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման վայրերի ծառերը կամ թփերը ապօրինի հատելը, արմատախիլ անելը, ոչնչացնելը կամ էտելու կանոնները խախտելը, ինչպես նաև բուսածածքը ոչնչացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 300. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները թափոններով աղտոտելը

1. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները կենցաղային թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ հինգ հազար դրամի չափով:

2. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները արտադրական թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

3. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները շինարարական և հողածածկույթի քանդումից առաջացած թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

4. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները վնասակար և ռադիոակտիվ թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 301. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներում խոտհարքները, արոտավայրերը վնասելը, ինքնակամ խոտհունձ կատարելը կամ անասուններ արածեցնելը

1. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներում խոտհարքները, արոտավայրերը վնասելը, ինքնակամ խոտհունձ կատարելը կամ անասուններ արածեցնելը կամ դրանց իրականացման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազարից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 302. Բնական խոտհարքները կամ արոտավայրերը թափոններով աղտոտելը

1. Բնական խոտհարքները կամ արոտավայրերը կենցաղային թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար՝ հինգ հազար դրամի չափով:

2. Բնական խոտհարքները կամ արոտավայրերն արտադրական թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ աղտոտված յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ տասը հազար դրամի չափով:

4. Բնական խոտհարքները կամ արոտավայրերը շինարարական կամ հողածածկույթի քանդումից առաջացած թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր աղտոտված մեկ քառակուսի մետրի համար տասնհինգ հազար դրամի չափով:

4. Բնական խոտհարքները կամ արոտավայրերը վնասակար կամ ռադիոակտիվ թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ աղտոտված յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 303. Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բույսերը ինքնակամ հավաքելը կամ ոչնչացնելը

1. Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսերը, դրանց մասերը (բույսերի արմատները, ծաղիկները, պտուղները) ինքնակամ հավաքելը, ոչնչացնելը կամ դրանց թվաքանակի կրճատմանը կամ աճելավայրերի վատթարացմանը հանգեցնող գործողություններ կատարելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ

դրանք ձեռքբերելը, փոխադրելը, պահելը, օտարելը, եթե դա չի հանգեցրել այդ դրանց պոպուլյացիայի բնաջնջման (վերացման)՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազարից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 304. Բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման իրավական ռեժիմը խախտելը

1. Բուսական աշխարհի օբյեկտների հրկիզումը կամ դրանց վնաս պատճառող հանքային պարարտանյութերի, թունաքիմիկատների օգտագործումը քիմիական նյութերով կամ միացություններով, կեղտաջրերով, թափոններով վնասելը կամ բուսատեսակների, դրանց բազմացման օրգանների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն, կլիմայավարժեցումը կամ սելեկցիոն նպատակով օգտագործումը կամ բուսական աշխարհին վնաս պատճառող կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների օգտագործումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Բուսական աշխարհի պետական սեփականություն համարվող օբյեկտների՝ գիտահետազոտական, գեղագիտական, կրթական, բնապահպանական, սոցիալական կամ այլ նպատակներով օգտագործման՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 305. Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս տեսակների որսի իրականացման կանոնները խախտելը

1. Կենդանական, այդ թվում՝ ձկան, ջրային կենդանիների պաշարների պահպանության կանոնները խախտելը, եթե չի առաջացրել ծանր հետևանքներ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ և որսորդության իրավունքի զրկմամբ մինչև մեկ տարի ժամանակով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու

հարյուր հազար դրամի չափով վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ և որսորդության իրավունքի զրկմամբ մինչև մեկ տարի ժամանակով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

2. Որսի կամ ձկնորսության, կենդանական աշխարհի մյուս տեսակների որսի իրականացման կանոնները խախտելը՝ որսը առանց դրա թույլտվության կամ արգելված վայրերում կամ արգելված ժամանակ, եթե չի հանգեցրել խոշոր գույքային վնասի, կամ արգելված գործիքներով կամ եղանակներով կամ խախտելու փորձ անելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ և որսորդության իրավունքի զրկմամբ մինչև երկու տարի ժամանակով, իրավաբանական անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված որսի կամ ձկնորսության արդյունքները ձեռքբերելը, մթերելը, փոխադրելը կամ օտարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 306. Կենդանական աշխարհը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտների և ջրային կենսաբանական պաշարների պահպանության կանոնները խախտելը, կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը

1. Կենդանիների բնակատեղերը, այդ թվում՝ մրջնանոցները, բները, որջերը կամ այլ բնակատեղերը վնասելը կամ ոչնչացնելը, եթե դա չի հանգեցրել դրանց զանգվածային ոչնչացման կամ այլ ծանր հետևանքի՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Կենդանական աշխարհին վնաս պատճառող հանքային պարարտանյութեր, թունաքիմիկատներ օգտագործելը կամ քիմիական նյութերով, միացություններով, կեղտաջրերով կամ թափոններով կենդանական աշխարհը վնասելը կամ ոչնչացնել, եթե դա չի հանգեցրել դրանց զանգվածային ոչնչացման կամ այլ ծանր հետևանքի՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Կենդանական աշխարհի օբյեկտների կամ ջրային կենսաբանական պաշարների բնակության միջավայրի կամ միգրացիայի ուղիների պահպանության կանոնները խախտելը, եթե դա չի հանգեցրել դրանց զանգվածային ոչնչացման կամ այլ ծանր հետևանքի՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

4. Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, որը հանգեցրել է դրանց խեղմանը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 307. Կենդանական աշխարհի օբյեկտների վերաբնակեցման, կլիմայավարժեցման և խաչասերման կանոնները խախտելը

1. Կենդանական աշխարհի օբյեկտների, այդ թվում՝ ձկան պաշարների վերաբնակեցման, կլիմայավարժեցման կամ խաչասերման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 308. Կենսաբանական հավաքածուների ստեղծման կամհամալրմանկամ պահպանման, օգտագործման, հաշվառման, տեղափոխման, արտահանման կամ ներմուծման կանոնները խախտելը

1. Կենսաբանական հավաքածուների ստեղծման, համալրման, պահպանման, օգտագործման, հաշվառման, տեղափոխման, արտահանման կամ ներմուծման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 309. Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակների պահպանմանը վնաս հասցնող կենդանիներ և բույսեր Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծելը

1. Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակների պահպանմանը վնաս հասցնող կենդանիներ կամ բույսեր Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 310. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ ոչնչացնելը կամ վնասելը

1. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կամ միջազգային պայմանագրերով պահպանվող հազվագյուտ կամ անհետացող կենդանիների տեսակները, դրանց բնակատեղերը, ձվադրման վայրեր, ձվերը, միգրացիոն ուղիները կամ բները կամ այլ շինվածքները ոչնչացնելը, ինչպես նաև այլ արարքներ կատարելը, որոնք կարող են առաջացնել կամ առաջացրել են այդպիսի կենդանիների անկում, թվակազմի կրճատում, բնակության միջավայրի կամ միգրացիայի ուղիների խախտում, եթե դա չի հանգեցրել այդ օրգանիզմների պոպուլյացիայի բնաջնջման (վերացման)՝

առաջացնում է վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավում և տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 311. Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի կանոնները խախտելը

1. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված կենդանիները կամ բույսերը (կենդանի կամ մահացած), ինչպես նաև դրանց մասերը կամ ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 312. Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության կանոնները խախտելը

1. Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներն ապօրինաբար ստանալը, փորձարկելը, բազմացնելը, պահելը, ինքնակամ օգտագործելը, ոչնչացնելը կամ վնասազերծելը, ինչպես նաև ներմուծելը, արտահանելը կամ տարանցիկ փոխադրելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 313. Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ պահելու կարգը խախտելը

1. Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ պահելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 314. Բնության հատուկ պահպանվող տարածքների, պետության կողմից հատուկ պահպանվող բնության այլ օբյեկտների պահպանության կանոնները, այդ տարածքների բնական ռեսուրսների պահպանության և օգտագործման կանոնները խախտելը

1. Բնության հատուկ պահպանվող տարածքների, պետության կողմից հատուկ պահպանվող բնության այլ օբյեկտների պահպանության կանոնները, ինչպես նաև այդ տարածքների բնական ռեսուրսների պահպանության կամ օգտագործման կանոնները խախտելը, եթե դա չի առաջացրել խոշոր գույքային կամ էական այլ վնաս՝

առաջացնում է վարչական իրավախախտման գործիք հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավում և տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար

դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն Օրենսգրքի 285-313 հոդվածներով սահմանված արարքներից որևէ մեկը՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ դենդրոպարկերում կամ անտառպուրակներում կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար համապատասխան հոդվածով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 315. Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման կանոնները խախտելը

1. Գեոդեզիական կամ քարտեզագրական աշխատանքներ կատարելիս օրենսդրությամբ սահմանված նորմատիվ տեխնիկական կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

2. Տարածքի գեոդեզիական կետերի կամ վարչատարածքային միավորների սահմանների հաշվառման, հետազոտման կամ դրանց պահպանման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Գեոդեզիական աշխատանքների չափաբանական ապահովման կամ սերտիֆիկացման ստանդարտների պահպանման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի, վարչատարածքային միավորների սահմանագծման կամ սահմանազատման աշխատանքների օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Պետական նշանակության քարտեզագրական աշխատանքներ իրականացնելիս քարտեզների, հատակագծերի վրա աշխարհագրական անվանումները ոչ ճիշտ նշելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

6. Թեմատիկ քարտեզների կամ ատլասների ստեղծման աշխատանքների իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը ՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

7. Առանց լիազոր մարմնի թույլտվության գեոդեզիական կետերի արտաքին նշանները քանդելը կամ կենտրոններ վերահիմնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 316. Գեոդեզիական նյութերի, տվյալների պահպանման և տրամադրման կարգը խախտելը

1. Պետական կամ տեղական նշանակության գեոդեզիական, քարտեզագեոդեզիական ֆոնդերի պահպանման կամ նյութերի, տվյալների բազմացման, օգտագործման, տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 317. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի ու մշակութային արժեքների ներմուծման կամ արտահանման կարգը խախտելը

1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Հայաստանի Հանրպետության տարածք մշակութային արժեքների ներմուծման կամ արտահանման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 318. Աղբահանության կանոնները խախտելը

1. Չսահմանված կամ չնախատեսված տեղերում ու վայրերում՝ աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից, աղբահավաք մեքենաներից,

ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված աղբավայրերից դուրս աղբ թափելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 29.

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 319. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը չկատարելը

1. Բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կամ համայնքի ղեկավարի կամ նրա նշանակած պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընդհանուր բաժնային սեփականության պահպանման՝ օրենսդրությամբ սահմանված պարտադիր նորմերը սահմանված կարգով կամ ժամկետներում չկատարելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կամ համայնքի ղեկավարի կամ նրա նշանակած պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընդհանուր բաժնային սեփականության պահպանման՝ օրենսդրությամբ սահմանված պարտադիր նորմերը սույն հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման կայացումից հետո պետական լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տաս հազար դրամից քսան հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված արարքը կատարելը, որը վտանգել է ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 320. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում հաշվետվությունները կամ պարտադիր հրապարակման ենթակա իրազեկումները կամ ծանուցումները չհրապարակելը կամ չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հազար դրամի չափով:

2. Նոր ստեղծված կամ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորությունները դադարած բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի այդ մասին սահմանված ժամկետներում շենքի սեփականատերերին կամ համայնքի ղեկավարին չծանուցելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հազար դրամի չափով:

3. Համայնքի ղեկավարի կամ նրա նշանակած պատասխանատու պաշտոնատար անձի կողմից սահմանված կարգով կամ դեպքերում բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի գործառույթները կամ լիազորությունները չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տաս հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 321. Շենքերը և շինությունները ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը

1. Շենքերը կամ շինությունները ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պատասխանատու պաշտոնատար անձի կողմից շենքերը կամ շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը կանխելու ուղղությամբ օրենսդրությամբ սահմանված միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 322. Օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով քաղաքաշինական փաստաթղթեր մշակելը կամ դրանց վերաբե րյալ փորձագիտական դրական եզրակացություն, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում նախագծային աշխատանքների կապալառուի կողմից գրավոր երաշխավորագիր տալը

1. Օրենսդրության կամ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով քաղաքաշինական փաստաթղթեր մշակելը, դրանց վերաբերյալ փորձագիտական դրական եզրակացություն կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում նախագծային աշխատանքների կապալառուի կողմից գրավոր երաշխավորագիր տալը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով շենքի, շինության ամրության, կայունության կամ հուսալիության նորմատիվային ցուցանիշները նվազել են՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով և քաղաքաշինական գործունեություն իրականացնելու լիցենզիայի գործողության կասեցում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով շինարարության ընթացքում տեղի է ունեցել տեխնիկական վթար՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով և լիցենզիայի գործողության դադարեցում:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով և լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 323. Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված ժամկետներում չավարտելը

1. Կառուցապատումը, բացառությամբ գյուղական բնակավայրերում իրականացվող կառուցապատման և անհատական բնակելի տների, համապատասխան քաղաքաշինական նորմերով սահմանված ժամկետներում չավարտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման կայացումից հետո շինարարության թույլտվություն տվող մարմնին շինարարության ժամկետը երկարաձգելու համար մեկամսյա ժամկետում չդիմելը կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտը մեկամսյա ժամկետում չօտարելը կամ նոր սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 324. Շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում չապահովելը

1. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանած արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամից վաթսուն հազար դրամի չափով:

Հոդված 325. Շինարարության ընթացքում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման կարգը խախտելը

1. Տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության ընթացքում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանած արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր քսան հազար դրամից հարյուր վաթսուն հազար դրամի չափով:

Հոդված 326. Շինարարության ընթացքում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացում չապահովելը

1. Կառուցապատողի կողմից օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ կարգով շինարարության ընթացքում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացում չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2.Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ օբյեկտի կատարված շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքից մասհանվող 0.5 տոկոսից մինչև 2.0 տոկոսի չափով:

Հոդված 327. Շինարարության ընթացքում հաստատված նախագիծը, նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով սահմանված ստանդարտները խախտելը

1. Շինարարության ընթացքում հաստատված նախագիծը, նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով սահմանված ստանդարտները խախտելը, եթե դրանք ազդեցություն չեն ունեցել շենքի կամ շինության ամրության, կայունության կամ հուսալիության վրա, վտանգավոր չեն մարդկանց կամ շրջակա միջավայրի համար և կարող են վերացվել առանց տվյալ տեղամասում շինարարական աշխատանքները դադարեցնելու ՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, եթե դա կարող է ազդեցություն ունենալ շենքի կամ շինության ամրության, կայունության կամ հուսալիության վրա, ինչպես նաև վտանգավոր են մարդկանց կամ շրջակա միջավայրի համար և չի կարող վերացվել առանց տվյալ տեղամասում շինարարական աշխատանքները դադարեցնելու ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով և լիցենզիայի գործողության կասեցում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, եթե դա հանգեցրել է տեխնիկական վթարների՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործունեության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

5. Սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով և լիցենզիայի գործունեության դադարեցում:

Հոդված 328. Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողների կողմից քաղաքաշինական պետական տեսչությանը շինարարությունում տեխնիկական վթարների մասին սահմանված ժամկետում չիրազեկելը

1. Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողների կողմից քաղաքաշինական պետական տեսչությանը շինարարությունում տեխնիկական վթարների մասին քառասունութ ժամվա ընթացքում գրավոր չիրազեկելը՝

առաջացնում է տուգանք՝ վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր քսան հազար դրամից հարյուր վաթսուն հազար դրամի չափով:

Հոդված 329. Առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձի միջոցով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելը

1. Կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձի միջոցով օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 330. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելը

1. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Հաստատված գլխավոր հատակագծի կամ քաղաքաշինական գոտիավորման նախագծի պահանջներին չհամապատասխանող ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հինգ հարյուր հիսուն հազար դրամից յոթ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 331. Ճարտարապետահատակագծային առաջադրանքին չհամապատասխանող նախագծերը համաձայնեցնելը կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքին համապատասխանող նախագծերի համաձայնեցման կարգը խախտելը

1. Ճարտարապետահատակագծային առաջադրանքին (նախագծման թույլտվությանը) չհամապատասխանող նախագծերը համաձայնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքին (նախագծման թույլտվությանը) համապատասխանող նախագծերի համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 332. Շինարարության և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններ տալու կարգը խախտելը

1. Շինարարության կամ քանդման (ապամոնտաժման) թույլտվություններ տալու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 333. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը խախտելը

1. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 334. Առանց սահմանված կարգով ավարտված շինարարության շահագործման ընդունման փաստագրման կառուցապատողի կողմից շենքերի ու շինությունների շահագործումը

1. Առանց սահմանված կարգով ավարտված շինարարության շահագործման ընդունման փաստագրման կառուցապատողի կողմից շենքերի կամ շինությունների շահագործումը, բացառությամբ անհատական բնակելի տների և կենցաղային ու օժանդակ շենքերի ու շինությունների՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր քսան հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում շինարարության ավարտը չփաստագրելը և շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 335. Քաղաքաշինական գործունեության օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ պետական կամ համայնքային սեփականության հողամասերն օտարելը կամ կառուցապատման իրավունքով տրամադրելը

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, քաղաքաշինական պարտադիր նորմերի պահանջների խախտմամբ կամ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում պետական կամ համայնքային սեփականության հողամասերն օտարելը կամ կառուցապատման իրավունքով տրամադրելը, ինչպես նաև հողահատկացման առաջարկին դրական եզրակացություն տալը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում՝ մինչև մեկ տարի ժամկետով:

Հոդված 336. Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմաններ տրամադրելու կարգը խախտելը

1. Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմաններ տրամադրելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 337. Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հանրությանը չիրազեկելը

1. Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հանրությանը չիրազեկելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 338. Ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելը և պարտադիր բարեկարգումը չիրականացնելը

1. Ընդհանուր օգտագործման տարածքներում օրենսդրությամբ սահմանված բարեկարգման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

2. Քաղաքային համայնքների վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի օրենսդրությամբ սահմանված պարտադիր բարեկարգումը չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 339. Ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիների պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը, բնակավայրերի ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիները ոչնչացնելը կամ վնասելը

1. Պաշտոնատար անձի կողմից իրենց տնօրինության տակ գտնվող կանաչ գոտիների պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման տարածքներում կանաչ գոտիները ոչնչացնելը կամ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

3. Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 340. Կառուցապատողների կողմից շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցության նվազեցման, անվտանգության ու սանիտարական վիճակի ապահովման օրենսդրությամբ սահմանված պայմանները չպահպանելը

1. Կառուցապատողի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման պայմանների խախտմամբ շինարարական աշխատանքներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Կառուցապատողների կողմից Երևան քաղաքում սահմանված լրացուցիչ քաղաքաշինական պայմանները կամ քաղաքաշինական կանոնները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Կառուցապատողի կողմից աշխատանքների իրականացման ընթացքում փողոցների երթևեկության կամ հետիոտնի անցումների անվտանգության ապահովման պայմանները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական վիճակի ապահովման պայմանները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ յոթանասուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 341. Կառուցապատողների կողմից շենքերը և շինությունները հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության և օգտագործման համար չհարմարացնելը

1. Սեփականատերերի կամ կառուցապատողների կողմից շենքերը կամ շինությունները (բացառությամբ անհատական բնակելի տների) հաշմանդամների կամ բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության և օգտագործման համար չհարմարեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 342. Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների և դիակիզարանների շահագործման բնագավառում խախտումներ իրականացնելը

1. Հուղարկավորությունների կազմակերպումն իրականացնողների կողմից գերեզմանատների շահագործման կամ պահպանման գործառույթները չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Հուղարկավորությունների կազմակերպման կամ իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

3. Տեղական ինքնակառավարման մարմնի կամ նրա լիազորած անձի կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից համայնքային գերեզմանատներում գերեզմանատեղի, ինչպես նաև ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար անվճար կամ վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքների սահմանված չափերից ավելին տրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

5. Գերեզմանատան կազմակերպման համար նախատեսված վայրերից դուրս հուղարկավորության իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

6. Փակ գերեզմանատներում գերեզմանատեղի հատկացումը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

7. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նոր գերեզմանատների կամ դիակիզարանների կազմակերպման համար հողատարածքների տրամադրման դեպքում օրենսդրությամբ սահմանված նորմերը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

8. Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքներում նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

9. Գերեզմանատներում հուղարկավորությունների կազմակերպումն իրականացնող մարմինների կողմից գերեզմանատեղերի հաշվառման, հուղարկավորությունների գրանցման մատյանների վարման կամ գերեզմանների վկայականի տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

10. Մասնավոր գերեզմանատների կազմակերպման և շահագործման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով

12. Վերահուղարկավորությունը օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացնելը ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

13. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից քաղաքաշինական փաստաթղթերում օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ՝ մասնավոր գերեզմանատների կառուցման համար շինարարական թույլտվությունների տրամադրումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 343. Շինարարությունն սկսելու մասին սահմանված կարգով և ժամկետում իրավասու մարմիններին չիրազեկելը

1. Կառուցապատողի կողմից շինարարությունը սկսելու մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետում իրավասու մարմիններին չիրազեկելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Պաշտոնատար անձի կողմից շինարարական, քանդման կամ ապամոնտաժման աշխատանքները սկսելու վերաբերյալ կառուցապատողի կողմից ծանուցումը ստանալուց հետո թույլտվության պատճենները սահմանված ժամկետում քաղաքաշինական պետական տեսչություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 30.
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 344. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնակամ շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը

1. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետեւանքները չվերացնելը, ինչպես նաեւ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի կամ կանոնների էական խախտումներով ինքնակամ

շինարարական կամ քանդման աշխատանքներ իրականացնելը կամ անօրինական կառույցը չքանդելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 345. Գույքը ոչնչացնելը կամ վնասելը, գույքային վնաս պատճառելը, ինչպես նաև ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը

1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որով պատճառված վնասը խոշոր չափերի չէ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

2. Խոշոր չափերի չհասնող ուրիշի գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կրակի կամ առավել մեծ վտանգի այլ աղբյուրի՝ բացառությամբ ավտոմեքենայի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի, հետ անզգույշ վարվելու հետևանքով՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Սեփականատիրոջը կամ գույքի այլ օրինական տիրապետողին խաբեության, վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություններ տարածելու կամ ապօրինի այլ եղանակով խոշոր չափերի չհասնող գույքային վնաս պատճառելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

4. Անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելը, որով պատճառված վնասը խոշոր չափերի չէ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հիսուն հազար դրամից չորս հարյուր հիսուն հազար դրամի չափով:

5. Սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով կամ սպառնալիքի միջոցով նրա գույքն օգտագործելը, որով պատճառված վնասը խոշոր չափերի չէ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 346. Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելը

1. Ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելը կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքները ապօրինի փոխելը, կամ դրանց նորմալ աշխատանքը խաթարելը, որով պատճառված վնասը խոշոր չափերի չէ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 347. Գույքի կառավարման լիազորություններն անփութորեն իրականացնելը, ինչպես նաև գույքի պահպանության պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Ուրիշի գույքի կառավարման հանձնարարություն ստացած, և դրա համար համապատասխան լիազորություններով օժտված անձի կողմից այդ լիազորություններից բխող պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն անզգուշությամբ խոշոր չափերի վնաս է պատճառել սեփականատիրոջը կամ օրինական այլ տիրապետողին՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

2. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություններ ունեցող անձի կողմից այդ պարտականությունները ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը դրանց նկատմամ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե այդ անձի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի չհասնող հափշտակում, վնասում կամ կորուստ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 348. Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը

1. Հեղինակությունը յուրացնելը կամ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը իրացնելը, եթե դրա հետևանքով խոշոր չափի վնաս չի պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 31.
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 349. Առևտրի իրականացման (ծառայությունների մատուցման) կանոնները խախտելը

1. Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, պիտանիության կեղծ ժամկետի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով, հայերեն մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ իրացնելը կամ իրացնելու նպատակով տեսանելի վայրում դրված լինելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Առանց համապատասխանության նշանի մակնշմամբ, սերտիֆիկատով կամ գրանցված հայտարարագրով համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքներ վաճառելը (ծառայություններ մատուցելը)՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Առևտրի, հանրային սննդի կամ կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակ չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

4. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտն ապրանքների ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով կամ առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային կամ ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ սենքերով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

5. Հանրային սննդի օբյեկտը տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով կամ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

6. Առևտրի օբյեկտից դուրս սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշներ ցուցադրելը, ինչպես նաև սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքներ վաճառող օբյեկտների ցուցափեղկերն ու մուտքերը վարագուրապատված կամ մգավորված ապակիներով չապահովելը՝ այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

7. Հանրային սննդի օբյեկտներում առանց համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմի կամ վկայականի՝ բարմեն, խոհարար, հրուշակագործ կամ մատուցող աշխատանքի ընդունելը կամ ներգրավելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

8. Կենցաղային ծառայության օբյեկտներում օրենսդրությամբ սահմանված դեպքերում առանց համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմի կամ վկայականի կամ առանց առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային ստաժի կենցաղային ծառայություններ մատուցող անձի աշխատանքի ընդունելը կամ ներգրավելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն դրամի չափով:

9. Սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը գործատուի կողմից չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

10. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիայով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից առանց պայմանագրի կնքման կամ օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների խախտումներով կնքված պայմանագրով վաճառատեղերը վճարովի կամ անհատույց օգտագործման նպատակով վաճառողներին տրամադրելը, ինչպես նաև առևտրի իրականացման վայրում (բացառությամբ գյուղատնտեսական ապրանքների շուկաների, կենդանիների շուկաների կամ տոնավաճառների (վերնիսաժների) ֆիզիկական անձին վաճառատեղերի տրամադրումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր տրամադրված տեղի համար:

12. Առևտրի, հանրային սննդի օբյեկտներում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի, կենդանիների շուկաներում, կրպակներում՝ օրենսդրությամբ արգելված ապրանքներ վաճառելը (իրացնելը)՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

13. Առևտրի օբյեկտում սննդամթերքի կամ ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքն՝ ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում, իսկ առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների կամ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը՝ ըստ ապրանքախմբերի՝ տարանջատված մեկուսամասերում չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

14. Գործատուի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում օրենսդրությամբ սահմանված ձևի կամ կարգով անվանաքարտի կրումը աշխատողի կողմից չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով՝ անվանաքարտ չկրող յուրաքանչյուր աշխատողի համար:

15. Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների) օրենսդրությանը համապատասխան՝ առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ինչպես նաև տվյալ առևտրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված այլ գույքով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

16. Կազմակերպչի կողմից վաճառքի ցուցադրված ապրանքատեսակի վրա գնապիտակ չապահովելը, բացառությամբ սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում) կամ ցուցահանդես-վաճառքի կազմակերպման վայրերում (բացառությամբ նշված վայրերում գործող առևտրի օբյեկտների) վաճառվող կամ վաճառքի ցուցադրվող ապրանքների՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

17. Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների կամ հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի, դրանց մանրածախ վաճառք իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

18. Առևտրի, հանրային սննդի, կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրում դրանց տեսակը հաստատված և ստուգաչափված չափման կամ ստուգաչափված ստուգիչ չափման միջոցներով չապահովելը կամ չափագիտական նորմերը խախտելը՝

առաջացնում են տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

19. Ցուցանակներում, ցուցափեղկերում, տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում կամ գովազդում այլ անձին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման օգտագործելը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց իրավատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունը՝

առաջացնում է՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

20. Առևտրի իրականացման վայրերը, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերը օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

21. Վաճառվող փաթեթավորված կամ ոչ փաթեթավորված հացի գնապիտակի վրա մեկ միավոր հացի քաշը և դրա շեղումների թույլատրելի չափերը չնշելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

22. Սահմանված ժամկետներում սննդամթերքի կամ սննդային հավելումների արտադրության և շրջանառության փուլերում կատարվող գործառնությունների և դրանց իրականացման տարածքների մասին լիազոր մարմնին տեղեկատվություն չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

23. Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրում վաճառողի (մատակարարի) կողմից մատակարարման պայմանագրով ապրանքների առքուվաճառք (մեծածախ առևտուր) կատարելու դեպքում այդ մասին ցուցանակի վրա համապատասխան տեղեկատվություն չներառելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

24. Բացօթյա առևտուր իրականացնող վաճառողի կողմից վաճառքի թույլատրված ապրանքների համար, օրենսդրությանը համապատասխան, պահման կամ վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ տասնհինգ հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

25. Կշռափաթեթավորված կամ վաճառքի դրված սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա օրենդրությամբ սահմանված նշումները չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

26. Կենցաղային ծառայության օբյեկտներում սպառողներին տեսանելի տեղում մատուցվող ծառայությունների գնացուցակը չփակցնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

27. Ուսումնական հաստատություններում, մանկական կամ բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի կամ հանրային սննդի օբյեկտներում ալկոհոլային խմիչքների վաճառք իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

28. Առաքվող հացի կամ հացաբուլկեղենի ուղեկցող հաշվարկային փաստաթղթում վառարանից արտադրանքի հանման ժամը կամ քաշը նշված չլինելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ քառասուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

29. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ապրանքներ վաճառելը, եթե չի պարունակում սույն հոդվածով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

30. Ոչ սահմանված տեղերում առևտուր անելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

31. Բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի, բացառությամբ 0803-0805, 081050 000 ծածկագրերին դասվող արտադրանքի, ոչ սահմանված տեղերում առևտուր անելը՝

առաջացնում է տուգանք՝ տասնհինգ հազար դրամի չափով:

32. Սույն հոդվածի 1-31-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

33. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում սննդի շղթայի փուլերում օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների վրա:

Հոդված 350. Տեխնիկական կանոնակարգերի պահանջները խախտելը, համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանք իրացնելը առանց գրանցված համապատասխանության սերտիֆիկատի կամ գրանցված

համապատասխանության հայտարարագրի, պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ոլորտներում տեսակը չհաստատված և չստուգաչափված չափման միջոցների կիրառումը

1. Տեխնիկական կանոնակարգերի պահանջները խախտելը (բացառութամբ սույն օրենսգրքի 349-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումներից) արտադրանքն իրացնելու (առաքելու), օգտագործելու (շահագործելու), պահելու, փոխադրելու, օգտահանելու ժամանակ, ինչպես նաև պետական վերահսկողություն իրականացնելու համար արտադրանք, կամ անհրաժեշտ տվյալներ կամ փաստաթղթեր ներկայացնելուց խուսափելը՝

առաջացնում են տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկուհարյուր հազար դրամի չափով:

2. Առանց գրանցված համապատասխանության սերտիֆիկատի կամ գրանցված համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության նշանի մակնշմամբ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանք (այդ թվում՝ ներմուծվող) իրացնելը (աշխատանք կատարելը, ծառայություն մատուցելը) կամ արտադրողների (կատարողների, մատուցողների), ինչպես նաև սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների պատասխանատու անձի կողմից համապատասխանության հավաստման ընթացակարգերը խախտելը կամ առանց օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված հավատարմագրման վկայագրի՝ համապատասխանության հավաստման աշխատանքներ կատարելը (բացառութամբ սույն օրենսգրքի 349-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումներից)՝

առաջացնում են տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների կարգադրագրերը սահմանված ժամկետում չկատարելը՝

առաջացնում են տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

4. Տեսակը չհաստատված, պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում չստուգաչափված չափման միջոցներ կիրառելը, չհաստատված տեսակների չափման միջոցների թողարկման պահանջները խախտելը՝

առաջացնում են տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Գազալցակայանում դիմապակու վրա գազաբալոնների հերթական վկայագրման ժամկետը նշող կտրոն չունեցող կամ ժամկետանց կտրոնով ավտոտրանսպորտային միջոցի գազալցավորումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 351. Տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտի պահանջները խախտելը

1. Տեխնիկական անվտանգության փորձաքննություն օրենսդրությամբ սահմանված կարգով չանցնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

2. Փորձագետի (փորձագիտական խմբի) կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում ոչ հավաստի փորձագիտական եզրակացություն կազմելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

3. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի կողմից օրենսդրությամբ սահմանված տեղեկատվությունը լիազոր մարմին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Արտադրական վտանգավոր օբյեկտը օրենսդրությամբ սահմանված կարգով ռեեստրում գրանցման չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

5. Արտադրական վտանգավոր օբյեկտի ընդլայնման, վերակառուցման, վերազինման, գտնվելու վայրի կամ շահագործող անձի փոփոխության դեպքում սահմանված կարգով լիազոր մարմնին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

6. Արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման արգելման լիազոր մարմնի կարգադրագիրը չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով:

7. Արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործման արգելման լիազոր մարմնի կարգադրագիրը չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

Հոդված 352. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելը

1. Առանց թույլտվության ոգելից խմիչքների կամ ծխախոտի վաճառք իրականացնելը կամ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների կամ ծխախոտի իրացում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

2. Առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, խաղատները, բաղնիքները (սաունաները) առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասնհինգ հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Առանց թույլտվության հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի կամ տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Առանց թույլտվության խանութներում կամ կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

6. Առանց համապատասխան թույլտվության թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

7. Առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը կամ իրացումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

8. Բնակելի տարածքներում կամ դրանց հարող տարածքներում գտնվող բացօթյա օբյեկտներում բարձր երաժշտություն ինչեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

9. Սույն հոդվածի 1-8-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը

առաջացնում են տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

10. Ինքնաշեն սարքերով պատրաստվող պաղպաղակի, կամ զովացուցիչ ըմպելիքների կամ տարբեր տեսակի խորտիկների բացօթյա վաճառք իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

Հոդված 353. Հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի պահպանության պարտականությունը ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը

1. Հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի պահպանության պարտականությունը ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը,ինչպես նաև դրանք այլ անձի հանձնելը, եթե այն չի առաջացրել ծանր հետևանքներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

3. Միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք կամ զանգվածային ոչնչացման զենք ստեղծելիս օգտագործվող կամ դրան օժանդակ որևէ նյութի կամ սարքավորման պահպանության պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե այն չի առաջացրել ծանր հետևանքներ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազարից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հիսուն հազարից երեք հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հոդված 354. Հաշվապահական հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի խախտմամբ վարելը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականություն չսահմանելը

1. Հաշվապահական հաշվառում չվարելը՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ (դրամական արտահայտությամբ) տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ չունենալը կամ սահմանված կարգի խախտմամբ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն չսահմանելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

Հոդված 355. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկությունները չպահպանելը

1. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերն օրենսդրությամբ սահմանված ժամկետով չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 356. Ֆինանսական հաշվետվությունները չներկայացնելը կամ սահմանված կարգով չհրապարակելը

1. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ժամկետներում ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում չհրապարակելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով չհրապարակելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 357. Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները չորակավորված հաշվապահի կամ աուդիտորի կողմից ստորագրելը կամ անստորագիր ներկայացնելը

1. Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը, որը ստորագրված չէ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորված հաշվապահի կամ աուդիտորի կողմից կամ անստորագիր ներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, եթե անձը նախորդ արարքի համար վարչական պատասխանատվության է ենթարկվել անմիջապես դրան նախորդող ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելիս՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 358. Անհատական հաշվի բացման հայտը, անհատական հաշվետվությունը, ապահովագրական (աշխատանքային) ստաժում հաշվառվող աշխատանքային կամ այլ գործունեության ժամանակահատվածների մասին տվյալները սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելը կամ սխալ կամ կեղծ տվյալներով ներկայացնելը

1. Անհատական հաշվի բացման հայտը, անհատական հաշվետվությունը, ապահովագրական (աշխատանքային) ստաժում հաշվառվող աշխատանքային կամ այլ գործունեության ժամանակահատվածների մասին տվյալները սահմանված կարգով կամ ժամկետում չներկայացնելը, կամ սխալ կամ կեղծ տվյալներով ներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում են տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 359. Հիմնադրամների կամ հասարակական կազմակերպությունների կողմից հաշվետվությունը չհրապարակելը կամ չներկայացնելը

1. Հիմնադրամների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետվություն սահմանված ժամկետում չհրապարակելը, թերի հրապարակելը կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հրապարակելու մասին չծանուցելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Հասարակական կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունը թերի հրապարակելը, օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում չհրապարակելը կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հրապարակելու մասին չծանուցելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է հիմնադրամի գործունեության դադարեցում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 360. Պետական վիճակագրական դիտարկումների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ ներկայացնելու կարգը խախտելը

1. Վիճակագրական հաշվետվություններ տրամադրողների կողմից պետական վիճակագրական հաշվետվությունները կամ պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված դեպքերում չներկայացնելը կամ սահմանված կարգի խախտմամբ (ժամկետների կամ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով) ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Ֆիզիկական անձի կողմից օրենսդրությամբ սահմանված համատարած հաշվառումների ժամանակ հաշվառումների հարցաթերթերով նախատեսված տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

Հոդված 361. Ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելը

1. Ապրանքային նշանը, սպասարկման նշանը կամ ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելը, եթե այդ արարքը զգալի չափի վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասում զգալի չափ է համարվում երկու հարյուր հազար դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 362. Անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձի կողմից օրենսդրությամբ սահմանված տեղեկություն չներկայացնելը

1. Անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձի կողմից գնահատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց կամ աշխատանքային

պայմանագիրը լուծելուց հետո դրանց պատճենները օրենսդրությամբ սահմանված ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

Հոդված 363. Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը չորակավորված անձի կողմից ստորագրելը

1. Անշարժ գույքի գնահատողի որակավորում չունեցող անձի կողմից անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը ստորագրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 364. Չորակավորված անձի կողմից ստորագրված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը հաստատելը

1. Անշարժ գույքի գնահատողի որակավորում չունեցող անձի ստորագրած անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը հաստատելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 365. Օրենսդրությամբ որոշակի ապրանքատեսակների համար սահմանված օտարման նվազագույն գնից ցածր գնով ապրանքների օտարումը

1. Օրենսդրությամբ որոշակի ապրանքատեսակների համար սահմանված օտարման նվազագույն գնից ցածր գնով ապրանքների օտարումը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 366. Ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը

1. Առանց պետական գրանցման կամ հաշվառման (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ առանց ծանուցման, առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի լիցենզավորման, ծանուցման կամ թույլտվության ենթակա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը կամ ձեռնարկատիրության օրենքով արգելված տեսակներով զբաղվելը, որը պատճառել է խոշոր չափերի չհասնող վնաս՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

3. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա չունեցող անձի պահնորդական ծառայություններից օգտվելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 367. Կանխամտածված սնանկությունը

1.Կանխամտածված սնանկությունը՝ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի, իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի անունից օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալու կամ նրան պարտադիր կատարման ենթակա ցուցում տալու կամ որոշումը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձի շահերից ելնելով, եթե դրա հետևանքով անձը սնանկ է ճանաչվել և խոշոր չափի չհասնող գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության օրինական շահերին՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 368. Գրավադրված կամ պայմանագրի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ ապօրինի արարք կատարելը

1. Գրավադրված կամ պայմանագրի առարկա հանդիսացող գույքը ապօրինաբար թաքցնելը, ոչնչացնելը, վնասելը, վատնելը, օտարելը կամ գույքի վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, որը խոշոր չափերի չհասնող գույքային վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 369. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացնելիս անցկացման կարգը խախտելը

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափի չհասնող գույքային վնաս պատճառելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 370. Շինծու իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում, հիմնարկ ստեղծելը և օգտագործելը

1.Իրավաբանական անձ կամ դրա առանձնացված ստորաբաժանում ստեղծելու կամ վերակազմակերպելու կամ դրածո անձի միջոցով, կամ դրանք օգտագործելու միջոցով ապօրինի գործունեություն իրականացնելը կամ ապօրինի գործունեությունը քողարկելը, որը խոշոր չափերի չհասնող գույքային վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցմամբ:

Հոդված 371. Անօրինական գործունեությունը սնանկության կամ անվճարունակ ճանաչվելու գործընթացում

1.Անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի, իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի անունից օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալու կամ նրան պարտադիր կատարման ենթակա ցուցում տալու կամ որոշումը կանխորոշելու հնարավորություն ունեցող

անձի կամ մարմնի կողմից սնանկության, սնանկության կանխատեսման կամ պարտապան ֆիզիկական անձի անվճարունակ ճանաչվելու գործընթացում անօրինական գործունեություն ծավալելը, որը խոշոր չափի չհասնող գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին և դրսևորվել է սնանկության կամ անվճարունակության հատկանիշների առկայություն դեպքում՝

1) գույքը կամ եկամուտը, գույքային իրավունքները կամ պարտականությունները թաքցնելով, կամ.

2) գույքն առանց օրինական հիմքի ուրիշի տիրապետմանը հանձնելով, գույքը ոչնչացնելով, վնասելով կամ ակնհայտ անշահավետ պայմաններով օտարելով, կամ.

3) գույքի, եկամտի, դրանց չափի, գտնվելու վայրի կամ դրանց վերաբերյալ գույքային իրավունքների կամ պարտականությունների կամ այլ տեղեկությունը թաքցնելով կամ խեղաթյուրելով, կամ.

4) պարտապան ֆիզիկական անձի գույքային վիճակը, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գույքային կամ տնտեսական գործունեությունն արտացոլող հաշվապահական կամ այլ փաստաթղթերը թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով, կեղծելով, կամ.

5) առանձին պարտատերերի գույքային պահանջներն ապօրինի բավարարելով՝ ի վնաս այլ պարտատերերի կամ.

6) սնանկության կառավարչի կամ սնանկության գործընթացում նման գործառույթներ իրականացնող անձի կամ լուծարային հանձնաժողովի գործունեությանը խոչընդոտելով՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 372. Պետական լիազորված մարմինների պաշտոնատար անձի կողմից անհատ ձեռնարկատերերին սահմանված ժամկետներում չհաշվառելը կամ իրավաբանական անձին սահմանված ժամկետներում չգրանցելը (չվերագրանցելը) կամ գրանցումը (վերագրանցումը) անհիմն մերժելը

1. Պետական լիազոր մարմնի պաշտոնատար անձի կողմից անհատ ձեռնարկատիրոջը օրենքով սահմանված ժամկետում չհաշվառելը կամ իրավաբանական անձին օրենդրությամբ սահմանված ժամկետում չգրանցելը (չվերագրանցելը) կամ գրանցումը (վերագրանցումը) անհիմն մերժելը՝

առաջացնում է տուգանք հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 373. Ինկասացիոն գործունեության պահանջները խախտելը

1. Ինկասացիոն կազմակերպության կանոնադրական կապիտալի չափի օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի չափին չհամապատասխանելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

2. Ինկասացիոն կազմակերպության անձնակազմի պատրաստվածության կամ տեխնիկական միջոցների պահանջվող վիճակն ապահովելու միջոցառումների կատարման վերաբերյալ պետական լիազորված մարմնի սահմանած պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

3. Ինկասացիոն կազմակերպության կողմից պետական լիազորված մարմնի սահմանած ժամկետում պետական լիազորված մարմնի՝ խախտումները վերացնելու հանձնարարականը չկատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

4. Ինկասացիոն կազմակերպության կողմից օրենսդրությամբ չնախատեսված գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 374. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության պահանջները խախտելը

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորում ունեցող զբոսավարների կամ ուղեկցորդների կողմից համապատասխանաբար զբոսավարի կամ ուղեկցորդի գործունեություն իրականացնելիս որակավորման անվանաքարտ չկրելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորում չունեցող զբոսավարների կամ ուղեկցորդների կողմից որակավորման անվանաքարտ կրելը կամ այլ կերպ որակավորված ներկայանալը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

4. Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի կողմից հյուրանոցային տնտեսության օբյեկտների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության կամ դրա տրամադրման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

5. Հյուրանոցային տնտեսության օբյեկտն իր տեսակին չհամապատասխանող տեսակով, օգտագործվող նշանին չհամապատասխանող որակավորման կարգի նշանի օգտագործմամբ կամ օրենսդրությամբ սահմանված որակավորման կարգի նշաններին մոլորեցնելու աստիճանի նշանների օգտագործմամբ ներկայացնելը կամ գովազդելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

6. Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձի կողմից հյուրանոցային տնտեսության օբյեկտի հստակ տարբերակման և ներկայացման օրենսդրությամբ սահմանված ձևին կամ կարգին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 375. Աուդիտորական ծառայություն իրականացնող անձին ներկայացվող օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը

1. Աուդիտ իրականացնող անձի կողմից ոչ հավաստի աուդիտորական եզրակացություն տրամադրելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

2. Աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերի կամ գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիության պահպանման պահանջները խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

3. Աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտ իրականացնող անձի համար արգելված ձեռնարկատիրական որևէ գործունեությամբ զբաղվելը ՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

4. Աուդիտ իրականացնող անձի կողմից՝ իր աշխատող աուդիտորների, ինչպես նաև աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում ներգրավված այլ աուդիտորների, մասնագետների (այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով), այլ առևտրային կազմակերպությունների կողմից օրենսդրությամբ աուդիտորական

ծառայություն իրականացնելու արգելքի սահմանված պահանջների պահպանումը չապահովելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում 6 ամիս ժամկետով:

5. Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու իրավունք ունեցող սուբյեկտներին օրենսդրությամբ միաժամանակ ներկայացվող պահանջներից որևէ մեկի խախտելը, եթե աուդիտ իրականացնող անձն այդ մասին տեղեկացրել է լիազորված մարմնին՝ խախտում թույլ տրվելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

6. Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու իրավունք ունեցող սուբյեկտներին օրենսդրությամբ միաժամանակ ներկայացվող պահանջներից որևէ մեկի խախտելը, եթե աուդիտ իրականացնող անձն այդ մասին չի տեղեկացրել լիազորված մարմնին՝ 30-օրյա ժամկետում՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

7. Աուդիտ իրականացնող անձի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետները կամ դրանց ներկայացման օրենսդրությամբ սահմանված այլ պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված խախտումները սահմանված ժամկետում չվերացնելը կամ այդ մասին լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելը կամ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 376. Աուդիտորների որակավորման նպատակով մասնագիտացված կառույցի հավատարմագրման և գործունեության հետ կապված խախտումները

1. Աուդիտորների որակավորման նպատակով մասնագիտացված կառույցի (այսուհետ սույն հոդվածում՝ մասնագիտացված կառույց) հավատարմագրման համար հայտ ներկայացրած կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված հավատարմագրման պայմաններից կամ պահանջներից որևէ մեկը խախտելը՝

առաջացնում է՝ նախազգուշացում:

2. Մասնագիտացված կառույցի կողմից լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներառելը՝

առաջացնում է՝ նախազգուշացում:

3. Իր անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում՝ մասնագիտացված կառույցի կողմից հավատարմագրման վկայականի վերաձևակերպման համար դիմում չներկայացնելը՝

առաջացնում է՝ նախազգուշացում:

4. Մասնագիտացված կառույցի կողմից աուդիտորական գործունեության օրենսդրության պահանջների այնպիսի խախտումները, որոնց հետևանքով ուղղակի սպառնալիք է առաջացել պետական կամ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, անձանց կյանքին, առողջությանը կամ բարքերին, ինչպես նաև այլոց իրավունքներին, ազատություններին, պատվին կամ բարի համբավին՝

առաջացնում են հավատարմագրման հետ կապված գործունեության կամ այդ գործունեության առանձին գործառույթների կամ գործողությունների իրականացման կասեցում և տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

5. Հավատարմագրման վկայականն այլ անձի օգտագործման տալը, օտարելը կամ գրավադնելը (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի)՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6.Սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

7. Սույն հոդվածի 1-ին մասով կատարված խախտումները սահմանված ժամկետում չվերացնելը կամ այդ մասին լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելը կամ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 377. Աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական ծառայության իրականացման օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը

1. Աուդիտ իրականացնող անձի կողմից՝ աուդիտորական ծառայություններն առնվազն մեկ աուդիտորի կողմից իրականացվելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

2. Աուդիտ իրականացնող անձի կողմից՝ աուդիտորական եզրակացությունները, աուդիտորական հաշվետվությունները, աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը կամ աուդիտի անցկացման հետ կապված այլ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան աուդիտի անցկացմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում, պահպանելու օրենսդրությամբ սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական եզրակացության կազմմանը, ստորագրմանը, հաստատմանը կամ օրինակների տրամադրմանը վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Աուդիտ իրականացնող անձի կողմից լիցենզիայի բացակայության դեպքում կամ տվյալ անձի կողմից օրենսդրությամբ սահմանված աուդիտորական գործունեություն իրականացնելու արգելքի դեպքում աուդիտորական ծառայություններ իրականացնելուց չհրաժարվելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հիսուն հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

5. Աուդիտ իրականացնող անձի կողմից օրենսդրությամբ սահմանված դեպքերում աուդիտորական ծառայությունների իրականացումից հրաժարվելու և պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լիազորված մարմնին օրենսդրությամբ սահմանված ժամկետում հրաժարվելու պատճառների մասին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հիսուն հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

6. Աուդիտ իրականացնող անձի կողմից օրենսդրությամբ սահմանած կարգով կնքված պայմանագրերի գրանցամատյան վարելու պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր չգրանցած պայմանագրի համար չորսհարյուր հազար դրամի չափով:

7. Աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի և հարակից ծառայությունների փաստաթղթավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանած պահանջները խախտելը, որը չի ազդել աուդիտորական եզրակացության ձևի կամ բովանդակության վրա՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

8. Աուդիտ իրականացնող անձի կողմից օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները կամ աուդիտի ենթարկված անձանց ցանկը ինտերնետային կայքում չտեղադրելը կամ ինտերնետային կայք չունենալը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Սույն հոդվածի 1-8-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երեք տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

10. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երեք տարվա ընթացքում երրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում 6 ամիս ժամկետով:

11. Սույն հոդվածի 1-2-րդ, 4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում երրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

ԳԼՈՒԽ 32.
ՀԱՐԿԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 378. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր վճարները սահմանված ժամկետներում չվճարելը

1. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր վճարները, բացառությամբ մաքսային վճարների, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելը, եթե բացակայում են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշները՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր վճարները չվճարելը օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները կամ հաշվարկները չներկայացնելու կամ հաշվետվությունների, հաշվարկների կամ հարկման կամ վճարումների հաշվարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի մեջ խեղաթյուրված տվյալներ մտցնելու կամ հարկման օբյեկտը թաքցնելու կամ խաբեության այլ դրսևորումով, որը կատարվել է ոչ խոշոր չափերով՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը առաջին անգամ կատարած անձը ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ վճարել է չվճարված հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները և դրանց չվճարման համար օրենսդրությամբ սահմանված տույժերը և նախկինում նշված հիմքով չի ազատվել վարչական պատասխանատվությունից:

Հոդված 379. Օրենսդրությամբ սահմանված մասհանումներ չկատարելը

1. «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասհանում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ՝ վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա մասհանման գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

Հոդված 380. Հարկային մարմիններ տեղեկությունները սահմանված ժամկետում չհաղորդելը կամ սխալ տեղեկություններ հաղորդելը

1. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության պաշտոնատար անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի կողմից հարկ վճարողի կամ սոցիալական վճարներ կատարողի հետ կատարված գործառնությունների, ինչպես նաև իրենց կողմից կամ իրենց հաշվին ֆիզիկական անձին վճարված եկամուտների կամ պահված հարկերի կամ պարտադիր վճարների մասին տվյալները, հարկման նպատակով

օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ այլ տվյալներ հարկային տեսչության տարածքային մարմիններ սահմանված ժամկետում չհաղորդելը կամ սխալ տվյալներ հաղորդելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը նպաստել է հարկ կամ սոցիալական վճարներ վճարողի կողմից հարկվող օբյեկտը (հարկը) կամ սոցիալական վճարը թաքցնելուն՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Պետական լիազոր մարմնի պաշտոնատար անձի կողմից իրավաբանական անձի պետական գրանցման, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման, լիցենզավորման կամ դրանց հետ կապված համապատասխան փոփոխությունների մասին տվյալները հարկային մարմիններ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

Հոդված 381. Հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, կամ հայտարարագիրը, հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը

1. Օրենսդրությամբ սահմանված հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ հաշվետվության (այդ թվում՝ հաշվապահական) կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի նվազեցում՝

առաջացնում է տուգանք՝ տասնհինգ հազարից մինչև քսանհինգ հազար դրամի չափով:

2. Հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազարից մինչև քսան հազար դրամի չափով:

Հոդված 382. Ակցիզային դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) օտարելը, ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը, ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը, ակցիզային

դրոշմանիշներով կամ հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման այլ կանոնները խախտելը

1. Սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշերը կամ հսկիչ նշանները (դրոշմապիտակները) օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում հիսուն հատը՝

առաջացնում է տուգանք՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի կամ հսկիչ նշանի (դրոշմապիտակի) համար՝ տասնհինգ հազար դրամի չափով:

2. Ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով կամ հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի և հսկիչ նշանի (դրոշմապիտակի) համար՝ հիսուն հազար դրամի չափով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում:

5. Ակցիզային դրոշմանիշներով կամ հսկիչ նշաններով (դրոշմապիտակների) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում:

7. Ակցիզային դրոշմանիշների կամ հսկիչ նշանների (դրոշմապիտակների) մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշներով կամ հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ իրացման համար թույլատրելի ժամկետներից հետո որոշակի թվագրումով դրոշմանիշներով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողությամբ տարաների համար տրամադրված դրոշմանիշներով կամ հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ՝ օրենսդրությամբ չնախատեսված այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված արարքը պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

Հոդված 383. Առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների դրամական հաշվարկներ իրականացնելը, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի կամ շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը

1. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական գործարքներ իրականացնելու պահին կամ վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայությունը կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված չլինելը՝ հանրային սննդի օբյեկտում իրականացվող հանրային սննդի գործունեության մասով, եթե այդ գործունեությունը օրենսդրության համաձայն, չի համարվում արտոնագրային վճարի օբյեկտ՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի նկատմամբ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը գործունեության այլ տեսակների մասով՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի նկատմամբ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով և այդ մասով գործունեության կասեցում մինչև սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենայի ներդրումը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո ՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

5. Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի կամ շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը, հանրային սննդի օբյեկտում իրականացվող հանրային սննդի գործունեության մասով, եթե այդ գործունեությունը օրենսդրության համաձայն, չի համարվում արտոնագրային վճարի օբյեկտ՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի նկատմամբ՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը կատարելը գործունեության այլ տեսակների մասով՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից մինչև տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0,5-ից 0,7 տոկոսի չափով և այդ մասով գործունեության կասեցում՝ 5-օրյա ժամկետով:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով և այդ մասով գործունեության կասեցում՝ 5-օրյա ժամկետով:

9. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ կամ երեքից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է առաջացնում է տուգանք՝ երկու միլիոն դրամից մինչև տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5-ից 0,7 տասնորդական տոկոսի չափով և այդ մասով գործունեության կասեցում՝ 10-օրյա ժամկետով:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ կամ երեքից ավելի անգամ կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով և այդ մասով գործունեության կասեցում՝ 10-օրյա ժամկետով:

11. Հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելը կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարք չտեղադրելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնակատիրոջ նկատմամբ:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

13. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ կամ երեքից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով և համապատասխան օբյեկտի գործունեության կասեցում՝ մինչև ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենայի կիրառումը կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարքի տեղադրումը:

14. Հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմին ուղարկելը չապահովելը (հսկիչ-դրամարկղային մեքենայի, ցանցային կապի միջոցի անխափան աշխատանքը չապահովելը), բացառությամբ կապի անբավարարության կամ բացակայության պատճառով տեղեկությունը չուղարկելու դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի նկատմամբ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

15. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 384. Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջները խախտելը

1. Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամը և ոչ ավելի, քան երկու միլիոն դրամը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, մեկ միլիոն դրամը և ոչ ավելի, քան չորս միլիոն դրամը:

3. Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 33.
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ, ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 385. Հայաստանի Հանրապետության արժույթով գործարքների իրականացման, ինչպես նաև արժութային հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման կամ աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումները, ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց դրամական վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները, և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները, ապահովագրավճարների կամ ապահովագրական հատուցումների ընդունումը կամ իրականացումը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, կամ իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում դրամական ներդրումները կամ Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական շահումների գովազդը կամ այդ շահումների հատկացումը Հայաստանի Հանրապետության դրամով չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան երկու միլիոն դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով կիրառված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

3. Արժութային հարաբերությունները կարգավորող օրենքներով կամ իրավական այլ ակտերով սահմանված այլ պահանջ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածով սահմանված վարչական իրավախախտում չի համարվում պաշտոնատար անձի կողմից իրենց իրավասության սահմաններում վերահսկողական նպատակներով իրականացվող՝ սույն հոդվածով սահմանված գործողության կամ գործողությունների կատարումը:

Հոդված 386. Առանց համապատասխան լիցենզիայի արտարժույթի առուվաճառքը իրականացումը

1. Առանց համապատասխան լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև մեկ տարի ժամկետով:

Հոդված 387. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջները խախտելը

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև սույն հոդվածում՝ Օրենք) 4-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց (սույն հոդվածում այսուհետ՝ ֆիզիկական անձ) նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձ հանդիսացող ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց (սույն հոդվածում այսուհետ՝ իրավաբանական անձ)՝ նկատմամբ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հաշվետվությունները չտրամադրելը կամ ժամկետանց տրամադրելը, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

3. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հաշվետվությունները չտրամադրելը կամ ժամկետի խախտմամբ տրամադրելը, ինչպես նաև սահմանված հաշվետվությունների մեջ տվյալները սխալ, այդ թվում՝ կեղծ կամ ոչ արժանահավատ, կամ թերի լրացնելը, հաստատված հաշվետվական ձևը կառուցվածքային փոփոխությունների ենթարկելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

5. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

6. Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով սահմանված տեղեկությունների տրամադրման կամ հանձնարարականների կատարման պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

8. Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

9. Օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

10. Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

11. Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

12. Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

13. Օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

14. Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

15. Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

16. Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

17. Օրենքի 27-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

18. Օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով:

19. Փողերի լվացման մեջ իրավաբանական անձի (բացառությամբ հաշվետվություն տրամադրող անձի) ներգրավված լինելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն ութ հարյուր հազարից երկու միլիոն դրամի չափով կամ այդ իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

20. Փողերի լվացման մեջ հաշվետվություն տրամադրող իրավաբանական անձի ներգրավված լինելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն ութ հարյուր հազարից երկու միլիոն դրամի չափով և լիցենզիայի կասեցում կամ դադարեցում կամ իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

21. Ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձի (բացառությամբ հաշվետվություն տրամադրող անձի) ներգրավված լինելը՝

առաջացնում է տուգանք՝ ինը միլիոն ութ հարյուր հազարից տասը միլիոն դրամի չափով և իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

22. Ահաբեկչության ֆինանսավորման մեջ հաշվետվություն տրամադրող իրավաբանական անձի ներգրավված լինելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն ութ հարյուր հազարից քսան միլիոն դրամի չափով և լիցենզիայի դադարեցում կամ իրավաբանական անձի գործունեության դադարեցում.:

Հոդված 388. Պաշտոնատար անձի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջները խախտելը

1. Պետական մարմինների պաշտոնատար անձի կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 34.
ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 389. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կարգադրությանը կամ օրինական պահանջին չենթարկվելը, նրան վիրավորանք հասցնելը, բռնություն գործադրելը կամ դրա սպառնալիքը

1. Մաքսային վարույթին առնչվող անձի կողմից մաքսային մարմնի պաշտոնատար անձի կարգադրությունը կամ օրինական պահանջը դիտավորությամբ չկատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Պաշտոնական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձին վիրավորանք հասցնելը, կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը կամ դրա սպառնալիքը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 390. Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու ժամանակ տրանսպորտային միջոցը չկանգնեցնելը

1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանը փաստացի հատելու ժամանակ տրանսպորտային միջոցը մաքսային մարմնի սահմանած վայրում չկանգնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 391. Մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց թույլտվության

1. Մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության՝

առաջացնում է տուգանք՝ վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 392. Մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներին և տրանսպորտային միջոցներին մաքսային մարմնի պաշտոնատար անձին մոտենալուն խոչընդոտելը

1. Պաշտոնական լիազորություններն իրականացնելու համար մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներին կամ տրանսպորտային միջոցներին մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձի մոտենալուն խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 393. Մաքսային հսկողություն իրականացնելու համար սահմանված փաստաթղթեր և տեղեկություններ մաքսային մարմնին չներկայացնելը

1. Մաքսային հսկողության իրականացման համար սահմանված փաստաթղթերը կամ տեղեկությունները սահմանված ժամկետում մաքսային մարմիններին չներկայացնելը՝ անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 394. Մաքսային մարմին ապրանքները, տրանսպորտային միջոցները և ուղեկցող փաստաթղթերը չհասցնելը

1. Հայաստանի Հանրապետության մեկ մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները և դրանց ուղեկցող փաստաթղթերը սահմանված ժամկետում չհասցնելը՝

առաջացնում է տուգանք՝ վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

Հոդված 395. Մաքսային ապահովման միջոցները վնասելը, կորցնելը կամ փոխելը

1. Մաքսային մարմինների կողմից կիրառվող օրենքով սահմանված մաքսային ապահովման նույնականացման միջոցները վնասելը, կորցնելը կամ փոխելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազարից մինչև երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 396. Առանց մաքսային մարմնի թույլտվության կատարվող բեռնային և այլ գործառնությունները

1. Առանց մաքսային մարմնի թույլտվության մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների բեռնումը, բեռնաթափումը, փոխաբեռնումը, փաթեթների վնասվածքների վերացումը, փաթեթների բացումը, փաթեթավորումը կամ վերափաթեթավորումը ՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի քառասունից հիսուն տոկոսի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի ութսուն տոկոսից ամբողջի չափով:

Հոդված 397. Առանց մաքսային մարմնի թույլտվության ապրանքներ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը, ինչպես նաև մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների պահպանության կանոնների խախտմամբ դրանք վնասելը կամ կորցնելը

1. Առանց մաքսային մարմնի թույլտվության մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցներն մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի քառասունից հիսուն տոկոսի չափով:

2. Մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցների պահպանության կանոնների խախտմամբ դրանք վնասելը կամ կորցնելը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի տասնհինգից քսանհինգ տոկոսի չափով:

Հոդված 398. Հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորության խախտումը

1. Հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ Հայաստանի Հանրապետություն չներմուծելը՝

առաջացնում է տուգանք՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների համար «Բաց թողնում՝ ներքին սպառման

համար» մաքսային ընթացակարգի համար սահմանված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, որը զուգորդվել է սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օտարմամբ՝

առաջացնում է տուգանք՝ օտարված ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի ութսունից ամբողջի չափով:

Հոդված 399. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետության տարածքով ապրանքների փոխադրման կանոնները չպահպանելը

1. Փոխադրողի կողմից «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետության տարածքով ապրանքների փոխադրման ժամկետը կամ ապրանքների տեղափոխման երթուղին չպահպանելը կամ մաքսային մարմնի կողմից նախատեսածից այլ մաքսային հսկողության գոտի ապրանքներ հասցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 400. Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների քանակի և վիճակը փոփոխելը

1. Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցների բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից կամ փոխադրման, տրանսպորտային փոխադրման կամ պահպանման բնականոն պայմաններում ապրանքների բնական հատկությունների փոփոխության հետևանքով քանակի կամ վիճակի փոփոխություններից բացի այլ փոփոխությունների ենթարկելը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի համար սահմանված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան հիսուն հազար դրամի չափով:

2. «Մաքսային պահեստ», «ներմուծում մաքսային պահեստ», «ներմուծում ազատ մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգերով բաց թողնված ապրանքների նկատմամբ այնպիսի գործողություններ իրականացնելը, որոնք հանգեցրել են այդ ապրանքների հատկանիշների կամ նպատակային նշանակության փոփոխությանը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի հինգից տասը տոկոսի չափով:

Հոդված 401. Հայաստանի Հանրապետության սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով

1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների կամ տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով դրանց տեղափոխումը մաքսային մարմնի գտնվելու վայրից դուրս՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի ութսուն տոկոսից ամբողջի չափով:

Հոդված 402. Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով

1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն՝ գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի ութսուն տոկոսից ամբողջի չափով:

Հոդված 403. Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային և այլ փաստաթղթերը կամ մաքսային ապահովման միջոցները խաբեությամբ օգտագործելով

1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների կամ տրանսպորտային միջոցների տեղափոխումը կամ ժամանակավոր պահպանման հանձնելու դեպքում՝ մաքսային մարմին մաքսային հսկողության կամ մաքսային ձևակերպման համար ոչ ճշգրիտ տեղեկություններ, կեղծ, անօրինական ճանապարհով ստացված, անվավեր համարված կամ մաքսային և այլ փաստաթղթեր, ինչպես նաև կեղծ մաքսային ապահովման միջոցներ խաբեությամբ օգտագործելը՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի ութսուն տոկոսից ամբողջի չափով:

Հոդված 404. Ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվանմամբ կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ (կեղծ) տեղեկություններ ներառելը

1. Ապրանքները կամ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ դրանց անվանման,

նկարագրի, դասակարգչի, ծագման երկրի, մաքսային արժեքի կամ այլ տվյալների վերաբերյալ ոչ ճշգրիտ (կեղծ) տեղեկություններ ներառելը՝ ինչի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում՝

առաջացնում է տուգանք՝ չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների և այդ մաքսային վճարների հիսուն տոկոսի ընդհանուր գումարի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որն առաջացնում է ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որի արդյունքում չեն առաջանում մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի), սակայն կատարված վարչական իրավախախտման արդյունքում մաքսային հայտարարագրում արտացոլվել են ապրանքների արտահանման երկրում կամ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված և մաքսային սահմանով տեղափոխված կամ տեղափոխվող ապրանքների ձեռքբերման արժեքներից կամ քանակներից բարձր կամ ցածր արժեքներ կամ քանակներ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի ութից տասը տոկոսի չափով:

Հոդված 405. Առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործումը, տնօրինումը և այլ անձի հանձնելն այլ նպատակներով

1.Առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օգտագործումը, տնօրինումը կամ այլ անձի հանձնելն այլ նպատակներով, որոնց համար տրվել էին այդ արտոնությունները՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի ութսուն տոկոսից ամբողջի չափով:

Հոդված 406. Պայմանական բաց թողնված ապրանքներն անօրինական օգտագործելը կամ տնօրինելը, ինչպես նաև արգելանքի վերցված ապրանքները և տրանսպորտային միջոցներն անօրինական օգտագործելը

1. Օրենքով սահմանված պայմանական բաց թողնված ապրանքներն անօրինական օգտագործելը կամ տնօրինելը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի քսան տոկոսի չափով:

2. Մաքսային հսկողության ժամանակ արգելանքի վերցված ապրանքները կամ տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ այդ ապրանքների մաքսային արժեքի քառասունից հիսուն տոկոսի չափով:

Հոդված 407. Մաքսային վճարների օրենքով սահմանված վճարման ժամկետները խախտելը

1. Մաքսային վճարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 35.
ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԵՎ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 408. Շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կարգը խախտելը

1. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների կամ հաշվետվությունների ներկայացման, հրապարակման կարգը, ժամկետները, բովանդակությունը կամ ձևը խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները կամ հաշվետվությունները ուշ ներկայացնելու կամ դրանցում ոչ արժանահավատ տվյալներ արտացոլելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից՝ օրենսդրության պահանջներին համապատասխան խաղասրահի՝ դրսից դեպի ներս անտեսանելիությունը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից՝ օրենսդրության պահանջներին համապատասխան խաղասրահի տարածքի պաշտպանությունը պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերով չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

5. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից՝ օրենսդրության պահանջներին համապատասխան, խաղասրահում կազմակերպվող խաղերի կանոնները խաղասրահում, տեսանելի տեղում չփակցնելը (բացառությամբ այն խաղային ավտոմատների, որոնք իրենց վրա պարունակում են շահումների տարբերակներ)՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

7. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված, խաղային ավտոմատի շահագործումից ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խաղային ավտոմատի համար՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

8. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձի մուտքը խաղասրահ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան չարգելելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անձի համար հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, պատահականությամբ չպայմանավորված շահումներով խաղեր կազմակերպելիս նախօրոք խաղացողներին չտեղեկացնելը կամ դրա մասին չբացատրելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

10. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների գովազդը, այդ թվում՝ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով իրականացնելը, բացառությամբ խաղատների կամ շահումով խաղերի շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ դրանց վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով:

11. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից խաղացողի առաջին իսկ պահանջի դեպքում շահումը չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

12. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը կամ սույն հոդվածի 1-ին մասով նշանակված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին հանձնարարականները սահմանված ժամկետում չկատարելը և այդ մասին լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

13. Շահումով խաղի կազմակերպչի կողմից իր անվանման կամ ցուցանակների մեջ «խաղատուն» բառը, դրա ածանցյալները կամ թարգմանությունները օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

14. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից իր սահմանած և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան շահումով խաղերը չկազմակերպելը կամ չանցկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

15. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից լիցենզավորման կարգով սահմանված լիցենզիա ստանալու համար ներկայացված տվյալներից մեկը, բացառությամբ՝ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի պահանջների, առանց լիազոր մարմնին տեղեկացնելու փոփոխելը, ինչը չէր կարող հիմք հանդիսանալ լիցենզիա ստանալու հայտի մերժմանը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր տվյալի համար՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

16. Սույն հոդվածի 3-15-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի և մեկ միլիոն դրամի հանրագումարի չափով:

17. Սույն հոդվածի 2-15-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում երրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է՝ լիցենզիայի դադարեցում:

18. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից իր՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների, նրանց իրական շահառուների, ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ կիրառվող պահանջները խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

19. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և ղեկավար պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

20. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից խաղատան կամ շահումով խաղերի կազմակերպման գործունեության իրականացումը լիցենզիայում չնշված վայրում (հասցեում)՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

21. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից տնօրենի բացակայության դեպքում տնօրենին փոխարինող՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող լիազոր անձի ներկայությունը խաղասրահում չապահովելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

22. Շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից շահումով խաղերի և խաղատան կազմակերպման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների կամ հաշվետվություններում կեղծ տվյալների ներկայացումը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

23. Սույն հոդվածի 18-21-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

24. Շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպչի կողմից խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն կանխիկ հայկական դրամով, բանկային քարտով կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային փաստաթղթերով չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում:

25. Սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում մինչև մեկ տարի ժամկետով:

26. Սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երեք կամ երեքից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք միլիոն դրամից չորս միլիոն դրամի չափով կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 409. Վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կարգը խախտելը

1. Վիճակախաղի կազմակերպչի կամ նրա ղեկավարների կողմից օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները կամ հաշվետվություններն ուշ ներկայացնելը կամ դրանցում անարժանահավատ տվյալներ արտացոլելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Վիճակախաղի կազմակերպչի կողմից խաղարկությանը մասնակցող տոմսերի ընդհանուր արժեքի առնվազն կեսի չափով շահումային ֆոնդի (առանց դրանում ներառվող վիճակախաղի տոմսերի արժեքի) ձևավորումն ու մասնակիցների միջև բաշխումը չապահովելը, բացառությամբ տոտալիզատորների կազմակերպման դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ դրա չհամալրված (չբաշխված) մասի կրկնակիի չափով:

3. Վիճակախաղի կազմակերպչի կողմից, նախքան վիճակախաղի գովազդի հրապարակումը, դրա բովանդակությունը լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Վիճակախաղի կազմակերպչի կողմից իրային շահումների խաղարկման դեպքում վիճակախաղի շահող մասնակցին՝ այդ իրային շահմանը համարժեք դրամական չափի մասին չտեղեկացնելը կամ շահողի ցանկությամբ դրամական շահումը չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Վիճակախաղի կազմակերպչի կողմից խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի կազմակերպման կամ անցկացման կանոնակարգով սահմանված ժամկետներում չպահանջված (չստացված) շահումների չափով այդ ժամկետի ավարտին հաջորդող հերթական խաղարկության շահումային ֆոնդը չավելացնելը՝

առաջացնում է տուգանք՝ չտեղափոխված մասի կրկնակիի չափով:

6. Վիճակախաղի կազմակերպչի կողմից շահման փաստը կամ արժեքը առանց շահողի համաձայնությամբ հրապարակելը (բացառությամբ «Փողերի լվացման և

ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի)՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Վիճակախաղի կազմակերպչի կողմից շահողի առաջին իսկ պահանջով շահումը չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

8. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը կամ սույն հոդվածի 1-ին մասով նշանակված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին հանձնարարականները սահմանված ժամկետում չկատարելը և այդ մասին լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով.

9. Անչափահասին վիճակախաղին մասնակցելուն օրենսդրությամբ սահմանված կարգով չարգելելը ՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր անչափահասի դեպքում՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

10. Վիճակախաղի արդյունքները կամ վիճակախաղի խաղարկության արդյունքների հրապարակման օրենսդրությամբ սահմանված կարգը կամ ժամկետները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Սույն հոդվածի 3-4-րդ, 6-8-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի և մեկ միլիոն դրամի հանրագումարի չափով:

12. Շահումների ցուցադրման վայրից 500 մետրից մոտ հեռավորության վրա վիճակախաղերի տոմսի վաճառքի իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

13. Վիճակախաղի կազմակերպչի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների, նրանց իրական շահառուների,

ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ կիրառվող՝ օրենսդրության պահանջները խախտելը՝

առաջացնում է վիճակախաղի կազմակերպչի լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

14. Վիճակախաղի կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոններ զբաղեցնելու՝ օրենսդրության պահանջները խախտելը՝

առաջացնում է վիճակախաղի կազմակերպչի լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

15. Վիճակախաղի կազմակերպչի կողմից վիճակախաղերի տոմսերի իրացման, պատրաստման կամ ներմուծման գործունեությունից բացի այլ գործունեությամբ զբաղվելը (բացի վիճակախաղի կազմակերպման գործունեությունից)՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

16. Վիճակախաղի կազմակերպչի կողմից իր սահմանած և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան վիճակախաղը չկազմակերպելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

17. Վիճակախաղի կազմակերպչի կողմից օրենսդրությամբ սահմանված վիճակախաղի մարված տոմսերի հաշվառման կամ պահպանման պահանջները խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում՝ մինչև խախտման վերացումը:

18. Վիճակախաղի կազմակերպչի կողմից կազմակերպչի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները կամ հաշվետվությունները ուշ ներկայացնելու կամ դրանցում ոչ արժանահավատ տվյալներ արտացոլելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

19. Վիճակախաղի կազմակերպչի կողմից օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները կամ հաշվետվությունները՝ կեղծ տվյալներով ներկայացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

20. Սույն հոդվածի 13-17-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

ԳԼՈՒԽ 36.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 410. Հակամրցակցային համաձայնությունը

1. Հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը, այդ համաձայնությանը մասնակցելը), եթե չի պարունակում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով:

2. Հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը, այդ համաձայնությանը մասնակցելը), որը դրսևորվել է գների չհիմնավորված բարձրացման միջոցով՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով:

Հոդված 411. Գերիշխող դիրքի չարաշահումը

1. Գերիշխող դիրքը չարաշահելը, եթե չի պարունակում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ գերիշխող դիրքը չարաշահելուն նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով:

2. Գերիշխող դիրքը չարաշահելը, որը դրսևորվել է գների չհիմնավորված բարձրացման միջոցով՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ գերիշխող դիրքը չարաշահելուն նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով:

Հոդված 412. Համակենտրոնացումը չհայտարարագրելը, ինչպես նաև արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը

1. Տնտեսական մրցակցության օրենսդրությամբ սահմանված դեպքում համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ:

2. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև տասը տոկոսի չափով և չի կարող գերազանցել հինգհարյուր միլիոն դրամը:

Հոդված 413. Անբարեխիղճ մրցակցությունը

1. Անբարեխիղճ մրցակցությունը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսի չափով:

2. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ անբարեխիղճ մրցակցությանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ հինգ տոկոսի չափով:

Հոդված 414. Արգելված պետական օժանդակությունը

1. Արգելված պետական օժանդակություն ստանալը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

2. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ արգելված պետական օժանդակություն ստանալուն նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

3. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից արգելված պետական օժանդակություն տրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 415. Տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը

1. Տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ կամ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ սույն արարքին նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

2. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքին նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի

կողմից պահանջվող, օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն չներկայացնելը կամ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ վաթսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 416. Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, դրա անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելը

1. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, դրա անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ սույն արարքին նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

2. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքին նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

Հոդված 417. Տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չշտկելը, որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարելը

1. Տնտեսվարող սուբյեկտի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չշտկելը, որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տնտեսվարող սուբյեկտի՝ սույն արարքին նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

2. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տնտեսվարող սուբյեկտի՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքին նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ տոկոսի չափով:

ԳԼՈՒԽ 37.
ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 418. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության, ինչպես նաև ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորող մարմնի կարգադրագրերի պահանջները խախտելը

1. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության պահանջները կամ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորող մարմնի կարգադրագրերի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

Հոդված 419. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեղեկություններ չտրամադրելը կամ ոչ պատշաճ տրամադրելը, ինչպես նաև ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վթարի, միջադեպի կամ պատահարի փաստը թաքցնելը կամ դրանց վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելը

1. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները չտրամադրելը կամ ոչ պատշաճ տրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վթարի, միջադեպի կամ պատահարի փաստը թաքցնելը, կամ վթարի, միջադեպի կամ պատահարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելը, ինչպես նաև ճառագայթային իրավիճակի վերաբերյալ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Նախագծվող, կառուցվող, շահագործվող և շահագործումից հանվող ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ճառագայթային իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ չտրամադրելը կամ ոչ ամբողջական տրամադրելը, եթե դրանք պետական կամ ծառայողական գաղտնիք չեն պարունակում ՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 420. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության և ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի շահագործման պահանջները խախտելուն հարկադրելը

1. Պաշտոնատար անձի կողմից ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի անձնակազմին ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության, ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորող մարմնի կարգադրագրերի կամ ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի շահագործման պահանջները խախտելուն հարկադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 421. Նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները գործող ցանցերին առանց էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում

պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի գործարկման եզրակացության միացնելը

1. Նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները գործող ցանցերին առանց էներգետիկայի բնագավառում կամ էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի գործարկման եզրակացության միացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով չափով:

Հոդված 422. Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձի կողմից էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասին էներգետիկայի և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին չհայտնելը

1. Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձի կողմից էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասին էներգետիկայի և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 423. Էներգետիկայի և էներգասպառման ոլորտում տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերը խախտելը

1. Էներգետիկայի և էներգասպառման ոլորտում տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերը խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Էներգատեղակայանքի (հանգույցի) այնպիսի շահագործումը, որի արդյունքում էներգատեղակայանքի տեխնիկական վիճակը կարող է պատահարի առաջացման պատճառ դառնալ ու սպառնալ մարդկանց կյանքին կամ գույքին կամ շրջակա միջավայրին՝

առաջացնում է էներգատեղակայանքի (հանգույցի) շահագործման գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում:

Հոդված 424. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից օրենսդրության պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Էներգետիկայի բնագավառում կարգավորում իրականացնող պետական մարմնի հաստատմանը անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը, տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի կամ սակագնի տարր կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաները չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում տուգանք՝ հարյուր հազարից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Էներգետիկայի բնագավառում կարգավորում իրականացնող պետական մարմնի համաձայնեցմանը զարգացման ներդրումային ծրագրերը չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում:

3. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործում, տեխնիկական սպասարկում կամ նորոգում իրականացնելիս՝ ֆիզիկական անձանց, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

4. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից լիցենզավորված գործունեության ընթացքում տեխնիկական կանոնակարգերին կամ գործունեության լիցենզիայում նախատեսված պայմաններին չհամապատասխանող սարքավորումներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

5. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից՝ գործունեության լիցենզիային և պայմանագրերին առնչվող անվտանգության տեխնիկայի կանոններին, այլ նորմերով սահմանված կողմերի իրավունքների և պարտականությունների մասին բնակչությանը չիրազեկելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով չափով:

6. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների էներգատեղակայանքների կամ գծերի մատչելիությունը օրենքով սահմանված մարմինների ներկայացուցիչների համար չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով չափով:

7. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայի պայմաններին համապատասխան օրենքով սահմանված տեխնիկական կամ ֆինանսական աուդիտը չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք երկու հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

8. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո ՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

9. Սույն հոդվածի 2-7-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

10. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված անձանց, էներգետիկայի մասին օրենսդրության պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե չի պարունակում սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի այլ հոդվածներով սահմանված արարքների հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, կամ եթե սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված արարքի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է իրավասու մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը՝

առաջացնում է տուգանք՝ քսան միլիոն դրամից քառասուն միլիոն դրամի չափով:

12. Կայանների կառուցման համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, գազամատակարարման համակարգի օպերատորի,

էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց և մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող էներգիայի վերականգնվող աղբյուրների (այդ թվում՝ փոքր հիդրոէլեկտրակայանների) կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող լիցենզավորված անձանց կողմից սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում:

13. Սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, կամ եթե սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված արարքի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է իրավասու մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը՝

առաջացնում է տուգանք մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով:

14. Սույն հոդվածի 12-րդ մասով անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված անձանց, գործունեության լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, եթե չի պարունակում սույն օրենսգրքի այլ հոդվածներով սահմանված արարքների հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում:

15. Սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, կամ եթե սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված արարքի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է իրավասու մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը՝

առաջացնում է տուգանք տաս միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով:

16. Սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված անձանց կողմից սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում:

17. Սույն հոդվածի 16-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին

կատարելը, կամ եթե սույն հոդվածի 16-րդ մասով սահմանված արարքի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է իրավասու մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը՝

առաջացնում է տուգանք հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

18. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիզենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված անձանց, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, եթե չի պարունակում սույն օրենսգրքի այլ հոդվածներով սահմանված արարքների հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում:

19. Սույն հոդվածի 18-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ եթե սույն հոդվածի 18-րդ մասով սահմանված արարքի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է իրավասու մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը՝

առաջացնում է տուգանք հինգ միլիոն դրամից տաս միլիոն դրամի չափով:

20. Սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված անձանց կողմից սույն հոդվածի 18-րդ մասով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում:

21. Սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո ՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, կամ եթե սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված արարքի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել են սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է իրավասու մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հիսուն հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 38.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ, ԳՈՎԱԶԴԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 425. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը

1. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի օրենսդրության պահանջները խախտելը կարգավորվող անձի կողմից՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ մեկ միլիոն դրամից մեկ միլիոն ութ հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու միլիոն դրամից երեք միլիոն ութ հարյուր հազար դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ամսական հարյուր միլիոն դրամ գումարը գերազանցող շրջանառություն ունեցող լիցենզավորված անձի կողմից կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում, կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը դիտավորությամբ կատարելը կամ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ մեկ միլիոն ութ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով՝ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցմամբ կամ առանց դրա, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեք միլիոն ութ հարյուր հազար դրամից չորս միլիոն դրամի չափով, լիցենզիայի (թույլտվության)

գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորող իրավասու մարմնի իրավական ակտերը խախտելը՝ սույն հոդվածի 1-ին մասով նշված անձի կողմից՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ հինգ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ մեկ միլիոն դրամից մեկ միլիոն ութ հարյուր հազար դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ամսական հարյուր միլիոն դրամ գումարը գերազանցող շրջանառություն ունեցող լիցենզավորված անձի կողմից կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում, կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը դիտավորությամբ կատարելը կամ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով՝ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցմամբ կամ առանց դրա, իրավաբանական անձի նկատմամբ՝ մեկ միլիոն ութ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով, լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցմամբ կամ առանց դրա, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

6. Առանց կարգավորողի թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը՝ շարունակելը դրա դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու միլիոն դրամից չորս միլիոն դրամի չափով:

7. Առանց կարգավորողի թույլտվության էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումը շարունակելը ծանուցում չներկայացրած հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձի կողմից դրա դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո ՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով:

8.Կարգավորողի՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայության անընդհատության վերաբերյալ պահանջը չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու միլիոն դրամից հինգ միլիոն դրամի չափով:

9. Ռադիոէլեկտրոնային միջոցների կապարակնիքը վնասելը կամ պոկելը՝
առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:
10. Ռադիոհաղորդակցության սարքավորումների ուսումնասիրման և ստուգման նպատակով ցանցերը շահագործող և տիրապետող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց սեփականության կամ այլ իրավունքով պատկանող տարածքներ իրավասու մարմնի ներկայացուցիչներին մուտք գործելուն կամ տվյալ տարածքում գտնվող կապարակնքման ենթակա ռադիոէլեկտրոնային սարքվորումների կապարակնքմանը խոչընդոտելը՝
առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Սույն հոդվածում կարգավորող և կարգավորվող անձ է հանդիսանում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձը:

Հոդված 426. Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում օրենսդրության խախտումները

1. Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները կամ այդ ոլորտում լիցենզիայի պայմանները խախտելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի 3-20-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ սույն հոդվածում Ազգային հանձնաժողով) կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերության կողմից համապատասխան սփռման գոտիների համընկնման շրջաններում հեռուստառադիոլսարանի՝ այլ հեռուստառադիոծրագրեր ընդունելու իրավունքը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

4. Հեռուստառադիոընկերության անվանումը, ազդականշն ու այլ ելքային տվյալներ միայն օտար լեզուներով (առանց հայերեն տարբերակի) օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Հեռուստառադիոընկերության կողմից հայրենական արտադրության հաղորդումները ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս հեռարձակելը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ երեք հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

6. Հեռուստառադիոընկերության կողմից առանց Ազգային հանձնաժողովին տեղեկացնելու վերահեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

7. Հեռուստառադիոընկերության կողմից ընտրությունների և հանրաքվեների մասին օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում հեռարձակելը՝

առաջացնում է տուգանք՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

8. Հեռուստառադիոընկերության կողմից ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության իրականացման համար օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում հեռուստատեսությամբ առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչություն» լուսագրի քաղաքական կամ այլ քարոզչական հաղորդումներ սփռելը, իսկ ռադիոսփռման դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան 3 անգամ դրա մասին չհիշեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

9. Հեռուստառադիոընկերության կողմից իր հեռարձակած հաղորդումների տեսագրությունները կամ ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամանակով չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

10. Հեռուստառադիոընկերության կողմից ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում ավելի քան քսան րոպեն մեկ հաճախականությամբ կամ յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով տասնչորս րոպեից ավելի տևողությամբ գովազդ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանք՝ ութ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

11. Հեռուստառադիոընկերության կողմից թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 կամ դրանից ավելի ծավալային տոկոս) խմիչքների (բացառությամբ տեղական արտադրության կոնյակի) գովազդի հեռարձակումը 06:00-ից մինչև 22:30-ն ընկած ժամանակահատվածում, ծխախոտի կամ ծխախոտային արտադրության գովազդի հեռարձակումը, ինչպես նաև մանկապատանեկան հեռուստառադիոհաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

12. Հեռուստառադիոընկերության կողմից պաշտոնական հաղորդագրությունների կամ լրատվական թողարկումների գովազդային ընդհատումը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

13. Ռադիոընկերության կողմից եթերում օրական առնվազն երեք անգամ իր անվանումը չհայտարարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

14. Հեռուստառադիոընկերության կողմից իր հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ իր խորհրդանիշը չհեռարձակելը, բացառությամբ գովազդի հաղորդման ժամանակ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

15. Հեռուստառադիոընկերության կողմից էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները, սարսափ կամ ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր կամ ֆիզիկական զարգացման, կամ դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

16. Հեռուստառադիոընկերության կողմից արբանյակային հեռարձակման մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ազգային հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

17. Լիցենզավորված հեռուստառադիոընկերության կողմից առանց Ազգային հանձնաժողովի թույլտվության բաժանորդային հեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ յոթ հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

18. Հեռուստառադիոընկերության կողմից հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի վարման սահմանված կարգի խախտում թույլ տալը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

19. Հեռուստառադիոընկերության կողմից յուրաքանչյուր առանձին գովազդային հատուկ հաղորդման տևողությունը եթերային մեկ ժամվա ընթացքում հինգ րոպեն գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

20. Հեռուստառադիոընկերության կողմից այն ապրանքատեսակների կամ ծառայությունների գովազդի հեռարձակումը, որոնց գովազդն արգելված է օրենսդրությամբ՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

21. Սույն հոդվածի 3-20-րդ մասերով սահմանված արարքների որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ վեց հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

22. Հեռուստառադիոընկերության կողմից սույն հոդվածի 21-րդ մասով սահմանված արարքների համար մեկ տարվա ընթացքում երեք անգամ (բացառությամբ՝ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված արարքների) վարչական տույժի ենթարկված լինելուց հետո սույն հոդվածով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

23. Հեռուստառադիոընկերության կողմից սույն հոդվածի 7-րդ կամ 8-րդ մասերով սահմանված արարքների համար սույն հոդվածի 21-րդ մասով սահմանված վարչական տույժի ենթարկված լինելուց հետո սույն հոդվածով սահմանված արարքը կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

24. Հեռուստահաղորդումների օգտագործման օրենսդրությամբ սահմանված արգելքները կամ պահանջները խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

25. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ իրավասու անձին պաշտոնական հայտարարություններ կատարելու համար եթերաժամանակ չհատկացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

26. Հյուրանոցային գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ութ կամ ավել հեռուստացույց ունեցող հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների կամ նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում, կաբելային (մալուխային) ցանցի առանց Ազգային հանձնաժողով ծանուցման վերահեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք իրավաբանական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

27. Սույն հոդվածի 26-րդ մասով սահմանված արարքը կրկին կատարելը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

28. Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը

չապահովելու համար լիցենզավորված անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝

1) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով,

2) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ լիցենզավորված անձը տեղյակ է պահել Ազգային հանձնաժողովին և ստացել թույլտվություն

3) վթարի կամ աղետների հետևանքով:

Հոդված 427. Սահմանված կարգով տրված գովազդի մասին օրենսդրության խախտման մասին ծանուցագրի պահանջների կատարումից խուսափելը կամ ժամանակին չկատարելը

1. Գովազդատուի, գովազդ արտադրողի, գովազդակրի կողմից գովազդի մասին օրենսդրության խախտման մասին գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տրված ծանուցագրի պահանջների կատարումից խուսափելը կամ ժամանակին չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Գովազդատուների, գովազդ արտադրողների, գովազդակիրների կողմից Երևան քաղաքում համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության պայմանների խախտման մասին Երևանի քաղաքապետի ծանուցագրերի պահանջների կատարումից խուսափելը կամ ժամանակին չկատարելը, ինչպես նաև Երևան քաղաքում առանց արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության արտաքին գովազդ տեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ մինչև հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքները վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երեք կամ երեքից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է գովազդատուի, գովազդ արտադրողի կամ գովազդակիրի գործունեության դադարեցում:

Հոդված 428. Գովազդներում չթույլատրված և արգելված բառերի օգտագործումը, ինչպես նաև որևէ կերպ գովազդելուն աջակցելը

1. Օրենսդրությամբ արգելված կամ առանց համապատասխան գրանցման (լիցենզիայի) օրենսդրությամբ սահմանված բառերի կամ դրանց ածանցյալների օգտագործումը գովազդներում կամ որևէ կերպ գովազդելուն աջակցելը ՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. . Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ չորսամսյա ժամկետում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան բառերի կամ դրանց ածանցյալների՝ համապատասխան գրանցում (լիցենզիա) չունեցող անձի կողմից օգտագործումն արգելող օրենքի հրապարակման և ուժի մեջ մտնելու ժամկետների միջև ժամանակահատվածը, եթե քիչ է վեց ամսից, ապա սույն հոդվածով սահմանված պատասխանատվությունը առաջանում է սույն հոդվածով սահմանված արարքը այդ օրենքը հրապարակվելուց վեց ամիս հետո կատարվելու (չվերացվելու) դեպքում:

Հոդված 429. Անբարեխիղճ գովազդը և կանխամտածված կեղծ գովազդը

1. Անբարեխիղճ գովազդը՝ օրենսդրությամբ սահմանված արգելքների կամ սահմանափակումների շրջանցմամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից գովազդի պատվերը, արտադրությունը կամ տարածումը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ տասնհինգ հազար դրամի չափով:

2. Գովազդատուի, գովազդ արտադրողի կամ գովազդակրի կողմից գովազդ սպառողներին կանխամտածված մոլորեցնելը, եթե դրա հետևանքով անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառվել է խոշոր չափերի չհասնող գույքային վնաս՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը, որը կատարվել է լրատվության միջոցների օգտագործմամբ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 430. Մշակութային ծառայությունների և համերգային կատարումների գովազդին ներկայացվող կարգը խախտելը

1. Գովազդատուի կողմից թատերահամերգային, հանրային միջոցառումների, փառատոնների, համերգային հյուրախաղերի վերաբերյալ գովազդում օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չնշելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

2. Գովազդատուի կողմից համերգային կատարումների գովազդում ձայնային առանձնահատկությունների (կենդանի կատարում կամ որևէ տեսակի ձայնագրվածք) մասին տեղեկությունը օրենսդրությամբ սահմանված կարգով դիտավորությամբ կամ անզգուշությամբ չնշելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկուհարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև մեկ տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Համերգային կատարումների ընթացքում դրա գովազդում նշված կենդանի կատարման փոխարեն ձայնագրվածքի օգտագործումը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև մեկ տարի ժամկետով կամ առանց դրա:

ԳԼՈՒԽ 39.

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 431. Երթևեկության կարգի պահպանման և անվտանգության կանոնների խախտումը երկաթուղային տրանսպորտում

1. Երկաթուղային գծերը, պաշտպանական անտառտնկարկները, ձնապաշտպան ցանկապատերը կամ գծային օբյեկտները դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Երկաթուղային գծերի վրա դիտավորությամբ կամ անզգուշությամբ իրեր դնելը կամ հպակային ցանցի կամ օդային գծերի հենարանների կամ հատուկ կառուցվածքների կամ արհեստական կառույցների վրա բարձրանալը կամ նշանները, ցուցատախտակները, տեղեկատվության այլ կրիչները դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը, ծածկելը, հանելը, ինքնակամ տեղակայելը կամ չսահմանված տեղերով երկաթուղու գծերի վրայով դիտավորությամբ կամ անզգուշությամբ երթևեկելը կամ անցնելը կամ երկաթուղու ազդանշանային, կապի կառուցվածքները կամ սարքերը դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը կամ վագոնների ոտնակների կամ տանիքների վրա երթևեկելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

3. Ուղևորային կառամատույցների կամ երկաթուղային շարժակազմի տակ մտնելը կամ վագոնների միջև ինքնակցիչ սարքվածքների վրայով անցնելը կամ ուղևորային կառամատույցի վրայից երկաթուղային գծերի վրա ցատկելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

4. Երկաթուղու անցումային լուսացույցի արգելող ազդանշանի ժամանակ երկաթուղային անցուղիներով դիտավորությամբ կամ անզգուշությամբ անցնելը կամ երկաթուղային շարժակազմի երթևեկության համար դիտավորությամբ կամ անզգուշությամբ խոչընդոտներ ստեղծելը՝

առաջացնում է տուգանք՝ տասնհինգ հազար դրամից քսանհինգ հազար դրամի չափով:

Հոդված 432. Երկաթուղային տրանսպորտի միջոցներից օգտվելու կանոնները խախտելը

1. Բեռնատար գնացքներով ինքնակամ երթևեկելը կամ մարդատար վագոնների ավտոմատացված դռների բացմանը, փակմանը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խոչընդոտելը կամ վագոն նստելու կամ վագոնից իջնելու ժամանակ այլ քաղաքացիների համար դիտավորությամբ խոչընդոտ ստեղծելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

2. Մետրոպոլիտենի գնացքների կամ երկաթուղային շարժակազմի ներքին սարքավորումները, ապակիները կամ նստատեղերը դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասնհինգ հազար դրամի չափով:

3. Գնացքների վագոնների պատուհաններից կամ դռներից աղբ կամ այլ առարկաներ դուրս նետելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

4. Ուղևորային կառամատույցի կողմից կամ երկաթուղային կայարաններում հատուկ առանձնացված կամ հարմարեցված տեղերից բացի այլ տեղերից վագոն նստելը կամ վագոնից իջնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

5. Առանց անհրաժեշտության (գնացքին, ուղևորներին և շրջապատին սպառնացող վտանգի բացակայության դեպքում) ինքնակամ կերպով վթարային կանգառ կատարելու համար նախատեսված բռնակի միջոցով գնացքը կանգնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

Հոդված 433. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունը առանց

լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու հրապարակելը, լիազոր մարմնի հետ այդ տեղեկատվության համաձայնեցման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը կամ ոչ հավաստի տեղեկատվություն հրապարակելը

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կողմից ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունն առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու հրապարակելը կամ լիազոր մարմնի հետ այդ տեղեկատվության համաձայնեցման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը կամ ոչ հավաստի տեղեկատվություն հրապարակելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 434. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի, սեփականատիրոջ կամ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի օգտագործողների կողմից առավել վտանգավոր գոտիներում քաղաքացիների գտնվելու ժամանակ նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելը կանխելու միջոցառումներ չիրականացնելը

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կամ սեփականատիրոջ կամ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի օգտագործողների կողմից առավել վտանգավոր գոտիներում համապատասխան լուսային, ձայնային ազդանշանների, նշանների, ցուցիչների, տեխնիկական միջոցների կամ տեղեկատվության այլ կրիչների միջոցով անհրաժեշտ տեղեկատվություն չտեղակայելը կամ առավել վտանգավոր գոտիներում գտնվող ֆիզիկական անձի տեխնիկական միջոցների կամ տեղեկատվության այլ կրիչների միջոցով համապատասխան սահմանափակումների կամ դրանց փոփոխությունների մասին ժամանակին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կամ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի օգտագործողների կողմից ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի կամ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի առավել վտանգավոր գոտիներում գտնվող ֆիզիկական անձի համար նախատեսված կառամատույցները, հետիոտնային անցումները, թունելները, կամուրջները կամ այլ օբյեկտները տեխնիկապես սարքին կամ անվտանգ վիճակում չպահպանելը կամ առավել վտանգավոր գոտիներում վերակառուցման, շինարարական կամ նորոգման աշխատանքների կատարման տեղերում տեղերի նշումը և ցանկապատում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 435. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին ներկայացվող պահանջները խախտելը

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը կամ երկաթուղային տրանսպորտի օբյեկտները երկաթուղու տեխնիկական շահագործման կամ երկաթուղային տրանսպորտի երթևեկության անվտանգության կանոնների խախտմամբ պահելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի հատումը կառուցվող, նոր կամ վերակառուցված ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին կամ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի գործարկումը մշտական շահագործման համար կամ

գնացքների ժամանման և մեկնման, բեռների բեռնման, բեռնաթափման, տեսակավորման կամ պահպանման (այդ թվում՝ բեռնարկղերում) հետ կապված բոլոր կամ որոշ գործողությունների իրականացման նպատակով երկաթուղային կայարանների գործարկումն առանց լիազոր մարմնի համաձայնության իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի, ինչպես նաև ցածր ծանրաբեռնվածության գծերի կամ ուղեմասերի փակումը կամ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի անցումը ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի կամ գնացքների ժամանման և մեկնման, ուղեբեռների, բեռների կամ բեռնածանրոցների ընդունման, հանձնման, բեռնման, բեռնաթափման, տեսակավորման կամ պահպանման (այդ թվում՝ բեռնարկղերում) հետ կապված բոլոր կամ որոշ գործողությունների դադարեցման նպատակով երկաթուղային կայարանների փակումն՝ առանց համապատասխան թույլտվության իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

4. Օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի նախագծումը կամ կառուցումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

5. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի, երկաթուղային շարժակազմի կամ բեռնարկղերի՝ օրենսդրությամբ սահմանված համապատասխան տեխնիկական վիճակը չապահովելը կամ բեռնատար վագոնների կամ բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքները օրենսդրությամբ սահմանված կարգով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հինգ հազար դրամից երեսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 1-5-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 436. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին ներկայացվող հիմնական պահանջները խախտելը

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծեր օգտագործողի կողմից այդ գծերի պահպանումը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի, բեռների բեռնման կամ բեռնաթափման, վագոնների, բեռնարկղերի մաքրման կամ լվացման համար նախատեսված սարքավորումների կառուցումը կամ վերակառուցումը, ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի ընդհանուր օգտագործման երկաթուղային գծանցի տեղի որոշումը կամ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերին նոր կառուցվող կամ վերակառուցված ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի հետ հատումն առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցման իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հինգ հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի օգտագործողների կողմից երկաթուղային տրանսպորտի շահագործման կամ երթևեկության անվտանգության պահանջները չպահպանելը, ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը, երկաթուղային շարժակազմը կամ բեռնարկղերը

օրենսդրությամբ սահմանված տեխնիկական վիճակին համապատասխան չպահպանելը կամ բեռնատար վագոնների կամ բեռնարկղերի բեռնման կամ բեռնաթափման աշխատանքները սահմանված կարգով չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հինգ հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերից դեպի ընդհանուր օգտագործման երկաթուղային գծեր և հակառակը երկաթուղային շարժակազմի գծանցման՝ օրենսդրությամբ սահմանված կարգը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 437. Երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման կանոնները խախտելը

1. Երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման կարգը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով սահմանված տուգանքի առավելագույն չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 438. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կամ սեփականատիրոջ կողմից երկաթուղային շարժակազմի այլ օպերատորների մուտքը խոչընդոտելը

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կողմից երկաթուղային շարժակազմի այլ օպերատորների մուտքը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 439. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի գործունեություն կազմակերպողների կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելը

1. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կամ փոխադրողների կամ բեռնառաքողների կամ փոխադրման գործընթացի այլ մասնակիցների կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Փոխադրողի կողմից ուղևորների համար տեսանելի վայրում իր կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և դրանց սակագների մասին անհրաժեշտ տեղեկատվություն դիտավորությամբ կամ անզգուշությամբ չտեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի առավելագույն չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 440. Երկաթուղու տեխնիկական շահագործման կանոնները խախտելը կամ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքից օգտվելու պայմանները խախտելը

1. Երկաթուղու տեխնիկական շահագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքից օգտվելու՝ լիազոր մարմնի տրամադրած լիցենզիայով սահմանված պայմանները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատամաբ՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի առավելագույն չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 441. Երկաթուղային տրանսպորտի շահագործման կամ երթևեկության անվտանգության հիմնական պահանջները խախտելը

1. Վտանգավոր բեռների արտադրություն, բեռնում, փոխադրում, բեռնաթափում իրականացնող օբյեկտների և դրանց վրա տեղակայված շենքերի, շինությունների կամ

կառույցների կամ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի կապի գծերի, էլեկտրահաղորդումների, նավթամուղների, գազամուղների կամ այլ վերգետնյա կամ ստորգետնյա կառույցների հատման վայրերի տեղակայումն ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերից օրենսդրությամբ սահմանված նվազագույն հեռավորությունից պակաս հեռավորության վրա՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Կապի գծերի, էլեկտրահաղորդիչների, նավթամուղների, գազամուղների կամ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերը հատող կամ այդ գծերի անմիջական հարևանությամբ գտնվող կառույցների սեփականատերերի կողմից նշված կառույցների շինարարության կամ շահագործման համար օրենսդրությամբ սահմանված նորմերը չպահպանելը կամ նշված օբյեկտների գործունեության անվտանգությունը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառավարչի կամ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի օգտագործողների կամ փոխադրողների կողմից իրենց տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների սահմաններում ունեցած վերականգնողական և հակահրդեհային միջոցների օգտագործմամբ տրանսպորտային պատահարների հետևանքների վերացմանը դիտավորությամբ կամ անզգուշությամբ չմասնակցելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

4. Երկաթուղային գծերը ավտոմոբիլային ճանապարհների հետ հատման կարգը, երկաթուղային գծերի հատման կանոնները, երկաթուղային գծանցների շահագործման պայմանները կամ դրանց գործարկման կամ փակման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Երկաթուղային տրանսպորտում երթևեկության անվտանգության, տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման կամ փոխադրման գործընթացի հետ կապված այլ կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 442. Թռիչքների և ավիացիոն անվտանգության կանոնները խախտելը

1. Օդանավակայանի շրջանում աերոդրոմի (ուղղաթիռադաշտի) ճանաչման համար ընդունված տարբերիչ նշաններին կամ կառուցվածքներին նմանվող որևէ նշան կամ կառուցվածք տեղադրելը, առանց օդանավակայանի վարչակազմի թույլտվության հրատեխնիկական առարկաներ այրելը կամ աերոդրոմի վազքուղուց թույլատրելի հեռավորությունից ավելի մոտ օդանավերի թռիչքների համար վտանգավոր թռչունների զանգվածային կուտակմանը նպաստող օբյեկտներ կառուցելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Շենքերի կամ շինությունների վրա գիշերային կամ ցերեկային տարբերիչ նշանների կամ կառուցվածքների տեղադրման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Աերոդրոմի սարքավորումները, աերոդրոմի մականշանները, օդանավերը կամ դրանց սարքավորումները դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Առանց թույլտվության օդանավակայանների (բացի օդանավերի մեկնակայաններից) աերոդրոմների, թռիչքների ռադիոապահովման կամ լուսաապահովման օբյեկտների տարածքով անցնելը կամ երթևեկելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Օդանավակայաններում անցագրային կամ ներօբյեկտային վերահսկողության կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

6. Քաղաքացիական օդանավերի թռիչքային պիտանիության ապահովման կամ թռիչքային կանոնները խախտելը, երբ դրանք չեն հանդիսացել միջադեպի կամ լուրջ ավիացիոն իրադարձության պատճառ, և եթե դրանց մասին մինչև այդ շեղումները հայտնաբերելը կատարողը չի իրազեկել՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

7. Օդանավակայանին կամ աերոդրոմին կից տարածքներում՝ դրա վազքուղուց թույլատրելի հեռավորությունից ավելի մոտ օդանավերի թռիչքների համար վտանգավոր, թռչունների զանգվածային կուտակմանը նպաստող սննդի մնացորդների աղբակույտերի ստեղծումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամի չափով:

8. Հայաստանի Հանրապետության օդային տարածքն առանց թույլտվության օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 443. Օդային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու կանոնները խախտելը

1. Օդային տրանսպորտով վտանգավոր համարվող բեռներ փոխադրելու կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով:

Հոդված 444. Օդանավում վարքի կանոնները խախտելը

1. Օդանավի ուղևորների կողմից թռիչքային կամ ավիացիոն անվտանգության ապահովման կարգը պահպանելու վերաբերյալ օդանավի հրամանատարի հրամանները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Օդանավում կապի միջոցներից օգտվելու կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազարի չափով:

Հոդված 445. Երկաթուղային և օդային տրանսպորտում հրդեհային անվտանգության կանոնները խախտելը

1. Երկաթուղային տրանսպորտում սահմանված հրդեհային անվտանգության կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Օդային տրանսպորտում սահմանված հրդեհային անվտանգության կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 446. Տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտումը

1. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների կամ պայմանների առկայությամբ տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

3. Ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը գերազանցող կամ երկու և ավելի կցորդների հետ միասին ավտոգնացքի կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները վարորդների կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

4. Ապակիների լուսաթափանցելիության չափի խախտմամբ կամ հողմապակին թաղանթապատված վիճակում կամ կարգի խախտմամբ վարագուրապատված տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 4-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտում հայտնաբերելու դեպքում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) այդ իրավախախտումը կատարած անձին իրազեկում է իրավախախտման հատկանիշները վերացնելու դեպքում վարչական պատասխանատվության չենթարկվելու մասին: Անձը վարչական պատասխանատվության չի ենթարկվում, եթե իրազեկումից անմիջապես հետո սկսում է իրականացնել վարչական իրավախախտման հատկանիշներն անմիջականորեն վերացնելուն ուղղված գործողություններ: Այդ դեպքում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշում չի կազմում:

6. Եթե, սույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան, վարչական իրավախախտումը հայտնաբերելուց անմիջապես հետո այդ իրավախախտման հատկանիշները վերացնել հնարավոր չէ, ապա լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կազմում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշում:

7. Եթե սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքում վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից իրավախախտումը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում վերացնում է իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված վարչական տույժը կատարելու պարտականությունից, եթե այդ մասին նույն ժամանակահատվածում լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնում է համապատասխան ապացույց: Այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որի պատճենը տրվում է վարչական իրավախախտումը կատարած անձին:

8. Ապակիների, արտաքին թաղանթապատում ունեցող ապակիների լուսաթափանցելիության թույլատրելի չափերը, ինչպես նաև սույն հոդվածի չորրորդ մասի պահանջից բացառությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 447. Տրանսպորտային միջոցների վրա լուսային և ձայնային՝ ներառյալ հատուկ սարքավորումներ տեղադրելու կանոնները խախտելը

1. Տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ տեղադրելը (բացառությամբ հակաառևանգման ազդանշանային համակարգի և հավաքների կամ հանրային միջոցառումների դեպքում՝ բարձրախոսների) կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

2. Առանց համապատասխան թույլտվության տրանսպորտային միջոցների վրա կապույտ կամ կապույտ և կարմիր լուսային ազդանշանով առկայծող փարոսիկներ կամ հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ տեղադրելը, ինչպես նաև

օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների համար նախատեսված գունագծապատկերներն օգտագործելը (նմանեցնելը)՝

առաջացնում են տուգանք՝ քառասուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտումը հայտնաբերելու դեպքում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) այդ իրավախախտումը կատարած անձին իրազեկում է վարչական իրավախախտման հատկանիշները վերացնելու դեպքում վարչական պատասխանատվության չենթարկվելու հնարավորության մասին: Անձը վարչական պատասխանատվության չի ենթարկվում, եթե իրազեկումից անմիջապես հետո սկսում է իրականացնել վարչական իրավախախտման հատկանիշներն անմիջականորեն վերացնելուն ուղղված գործողություններ: Այդ դեպքում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշում չի կազմում:

4. Եթե, սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան, վարչական իրավախախտումը հայտնաբերելուց անմիջապես հետո այդ վարչական իրավախախտման հատկանիշները վերացնել հնարավոր չէ, ապա լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կազմում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշում:

5. Եթե սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից իրավախախտումը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում վերացնում է վարչական իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված վարչական տույժը կատարելու պարտականությունից, եթե այդ մասին նույն ժամանակահատվածում լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնում է համապատասխան ապացույց: Այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշում, որի պատճենը տրվում է վարչական իրավախախտումը կատարած անձին:

Հոդված 448. Տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը

1. Կառուցվածքով նախատեսված անվտանգության գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած երթևեկելը կամ անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորների փոխադրելը՝ բացառությամբ օրենսդրությամբ թույլատրվող դեպքերի, կամ մոտոցիկլով երթևեկելիս սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը ՝

առաջացնում են տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

Հոդված 449. Սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված), տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելը, տրանսպորտային միջոցի նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը, տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը սահմանված տեղում չփակցնելը, կամ առանց տեխնիկական զննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելը կամ տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթում նշված բոլոր տվյալները առցանց չփոխանցելը կամ թերի փոխանցելը

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված) տրանսպորտային միջոց վարելը, ինչպես նաև տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ կարգով դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում դիտավորությամբ կամ անզգուշությամբ գրանցման չներկայացնելը՝

առաջացնում են տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

2. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Տեխնիկական զննության կտրոնը կամ հաշվառման կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենքով սահմանված տեղում չփակցված վիճակով տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

4. Առանց տեխնիկական զննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելը՝

առաջացնում է տուգանք՝ տեխնիկական զննության կայանի ղեկավարի նկատմամբ երեք հարյուր հազար դրամի չափով:

5. Տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթում նշված բոլոր տվյալները առցանց չփոխանցելը կամ թերի փոխանցելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտում կատարած անձին իրազեկում է վարչական իրավախախտման հատկանիշները վերացնելու դեպքում վարչական պատասխանատվության չենթարկվելու հնարավորության մասին: Եթե իրավախախտումը հայտնաբերելուց անմիջապես հետո վարչական իրավախախտում կատարած անձը սահմանված տեղում փակցնում է տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը, ապա լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշում չի կազմում:

Հոդված 450. Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշի օգտագործման կանոնները խախտելը

1. Անընթեռնելի կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

2. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը դիտավորությամբ կամ անզգուշությամբ սահմանված տեղում չփակցնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից հինգ հազար դրամի չափով:

3. Ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցն այդ համարանիշով վարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

4. Առանց հաշվառման համարանիշի, կեղծված կամ փոխարինված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով, և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

7. Տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից հաշվառման համարանիշը այլ անձի հանձնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

8. Ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված դեպքերում հետնապատին հաշվառման համարանիշի թվերի կամ տառերի կրկնօրինակում չունեցող տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

9. Տրանսպորտային միջոցի վրա համարանիշերը փակող կամ դրա տեսանելիությունը այլ կերպ վատթարացնող սարքավորումներ տեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

10. Դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշերը ուղևորափոխադրումների իրականացման երթուղին սպասարկելու ժամկետի ավարտից կամ լիցենզիայի ներդիրի ժամկետի ավարտից հետո չվերադարձնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

11. Անընթեռնելի հաշվառման համարանիշ է այն համարանիշը, որի թեկուզ մեկ նիշը ցերեկը, պարզ եղանակին գունաթափման կամ այլ պատճառներով անշարժ տրանսպորտային միջոցի վրա տեղադրված վիճակում տեսանելի չէ 40 մետր հեռավորությունից:

12. Տրանսպորտային միջոցի համարանիշը համարվում է սահմանված տեղում չփակցված, եթե համարանիշն ընթեռնելի է ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած վիճակում, սակայն համարանիշը (զույգ համարանիշերի դեպքում՝ թեկուզ և մեկը) ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում:

13. Տրանսպորտային միջոցը համարվում է առանց համարանիշի, եթե այդ համարանիշը (զույգ համարանիշերի դեպքում՝ թեկուզ և մեկը) ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում և ընթեռնելի չէ ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:

Հոդված 451. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ձյունագնաց վարելը

1. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ձյունագնաց տրանսպորտային միջոցներ վարելը, բացառությամբ ճանապարհն ուղղահայաց հատելու դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Հոդված 452. Հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը ներմուծման ժամկետի խախտմամբ վարելը

1. Հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը ներմուծման ժամկետի խախտմամբ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 453. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի՝ ազդանշաններին չենթարկվելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

2. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից վթարային լուսային ազդանշանի կամ «Վթարային կանգառ» ճանաչման նշանի կիրառման՝ սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

3. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կապույտ կամ կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկների կամ հատուկ ձայնային ազդանշանի կիրառման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից դեղին կամ նարնջագույն, ինչպես նաև լուսնասպիտակ գույնի առկայծող փարոսիկների կիրառման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

5. Կապույտ կամ կապույտ և կարմիր լուսային ազդանշանով առկայծող փարոսիկներ միացրած և միաժամանակ հատուկ ձայնային ազդանշաններ արձակող մոտեցող տրանսպորտային միջոցին և դրանով ուղեկցվող տրանսպորտային միջոցներին ճանապարհը զիջելու, ինչպես նաև կապույտ կամ կարմիր լուսային ազդանշանով առկայծող փարոսիկներ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս արագությունն իջեցնելու կամ կանգ առնելու մասին սահմանված պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

6. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկությունն սկսելու կամ մանևր կատարելու, ինչպես նաև հետընթաց վարման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

7. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հետադարձի և հետընթացի՝ սահմանված արգելքը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

8. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության ժամանակ տրանսպորտային միջոցների դասավորության՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

9. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից վազանցի՝ սահմանված կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

10. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի կամ կայանման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

11. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի կամ կայանման՝ սահմանված արգելքը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

12. Տրանսպորտային միջոցները դիտավորությամբ կամ անզգուշությամբ կայանելը, եթե դրա հետևանքով այլ տրանսպորտային միջոցների վարորդները ստիպված են եղել կանգ առնել կամ փոխել երթևեկության ուղղությունը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

13. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի կամ կայանման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը, եթե դրա պատճառով տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

14. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից (բացառությամբ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների) ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում դիտավորությամբ կամ անզգուշությամբ կանգառ կատարելը կամ կայանելը կամ երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ կայանելը (բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի), ինչպես նաև ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում դիտավորությամբ կամ անզգուշությամբ կայանելը՝

առաջացնում են տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

15. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա դիտավորությամբ կամ անզգուշությամբ կանգառ կատարելը կամ կայանելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

16. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ մայթերին կայանելը կամ մայթերով երթևեկելը, բացառությամբ ճանապարհային նշաններով թույլատրված դեպքերի, ինչպես նաև ստորգետնյա կամ վերգետնյա հետիոտնային անցումներով դիտավորությամբ կամ անզգուշությամբ երթևեկելը՝

առաջացնում են տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

17. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից խաչմերուկներն անցնելու՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից հինգ հազար դրամի չափով:

18. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հետիոտնային անցումները հատելու՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

19. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ավտոմայրուղիներով երթևեկության՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

20. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից բնակելի գոտիներում երթևեկության՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

21. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերն անցնելու՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք ՝ հինգ հազար դրամի չափով:

22. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից արտաքին լուսային սարքերի կամ ձայնային ազդանշանի կիրառման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

23. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրանսպորտային միջոցի լապտերների հեռահար լույսը դիտավորությամբ կամ անզգուշությամբ մոտակայի չփոխարկելը կամ արգելված դեպքերում դիտավորությամբ կամ անզգուշությամբ հեռահար լույսերով տրանսպորտային միջոցը վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազարից տասը հազար դրամի չափով:

24. Քարշակող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցների քարշակման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

25. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ուսումնական վարման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

26. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից մարդկանց փոխադրման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

27. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից բեռների փոխադրման՝ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից հինգ հազար դրամի չափով:

28. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

29. Տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող, ինչպես նաև լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի կամ առանց կանգառ կատարելու երթևեկությունն արգելող ճանապարհային նշանի առկայության

դեպքում վարորդի կանգ առնելու տեղը ցույց տվող գծանշումների կամ նշանների պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

30. Օրենսդրությամբ սահմանված երթևեկության առավելություն ունեցող մասնակցին դիտավորությամբ կամ անզգուշությամբ ճանապարհը չզիջելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

31. Տրանսպորտային միջոցների վարորդների (բացառությամբ ծառայողական առաջադրանքներ կատարող, օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների վարորդների) կողմից ընթացքի ժամանակ ռադիոկապից կամ հեռախոսակապից օգտվելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

32. Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցը դիտավորությամբ կամ անզգուշությամբ դռները բաց վիճակում վարելը, ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները դիտավորությամբ կամ անզգուշությամբ բացելը կամ կանգնած տրանսպորտային միջոցի դռները դիտավորությամբ կամ անզգուշությամբ բացելը, եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին, ինչպես նաև տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցից դիտավորությամբ կամ անզգուշությամբ իրեր կամ առարկաներ նետելը՝

առաջացնում են տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

33. Ճանապարհի բաժանարար գոտին չնախատեսված վայրերում տրանսպորտային միջոցների վարորդների կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ հատելը ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու եղանակով՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

34. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ, որն առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

35. Ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կամ բեռնատար ավտոմոբիլների վարորդների կողմից ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտիով երթևեկելու՝ սահմանված արգելքը խախտելը, բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

36. Տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ոստիկանության ծառայողի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված պահանջը վարորդի կողմից չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

37. Սույն հոդվածի 36-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձի նկատմամբ՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ երեք ամս դրամից մեկ տարի ժամկետով, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ այդ իրավունքից զրկված անձի նկատմամբ՝ տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

38. Սույն օրենսգրքում ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց ասելով պետք է հասկանալ տվյալ պահին սահմանված ուղեգծով ու հաստատված չվացուցակով, առաջարկված փոխադրավարձով, ուղևորների նստեցման կամ իջեցման հաստատված կանգառներով, ինչպես նաև երթուղային տաքսու ռեժիմով ուղևորների փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները:

39. Եթե սույն հոդվածի 6-րդ, 10-րդ, 14-րդ (միայն կանգառ կատարելու մասով), 17-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 27-րդ, 28-րդ կամ 29-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումը, սույն հոդվածին համապատասխան, ունի նվազ նշանակություն, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է նախազգուշացում վարչական տույժը:

40. «Հոծ գիծ» (այդ թվում՝ «Կանգ-գիծ») գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 28-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի առջևի կամ կողային երկու անիվներն ամբողջությամբ չեն հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

41. Ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 28-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ վարչական իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

42. Տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 29-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի անիվներից ոչ մեկն ամբողջությամբ չի հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

43. Սույն հոդվածի 6-րդ, 17-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 27-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

44. Սույն հոդվածի 10-րդ և 14-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) սահմանված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Հոդված 454. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության՝ սահմանված արագությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ հազար դրամի չափով:

2. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության՝ սահմանված արագությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ 11-30 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ հազար հինգ հարյուր դրամի չափով:

3. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության՝ սահմանված արագությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ 31-50 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության՝ սահմանված արագությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ 51-80 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով՝ վարորդական իրավունքից զրկմամբ՝ մինչև վեց ամիս ժամկետով:

5. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկության՝ սահմանված արագությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ 81 կմ/ժ և ավելի գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ երկուհարուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ վարորդական իրավունքից զրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներով վարչական պատասխանատվության ենթարկելու որոշում կայացնող մարմինը (պատասխանատու անձը) արագաչափ սարքի արձանագրած ցուցանիշից պարտավոր է հանել 10 կմ/ժ՝ արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար, իսկ եթե արագաչափ սարքի հնարավոր սխալանքը գերազանցում է 10 կմ/ժ-ը, ապա արագաչափ սարքի հնարավոր սխալանքի չափը:

Հոդված 455. Երկաթուղային գծանցներում տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները վարորդների կողմից խախտելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երկաթուղային գծերը միայն երկաթուղային գծանցներով հատելու, երկաթուղային գծանցներով անցնելիս ճանապարհը գնացքին (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ) զիջելու՝ սահմանված պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում են տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

2. Երկաթուղային գծանցին մոտենալիս գծանցի հերթապահի ցուցումներով, երկաթուղային գծանցներով երթևեկությունը կարգավորելու համար նախատեսված լուսացույցի, նշանների, գծանշումների պահանջներով, ուղեփակոցի դիրքով ղեկավարվելու՝ սահմանված պահանջը դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

3. Գծանցի վրա հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդի կողմից ուղևորներին անհապաղ իջեցնելու, գծանցն ազատելու համար միջոցներ ձեռնարկելու, տրանսպորտային միջոցի մոտ մնալու, ընդհանուր տագնապի ազդանշան տալու, ինչպես նաև գնացք երևալու դեպքում կանգառի (տագնապի) ազդանշան տալով ընդառաջ վազելու՝ սահմանված պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

4. Փակ կամ փակվող ուղեփակոցի դեպքում (անկախ լուսացույցի ազդանշանից), լուսացույցի արգելող ազդանշանի (անկախ ուղեփակոցի առկայությունից և դիրքից), գծանցից հետո առաջացած խցանման, տեսանելիության սահմաններում գծանցին գնացք (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ) մոտենալու, գծանցի հերթապահի արգելող ազդանշանի դեպքերում գծանց մուտք չգործելու՝ սահմանված պահանջները վարորդի կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

5. Հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով՝ գծանցից առաջ կանգնած տրանսպորտային միջոցները շրջանցելու, ուղեփակոցն ինքնակամ բացելու, գծանցով ոչ

տրանսպորտային վիճակում գտնվող գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ փոխադրելու, առանց երկաթգծի ուղեմասի պետի թույլտվության դանդաղընթաց մեքենաներով՝ 8 կմ/ժ-ից ցածր արագությամբ գծանցով երթևեկելու և տրակտորային քարշատափաններ քարշակելու՝ սահմանված արգելքը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 456. Տրանսպորտային միջոցների վարորդների մասնակցությունը ճանապարհային երթևեկության խոչընդոտներ ստեղծող խմբակային տեղաշարժին

1. Տրանսպորտային միջոցների վարորդների դիտավորությամբ կամ անզգույշ մասնակցությունն այնպիսի խմբակային տեղաշարժի, որը ստեղծում է երթևեկության անվտանգության սպառնալիք՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

Հոդված 457. Տրանսպորտային միջոցի վրա գովազդի տեղադրման կարգը խախտելը

1. Տրանսպորտային միջոցի վրա գովազդի տեղադրման կարգը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 458. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի մասին օրենսդրության պահանջները խախտելը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին առանց համապատասխան լիազոր մարմնի թույլտվության գովազդային վահանակի կամ գովազդի տեղադրումը՝

առաջացնում է տուգանք՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի (գովազդային վահանակների տեղադրման) մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանաջները խախտելը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝

առաջացնում է տուգանք՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

3. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին տեղադրված գավազդային վահանակների պահպանմանը կամ անվատանգ շահագործմանը ներկայացվող պահանջները չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով վաթսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 459. Ճանապարհի վրա գովազդ տեղադրելը առանց համապատասխան թույլտվության կամ համաձայնեցման

1. Առանց համապատասխան թույլտվության կամ իրավասու մարմինների հետ համաձայնեցման՝ ճանապարհի վրա գովազդ տեղադրելը՝

առաջացնում են տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, եթե դա խոչընդոտում է վարորդների կողմից լուսացույցները, ճանապարհային նշանները կամ երթևեկության կարգավորման այլ տեխնիկական միջոցները տեսնելուն՝

առաջացնում են տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 460. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում արգելված գովազդ իրականացնելը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում ինքնակամ ցուցանակներ, ազդագրեր կամ այլ առարկաներ տեղակայելը, որոնք պարունակում են գովազդի տարրեր՝

առաջացնում է տուգանք՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 461. Երկաթուղային տրանսպորտի բնագավառում ենթակառուցվածքի կառավարչի կողմից օրենսդրության կամ կարգավորող հանձնաժողովի իրավական ակտի պահանջները խախտելը

1. Երկաթուղային տրանսպորտում ենթակառուցվածքի կառավարչի կողմից սակագների կամ օգտագործման վճարների օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ երկու միլիոն դրամից չորս միլիոն դրամ գումարի չափով:

2.Կարգավորող իրավասու մարմնի իրավական ակտի պահանջը խախտելը՝ ենթակառուցվածքի կառավարչի կողմից՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամ գումարի չափով:

3. սույն հոդվածում ենթակառուցվածքի կառավարիչը «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձն է:

Հոդված 462. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն կամ ճանապարհատրանսպորտային պատահար, պատահարի մասնակից վարորդի կողմից պարտականությունները չկատարելը

1. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

2. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը, որի հետևանքով առաջացել է ճանապարհատրանսպորտային պատահար՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով, իրավաբանական անցանց նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից տրանսպորտային միջոցի վարորդի կողմից պատահարի ժամանակ իր՝ օրենքով սահմանված պարտականությունները դիտավորությամբ կամ անզգուշությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 463. Լողամիջոցների շահագործման կանոնները խախտելը

1. Լողամիջոցը ոչ սթափ վիճակում վարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

2. Սահմանված կարգով չգրանցված կամ տեխնիկական անսարքություններ ունեցող լողամիջոցները դիտավորությամբ կամ անզգուշությամբ շահագործելը կամ առանց կողային համարների լողամիջոց վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

3. Առանց նավավարման իրավունքի վկայականի լողամիջոց վարելը կամ լողամիջոցի վարումը դիտավորությամբ կամ անզգուշությամբ նավավարման իրավունքի վկայական չունեցող անձին հանձնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

4. Առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի լողամիջոցը դիտավորությամբ կամ անզգուշությամբ շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

5. Առանց փրկարարական միջոցների լողամիջոց վարելը կամ փրկարարական միջոցների քանակից ավելի թվով ուղևորներ տեղափոխելը կամ առանց դրոշմի փրկարարական միջոցներ տեղակայելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

6. Լողամիջոցներում հրդեհային անվտանգության սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 464. Տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը

1. Տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն ալկոհոլի ազդեցության տակ է, և արարքը չի պարունակում սույն հոդվածի երկրորդից վեցերորդ մասերի հատկանիշները՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը, կամ եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկմամբ՝ մինչև վեց ամիս ժամկետով, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, եթե վարորդի ոչ սթափ վիճակում լինելը պայմանավորված է արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակությամբ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

4. Սահմանված կարգին համապատասխան՝ սթափության վիճակը ստուգելու նպատակով զննություն անցնելուց խուսափելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկմամբ՝ մեկ տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 2-րդ կամ 4-րդ մասերով սահմանված արարքը կատարելը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Սույն հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը կատարելը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

8. Սույն օրենսգրքով սահմանված դեպքում անձը համարվում է ոչ սթափ վիճակում գտնվող, եթե ստուգմամբ պարզվում է, որ նրա մեկ լիտր արյան մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը 0.4 գրամից կամ մեկ լիտր արտաշնչած օդի մեջ 0.2 միլիգրամից ավելի է, կամ եթե անձի արյան կամ մեզի մեջ առկա է թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակություն: Անձը համարվում է ոչ սթափ վիճակում գտնվող նաև այն դեպքում, երբ նրա արյան կամ արտաշնչած օդի մեջ սույն մասում նշված չափով մաքուր ալկոհոլի կամ արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակությունը ոստիկանության ծառայողի կողմից տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց կամ այդ անձին առնչվող ճանապարհատրանսպորտային պատահարից հետո, բայց մինչև նրա

սթափության վիճակի զննություն անցկացնելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց նրան ազատելը, այդ անձի կողմից ալկոհոլային խմիչք, թմրամիջոց կամ հոգեմետ նյութ օգտագործելու հետևանք է:

Հոդված 465. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը, առանց վարորդական վկայականի կամ այլ անհրաժեշտ փաստաթղթերի կամ ուժը կորցրած վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ անհրաժեշտ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ երկրի վարորդական վկայականով կամ օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող վարորդական վկայականով տրանսպորտային միջոցներ վարելը կամ տրանսպորտային միջոցների վարումն այդ իրավունքը չունեցող անձին հանձնելը

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Առանց վարորդական վկայականի կամ այլ անհրաժեշտ փաստաթղթերի տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

4. Ուժը կորցրած վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ անհրաժեշտ փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետությունում չգործող օտարերկրյա վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում են տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

5. Տրանսպորտային միջոցների վարումն այդ իրավունքը չունեցող անձին հանձնելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածում այլ փաստաթղթեր ասելով պետք է հասկանալ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթերը, մաքսային փաստաթղթերը, վարորդական վկայականում նշված դեպքերում՝ նաև բժշկական տեղեկանքը և այլն, որոնք չեն ներառում լիազորագիրը, ուղեգիրը, բեռնաուղեգիրը:

7. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող, եթե նա սահմանված կարգով չի ստացել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական կամ սահմանված կարգով ստացել է վարորդական վկայական, սակայն օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից և զրկման ժամկետը լրանալուց հետո սահմանված կարգով չի վերականգնել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը, բացառությամբ ուսումնական վարման դեպքերի:

8. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է առանց վարորդական վկայականի, եթե նա ունի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, սակայն վարելու ընթացքում իր մոտ չունի վարորդական վկայական:

9. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտում կատարած անձին իրազեկում է վարորդական վկայականը կամ այլ փաստաթուղթն իրավախախտումը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնելու դեպքում վարչական պատասխանատվությունից կամ վարչական տույժը կատարելու պարտականությունից ազատվելու հնարավորության մասին: Անձը վարչական պատասխանատվության չի ենթարկվում, իսկ վարչական տույժ նշանակված լինելու դեպքում անձն ազատվում է այն կատարելու պարտականությունից, եթե վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում լիազորված մարմին (պաշտոնատար անձին) է ներկայացնում վարորդական վկայականը կամ այլ փաստաթուղթ:

Հոդված 466. Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցների համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության

գործող պայմանագիր չունենալը, առանց տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոցը վարելը, ինչպես նաև առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելը կամ ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (վարձակալի) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպոր-տային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի, քան տասն օր՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր տասն օրվա համար՝ հինգ հազար դրամի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան հարյուր հազար դրամի չափով:

2. Առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

3. Առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելը կամ ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելը, եթե ԱՊՊԱ պայմանագրի ներկայացումը (ԱՊՊԱ պայմանագիր ունենալը) տրանսպորտային միջոցի հաշվառման (տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելու)՝ օրենսդրությամբ սահմանված պարտադիր պայման է՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 467. Հետիոտների կողմից իրենց հիմնական պարտականությունները չկատարելը

1. Օրենքով սահմանված հետիոտների պարտականությունները (կամ հիմնական պարտականությունները) հետիոտների կողմից դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

Հոդված 468. Հետիոտների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը

1. Հետիոտների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարորդների) լուսացույցի կամ կարգավորողի՝ սահմանված ազդանշաններին դիտավորությամբ կամ անզգուշությամբ չենթարկվելը, ինչպես նաև սահմանված ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

2. Տրանսպորտային միջոցի ուղևորի կողմից ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները բացելը, ինչպես նաև կանգնած տրանսպորտային միջոցի դռները բացելը (եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին), երթևեկության ընթացքում տրանսպորտային միջոցից դուրս կախվելը (դուրս ցցվելը), տրանսպորտային միջոցից իրեր կամ առարկաներ նետելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

3. Մոպեդները, հեծանիվները կամ լծասայլերը վարելու՝ օրենսդրությամբ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից հինգ հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարելը, որոնք ստեղծել են վթարային իրադրություն՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

5. Ճանապարհներով անասուններ կամ կենդանիներ քշելու՝ օրենսդրությամբ սահմանված կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

Հոդված 469. Անսարքություններ ունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը թույլատրելը և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների այլ խախտումները

1. Չհաշվառված, տեխնիկական զննություն չանցած, տեխնիկական անսարքություններ ունեցող կամ առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված, մեծ եզրաչափերով, ծանրաքաշ, վտանգավոր բեռների կամ չվնասազերծված տարայի փոխադրման կանոնների խախտումներով, անընթեռնելի, ստանդարտին չհամապատասխանող, ինքնաշեն կամ սահմանված տեղում չփակցված հաշվառման համարանիշերով, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրանսպորտային միջոցի հետնապատին հաշվառման համարանիշի կրկնօրինակում չունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձի կողմից թույլատրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

2. Առանց հաշվառման համարանիշի, կեղծված կամ փոխարինված հաշվառման համարանիշով կամ ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցի շահագործումը կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձի կողմից թույլատրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

3. Կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձի կողմից ոչ սթափ վիճակում գտնվող վարորդներին, տվյալ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ սահմանված կարգով պարբերական բժշկական զննություն չանցած անձի տրանսպորտային միջոցներ վարելը դիտավորությամբ կամ անզգուշությամբ թույլատրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքների համար սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

Հոդված 470. Համայնքներում վճարովի ավտոկայանատեղերի համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելը

1. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքը չվճարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից հինգ հազար դրամի չափով:

Հոդված 471. Ծառայողական ավտոտրանսպորտը և տեխնիկական այլ միջոցները պետական ծառայողների կողմից անձնական կարիքների համար օգտագործելը

1. Պետական ծառայողների կողմից ծառայողական ավտոտրանսպորտը և տեխնիկական այլ միջոցներն անձնական կարիքների համար օգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 472. Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով վտանգավոր նյութեր կամ առարկաներ փոխադրելու կանոնները խախտելը

1. Երկաթուղային տրանսպորտով վտանգավոր նյութեր կամ առարկաներ ձեռնածանրոցով փոխադրելու կանոնները դիտավորությամբ կամ անզգուշությամբ խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Տրոլեյբուսով, տրամվայով, ավտոբուսով, երթուղային տաքսիով, մետրոպոլիտենով վտանգավոր նյութեր կամ առարկաներ դիտավորությամբ կամ անզգուշությամբ փոխադրելը, ինչպես նաև ավտոմոբիլային տրանսպորտում այդպիսիք ուղեբեռ կամ պահախցիկ հանձնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

Հոդված 473. Հասարակական՝ օդային, ջրային, էլեկտրական և երկաթուղային տրանսպորտում ծխելը

1. Հասարակական՝ ջրային, էլեկտրական և երկաթուղային տրանսպորտում ծխելը, բացառությամբ ջրային և երկաթուղային տրանսպորտում ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Օդային տրանսպորտում ծխելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 474. Տրանսպորտային միջոցներում ծխելը

1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում ծխելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

Հոդված 475. Սահմանված նորմաներից ավելի ձեռնածանրոց և անվճար ուղեբեռ փոխադրելը

1. Երկաթուղային տրանսպորտով սահմանված նորմաներից ավելի ձեռնածանրոց փոխադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից հինգ հազար դրամի չափով:

Հոդված 476. Օդային տրանսպորտով չվերթի հետ առնչություն չունեցող անձի ուղեբեռը փոխադրելը

1. Օդային տրանսպորտով չվերթի հետ առնչություն չունեցող անձի ուղեբեռը փոխադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 477. Անտոմս երթևեկելը

1. Ուղևորների անտոմս երթևեկելը տրանսպորտային միջոցներով՝

առաջացնում է տուգանք՝ երկու հազար դրամի չափով:

2. Անտոմս ուղևորների թռիչքը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ չվերթի տոմսի գնի կրկնապատիկից եռապատիկի չափով:

Հոդված 478. Ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման հիմնական պահանջները չկատարելը

1. Առանց Հայաստանի Հանրապետության և փոխադրման մյուս կողմ հանդիսացող պետության միջև կնքված տրանսպորտի բնագավառը կանոնակարգող միջազգային համաձայնագրով և առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Առանց ուղևորափոխադրում իրականացնող ավտոբուսի կառուցվածքով սահմանված տեղում երթուղու սկզբնակետի կամ վերջնակետի անվանմամբ հայերենով և անգլերենով գրված ցուցատախտակի միջպետական կանոնավոր փոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ այլ պետությունում հաշվառված տրանսպորտային միջոցով ուղևորների կաբոտաժային փոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Ավտովարորդի աշխատանքային հերթափոխի՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նորմատիվային տևողությունը գերազանցող միջպետական երթուղիների

սպասարկումը երկու վարորդով չկազմակերպելը՝ առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 479. Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումների իրականացման հիմնական պահանջները չկատարելը

1. Փոխադրող կազմակերպության կողմից առանց ուղետոմսի կամ առանց ուղեբեռային անդորրագրի ավտոբուսներով ուղևորների կամ ուղեբեռի կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով, միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների դեպքում՝ քսան հազար դրամի չափով:

2. Ավտովարորդի կամ ուղևորների կողմից ավտոբուսի ուղեսրահում երաժշտություն միացնելը ներքաղաքային և մերձքաղաքային փոխադրումներում, ինչպես նաև առանց ուղևորների համաձայնության՝ երաժշտություն միացնելը միջքաղաքային, միջպետական փոխադրումների ընթացքում՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

3. Ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների ժամանակ օրենքով սահմանված թույլատրելի չափերը կամ քաշերը գերազանցող իրերի, առարկաների, արգելված այլ նյութերի կամ իրերի փոխադրումը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

4. Ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների ժամանակ պայթյունավտանգ, հրդեհավտանգ, ռադիոակտիվ, քիմիական քայքայիչ նյութերի, առանց պատյանի զենքի, ռազմամթերքի, ավտոտրանսպորտային միջոցի և ուղեւորների հագուստն աղտոտող կամ վնասող նյութերի և իրերի, տհաճ, սուր հոտ ունեցող իրերի փոխադրումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

5. Ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցները առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի, կամ երթուղու չվացուցակի, կամ երթուղու սխեմայի (բացառությամբ ներքաղաքային երթուղիների), կամ սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի, կամ տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

6. Առանց ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

7. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների մրցույթով չընտրված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից կամ ֆիզիկական անձի կողմից կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

8. Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերի խախտումները՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

9. Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից երթուղու ուղեգծից ինքնակամ շեղումները կամ վերջնակետի (սկզբնակետի) խախտումները՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

10. Ավտոկայարանային գործունեություն չիրականացնող կամ ավտոկայարանային գործունեություն իրականացնող կազմակերպության հետ պայմանագիր չունեցող

կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից միջքաղաքային և միջպետական երթուղիների ուղետոմսերի վաճառքի իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Երթուղու սպասարկման ընթացքում սահմանված փոխադրավարձից բարձր փոխադրավարձով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազարից երեք հարյուր հազար դրամի չափով:

12. Ավտովարորդի առողջական վիճակի կամ ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի նախաուղերթային զննման մասին երթուղային թերթիկում նշումներ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

13. Կազմակերպության կողմից ավտովարորդների աշխատանքի կամ հանգստի ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

14. Լրիվ զբաղեցված նստատեղերով երթևեկելու դեպքում ուղևորի նստեցման նպատակով միկրոավտոբուսի կանգառումը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

15. Ընդհանուր օգտագործման ուղևորափոխադրումներում օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների ուղեսրահի նստատեղերի խտացումը, այլ հարմարադասումը, տվյալ ավտոտրանսպորտային միջոցի համար չնախատեսված այլ նստոցների տեղադրումը, ինչպես նաև պատառոտված պաստառներով նստոցների առկայության դեպքում փոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

16. Սույն հոդվածի 1-15-րդ սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 480. Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպման պահանջները խախտելը

1. Առանց թույլտվության վտանգավոր բեռներ կամ չվնասազերծված տարաներ փոխադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Առանց օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան կահավորված տրանսպորտային միջոցով վտանգավոր բեռներ փոխադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

3. Առանց օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման վտանգավոր բեռների բեռնման-բեռնաթափման աշխատանքներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

4. Առանց մակնշման վտանգավոր բեռներ փոխադրելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամի չափով:

5. Հայաստանի Հանրապետությունում առանց տախոգրաֆի կահավորված տրանսպորտային միջոցներով միջպետական փոխադրումներ իրականացնելը (բացառությամբ «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի կողմ չհանդիսացող պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցների), կամ առանց թվային տախոգրաֆի քարտի, եթե տրանսպորտային միջոցը կահավորված է թվային տախոգրաֆով (բացառությամբ քարտի կորստի, գողության, վնասվելու կամ անվավերության համար «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներին համապատասխան լիազոր մարմնին դիմում ներկայացնելու դեպքում), կամ առանց քարտը թվային տախոգրաֆում տեղադրելու, կամ առանց «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներով սահմանված վարորդի աշխատանքի ռեժիմի պահպանման միջպետական փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

6. Հայաստանի Հանրապետությունում առանց արհեստանոցի քարտի թվային տախոգրաֆի ստուգաչափում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

7. Սույն հոդվածի 1-7-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 481. Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման հիմնական պահանջները չկատարելը

1. Առանց ուղևորների անվանացուցակի կամ անվանացուցակում նշված ուղևորներից ավելի կամ անվանացանկում չնշված ուղևորների փոխադրումը կամ փոխադրողի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրի ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ավտոմոբիլային տրանսպորտով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելիս փոխադրավարձի սահմանումը և գանձումը առանց պայմանագրային հիմունքների՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 482. Հայաստանի Հանրապետության տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման պահանջները չկատարելը

1. Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրի փոխանցումը մեկ այլ ավտոմոբիլին կամ մեկ այլ մարդատար-տաքսի

ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրով կամ առանց ներդիրի կամ կեղծված կամ չգործող ներդիրով մարդատար-տաքսի ավտոմոբիլ վարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Առանց սահմանված տեղում փակցված ներդիրի թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

3. Ուղևորի պահանջով մարդատար-տաքսու վարորդի կողմից փոխադրավարձի վճարումը հավաստող փաստաթղթի չտրամադրումը՝

առաջացնում է տուգանք՝ վարորդի նկատմամբ տասը հազար դրամի չափով:

4. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով երթևեկության համար թույլատրելի ոչ ամենակարճ ուղեգծով (եթե ուղևորն այլ ուղեգծով երթևեկելու ցանկություն չի հայտնել) փոխադրումն իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

5. Կազմակերպության կամ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատերերի կողմից առանց մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումների կազմակերպման լիցենզիայի մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրում իրականացնելը կամ թեթև մարդատար ավտոմոբիլը օրենսդրությամբ սահմանված պահանջներով կահավորելը (բացառությամբ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումների կազմակերպման լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին ներկայացված հայտի առկայության դեպքերի)

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

6. Առանց սակաչափիչի (տաքսամետրի) կամ անսարք կամ չստուգաչափված սակաչափիչով մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսանհինգ հազար դրամի չափով:

7. Առանց տարբերանշանների (տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատաձև դեղին և սև տարբերանշանի կամ տաքսի-ծառայություն մատուցող կազմակերպության և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկատվության), գնացուցակի մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

8. Առանց ներդիրի մեջ համապատասխան նշում կատարված սակաչափիչով մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

9. Չլիցենզավորված կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին կամ ֆիզիկական անձի մարդատար տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների կազմակերպման համար պատվերների կազմակերպումը, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

10. Երկդռնանի (չհաշված բեռնախցիկի դուռը), աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ, ձեռքի միջոցով արգելակային կառավարմամբ թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային փոխադրումների կազմակերպումը (իրականացումը)

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Մինչև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար հաջորդ հերթական պետական տուրքը վճարելու օրվան հաջորդող 10-րդ օրը դեղին հիմնագույնի համարանիշը ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանում չհանձնելը և սակաչափիչի (տաքսամետրի) վերաբերյալ սակաչափիչի ստուգաչափման մասին իրավասու մարմնի տված տեղեկանքի (եզրակացության) պատճենը լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման համար լիազոր մարմին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք ՝ տասը հազար դրամի չափով:

12. Սույն հոդվածի 1-11-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

13. Սույն հոդվածում սահմանված դեպքերում առանց մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ուղևորափոխադրումներ կատարելիս վարչական պատասխանատվության ենթարկվում է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, եթե վարչական վարույթի շրջանակում չի պարզվում տվյալ վարչական իրավախախտումը կատարած անձի ինքնությունը:

Հոդված 483. Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների անվտանգությանը ներկայացվող պահանջները չկատարելը

1. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտը առանց տրանսպորտային միջոցի դիմապակու վրա փակցված՝ ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների հերթական վկայագրման ժամկետը նշող կտրոնի կամ ժամկետանց կտրոնով շահագործելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ավտոմոբիլային տրանսպորտի շարժական կազմի տեխնիկական շահագործման վերաբերյալ օրենսդրության պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Տեխնիկական զննություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի կողմից տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիայի պայմանների խախտումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Տեխնիկական զննություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց տեխնիկական զննություն անցնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցին տեխնիկական զննության կտրոն տալը, եթե այդ անսարքության առկայությունը տեխնիկական զննության կտրոն տալը մերժելու օրենսդրությամբ նախատեսված հիմք է՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

5. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում՝ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ժամանակ անսարք արատորոշման սարքավորումներով տրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն անցկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

6. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում՝ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ժամանակ արգելակային համակարգի ստուգման համար նախատեսված հոլովակային ստենդի տրանսպորտային միջոցի սռնու վրա ընկնող առավելագույն զանգվածի գերազանցումը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

7. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում՝ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության աշխատանքները սահմանված ծավալով չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

8. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի կողմից տեխնիկական զննության անցկացման գործունեության նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից պարտադիր կատարման ցուցումները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի կողմից օրենսդրությամբ սահմանված անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

10. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում՝ առանց տեխնիկական զննություն անցնելու համար սահմանված փաստաթղթերի կամ անհամապատասխան անդորրագրերի առկայությամբ տրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն անցկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

11. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում՝ Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթի (կտրոնի) պահպանման, հաշվառման, բացթողման ու օգտագործման կարգը խախտելը, որի արդյունքում սահմանված կարգով ստացված և առկա կտրոնների անհամապատասխանություն է հայտնաբերվում՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով յուրաքանչյուր պակաս կտրոնի համար:

12. Օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթում նշված բոլոր տվյալները օրենսդրությամբ սահմանված սերվերին առցանց համակարգով՝ գրանցամատյանի տեսքով անմիջապես (բացառությամբ կապի խափանման դեպքում) չտրամադրելը կամ թերի տամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

13. Սույն հոդվածի 1-12-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով

Հոդված 484. Փոխադրողի կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունների կատարմանը խոչընդոտելը կամ նրանց կողմից տրված օրինական պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հոդված 485. Չթույլատրված անձի քարշակներով (լոկոմոտիվներով) երթևեկելը

1. Չթույլատրված անձի քարշակներով (լոկոմոտիվներով) երթևեկելը, չվացուցակով չնախատեսված տեղերում (այդ թվում՝ ուղևորների պահանջով) գնացքը կանգնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 486. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները հաղորդակցուղիներով հատման կամ ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտում հաղորդակցուղիների տեղադրման կարգը խախտելը

1. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները հաղորդակցուղիներով հատման կամ ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտում հաղորդակցուղիների տեղադրման կարգի խախտումը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 487. Երկաթուղու օտարման շերտի օգտագործման կարգը խախտելը

1. Երկաթուղու օտարման շերտի սահմաններում շենք-շինությունների կառուցումը կամ տեղադրումը կամ բազմամյա տնկարկների (արհեստական ծառերի) տեղակայումը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Երկաթուղու օտարման շերտի սահմաններում անտառային զանգվածներին հարող վայրերում ցցաչոր ծառերի, թփերի կամ գետնին ընկած չորացած ծառերի ոստերի, խշուրների, հատված մնացորդների կամ այլ դյուրավառ նյութերի կուտակումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Երկաթուղու օտարման շերտի սահմաններում գյուղատնտեսական նշանակության հողերին հարող վայրերում մոլախոտային կամ փայտաթփային բուսականության կուտակումը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

4. Երկաթուղիները հաղորդակցուղիներով հատման կամ երկաթուղիների օտարման շերտում հաղորդակցուղիների տեղադրման օրենսդրությամբ սահմանված կարգը ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի կառավարչի կամ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի սեփականատիրոջ կողմից խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 488. Երկաթուղու պաշտպանական գոտու օգտագործման կարգի խախտումը

1. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմերի խախտմամբ շենք-շինությունների կամ ժամանակավոր ճանապարհների կառուցումը կամ տեղադրումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում ծառաթփուտային բուսականության հատումը կամ ճիմե ծածկույթի հեռացումը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

3. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում այնպիսի աշխատանքների կատարումը, որոնց հետևանքով պաշտպանական գոտիների հողերում կարող են առաջանալ հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում)՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Երկաթուղու պաշտպանական գոտիների սահմանները և կիրառվող սահմանափակումները ցույց տվող նշաններ չտեղադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 489. Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտում բեռների անվթարությունն ապահովելու կանոնները խախտելը

1. Շարժակազմը, բեռնարկղերը և բեռներ փոխադրելու համար նախատեսված մյուս տրանսպորտային միջոցները, ինչպես նաև փոխադրական հարմարանքները վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Բեռնատար վագոնների, ավտոմեքենաների, ավտոմեքենաների կցասայլերի, բեռնարկղերի և բեռների այլ զետեղարանների կապարակնիքներն ու փակիչ հարմարանքները վնասելը, դրանցից կապարակնիքները պոկելը, բեռների առանձին

տեղերը, դրանց փաթեթավորումը, ծրարները, բեռնաբակերի, երկաթուղային կայարանների, բեռնատար ավտոմեքենաների կայարանների, բեռնարկղերի կետերի (հրապարակների) և բեռների փոխադրումների հետ կապված գործառնություններ կատարելու համար օգտագործվող պահեստների ցանկապատերը վնասելը, ինչպես նաև առանց պատշաճ թույլտվության բեռնաբակերի, բեռնարկղերի կետերի (հրապարակների) և վերը նշված պահեստների տարածքում գտնվելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից վաթսուն հազար դրամի չափով:

Հոդված 490. Օդային տրանսպորտով բեռների փոխադրման անվթարության ապահովմանն ուղղված կանոնները խախտելը

1. Բեռնարկղերի կապարակնիքներն ու փակիչ հարմարանքները վնասելը, դրանցից կապարակնիքները պոկելը, բեռների առանձին տեղերը, դրանց փաթեթավորումը, ծրարները, ինչպես նաև օդային տրանսպորտով բեռների փոխադրումների հետ կապված գործառնություններ կատարելու համար օգտագործվող պահեստների ցանկապատերը վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Բեռնարկղերը կամ օդային տրանսպորտով բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցները վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ յոթանասուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 491. Ճանապարհները, երկաթուղային գծանցները և ճանապարհի այլ ինժեներական կառույցները վնասելը, առանց համապատասխան թույլտվության ճանապարհների հետ հատումներ բացելը, երթևեկելի մասը սահմանափակելը, ճանապարհային նշաններ ինքնակամ տեղադրելը կամ ապամոնտաժելը

1. Ճանապարհները, երկաթուղային գծանցները, ճանապարհի այլ ինժեներական կառույցները կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները վնասելը, փակելը, հանելը կամ տեղադրելը, ինչպես նաև ճանապարհային

երթևեկության համար խոչընդոտներ ստեղծելը (այդ թվում՝ ճանապարհի ծածկույթը աղտոտելու, առանց համապատասխան թույլտվության ճանապարհի վրա բացօթյա առևտուր իրականացնելու, շինարարական նյութեր կամ այլ իրեր կամ առարկաներ ճանապարհին թողնելու միջոցով)՝

առաջացնում են տուգանք՝ տասը հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Առանց համապատասխան թույլտվության կամ իրավասու մարմինների հետ համաձայնեցման՝ ճանապարհի վրա շինարարական աշխատանքներ կատարելը, ինչպես նաև ճանապարհների հետ հատումներ բացելը՝

առաջացնում են տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, եթե դրանք խոչընդոտում են վարորդների կողմից լուսացույցները, ճանապարհային նշանները կամ երթևեկության կարգավորման այլ տեխնիկական միջոցները տեսնելուն՝

առաջացնում են տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Ինքնակամ ճանապարհային նշաններ (այդ թվում՝ ինքնաշեն) տեղադրելը կամ ապամոնտաժելը, ինչպես նաև ինքնակամ գծանշումներ կատարելը կամ դրանք փոփոխելը՝

առաջացնում են տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

5. Առանց համապատասխան թույլտվության կանգնակների, արգելապատնեշների կամ այլ պարագաների միջոցով երթևեկելի մասը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

Հոդված 492. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտի պահպանության կանոնները խախտելը

1. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտը վարելը, նրա վրա խոտ հնձելը, տնկիները կտրելը կամ վնասելը, ճիմահողը վերցնելը կամ հողը դուրս հանելը, կոյուղու, արդյունաբերական, մելիորատիվ ջրերը կամ կեղտաջրերը ավտոմոբիլային

ճանապարհների օտարման շերտերի ջրատար կառուցվածքներ կամ հողափոսեր բաց թողնելը առանց ճանապարհային մարմինների հետ համաձայնեցնելու՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտի սահմաններում կատարվող աշխատանքների հետևանքով վնասված ճանապարհի հողապաստառը, ճանապարհային կահավորանքը, տեխնոլոգիական կապը կամ կանաչ տնկիները չվերականգնելը կամ ավելորդ հողը, աղբը, չօգտագործված նյութերը կամ կառուցվածքները չհեռացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 493. Ավտոմոբիլային ճանապարհների և ճանապարհային կառուցվածքների պահպանության կանոնները հողօգտագործողների կողմից խախտելը

1. Ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտին սահմանակից հողամասերն օգտագործողների կողմից ընդհանուր օգտագործման պետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրա գտնվող բնակավայրերի շրջաններում հետիոտնի արահետները կամ անցման կամրջակները նրանց ամրացված հողամասերի սահմաններում կառուցելու, նորոգելու կամ կանոնավոր կերպով մաքրելու պարտականությունները խախտելը, ինչպես նաև նրանց ամրացված հողամասերից դեպի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ տանող ելքատեղերը կամ մերձատար ուղիները, ներառյալ անցման կամրջակները տեխնիկապես սարքին կամ մաքուր վիճակում պահելու պարտականությունները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

Հոդված 494. Ճանապարհների, երկաթուղային գծանցների և ճանապարհային մյուս կառույցների անվտանգության և շահագործման կանոնները խախտելը

1. Ճանապարհները, երկաթուղագծերի անցատեղերը և ճանապարհային մյուս կառուցվածքները երթևեկության համար անվտանգ վիճակում պահելու կանոնները խախտելը կամ երթևեկությունը ճանապարհների առանձին տեղամասերում ժամանակին

արգելելու կամ սահմանափակելու համար միջոցներ չձեռնարկելը, երբ դրանցից օգտվելը սպառնում է երթևեկության անվտանգությանը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

Հոդված 495. Մայրուղային խողովակաշարերը, էլեկտրական ցանցերը վնասելը կամ դրանց հետ կապված կանոնները խախտելը

1. Մայրուղային նավթամթերատարները, գազատարները, այլ մայրուղային խողովակաշարերը, 1000 վոլտ և բարձր լարման էլեկտրական ցանցերը դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը կամ դրանց շահագործման (պահպանության) կամ շինարարության (նախագծման) կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով, պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ յոթանասուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 496. Ռադիոկայանքների տեղակայումը և շահագործումը առանց գրանցման կամ առանց թույլտվության

1. Առանց պատշաճ գրանցման կամ առանց թույլտվության (այն դեպքերում, երբ դա պահանջվում է) ռադիոտրանսլյացիոն հանգույցի տեղակայումն ու շահագործումը, անկախ նրա հզորությունից՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Առանց պատշաճ գրանցման կամ առանց թույլտվության (այն դեպքում, երբ դա պահանջվում է) ռադիոտրանսլյացիոն կետի տեղակայումն ու շահագործումը, անկախ այն ռադիոտրանսլյացիոն հանգույցի գերատեսչական պատկանելությունից, որից նա տեղակայված է՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 497. Ռադիոէլեկտրոնային միջոցների շահագործման, ռադիոհաճախականությունների օգտագործման կանոնները կամ ռադիոճառագայթման և արդյունաբերական թույլատրելի ռադիոխանգարումների նորմերը խախտելը

1. Ռադիոէլեկտրոնային միջոցների շահագործման, ռադիոհաճախականությունների օգտագործման կանոնները կամ ռադիոճառագայթման և արդյունաբերական թույլատրելի ռադիոխանգարումների նորմերը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Իրավաբանական անձի, հիմնարկների, կազմակերպությունների պատասխանատու անձի կամ ֆիզիկական անձի կողմից ռադիոէլեկտրոնային միջոցներն ու բարձր հաճախականության սարքավորումները, ինչպես նաև դրանց հետ կապված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի ներկայացուցիչներին ստուգման համար ներկայացնելուց հրաժարվելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամից տասը հազար դրամի չափով:

Հոդված 498. Ավտոմատ-հեռախոսները, հեռախոսախցիկները, դրամ մանրող սարքերը, փոստային ավտոմատները, աբոնենտային պահարանները և սարքերը վնասելը, հեռախոսացանցին ինքնագլուխ միանալը

1. Ավտոմատ-հեռախոսները, հեռախոսախցիկները, դրամ մանրող սարքերը, փոստային ավտոմատները, աբոնենտային պահարանները կամ աբոնենտային սարքերը վնասելը ՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազարից հինգ հազար դրամի չափով:

2. Հեռախոսները կամ լրացուցիչ սարքերը ինքնագլուխ հեռախոսացանցին միացնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

Հոդված 499. Թրթուրավոր կամ այլ մետաղական օղագոտի ունեցող անիվներով մեքենաներով և մեխանիզմներով Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելը

1. Թրթուրավոր կամ այլ մետաղական օղագոտի ունեցող անիվներով մեքենաներով և մեխանիզմներով ասֆալտբետոնե և սև խճային ու կոպճային ծածկով (կատարելագործված ծածկով) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

Հոդված 500. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու կարգը խախտելը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների կողային առուները ոռոգման նպատակով դիտավորությամբ կամ անզգուշությամբ օգտագործելը, երթևեկամասի և կողնակների վրա դիտավորությամբ կամ անզգուշությամբ կողմնակի առարկաներ թողնելը, չնախատեսված հատվածներում տրանսպորտային միջոցները ճանապարհից դիտավորությամբ կամ անզգուշությամբ դուրս բերելը կամ ճանապարհ մտցնելը, ինժեներական շինությունները (երթևեկելի մասը, կողնակներն ու մայթերը, հետիոտն և հեծանվաուղիները, կամուրջները, ավտոտաղավարները և այլ կառույցները, ճանապարհային նշանները, լուսավորող սարքավորումները, պարսպումներն ու կանաչ տնկիները) դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնասելը կամ աղտոտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասով և բաժանարար գոտիով դիտավորությամբ կամ անզգուշությամբ անասուններ քշելը, ճանապարհի պաշտպանական գոտում դիտավորությամբ կամ անզգուշությամբ առանց մշտական հսկողության անասուն արածեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

Հոդված 501. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքաշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկելը

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքաշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկելը առանց այդ ճանապարհների տնօրինողի թույլտվության՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներով 40 տոննան, իսկ 40 ֆուտանոց ԻՍՕ ստանդարտի բեռնարկղեր փոխադրող տրանսպորտային միջոցների դեպքում՝ 44 տոննան ընդհանուր զանգվածը գերազանցող ծանրաքաշ բեռնատար տրանսպորտային միջոցների երթևեկությունը առանց փոխադրումների իրականացման հատուկ թույլտվության՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր տոննայի համար երեսուն հազար դրամի չափով:

3. Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներով մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը 11.5 տոննան գերազանցող ծանարաքաշ տրանսպորտային միջոցների երթևեկությունը առանց փոխադրումների իրականացման հատուկ թույլտվության՝

առաջացնում է տուգանք՝ ավել յուրաքանչյուր կիլոգրամի համար քսան հազար դրամի չափով:

Հոդված 502. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին մարզական և հրապարակային միջոցառումների անցկացումը, տրանսպորտային միջոցների մուտքերի ու ելքերի կառուցումը, կանաչապատումն ու լուսավորումը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին, առանց դրանց տնօրինողների թույլտվության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնության, մարզական կամ հրապարակային միջոցառումների անցկացումը, կանաչապատումն ու լուսավորումը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին, առանց դրանց տնօրինողների թույլտվության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնության, տրանսպորտային միջոցների մուտքերի ու ելքերի կառուցումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 503. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին երկաթուղային գծանցների տեղակայումը, վերակառուցումը, նորոգումը և վերացումը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին, առանց դրանց տնօրինողների թույլտվության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնության, երկաթուղային գծանցների տեղակայումը, վերակառուցումը, նորոգումը կամ վերացումը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 504. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին կրպակների, տաղավարների կամ այլ կառուցվածքների տեղաբաշխումը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին, առանց դրանց տնօրինողների թույլտվության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնության, կրպակների, տաղավարների կամ այլ կառուցվածքների տեղաբաշխումը, կողնակների վրա ապրանքներ վաճառելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

Հոդված 505. Ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու վարձը չվճարելը

1.Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքարշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև այլ

պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով երթևեկելու համար օրենքով սահմանված վճարը չվճարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազարից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 506. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին նորմաներից պակաս հեռավորության վրա բնակավայրերի, շենքերի և կառուցվածքների շինարարությունը կամ նախագծումը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին, առանց դրանց տնօրինողների թույլտվության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնության, ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելու, ճանապարհների հեռանկարային շինարարության համար պայմաններ ստեղծելու նպատակով նորմաներից պակաս հեռավորության վրա բնակավայրերի, շենքերի և կառուցվածքների շինարարությունը կամ նախագծումը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ տասը հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 507. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների օգտագործման կարգը խախտելը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում, առանց դրանց տնօրինողների, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասով նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համաձայնեցնելու, շենքեր, կառույցներ, ինժեներական հաղորդակցումներ կառուցելը, լեռնահետազոտական և արդյունահանման աշխատանքներ կատարելը, անտառահատում կամ հողածածկույթը վնասող աշխատանքներ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում, առանց դրանց տնօրինողների, ճանապարհային

երթևեկության անվտանգության ապահովման մասով նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համաձայնեցնելու, այնպիսի աշխատանքների իրականացումը, որոնց հետևանքով դիտավորությամբ կամ անզգուշությամբ պաշտպանական գոտիների հողերում կարող են առաջանալ հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 508. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների հողի սեփականատերերի և հողօգտագործողների կողմից իրենց պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների հողի սեփականատերերի և հողօգտագործողների կողմից իրենց պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 509. Փոստային կապի բնագավառում սահմանված պահանջները խախտելը

1. Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ մատուցող անձի կողմից այդ ծառայությունների համար սահմանված սակագների պայմանները կամ սակագների ձևավորման սկզբունքները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ երկու միլիոն դրամ դրամից չորս միլիոն դրամ գումարի չափով:

2. Փոստային կամ սուրհանդակային կապի օպերատորի կողմից առանց հատուկ տարբերանշանի տրանսպորտային միջոցով փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների մատուցումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

3. Փոստային կամ սուրհանդակային կապի օպերատորի կողմից նամակագրական թղթակցության՝ փոստարկղերից հավաքման հաճախականության և փոստային

առաքանիների անցման, դրամական միջոցների փոստային փոխադրությունների իրականացման հսկիչ ժամկետների խախտումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

4. Փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորի կողմից փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների սակագների, փոստային առաքանու առաքման ժամկետների, աշխատանքի ռեժիմի վերաբերյալ մատչելի տեղեկատվություն դիտավորությամբ կամ անզգուշությամբ չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հինգ հազարից տասը հազար դրամի չափով:

5. Փոստային կամ սուրհանդակային կապի օպերատորի կողմից փոստային կապի կամ սուրհանդակային կապի գաղտնիության պահանջի խախտումը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ հիսուն հազարից երկու հարյուր հազար դրամի չափով:

6. Փոստային կամ սուրհանդակային կապի օպերատորի կողմից փոստային առաքանու մշակման և դրամական միջոցների պահպանման համար նախատեսված շինությունները պաշտպանական և հակահրդեհային միջոցներով չկահավորելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 510. Օրենքով սահմանված ռազմատրանսպորտային պարտականությունից խուսափելը կամ դրա իրականացմանը խոչընդոտելը

1. Օրենքով սահմանված ռազմատրանսպորտային պարտականությունից խուսափելը կամ դրա իրականացմանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 511. Ինկասացիոն կազմակերպության կողմից օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները խախտելը

1. Ինկասացիոն կազմակերպության կողմից կանխիկ դրամի ինկասացիա իրականացնելու համար սահմանված նվազագույն զրահապատման չափանիշներին համապատասխանող ավտոտրանսպորտային միջոց չապահովելը կամ մեքենաները սահմանված կարգով չկահավորելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 40.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 512. Հրազենի կիրառման կարգի խախտմամբ կրակելը

1. Հրազենի կիրառման կարգի խախտմամբ կրակելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

Հոդված 513. Ծխախոտային արտադրատեսակի կամ ոգելից խմիչքների իրացման կանոնները խախտելը

1. Ծխախոտային արտադրատեսակի կամ ոգելից (ալկոհոլային) խմիչքների իրացման կանոնների խախտումը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Տասնութ տարին չլրացած անձի ծխախոտ կամ ոգելից (ալկոհոլային) խմիչքներ վաճառելը՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամից վաթսուն հազար դրամի չափով:

3. Տասնութ տարին չլրացած անձի ծխախոտի կամ ոգելից (ալկոհոլային) խմիչքների վաճառքի մեջ ներգրավելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 514. Ծխելն արգելող կանոնները խախտելը

1. Ծխելն արգելված տարածքներում, այդ թվում հասարակական տրանսպորտում կամ փոխադրամիջոցներում, օդակայաններում, ավտոբուսի կամ գնացքի կայարաններում ծխելը, հիմնարկների, կազմակերպությունների շենքերի տարածքներում ծխելը, բացառությամբ ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 515. Ծխախոտի օգտագործման սահմանափակումները խախտելը

1. Հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարի կողմից փակ աշխատանքային տարածքներում ծխախոտի գործածության համար օրենքով սահմանված պայմաններ չստեղծելը կամ ծխելու համար հատկացված տարածքի վերաբերյալ տեսանելի վայրում հայտարարություն չփակցնելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 516. Հասարակական վայրում ոգելից խմիչքներ օգտագործելը

1. Ոգելից (ալկոհոլային) խմիչքներ օգտագործելը հասարակական վայրում, բացառությամբ ոգելից (ալկոհոլային) խմիչքների իրացման թույլտվություն ունեցող հանրային սննդի օբյեկտների՝

առաջացնում է տուգանք՝ տաս հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 517. Անչափահասին ոչ սթափ վիճակի հասցնելը

1. Անչափահասին ոչ սթափ վիճակի հասցնելը՝ ոգելից խմիչք վաճառելու, առաջարկելու եղանակով կամ դրա օգտագործմանն որևէ կերպ հակելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 518. Մոլեխաղերը հասարակական վայրերում

1. Դրամով, առարկաներով կամ այլ արժեքներով մոլեխաղերով զբաղվելը, ինչպես նաև սպորտային և այլ մրցումներում մասնավոր անձի կողմից խաղագումար ընդունելը, եթե առկա չէ համապատասխան գործունեության թուլտվությունը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավմամբ:

3. Մոլեխաղեր կազմակերպելն առանց համապատասխան թուլտվության՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, խաղային պիտույքների, ինչպես նաև խաղագումար հանդիսացող դրամի, առարկաների և այլ արժեքների բռնագրավմամբ:

Հոդված 519. Պոռնկությամբ զբաղվելը

1. Պոռնկությամբ զբաղվելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից յոթանասուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ յոթանասուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 520. Լռությունը խախտելը

1. Գիշերային ժամերին (ժամը 23.00- դրամից 7.00-ն) հասարակական վայրերում լռությունը խախտելը, այդ թվում՝ բարձրաձայն երգելը կամ նվագելը կամ ձայնային

ազդանշաններ տալը կամ աղմուկով ուղեկցվող աշխատանքներ կատարելը, եթե դրանք կապված չեն անհետաձգելի անհրաժեշտության հետ՝

առաջացնում տուգանք՝ ֆիզիկական անձի համար՝ քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի համար՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Գիշերային ժամերին հրագործական արտադրատեսակներ օգտագործելը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի համար՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի համար՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի համար՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի համար՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 521. Հավաքներ անցկացնելու սահմանված կարգը խախտելը

1. Առանց համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով իրազեկելու կամ իրազեկման պայմանների խախտմամբ հավաք անցկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի կամ ղեկավարի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Օրենքով սահմանված ժամկետում իրազեկման մեջ նշված տվյալների փոփոխությունների մասին համայնքի ղեկավարին չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Հավաքը Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերի, դատարանների կամ քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությանը սպառնացող հեռավորության վրա չանցկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կամ ոստիկանության ներկայացուցչի պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Հավաքը «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կամ գազի ստորգետնյա պահեստարանների կամ դրանց սպասարկման կառույցների կամ «Օրբիտա 2» վերգետնյա արբանյակային կայանի անվտանգությանը սպառնացող հեռավորության վրա չանցկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կամ ոստիկանության ներկայացուցչի պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Համայնքի ղեկավարի՝ հավաքը սահմանափակումներով անցկացնելու մասին որոշումը չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի կամ ղեկավարի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Համայնքի ղեկավարի՝ հավաքն արգելելու մասին որոշումը չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի կամ ղեկավարի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Ինքնաբուխ հավաք անցկացնելու մասին ոստիկանությանն անհապաղ չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով;

8. Շտապ հավաքի կազմակերպչի կողմից հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ այդ մասին համայնքի ղեկավարին և ոստիկանությանը չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Ինքնաբուխ և շտապ հավաքների անցկացման համար օրենքով սահմանված առավելագույն ժամկետը ավելի քան 1 ժամով գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ հավաքի կազմակերպչի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

10. Օրվա որոշակի ժամերին (ժամը 22.00- դրամից 8.00-ն) բնակելի շինություններին, հիվանդանոցներին, գիշերօթիկ դպրոցներին և գիշերելու համար նախատեսված այլ շենքերին հարող տարածքներում հավաքների անցկացումը՝ աղմուկով կամ լուսային ազդանշաններով հանգիստը խանգարելով՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով

11. Հավաքի մասնակցի կողմից օրենքով սահմանված իր պարտականությունները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

12. Հավաքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված իր պարտականությունները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

13. Հավաքի կարգադրիչների կողմից տարբերանշաններ չկրելը կամ օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող տարբերանշաններ կրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

14. Հավաքի կարգադրիչ չհանդիսացող անձի կողմից կարգադրիչի տարբերանշաններ կրելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 522. Հատուկ ծառայությունների ակնհայտ կեղծ կանչը

1. Փրկարարական կամ հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների, ոստիկանության, շտապ բուժօգնության կամ մյուս հատուկ ծառայությունների ակնհայտ կեղծ կանչը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 523. Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը, երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը չի հանգեցրել երեխայի առողջության վատթարացման կամ նրա ֆիզիկական կամ հոգեբանական ձևավորման կամ զարգացման խաթարման՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 41.
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՏՆՁԳՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 524. Ոստիկանության ծառայողի կամ ոստիկանության զորքերի զինծառայողի օրինական պահանջը չկատարելը, ինչպես նաև նրան վիրավորելը

1. Հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության ծառայողի կամ ոստիկանության զորքերի զինծառայողի օրինական պահանջը չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Ոստիկանության ծառայողին կամ ոստիկանության զորքերի զինծառայողին հրապարակայնորեն վիրավորելը՝ կապված նրա կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝

առաջացնում է տուգանք՝ քառասուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 525. Արտակարգ իրավիճակների վայրում փրկարարական աշխատանք կատարող փրկարարական ծառայողի օրինական պահանջները չկատարելը, ինչպես նաև նրան վիրավորելը

1. Արտակարգ իրավիճակի, պատահարի վայրում արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման կամ վերացման, մարդկանց կյանքի, առողջության կամ գույքի փրկության փրկարարական աշխատանք կատարող փրկարարական ծառայողի օրինական պահանջը չկատարելը, ինչպես նաև այդ պարտականությունները կատարելու հետ կապված նրան վիրավորելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազարից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 526. Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձի մասին հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը դրանք ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից Բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի հանձնաժողով սահմանված

ժամկետում չներկայացնելը, այն հայտարարագրի լրացման կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներառելը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձի մասին հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ սույն հոդվածում՝ հայտարարագիր) դրանք ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից Բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագիրը դրանք ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Հայտարարագիրը այն ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրի լրացման կամ ներկայացման կարգի խախտմամբ Բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի հանձնաժողով ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիրը՝ այն ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրի լրացման կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Հայտարարագրում այն ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներառելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից չորս հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 527. Ստուգում իրականացնող պաշտոնատար անձի պարտականությունների կատարմանը խոչընդոտելը

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով ստուգում, դիտարկում կամ ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում մուտք գործելն արգելելը կամ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ կամ այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, դիտարկումների կամ ուսումնասիրությունների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը ՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 528. Վարչական մարմնի օրինական հանձնարարականները և պահանջները չկատարելը, պարտականությունների իրականացմանը և մշտադիտարկմանը (մոնիթորինգին) խոչընդոտելը

1. Իրավասու վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից իր իրավասության սահմաններում տրված օրինական հանձնարարականները (կարգադրագրերը, որոշումները, ցուցումները, հրահանգները) կամ օրինական պահանջները չկատարելը կամ իր գործառույթների կամ պաշտոնեական պարտականությունների (աուդիտ, վերահսկողություն, մշտադիտարկում (մոնիթորինգ) և այլն) իրականացմանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ յոթանասուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 529. Արտակարգ դրության օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելը

1. Արտակարգ դրության տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Արտակարգ դրության ժամանակ ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Արտակարգ դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ սննդամթերքի կամ առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման կամ շրջանառության հատուկ կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

4. Արտակարգ դրության ժամանակ գործադուլների կամ իրավաբանական անձի գործունեությունը կասեցնող կամ դադարեցնող այլ միջոցառումների արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Արտակարգ դրության ժամանակ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելը, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Արտակարգ դրության ժամանակ վտանգավոր արտադրությունների, պայթուցիկ, ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական վտանգավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների գործունեության նկատմամբ հատուկ պետական վերահսկողությանը խոչընդոտելը կամ այդ կազմակերպությունների կողմից այն գործունեությունն իրականացնելը, որը կասեցվել է՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Արտակարգ դրության ժամանակ պարետային ժամի սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

8. Զանգվածային լրատվամիջոցների կողմից արտակարգ դրության ժամանակ արգելված հրապարակումների, հաղորդումների թողարկումը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

9. Արտակարգ դրության ժամանակ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի արգելքը, ինչպես նաև թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների և պատրաստուկների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 530. Հրդեհային անվտանգության կանոնները խախտելը

1. Հրդեհային անվտանգության կանոնները խախտելը, եթե արարքը չի պարունակում սույն օրենսգրքով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսանհինգ հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Պետական հրդեհային տեսչության պաշտոնատար անձի կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության պահանջների խախտումները չվերացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով

Հոդված 531. Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակը չհատկացնելը

1. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ կարգով փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակը չհատկացնելը կամ փաստաթղթերի պարտադիր անվճար օրինակն անհատույց չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ տաս հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 532. Զանգվածային լրատվության միջոցների տարածման կանոնները խախտելը

1. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից օրենսդրությամբ սահմանված թողարկման տվյալներ չպարունակող զանգվածային լրատվության միջոց տարածելը կամ նյութական կրիչի վրա թողարկված զանգվածային լրատվության միջոց

տարածելն առանց օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր օրինակներն ըստ պատկանելության ուղարկելու՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

2. Զանգվածային լրատվության միջոցի՝ ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությանն ուղղված հաշվետվությունը լրատվական գործունեություն իրականացնողի կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետում չհրապարակելը՝

առաջացնում է տուգանք՝ հինգ հազար դրամից տասը հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 533. Թանկարժեք մետաղների վերաբերյալ օրենսդրության պահանջները խախտելը

1. Պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների կամ 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձի հաշվեկշռում հաշվառված թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի ջարդոնի հաշվառման օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Պաշտոնատար անձի ի պաշտոնե ստացած թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք քարերից պատրաստված նվերների տնօրինման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու կամ ստանդարտացված ձուլակտորների արտադրության, հարգորոշման, հարգադրոշման կազմակերպման օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երկուհարյուր հազար դրամի չափով:

4. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքի օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով,

5. Ոչ թանկարժեք մետաղների որպես թանկարժեք հարգադրոշումն արգելող օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում՝ մինչև կասեցման համար հիմք հանդիսացող խախտման պատճառի վերացումը:

6. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի, ջարդոնների կամ նախապատրաստվածքների ներմուծման կամ արտահանման օրենսդրությամբ սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում՝ մինչև մեկ տարի ժամկետով:

7. Սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 534. Ուսումնական հաստատություններում հայոց լեզվի գործածման կանոնները խախտելը

1. Ուսումնական հաստատություններում, որոնցում ուսուցման իրականացումը նախատեսված է հայոց լեզվով, այն հայոց լեզվով չիրականացնելը կամ ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության պարտադիր քննությունը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 535. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հիմնարկներում և կազմակերպություններում հայոց լեզվի գործածման կանոնները խախտելը

1.Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ակմ կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործավարությունը հայոց լեզվով չապահովելը, կամ հրապարակային գրվածքները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները կամ միջազգային փոստային ծրարները հայոց լեզվով ձևավորումը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի համար՝ քսան հազար դրամից քառասուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի համար՝ երեսուն հազար դրամից վաթսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի համար՝ հիսուն հազարից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

3. Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա կազմակերպությունների՝ պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը հայոց լեզվով չհամակցելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երկու հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 536. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գովազդները ոչ հայերեն ձևավորելը, գովազդի ընդհանուր պահանջները խախտելը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների կամ կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գովազդների ձևավորման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի համար՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հիսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երկու հարյուր հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 537. Հրապարակային միջոցառումների ժամանակ ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը չապահովելը

1. Համագումարներում, նստաշրջաններում, միջազգային խորհրդաժողովներում, ցուցահանդեսներում, փառատոներում, մամուլի ասուլիսներում կամ այլ հրապարակային միջոցառումներում ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ երկու հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 538. Միջազգային կազմակերպությունների մարմիններում հայոց լեզվի գործածման կանոնները խախտելը

1. Միջազգային կազմակերպությունների մարմիններում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող պաշտոնատար անձի՝ հայոց լեզվով ելույթ չունենալը (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ միջազգային կազմակերպության մարմիններում օտար լեզվով պաշտոնական ելույթ ունենալը պարտադիր է)՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի առավելագույն չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 539. Տեղեկություն չտրամադրելը

1.Տեղեկություն չտրամադրելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սահմանված կարգի խախտմամբ տեղեկություն տրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ տեղեկություն տրամադրելու համար պատասխանատու անձի համար՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 540. Էրոտիկ բնույթի տպագիր հրատարակությունների, տեսաձայներիզների, տեսասկավառակների վաճառքի և վարձույթի կարգը խախտելը

1. Էրոտիկ բնույթի տպագիր հրատարակությունների, տեսաձայներիզների կամ տեսասկավառակների վաճառելիս կամ վարձույթ իրականացնելիս դրանց ցուցադրումը բոլորի համար տեսանելի վայրում՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև մեկ տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հիսուն հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երկու տարի ժամկետով:

Հոդված 541. Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվություն չներկայացնելը կամ չհրապարակելը

1. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունն լիազոր մարմին օրենսդրությամբ սահմանված կարգով չներկայացնելը կամ չհրապարակելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 542. Կուսակցության կողմից օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմնին չտրամադրելը

1. Կուսակցության հրապարակած կամ լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար լիազոր մարմնի պահանջի դեպքում օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը սահմանված ժամկետում չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 543. Կուսակցությանը հատկացումները կանխիկ ձևով կատարելը

1. Կուսակցությանն օրենսդրությամբ սահմանված չափից ավելի դրամական հատկացումներն անկանխիկ ձևով կատարելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հոդված 544. Կուսակցությունների կողմից ստացված նվիրատվությունների տնօրինման կարգը խախտելը

1. Կուսակցությունների կողմից օրենսդրությամբ սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները պետական բյուջե կամ նվիրատուին փոխանցելու՝

օրենսդրությամբ սահմանված պահանջն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 545. Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, աուդիտորի, պահառուի, կառավարչի, նոտարի կամ փաստաբանի կողմից ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը, ինչպես նաև իրենց հասանելի տեղեկատվությունն ապօրինի օգտագործելը

1. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, աուդիտորի, պահառուի, կառավարչի, նոտարի կամ փաստաբանի կողմից օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը ի վնաս այդ կազմակերպության շահերին օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը, կամ իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իր լիազորություններից չբխող արարք կատարելը, որը խոշոր չափերի չհասնող գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության օրինական շահերին՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2.Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, աուդիտորի, պահառուի, կառավարչի, նոտարի կամ փաստաբանի կողմից օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործման հետևանքով իրեն հայտնի դարձած կամ վստահված տեղեկատվությունն ապօրինի օգտագործելը, որը խոշոր չափերի չհասնող գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության օրինական շահերին՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 546. Զենքի հաշվառման կարգը խախտելը

1. Զենքը հաշվառման ներկայացնելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի չափով, տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 547. Բնակչության անձնական հաշվառման տվյալները չներկայացնելը

1. Լիազորված պետական մարմնի պաշտոնատար անձի կողմից բնակչության անձնական հաշվառման տվյալները կամ տվյալների փոփոխությունը բնակչության պետական ռեգիստր վարող մարմնին օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ կարգով չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 548. Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում այդ մասին չհայտնելը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում այդ մասին օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնին չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով:

Հոդված 549. Անձնագիրը կամ նույնականացման քարտը դիտավորությամբ հրապարակայնորեն ոչնչացնելը և վնասելը, ինչպես նաև ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտն ապօրինի վերցնելը և գրավ ընդունելը

1. Անձնագիրը կամ նույնականացման քարտը դիտավորությամբ հրապարակայնորեն ոչնչացնելը կամ վնասելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

2. Ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտն ապօրինի վերցնելը, ինչպես նաև դրանք գրավ ընդունելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից քսան հազար դրամի չափով:

Հոդված 550. Սահմանային շերտ մուտք գործելու սահմանված կարգը խախտելը

1. Սահմանային շերտ մուտք գործելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

Հոդված 551. Օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձի՝ հրավիրողների և գործատուների կողմից բնակության կամ տեղաշարժի օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը

1. Օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում առանց վավերական արտոնագրի կամ մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելը, առանց մուտքի վիզայի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրով սահմանված ժամկետից ավել մնալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկության կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Օտարերկրացուն, քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետություն հրավիրողի՝ հրավիրվողի կեցության ծախսերը, այդ թվում՝ նրա հնարավոր բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու ծախսերը հոգալու մասին պարտավորությունը դիտավորությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

3. Աշխատանքի թույլտվություն չունեցող օտարերկրացուն աշխատանքի ընդունելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 552. Վտանգավոր և այլ թափոնների գործածության օրենսդրության պահանջները խախտելը

1. Վտանգավոր կամ այլ թափոնների փոխադրման համար պատասխանատու անձի կողմից դրանց փոխադրման սկզբի կամ ավարտի մասին իրավասու պետական մարմնին սահմանված ժամկետներում չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

2. Վտանգավոր կամ այլ թափոնների հեռացման համար պատասխանատու անձի կողմից դրանց ստացման կամ հեռացման գործողությունների մասին իրավասու պետական մարմնին սահմանված ժամկետներում չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից ութսուն հազար դրամի չափով, պաշտոնատար անձի նկատմամբ՝ ութսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

3. Թափոններ առաջացնողների կողմից կազմած թափոնների անձնագրերը բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի հետ չհամաձայնեցնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ քառասուն հազար դրամի չափով:

4. Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկը կամ թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունը կամ թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերը բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ քառասուն հազար դրամի չափով:

Հոդված 553. Կրոնական կազմակերպության կողմից կանոնադրությամբ չնախատեսված գործունեությամբ զբաղվելը

1. Հայաստանի Հանրապետությունում գրանցված կրոնական կազմակերպության կողմից իր կանոնադրությամբ չնախատեսված գործունեությամբ զբաղվելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 554. Անձնական տվյալների պաշտպանության կանոնները խախտելը

1. Անձնական տվյալների հավաքման, ձայնագրման, մուտքագրման, համակարգման, կազմակերպման, ուղղման, պահպանման, օգտագործման, վերափոխման, վերականգնման կամ փոխանցման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Անձնական տվյալների ոչնչացնելու կամ ուղեփակելու օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

3. Անձնական տվյալներ հավաքելու ընթացքում անձնական տվյալների սուբյեկտի պահանջով մշակողի կողմից օրենդրությամբ սահմանված տեղեկատվություն չտրամադրելը

կամ տրամադրման կարգը խախտելը կամ չտրամադրելու պատճառներն ու հետևանքները չպարզաբանելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Անձնական տվյալները մշակողի կողմից անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի չծանուցելը կամ ծանուցման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

5. Անձնական տվյալները մշակելու ընթացքում գաղտնագրման միջոցներ չօգտագործելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

6. Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին կամ տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

7. Անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում կամ դրա ավարտից հետո անձնական տվյալներ մշակողների կամ այլ իրավասու անձի կողմից անձնական տվյալների գաղտնիությունը չպահպանելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

8. Սույն հոդվածի 1-2-րդ սահմանված արարքներից որևէ մեկը կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում կամ մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը վերացրել է իր կողմից թույլ տված խախտումը և լիազոր մարմնին ներկայացրել է ապացույցներ այդ մասին:

Հոդված 555. Մարդու իրավունքների պաշտպանի կամ նրան առընթեր խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի օրինական պահանջները չկատարելը

1. Մարդու իրավունքների պաշտպանի կամ նրան առընթեր խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի օրինական պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 556. Վարչական վարույթի իրականացմանը ապօրինի միջամտելը

1. Վարչական վարույթի իրականացմանը խոչընդոտելու նպատակով վարչական վարույթ իրականացնող մարմնի գործունեությանն որևէ ձևով ապօրինի միջամտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում՝ մինչև երկու տարի ժամկետով:

Հոդված 557. Վարչական վարույթի մասնակցի ներկայանալուն կամ ցուցմունք տալուն խոչընդոտելը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին ներկայանալուն կամ ցուցմունք տալուն խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 558. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթով սուտ ցուցմունք, փորձագետի կողմից կեղծ եզրակացություն տալը, թարգմանիչի կողմից սխալ թարգմանություն կատարելը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմին սուտ ցուցմունք տալը կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն տալը կամ թարգմանիչի կողմից սխալ թարգմանություն կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 559. Վարչական իրավախախտման մասին սուտ մատնությունը

1. Վարչական իրավախախտման մասին սուտ հաղորդում տալը, եթե անձը գործել է գիտակցելով, որ իր տրամադրած հաղորդումը կեղծ է՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 560. Վարչական հարկադրանքի օժանդակ միջոցի՝ դաստիարակչական հսկողության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը

1. Անչափահաս կասկածյալի նկատմամբ վարչական հարկադրանքի օժանդակ միջոցի՝ դաստիարակչական հսկողության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 42.
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 561. Կատարողական վարույթի վերաբերյալ օրենսդրությունը խախտելը

1.Հարկադիր կատարողի որոշումները կամ օրինական պահանջները դիտավորությամբ չկատարելը կամ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը խոչընդոտելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Պարտապանի հաշիվների սպասարկում իրականացնող բանկի կամ ֆինանսավարկային այլ կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված՝ պարտապանից դրամական միջոցներ բռնագանձելու պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Հոդված 562. Դատարանի լրացուցիչ որոշումն առանց քննարկման թողնելը

1. Պաշտոնատար անձի կողմից դատարանի լրացուցիչ որոշումն առանց քննարկման թողնելը կամ որոշման մեջ նշված խախտումները վերացնելու ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամ դրամից հարյուր հազար դրամի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով կամ առանց դրա:

ԳԼՈՒԽ 43.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 563. Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը նախընտրական քարոզչություն, ինչպես նաև հանրաքվեի քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարելը

1. Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով նախընտրական քարոզչություն, ինչպես նաև հանրաքվեի քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների եւ հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնող անձի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամից յոթհարյուր հազար դրամի չափով:

Հոդված 564. Ընտրական (հանրաքվեի) հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը

1. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երեք հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 565. Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչական նախաձեռնության կողմից հիմնադրամ չբացելը, կամ հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը

1. Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչական նախաձեռնության կողմից հիմնադրամ չբացելը, երբ դրա բացելը օրենքով սահմանված պարտականություն է, ինչպես նաև հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 566. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը

1. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 567. Ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանը չլրացնելը

1. Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը չլրացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 568. Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման կարգը խախտելը

1. Զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների, թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության

իրականացման համար լրատվական գործունեություն իրականացնողի կողմից հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ, սակագին կամ այլն չապահովելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս հարյուր հազար դրամից վեց հարյուր հազար դրամի չափով:

2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման ժամանակահատվածում հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրականացվող նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության վերաբերյալ լրատվական գործունեություն իրականացնողի կողմից ակնհայտ կողմնակալ կամ գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելը՝

առաջացնում է տուգանք՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ վեց հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

3. Օրենքով սահմանված կարգով որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների ավարտն ընկած ժամանակահատվածը, հեռուստառադիոընկերությունների աշխատակիցների կողմից հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) ընտրությունները լրատվական գործունեություն իրականացնողի կողմից լուսաբանելը կամ հեռուստառադիոհաղորդում (հեռուստահաղորդում կամ ռադիոհաղորդում) վարելը՝

առաջացնում է տուգանք՝ վեց հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

4. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումները (հեռուստահաղորդումները կամ ռադիոհաղորդումները) առեւտրային գովազդով ընդմիջելը՝

առաջացնում է տուգանք՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ երեքհարյուր հազար դրամից հինգհարյուր հազար դրամի չափով:

Հոդված 569. Քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը և քարոզչական նյութ տարածելը

1. Քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելը, ինչպես նաև ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 570. Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների հրապարակման համար սահմանված կարգը խախտելը

1. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս դրանում օրենքով սահմանված տեղեկությունները չնշելը՝

առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկուհարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված արարքը կատարելը հարցում իրականացնող կազմակերպության կողմից՝

առաջացնում է տուգանք՝ երեք հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

3. Քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև՝ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները կամ դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ՝ վեց հարյուր հազար դրամից ութ հարյուր հազար դրամի չափով:

4. Միևնույն ընտրության ժամանակ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամից մեկ միլիոն վեց հարյուր հազար դրամի չափով:

5. Միևնույն ընտրության ժամանակ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը երեք կամ երեքից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված տուգանքի առավելագույն չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 571. Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրողներին դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը)

1. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից անձամբ կամ նրանց անունից բարեգործության անվան տակ կամ որևէ այլ եղանակով ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը)՝

առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով:

2. Բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու մեկ միլիոն դրամից երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 572. Օրենքով սահմանված վավերապայմանների բացակայությամբ քարոզչական տպագիր նյութեր տարածելը

1. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի, տպագրող կազմակերպության կամ տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չպարունակող քարոզչական տպագիր նյութեր տարածելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 573. Քարոզչական պաստառները պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը

1. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորությամբ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 574. Թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները չկատարելը

1.Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական քարոզչության օրենքով սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները՝ դրանում նշված ժամկետներում չկատարելը կամ այդ մասին ընտրական հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը

առաջացնում է տուգանք՝ Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների դեպքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի նկատմամբ՝ հարյուր հազար դրամից երկու հարյուր հազար դրամի չափով, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում՝ թեկնածուի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Միևնույն ընտրության ժամանակ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կրկին կամ դրանից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

ԳԼՈՒԽ 44.
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 575. Զինվորական հաշվառման կանոնները խախտելը

1. Զինապարտների կողմից օրենքով սահմանված զինվորական հաշվառման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

Հոդված 576. Զորակոչային տեղամասերի կցագրման ենթակա անձի ցուցակները սահմանված ժամկետում չներկայացնելը, զինապարտների գրանցամատյան չվարելը

1. Զինվորական հաշվառման ենթակա անձի ցուցակները, ինչպես նաև նրանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալները պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների կամ ուսումնական հաստատությունների իրավասու անձի կողմից

զինվորական կոմիսարիատ ժամանակին կամ սահմանված ձևով չներկայացնելը կամ զինապարտների գրանցամատյան չվարելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո ՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 577. Զինվորական հաշվառման չներկայացած զինապարտներին աշխատանքի (սովորելու) ընդունելը կամ թույլատրելը

1. Ըստ բնակության վայրի զինվորական հաշվառման չներկայացած զինապարտներին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների կամ ուսումնական հաստատությունների կամ դրանց իրավասու անձի կողմից աշխատանքի (սովորելու) ընդունելը կամ թույլատրելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո ՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 578. Զինապարտներին զինվորական կոմիսարիատներ կանչելու մասին նրանց ծանուցելը չապահովելը

1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների կամ ուսումնական հաստատությունների իրավասու անձի կողմից համապատասխան զինվորական կոմիսարիատի պահանջով զինապարտին զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին հնարավոր կամ մատչելի միջոցներով ծանուցումն ապահովելուն ուղղված միջոցներ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 579. Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների պաշտոնատար անձի կողմից զինապարտների հաշմանդամության վերաբերյալ տեղեկություններ ժամանակին չհաղորդելը

1. Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների պաշտոնատար անձի կողմից, որոնց վրա դրված է հաշմանդամ ճանաչված զինապարտների մասին, անկախ հաշմանդամության խմբից, զինվորական կոմիսարիատներին տեղեկություններ հաղորդելու պարտականությունը, այդ տեղեկությունները ժամանակին չհաղորդելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 580. Զինապարտների քաղաքացիական կացության ակտերի գրանցումների փոփոխությունների մասին տեղեկությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների պաշտոնատար անձի կողմից ժամանակին չհաղորդելը

1. Զինապարտների կողմից ազգանունները, անունները, հայրանունները փոխելու մասին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ ծննդյան տարեթվի կամ ծննդավայրի վերաբերյալ փոփոխություններ մտցնելու մասին, ինչպես նաև զինապարտների մահվան գրանցման դեպքերի մասին զինվորական կոմիսարիատներին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների պաշտոնատար անձի կողմից ժամանակին տեղեկություններ չհաղորդելը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ ութսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 581. Վարժական հավաքներից կամ հրամանատարաշտաբային, շտաբային վարժանքներից կամ զորախաղերից խուսափելը

1. Պահեստազորում հաշվառված զինապարտ քաղաքացիների կողմից հրամանատարաշտաբային, շտաբային վարժանքներից կամ զորախաղերից խուսափելը, որը կատարվել է զինկոմիսարիատի կողմից տրված ծանուցագրում նշված ժամկետում առանց հարգելի պատճառների զինկոմիսարիատ չներկայանալու կամ հրամանատարաշտաբային, շտաբային վարժանքների կամ զորախաղերի մեկնելուց

հրաժարվելու կամ հրամանատարաշտաբային, շտաբային վարժանքների կամ զորախաղերի վայրը ինքնակամ թողնելու ձևով՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամից հիսուն հազար դրամի չափով:

ԳԼՈՒԽ 45.
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ, ԳՐԱՆՑՎՈՂ, ՀԱՇՎԱՌՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հոդված 582. Բանկերի և բանկային գործունեության բնագավառում սահմանված պահանջները խախտելը

1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կամ ընդհանուր կապիտալի այլ տարրերը՝ օրենսդրության խախտումներով համալրելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Բանկի, մասնաճյուղի կանոնադրությունը փոփոխելը կամ լրացնելը օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով ՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

3. Բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները խախտելը՝ բացառությամբ պարտադիր պահուստավորման նորմատիվի, կամ այնպիսի գործողություններ (գործունեություն) իրականացնելը, որոնք կարող են վտանգել ավանդատուների կամ բանկի այլ պարտատերերի շահերը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև հինգ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4.Հաշվապահական հաշվառում վարելու կանոնները խախտելը կամ ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգը ու պայմանները խախտելը, և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև հինգ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

5. Բանկի ցուցանիշերի ամփոփ գնահատականը Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկերի ցուցանիշերի ամփոփ գնահատականի չափից ցածր լինելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

6. Բանկը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցման երաշխավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ավանդների հատուցումը երաշխավորելու հիմնադրամին երաշխիքային վճարների վճարումը չկատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

7. Բանկային գործունեությունը կարգավորող օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի կամ բանկի ներքին իրավական ակտերի այլ պահանջները խախտելը, ինչպես նաև բանկի մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները խախտելը, եթե չի պարունակում սույն հոդվածով սահմանված այլ արարքների հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք յուրաքանչյուր խախտման համար բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

8. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կամ 7-րդ մասերով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում բանկի կողմից չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

9. Բանկի ղեկավարի կողմից ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգը ու պայմանները խախտելը, և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք մինչև մեկ միլիոն դրամի չափով:

10. Բանկի կողմից չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելը, ինչպես նաև Կենտրոնական բանկի վերստուգումներին խոչընդոտելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի ղեկավարի նկատմամբ մինչև մեկ միլիոն դրամի չափով:

11. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ կամ 7-րդ մասերով սահմանված արարքները բանկի ղեկավարի կողմից կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք մինչև մեկ միլիոն դրամի չափով:

12. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը բանկի ղեկավարի կողմից կատարելը, ինչպես նաև մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի կամ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը տրման պահին բանկի ղեկավարի կողմից խախտելը ՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք մինչև մեկ միլիոն դրամի չափով:

13. Սույն հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ կամ 12-րդ մասերով սահմանված արարքները բանկի ղեկավարի կողմից դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի ղեկավարի նկատմամբ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ:

14. Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված արարքը բանկի ղեկավարի կողմից կատարելը՝

առաջացնում է տուգանք բանկի ղեկավարի նկատմամբ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ:

15. Բանկի կողմից լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չիրականացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 583. Բանկի ղեկավարի կողմից բանկային գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը խախտելը

1. Բանկի ղեկավարի կողմից պաշտոնավարման ընթացքում անհիմն և վտանգավոր գործունեություն վարելը, կամ անձնական շահերից բխող, բանկի կամ բանկի հաճախորդների շահերին հակասող գործողություններ կատարելը, կամ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելը իրենց ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ բանկի և բանկի հաճախորդների նկատմամբ ստանձնած հավատարմագրային

պարտականությունների նկատմամբ, եթե արարքը չի բովանդակում սույն օրենսգրքի 582-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշները՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

2. Բանկի ղեկավարի կողմից վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին խոչընդոտելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

3. Բանկի ղեկավարի կողմից այնպիսի գործողություններ կատարելը, կամ անգործություն ցուցաբերելը որոնց հետևանքով բանկը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

Հոդված 584. Բանկի կամ բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձի կողմից լիցենզավորման ընթացքում կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման ժամանակ անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ Կենտրոնական բանկ ներկայացնելը

1. Բանկի կամ բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձի կողմից լիցենզավորման ընթացքում կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման ժամանակ անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ Կենտրոնական բանկ ներկայացնելը, ինչպես նաև բանկի կամ բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի երրորդ մասի հաշվետվություններին ներկայացվող պահանջները չիրականացնելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Բանկի կամ բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձի կողմից բանկի ֆինանսական վիճակի վրա անդրադառնող կամ բանկի ավանդատուների կամ այլ պարտատերերի շահերը այլ կերպ վտանգող բանկի հետ

կապված անձանց (իսկ բանկի հետ կապված իրավաբանական անձի դեպքում՝ նաև նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացումը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 585. Բանկի կողմից պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելը

1. Բանկի կողմից պարտադիր պահուստավորումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չպահուստավորված յուրաքանչյուր օրվա համար չպահուստավորված գումարի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով:

Հոդված 586. Բանկային գաղտնիքի հրապարակման, պահպանման, քրեական հետապնդման մարմիններին կամ դատարաններին տրամադրելու սահմանված կարգը կամ բանկային գաղտնիք կազմող տրամադրման ենթակա տեղեկությունների սահմանները խախտելը

1. Բանկային գաղտնիքի հրապարակման, պահպանման, քրեական հետապնդման մարմիններին կամ դատարաններին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու միլիոնից մինչև տասը միլիոն դրամի չափով:

2. Բանկային գաղտնիք կազմող տրամադրման ենթակա տեղեկությունների «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տրամադրման սահմանները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու միլիոնից մինչև տասը միլիոն դրամի չափով:

Հոդված 587. Բանկային ավանդների ներգրավման պահանջները խախտելը

1. Բանկային ավանդների ներգրավման մասին իրավական ակտերի պահանջները բանկի կողմից խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար երկու հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երեք կամ երեքից ավելի անգամ կատարելը ՝

առաջացնում է տուգանք յուրաքանչյուր խախտման համար՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 588. Ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու պահանջները խախտելը

1. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տնօրենի կամ հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կամ հիմնադրամի գործունեությունը կարգավորող այլ օրենքների, կամ դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում հիմնադրամի նկատմամբ, իսկ հիմնադրամի տնօրենի նկատմամբ՝ նախազգուշացում և (կամ) որակավորման վկայականից զրկում կամ տուգանք՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափով:

2. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տնօրենի կամ հիմնադրամի կողմից հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, կամ ֆինանսական և այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները խախտելը, և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում հիմնադրամի նկատմամբ, իսկ հիմնադրամի տնօրենի նկատմամբ՝ նախազգուշացում և (կամ) որակավորման վկայականից զրկում կամ տուգանք՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է հիմնադրամի տնօրենի նկատմամբ՝ որակավորման վկայականից զրկում կամ տուգանք հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափով իսկ հիմնադրամի տնօրենի նկատմամբ՝ նաև որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

Հոդված 589. Սպառողական կրեդիտավորման պահանջները խախտելը

1. Կրեդիտավորողի (կրեդիտ տրամադրող բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ, վարկային կազմակերպություն կամ գրավատուն) կողմից սպառողական կրեդիտավորման մասին իրավական ակտերի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար հարյուր հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար երեք հարյուր հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երեք կամ երեքից ավելի անգամ կատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար հինգ հարյուր հազար դրամի չափով:

Հոդված 590. Ապահովագրության և ապահովագրական գործունեության պահանջները խախտելը

1. Ապահովագրական ընկերության կողմից այնպիսի գործունեություն, իրականացնելը, որը վտանգել է կամ կարող էր վտանգել ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ:

2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները կամ տեխնիկական պահուստները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ:

3. Հաշվապահական հաշվառում վարելու կանոնները խախտելը կամ ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգը ու պայմանները

խախտելը կամ հաշվապահական հաշվառման փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներառելը ՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ:

4. Ֆինանսական կամ այլ հաշվետվություններում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքի հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

5. Ապահովագրական ընկերության գործունեության ցուցանիշերի ամփոփ գնահատականը Կենտրոնական բանկի սահմանած՝ ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշերի ամփոփ գնահատականի չափից ցածր լինելը՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ:

6. Վերահսկվողի գրանցման և (կամ) լիցենզավորման կամ ապահովագրական գործակալների ռեգիստրում գրանցման կամ վերահսկվողի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար անարժանահավատ, կեղծ կամ թերի տեղեկություններ Կենտրոնական բանկ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

7. Ապահովագրության և ապահովագրական գործունեությունը կարգավորող օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև վերահսկվողի ներքին իրավական ակտերի այլ պահանջները խախտելը, ինչպես նաև վերահսկվողի մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները խախտելը, եթե չի պարունակում սույն հոդվածով սահմանված արարքների հատկանիշներ ՝

առաջացնում է նախազգուշացում վերահսկվողի նկատմամբ:

8. Մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունն օրենքով սահմանված ժամկետում ապահովագրական ընկերության կողմից սահմանված կարգով չօտարելը՝

առաջացնում է տուգանք ապահովագրական ընկերության նկատմամբ խախտման յուրաքանչյուր օրվա համար՝ տվյալ մասնակցության անվանական արժեքի մինչև մեկ տոկոսի չափով:

9.«Ապահովագրական»,«Ապահովագրություն»,«Ապահովագրական գործակալ», «Ապահովագրական բրոքեր» բառերի օգտագործման օրենքով սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

10. Սույն հոդվածի 1-ին, 3-րդ, կամ 7-րդ մասով սահմանված արարքները շարունակելը կամ այդ խախտումների վերաբերյալ Կենտրոնական բանկի տրված հանձնարարականը սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը կամ անհրաժեշտ և արդյունավետ քայլեր խախտումների վերացման ուղղությամբ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք յուրաքանչյուր խախտման համար վերահսկվողի նկատմամբ՝ մինչև երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով:

11. Սույն հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կամ 6-րդ սահմանված արարքները շարունակելը կամ այդ խախտումների վերաբերյալ Կենտրոնական բանկի տրված հանձնարարականը սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը կամ անհրաժեշտ և արդյունավետ քայլեր խախտումների վերացման ուղղությամբ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք յուրաքանչյուր խախտման համար վերահսկվողի նկատմամբ՝ մինչև երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով:

12. Սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը շարունակելը կամ այդ խախտման վերաբերյալ Կենտրոնական բանկի տրված հանձնարարականը սահմանված ժամկետում չկատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մինչև երկու միլիոն դրամի չափով:

13. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները կամ տեխնիկական պահուստները՝ տնտեսական նորմատիվների կամ տեխնիկական պահուստների չափերից Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափերի շեղումներով խախտելը ՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

14. Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում խախտումները վերացնելու և (կամ) հետագայում այդպիսի խախտումը չկրկնելու և (կամ) հետագայում այդպիսի խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականը վերահսկվողի կողմից սահմանված կարգով և (կամ) ժամկետում դիտավորությամբ չկատարելը կամ սույն հոդվածի 10-րդ կամ 11-րդ մասերով սահմանված արարքները վերահսկվողի կողմից դիտավորությամբ կատարելը ՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

15. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված արարքը դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

16. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ նույն մասով կայացված որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ շարունակելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

17. Վերահսկվողի կողմից լիցենզիա ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ապահովագրական, վերաապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն չիրականացրելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

18. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կամ 7-րդ մասով սահմանված արարքները վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում:

19. Սույն հոդվածի 18-րդ մասով սահմանված արարքները վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից շարունակելը կամ այդ խախտումների վերաբերյալ Կենտրոնական բանկի տրված հանձնարարականը սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը կամ անհրաժեշտ և արդյունավետ քայլեր խախտումների վերացման ուղղությամբ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

20. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված արարքը վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

21. Սույն հոդվածում և 591-րդ հոդվածում Վերահսկվողը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձն է:

Հոդված 591. Վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից ապահովագրության և ապահովագրական գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը խախտելը

1. Վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից պաշտոնավարման ընթացքում այնպիսի գործողություն իրականացնելը կամ անգործություն ցուցաբերելը, որի հետևանքով վտանգվել են կամ կարող են վտանգվել վերահսկվողի, ապահովադիրների, ապահովագրված անձանց և շահառուների իրավունքները կամ օրինական շահերը, կամ անձնական շահերից բխող, վերահսկվողի ապահովադիրների, ապահովագրված անձանց և շահառուների իրավունքներին կամ օրինական շահերին հակասող գործողություններ կատարելը, եթե արարքը չի պարունակում 590-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

2. Վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին խոչընդոտելը, կամ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելը իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

3. Վերահսկվողի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնց հետևանքով վերահսկվողը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական վնաս՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

Հոդված 592. Ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված ժամկետում օրենքով պահանջվող տեղեկությունները չներկայացնելը, ինչպես նաև ֆինանսավորման համար պարտադիր վճարումներ կատարելու կամ հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացի կարգավորման պահանջները խախտելը

1. Կազմակերպության կողմից օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով պահանջվող տեղեկությունները չներկայացնելը կամ պատասխանատու անձի կամ նրան փոխարինողի վերաբերյալ կատարված յուրաքանչյուր փոփոխության մասին տեղյակ չպահելը՝

առաջացնում է տուգանք մինչև հարյուր հազար դրամի չափով:

2. Ֆինանսական համակարգի հաշտարարին գրասենյակի ֆինանսավորման համար պարտադիր վճարումներ կատարելու պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք մինչև հարյուր հազար դրամի չափով

3. Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացի կարգավորման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք մինչև հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի իմաստով Կազմակերպություն է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կազմակերպություններն են:

Հոդված 593. Վճարահաշվարկային համակարգի մասնակիցների կողմից օրենսդրության պահանջների խախտումը

1. Վճարահաշվարկային համակարգի մասնակիցների (օպերատորի) կողմից վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում վճարահաշվարկային համակարգի մասնակցի նկատմամբ:

2. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգում գործունեություն իրականացնող վճարահաշվարկային համակարգի մասնակցի (բացառությամբ օպերատորի) կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախազգուշացմամբ տրված հանձնարարականը սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը՝

առաջացնում է վճարահաշվարկային համակարգի մասնակցի (բացառությամբ օպերատորի) գործունեության դադարեցում:

3. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում գործունեություն իրականացնող վճարահաշվարկային համակարգի մասնակցի (բացառությամբ օպերատորի) կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախազգուշացմամբ տրված հանձնարարականը չկատարելը կամ սահմանված ժամկետում չկատարելը՝

առաջացնում է վճարահաշվարկային համակարգի մասնակցի (բացառությամբ օպերատորի) գործունեության թույլտվության գործողության կասեցում կամ դադարեցում:

4. Վճարահաշվարկային համակարգի մասնակիցների (օպերատորի) կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ֆինանսական տարվա ընթացքում կրկին կատարելը և հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի Կենտրոնական բանկի կողմից պահանջված փոփոխություն չկատարելը ՝

առաջացնում է վճարահաշվարկային համակարգի մասնակցի գործունեության թույլտվության գործողության կասեցում կամ դադարեցում:

5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ֆինանսական տարվա ընթացքում երրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ վճարահաշվարկային համակարգի մասնակցի և (կամ) օպերատորի նկատմամբ մեկ միլիոն դրամի չափով:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նույն արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ ֆինանսական տարվա ընթացքում չորրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ վճարահաշվարկային համակարգի մասնակցի և (կամ) օպերատորի նկատմամբ երկու միլիոն դրամի չափով:

7. Սույն հոդվածում վճարահաշվարկային համակարգի մասնակիցը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնակիցն է:

Հոդված 594. Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից օրենսդրության պահանջների խախտումը

1. Վճարահաշվարկային կազմակերպության տնտեսական նորմատիվները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր խախտման համար մինչև հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Հաշվապահական հաշվառման կանոնները, հաշվեկշռի, ֆինանսական հաշվետվությունների, այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները խախտելը, և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք կազմակերպության նկատմամբ մինչև հինգ հարյուր հազար դրամի չափով:

3. Վճարահաշվարկային կազմակերպությունների աշխատանքի կանոնակարգի դրույթները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր խախտման համար մինչև հինգ հարյուր հազար դրամի չափով:

4. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից վճարահաշվարկային ծառայությունների մասին օրենքների և իրավական այլ ակտերի խախտումներով մատուցումը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր խախտման համար մինչև հինգ հարյուր հազար դրամի չափով:

5. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից սահմանված կարգով և (կամ) ժամկետում Կենտրոնական բանկի հանձնարարականը չկատարելը՝

առաջացնում է տուգանք կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր խախտման համար մինչև հինգ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ դադարեցմամբ կամ առանց դրա:

6. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կամ 5-րդ մասով սահմանված արարքները վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ շարունակելը կամ այդ խախտումների վերաբերյալ սահմանված կարգով և (կամ) ժամկետում Կենտրոնական բանկի հանձնարարականը չկատարելը ՝

լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում:

7. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերով սահմանված արարքները վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի կողմից կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ մինչև երեք հարյուր հազար դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

Հոդված 595. Գրավատնային գործունեության պահանջները խախտելը

1. Գրավատան կողմից իր անվանման մեջ ապակողմնորոշող՝ գրավատան ֆինանսական վիճակի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ թյուր ենթադրությունների տեղիք տվող բառեր օգտագործելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Գրավատան կողմից վարկային պայմանագրի գրանցամատյանի վարման օրենքով սահմանված պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

3. Վարկավորման վերաբերյալ փաստաթղթերը գրավատան տարածքում՝ մետաղյա պահարանում կամ կողմնակի անձանց սահմանափակ մուտք ունեցող առանձին սենյակում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ այլ բանկում չպահպանելը՝

առաջացնում է նախազգուշացում:

4. Փոքրածավալ իրեր հանդիսացող գրավադրված (ի պահ հանձնված) գույքը գրավատան տարածքում գտնվող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված սենյակի չիրկիզվող պահարաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի համաձայն չպահպանելը՝

առաջացնում է նախազգուշացում:

5. Մեծածավալ իրեր հանդիսացող գրավադրված (ի պահ հանձնված) գույքը սեփականության, վարձակալության կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված, պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերով ապահովված տարածքում չպահպանելը՝

առաջացնում է նախազգուշացում:

6. Գրավատան տարածքի պաշտպանությունը պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերով չապահովելը կամ այդ տարածքը պաշտպանելու նպատակով պահպանության ծառայություն չիրականացնելը կամ դրա իրականացման պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

7. Բանկերից և այլ կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների, մասնակիցներից ներգրավված փոխառությունների և դրանց մուտքը հաստատող փաստաթղթերի, օրենքով սահմանված ապահովագրական պայմանագրերի (գրավ ընդունած շարժական, ինչպես նաև ի պահ հանձնված գույքի ապահովագրություն բնական աղետներից, հրդեհից, կողոպուտից, գողությունից և ավազակային հարձակումից), դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների մասին լիազոր մարմնին՝ համապատասխան պայմանագրերը կնքելուց կամ դրանցում փոփոխություններ կամ

լրացումներ կատարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով չտեղեկացնելը կամ ոչ պատշաճ տեղեկացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

8.Գրավատան կողմից սահմանված կարգով միայն գրավատուից կամ պահատուից գույքի ընդունման սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

9. Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց գործունեության մասին օրենքով սահմանված հաշվետվությունները կամ ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը սահմանված ժամկետներում չներկայացնելը, եթե այն չի պարունակում սույն հոդվածի 33-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ ՝

առաջացնում է նախազգուշացում:

10. Գրավատան կողմից օրենսդրությամբ սահմանված գրավատան և վարկառուի միջև հարաբերությունների պայմանագրային հիմունքներով կարգավորման պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

11. Գրավատան կողմից պարտավորությունների դիմաց իրեն որպես գրավ կամ պահատվության հանձնված 100000 դրամ կամ դրանից ավելի արժողություն ունեցող գույքը՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտումով իրացնելը՝

առաջացնում է տուգանք՝ գրավի վաճառքի գնի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս հարյուր հազար դրամից:

12. Գրավատան կողմից պարտավորությունների դիմաց իրացնել իրեն որպես գրավ կամ պահատվության հանձնված մինչև 100000 դրամ արժողություն ունեցող գույքը՝ գրավատան կողմից հաստատված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված հրապարակային սակարկությունների կարգին ոչ համապատասխան կամ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտումով իրացնելը ՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամի չափով:

13. Գրավատան կողմից վարկը մասնաբաժիններով տրամադրելը առանց յուրաքանչյուր մասնաբաժնի համար նոր պայմանագիր կնքելու կամ վարկն ամբողջությամբ մարելու՝ վարկային պայմանագրով նախատեսված ժամկետի կետանցից հետո վարկային պայմանագրում նշված ժամկետի որևէ փոփոխություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամի չափով:

14. Գրավատան կողմից վարկերը հայկական դրամով՝ կանխիկ կամ անկանխիկ վճարումով, չեկով, քարտով կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային գործիքներով որոշակի ժամկետով չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու միլիոն դրամի չափով կամ գործունեության լիցենզիայի կասեցում մինչև մեկ տարի ժամկետով:

15. Վարկն ամբողջությամբ մարելու օրը վարկառուի կողմից վարկը մարելու հնարավորությունը բացառվելու դեպքում գրավատան հայտարարած աշխատանքային օրերին (ժամերին) փակ լինելու պատճառով վարկն ամբողջությամբ հաջորդ աշխատանքային օրը մարելու համար գրավատան կողմից տոկոսավճարի աճ հաշվարկելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամի չափով:

16. Գրավատունը կողմից յուրաքանչյուր վարկը տրամադրելիս (գույքն ի պահ ընդունելիս) գրավատոմս (անվանական պահպանական անդորրագիր) և (կամ) վարկառուի (պահատուի) վճարների հաշվառման անձնական քարտ «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան չձևակերպելը ՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

17. Գրավատան կողմից վարկավորման վերաբերյալ փաստաթղթերի պայմանագիրը դադարելուց հետո՝ առնվազն երեք տարվա ընթացքում պահպանելու ժամկետը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով:

18. Գրավատան կողմից վարկավորման վերաբերյալ փաստաթղթերի գաղտնիության պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ հիսուն հազար դրամի չափով:

19. Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից գրավատոմսերի կամ անվանական պահպանական անդորրագրերի կամ վարկառուի (պահատուի) վճարների հաշվառման անձնական քարտի ձևակերպման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար քսանհինգ հազար դրամի չափով:

20. Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց գործունեության մասին օրենքով սահմանված հաշվետվություններում (ֆինանսական հաշվետվություններում և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացության մեջ) ներկայացված տվյալներում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայությունը՝

առաջացնում է տուգանք՝ երեսուն հազար դրամի չափով:

21. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ կամ 9-րդ մասերով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

22. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ կամ 9-րդ մասերով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործողության կասեցմամբ կամ առանց դրա:

23. Սույն հոդվածի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ կամ 20-րդ մասերով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում կրկին կատարելը կամ շարունակելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված չափին ավելացրած հինգ հարյուր հազար դրամի չափով:

24. Գրավատան ղեկավարների կողմից սույն հոդվածի 9-րդ կամ 20-րդ մասերով սահմանված արարքները կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով:

25. Գրավատան կողմից հաստատված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված վարկավորման ընդհանուր պայմաններին ոչ համապատասխան վարկային պայմանագրերը կնքելը կամ գրավատան վարկավորման ընդհանուր պայմաններում կատարվող փոփոխություններն ու լրացումները նախքան դրանց կիրառումը լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

26. Գրավատան կողմից իր վարկային միջոցների գոյացումը օրենքով չնախատեսված աղբյուրներից՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

27. Գրավատան կողմից գրավատնային գործունեությունը լիցենզիայում չնշված տարածքում (հասցեում) իրականացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

28. Գրավատան կողմից գրավ ընդունած շարժական գույքի, ինչպես նաև ի պահ հանձնված գույքի՝ բնական աղետներից, հրդեհից, կողոպուտից, գողությունից և ավազակային հարձակումից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ ապահովագրական ընկերությունում ապահովագրություն չիրականացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

29. Գրավատան կողմից կանոնադրությունում տեղի ունեցած փոփոխությունների մասին գրավոր լիազոր մարմնին դրանք իրավական ուժ ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում չտեղեկացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

30. Գրավատան կողմից վարկային միջոցների ձեռքբերման համար պարտատոմսեր կամ այլ արժեթղթեր տեղաբաշխելը, միջոցներ օրենքով չսահմանված կարգով ներգրավելը կամ ապրանքային վարկեր տրամադրելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

31. Գրավատան կողմից վարկառուի կողմից վարկով ստացած գումարի տնօրինման վերաբերյալ որևէ պահանջ ներկայացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

32. Գրավատան կողմից գրավատնային գործունեությունից բացի այլ գործունեություն (գործառնություններ) իրականացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

33. Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության կասեցում:

34. Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված տեղեկություններում (հաշվետվություններում) կեղծ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

35. Սույն հոդվածի 10-20-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ երկու տարվա ընթացքում երրորդ անգամ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

36. Սույն հոդվածի 25-33-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

37. Սույն հոդվածի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ կամ 33-րդ մասերով սահմանված արարքը դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 596. Ապահովված հիպոթեքային պարտատոմսերի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելը

1. Ապահովման միջոցների ռեգիստրի վարման կանոնները խախտելը, ինչպես նաև ռեգիստրում ներառված տեղեկությունների անարժանահավատ լինելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

2. Ապահովման միջոցների ռեգիստրում օրենքի պահանջներին չհամապատասխանող ակտիվներ ընդգրկելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

3. Ապահովման միջոցների՝ օրենքով սահմանված համարժեքության, ինչպես նաև ապահովման միջոցների կազմին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

4. Հիփոթեքային պարտատոմսերի թողարկման առնչությամբ օրենքով սահմանված հաշվետվությունների ներկայացման, հրապարակման կարգը, ժամկետները և պայմանները խախտելը և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

5. Ապահովված հիպոթեքային պարտատոմսերի վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև թողարկողի ներքին իրավական ակտերի պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

6. Թողարկողի կողմից օրենքով բացահայտման ենթակա տեղեկատվությունը չբացահայտելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

7. Թողարկողի կողմից հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի շահերը վտանգող գործողություններ իրականացնելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

8. Կենտրոնական բանկի օրենքով տրված հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը, եթե այն չի պարունակում սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ կամ 10-րդ մասերով սահմանված արարքների հատկանիշներ ՝

առաջացնում է նախազգուշացում՝ թողարկողի և (կամ) նրա ղեկավարի ղեկավարի նկատմամբ:

9. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ կամ 8-րդ մասերով սահմանված արարքները շարունակելը կամ այդ խախտումների վերաբերյալ Կենտրոնական բանկի տրված հանձնարարականը սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը կամ անհրաժեշտ և արդյունավետ քայլեր խախտումների վերացման ուղղությամբ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք՝ թողարկողի ղեկավարի նկատմամբ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա, իսկ թողարկողի նկատմամբ՝ կանոնադրական կապիտալի մինչև մեկ տոկոսը:

10. Թողարկողի ղեկավարի կողմից հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի շահերին հակասող գործողությունների կատարումը կամ իրենց պարտականությունների, այդ թվում՝ հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելը՝

առաջացնում է թողարկողի ղեկավարի նկատմամբ որակավորման վկայականից զրկում:

11. Ապահովման միջոցների նկատմամբ հսկողություն իրականացնող անձ**ի** կամ հիփոթեքային կառավարչի կողմից ապահովված հիպոթեքային պարտատոմսերի վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով և (կամ) որակավորման վկայականից զրկում:

Հոդված 597. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների եւ ապահովագրական ընկերությունների սնանկությունը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների անվճարունակության հիմքերի առկայության դեպքում նշանակված ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է ադմինիստրացիայի ղեկավարի որակավորման վկայականից զրկում:

2. Բանկի լուծարային կառավարչի կողմից լուծարվող բանկի և (կամ) լուծարային կառավարչի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելը կամ լուծարային կառավարչի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափով, և (կամ) որակավորման վկայականից զրկում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 598. Արժեթղթերի շուկան կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելը

1. Արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերով հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և նման այլ փաստաթղթերի ներկայացման կարգն և (կամ) ժամկետները խախտելը կամ այդ փաստաթղթերը ոչ լիարժեք ներկայացնելը ՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ անող անձանց, հաշվետու թողարկողների, կարգավորվող շուկայի օպերատոր հանդիսացող անձանց, Կենտրոնական դեպոզիտարիայի, ինչպես նաև դրանց տնօրենների և այլ ղեկավարների, նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց, նշանակալից մասնակցություն ունեցող անձանց կամ արժեթղթերի շուկայում կատարվող խոշոր գործարքներում ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավված անձանց կողմից Կենտրոնական բանկի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և հաճախականությամբ իրականացվող ստուգումներին խոչընդոտելը կամ դրանց ընթացքում պահանջված փաստաթղթերը Կենտրոնական բանկ չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ որակավորման վկայականից զրկում:

3. Արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի այլ պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք ֆիզիկական անձանց նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ մինչև երկու միլիոն դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ մասերով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը ՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձանց նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ մինչև երկու միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, կամ 4-րդ մասերով սահմանված արարքները շարունակելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձանց նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ և խախտման յուրաքանչյուր օրվա համար մինչև հարյուր հազար դրամի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ մինչև երկու միլիոն դրամի չափով և խախտման յուրաքանչյուր օրվա համար մինչև երկու հարյուր հազար դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

6. Նույն անձի կողմից օրենքով սահմանված ներդրումային ծառայությունները, բացառությամբ արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացման, ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեկից ավելի ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից մատուցելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

7. Սույն հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերով սահմանված արարքները դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

8. Անձի կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնց հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական վնասներ կամ պաշտոնավարման ընթացքում անհիմն և ներդրողների շահերը վտանգող գործունեություն վարելը կամ անբարեխիղճ վերաբերմունք իր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ

մատուցող անձի և նրա հաճախորդների հանդեպ ստանձնած պարտականությունների նկատմամբ դրսևորելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

9. Արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, կարգավորվող շուկայի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնները խախտելը կամ դրանց խախտմամբ գործելը, եթե դրանց արդյունքում կարգավորվող շուկայի օպերատորի կողմից զրկվել է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ նրա անունից կարգավորվող շուկայում գործարքներ կատարելու իրավունքից՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

10. Կարգավորվող շուկայի օպերատորի կամ ներդրումային ընկերության կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հրապարակել ապակողմնորոշիչ, ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր հրապարակելը կամ Կենտրոնական բանկ ներկայացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում (ներդրումային ընկերության նկատմամբ՝ ամբողջությամբ կամ ըստ առանձին ներդրումային ծառայությունների տեսակների):

11. Կարգավորվող շուկայի օպերատորի կամ նրա ղեկավարի կողմից արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև շուկայի կանոնների պահանջները պարբերաբար (երկու և ավելի) կամ էականորեն խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

12. Կարգավորվող շուկայի օպերատորի կամ նրա ղեկավարի կամ ներդրումային ընկերության կամ նրա ղեկավարի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում կամ չափով չկատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

13. Կարգավորվող շուկայի օպերատորի կամ նրա ղեկավարի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կանոնադրական կապիտալի կամ ընդհանուր կապիտալի սահմանաչափերը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափով, խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

14. Ներդրումային ընկերության կամ նրա ղեկավարի կողմից արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, ներդրումային ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները պարբերաբար (երկու և ավելի) կամ էականորեն խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում (ամբողջությամբ կամ ըստ առանձին ներդրումային ծառայությունների տեսակների):

15. Ներդրումային ընկերության կամ նրա ղեկավարի կողմից արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերով և դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափով, խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում (ամբողջությամբ կամ ըստ առանձին ներդրումային ծառայությունների տեսակների):

16. Ներդրումային ընկերության կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լիցենզիա ստանալուց հետո 12 ամիս անընդմեջ ներդրումային ծառայություններ չմատուցելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում (ներդրումային ընկերության նկատմամբ՝ ամբողջությամբ կամ ըստ առանձին ներդրումային ծառայությունների տեսակների):

17. Կենտրոնական դեպոզիտարիայի կամ նրա ղեկավարների կողմից արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների պահանջները պարբերաբար (երկու և ավելի) կամ էականորեն խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

18. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այնպիսի գործողություններ կատարելը կամ անգործություն դրսևորելը, որրի արդյունքում վտանգվում էարժեթղթերի շուկայի բնականոն և իրավաչափ գործունեությունը կամ դրանք հանգեցրել են սահմանված կարգով հրապարակման կամ տրամադրման ոչ ենթակա տեղեկատվության արտահոսքի՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

19. Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության սուբյեկտ չեն ներդրումային ֆոնդերը, ներդրումային ֆոնդի կառավարիչները, դրանց ղեկավարները և դրանց կազմում կամ անունից գործող Կենտրոնական բանկի կողմից որակավորման ենթակա անձինք:

Հոդված 599. Արժութային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելը

1. Կենտրոնական բանկի լիցենզավորած անձանց կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում, իսկ լիցենզավորված անձի ղեկավարին կամ լիցենզավորված անձի աշխատակցի նկատմամբ՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու միլիոն դրամի չափով կամ լիցենզիայի գործողության կասեցում մինչև մեկ տարի ժամկետով, իսկ լիցենզավորված անձի ղեկավարին կամ լիցենզավորված անձի աշխատակցի նկատմամբ՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ կամ երեքից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս միլիոն դրամի չափով կամ լիցենզիայի գործողության դադարեցում, իսկ լիցենզավորված անձի ղեկավարին կամ լիցենզավորված անձի աշխատակցի նկատմամբ՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

4. Արտարժույթի դիլերային առուվաճառք իրականացնող անձանց (արժութային դիլերների), արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց (փոխանակման կետերի), արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձանց կողմից իրենց հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթուղթ (անդորրագիր) չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ չորս միլիոն դրամի չափով կամ լիցենզիայի գործողության դադարեցում, իսկ լիցենզավորված անձի ղեկավարին կամ լիցենզավորված անձի աշխատակցի նկատմամբ՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

5. Սույն հոդվածում չնշված ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ անձանց կողմից սույն հոդվածի համար 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ մասերով սահմանված վարչական իրավախախտումների կատարումն առաջացնում է սույն օրենսգրքի 385-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 600. Ներդրումային ֆոնդերի գործունեության բնագավառում սահմանված պահանջները խախտելը

1. Ներդրումային ֆոնդերի և (կամ) կառավարիչների կազմավորման և (կամ) գործունեության հետ կապված հարաբերությունները, կառավարիչների մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող այլ օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում՝ կորպորատիվ ֆոնդերի (այդ թվում՝ ոչ հրապարակային ֆոնդերի), կառավարիչների կամ պահառուների, (այսուհետ՝ սույն հոդվածում վերահսկվող անձ) դրանց ղեկավարների և դրանց կազմում կամ անունից գործող օրենքով որակավորման ենթակա անձանց նկատմամբ (այսուհետ՝ սույն հոդվածում որակավորման ենթակա անձ):

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք ֆիզիկական անձանց նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ մինչև երկու միլիոն դրամի չափով՝ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքները շարունակելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձանց նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ և խախտման յուրաքանչյուր օրվա համար մինչև հարյուր հազար դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ մինչև երկու միլիոն դրամի չափով և խախտման յուրաքանչյուր օրվա համար մինչև երկու հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Վերահսկվող անձի ղեկավարի կամ որակավորման ենթակա անձի կողմից սույն հոդվածի 1-ին, 2-րդ, կամ 3-րդ մասերով սահմանված արարքները դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է տուգանք մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

5. Վերահսկվող անձի ղեկավարի կամ որակավորման ենթակա անձի կողմից կողմից պաշտոնավարման ընթացքում անհիմն և ներդրողների շահերը վտանգող գործունեություն

վարելը, կամ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելը իրենց ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ Վերահսկվող անձի և նրա հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածով սահմանված այլ արարքների հատկանիշներ՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

6. Վերահսկվող անձի ղեկավարի կամ որակավորման ենթակա անձի կողմից վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին խոչընդոտելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

7. Վերահսկվող անձի ղեկավարի կամ որակավորման ենթակա անձի կողմից կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնց հետևանքով վերահսկվող անձի կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

8. Ներդրումային ֆոնդի պահառուների նկատմամբ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վարչական տույժը կիրառվում է սույն օրենսգրքի 582-րդ հոդվածով սահմանված համապատասխան վարչական իրավավախախտումների կատարման համար:

Հոդված 601. Վարկային կազմակերպությունների գործունեության բնագավառում սահմանված պահանջները խախտելը

1. Վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով, իսկ վարկային կազմակերպության նկատմամբ՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև հինգ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

2. Հաշվեկշռի, ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգը ու պայմանները խախտելը, և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն

դրամի չափով, իսկ վարկային կազմակերպության նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև հինգ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

3. Վարկային կազմակերպության կողմից ֆինանսական գործառնությունները օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով իրականացնելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով, իսկ վարկային կազմակերպության նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերի այլ պահանջները խախտելը, ինչպես նաև վարկային կազմակերպության մասնակցությամբ ֆինանսական խմբի գործունեությունը կարգավորող օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները խախտելը, եթե չի պարունակում սույն հոդվածով սահմանված այլ արարքների հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով, իսկ վարկային կազմակերպության նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մինչև մեկ տոկոսը չգերազանցող չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, կամ 4-րդ, մասերով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը ՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված չափով՝ լիցենզիայի գործողության դադարեցմամբ կամ առանց դրա:

6. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, կամ 4-րդ, մասերով սահմանված արարքները վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է նախազգուշացում և (կամ) տուգանք վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ:

7. Վարկային կազմակերպության կողմից լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային գործունեություն չիրականացնելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

8. Վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից պաշտոնավարման ընթացքում անհիմն և վտանգավոր գործունեություն վարելը, կամ անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ կատարելը, որոնք հակասում են վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության հաճախորդների շահերին, կամ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելը իրենց ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ վարկային կազմակերպության և վարկային կազմակերպության հաճախորդների նկատմամբ ստանձնած հավատարմագրային պարտականությունների նկատմամբ, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածով սահմանված այլ արարքների հատկանիշներ՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

9. Վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից կողմից վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին խոչընդոտելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

10. Վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից այնպիսի գործողություններ կատարելը, կամ անգործություն ցուցաբերելը, որոնց հետևանքով վարկային կազմակերպությունը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

Հոդված 602. Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության բնագավառում սահմանված պահանջները խախտելը

1. Վարկային բյուրոյի կողմից վարկային տեղեկատվության շրջանառությունը և վարկային բյուրոների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի խախտումներով վարկային զեկույց ստացողներին և (կամ) վարկային տեղեկատվության սուբյեկտներին ծառայություններ մատուցելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Վարկային բյուրոյի կողմից հաշվապահական հաշվառման կանոնները, ֆինանսական և այլ հաշվետվությունների ներկայացման և (կամ) հրապարակման կարգն ու

պայմանները խախտելը, ինչպես նաև նշված փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ արտացոլելը՝

առաջացնում է նախազգուշացում:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված նախազգուշացմամբ տրված խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականները նրա կողմից սահմանված ժամկետում չկատարելը ՝

առաջացնում է տուգանք վարկային բյուրոյի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

4. Մեկ տարվա ընթացքում վարկային բյուրոյի կողմից վարկային տեղեկատվության շրջանառությունը և վարկային բյուրոների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը պահանջները կրկին և դրանից ավելի անգամ խախտելը՝

առաջացնում է տուգանք վարկային բյուրոյի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

5. Վարկային բյուրոյին ներկայացվող տարածքային, տեխնիկական, անվտանգության և ծրագրային հագեցվածության պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանք վարկային բյուրոյի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

6. Սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կամ դրանից ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

7. Վարկային բյուրոյին տվյալների բազային ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

8. Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց կողմից վարկային բյուրոյի կողմից վարկային տեղեկատվության շրջանառությունը և վարկային բյուրոների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը պահանջները խախտելը, եթե այն չի պարունակում սույն գլխով սահմանված այլ իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է նախազգուշացում:

9. Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց կողմից վարկային բյուրո սխալ վարկային տեղեկատվություն ներկայացնելը կամ առանց վարկային տեղեկատվության սուբյեկտի համաձայնության

վարկային բյուրոյից վարկային զեկույց ստանալը, եթե այն չի պարունակում սույն գլխով սահմանված այլ իրավախախտման հատկանիշներ՝

առաջացնում է տուգանք լիցենզավորված անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

10. Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք լիցենզավորված անձի նկատմամբ՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

11. Սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 603. Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի գործունեության բնագավառում սահմանված պահանջները խախտելը

1. Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի (այսուհետ՝ սույն հոդվածում բյուրո) գործունեությունը կարգավորող օրենքների, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի կամ իրավական այլ ակտերի պահանջները Բյուրոյի և (կամ) Բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի կողմից խախտելը, ինչպես նաև Բյուրոյի կանոնները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Բյուրոյի և (կամ) Բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի կողմից հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև ֆինանսական կամ այլ հաշվետվությունների հրապարակման կամ ներկայացման կարգն ու պայմանները խախտելը և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքները շարունակելը կամ Կենտրոնական բանկի տրված այդ խախտումների վերաբերյալ հանձնարարականը

սահմանված կարգով և (կամ) ժամկետում չկատարելը կամ անհրաժեշտ և արդյունավետ քայլեր խախտումների վերացման ուղղությամբ չձեռնարկելը՝

առաջացնում է տուգանք բյուրոյի նկատմամբ՝ յուրաքանչյուր խախտման՝ մինչև երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով, իսկ բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի նկատմամբ՝ մինչև մեկ միլիոն դրամի չափով՝ որակավորման վկայականից զրկմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված արարքները սահմանված արարքները բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի կողմից դիտավորությամբ կատարելը՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

5. Բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի կողմից կողմից պաշտոնավարման ընթացքում այնպիսի գործողություն իրականացնելը կամ անգործություն ցուցաբերելը, որի հետևանքով վտանգվել են կամ կարող են վտանգվել բյուրոյի, ապահովադիրների, ապահովագրված անձանց, ապահովագրական ընկերությունների և այլ շահառուների իրավունքները կամ օրինական շահերը, կամ անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ կատարելը, որոնք հակասում են դրանց իրավունքներին կամ օրինական շահերին, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածով սահմանված այլ արարքների հատկանիշներ՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

6. Բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի կողմից վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին խոչընդոտելը, կամ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելը իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

7. Բյուրոյի գործադիր տնօրենի կամ որակավորված այլ անձի կողմից գործողություններ կատարելը, որոնց հետևանքով բյուրոն կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս՝

առաջացնում է որակավորման վկայականից զրկում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, որում առկա բազմաթիվ թերություններից ու բացթողումներից, թերևս կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում դեռևս առկա են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ԽՍՀՄ համակարգը», «սոցիալական սեփականությունը», «սոցիալական օրինականությունը», «վարչական իրավախախտումների մասին ԽՍՀ Միության եւ ՀՀ օրենսդրությունը» եւ այլն.

2. Գործող իրավական կարգավորմամբ հստակեցված չէ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը, քանի որ վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերը ընդունվում են պետական կառավարման համապատասխան ոլորտների կարգավորման համար, ինչի արդյունքում կամ դրանք անհարկի կրկնում են միմյանց, կամ՝ պարունակում են հակասություններ:

3. Ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վերաբերյալ վարչական իրավախախտումներին առնչվող օրենսդրության համակարգում բացակայում են վարույթի համալիր իրավական կանոնակարգում:

4. Բացակայում է տրամաբանական ներքին կապը՝ քրեական և վարչական պատասխանատվության ինստիտուտների միջև, քանի որ հաճախ միևնույն իրավախախտումը միաժամանակ ամրագրված է և որպես վարչական զանցանք, և որպես քրեական հանցագործություն:

5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացումն առայժմ ընթացել է մեկուսացված: Մասնավորապես՝ այդ ոլորտին վերաբերող բազմաթիվ

օրենսդրական ակտեր որդեգրել են միանգամայն նոր դրույթներ, որոնք թեպետ վերաբերում են վարչական պատասխանատվության ինստիտուտին, սակայն որևէ կերպ չեն արտացոլել այդ ինստիտուտի օրենսդրական դրույթները և ամրագրել են միմյանցից խիստ տարբերվող մոտեցումներ:

6. Վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունում առկա են միջազգային իրավական չափանիշներին ակնհայտ հակասող տարաբնույթ ինստիտուտներ, որոնք հարկ է լինում վերացնել նաև միջազգային իրավասու կառույցների միանգամայն իրավաչափ միջամտության արդյունքում (բնորոշ է վարչական կալանքը, որպես վարչական տույժի միջոց կիրառելը):

7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրական ակտերը համակարգված չեն: Ընդ որում այդ թերությունը հատկապես լայն տարածում ունի իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերում, որոնք, որպես կանոն, նվիրված են կառավարման այս կամ այն ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգմանը և պարունակում են վարչական իրավախախտումների վարույթին նվիրված որոշ իրավական նորմեր:

Հիշյալ բացթողումները Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առկա բացթողումների միայն չնչին մասն են կազմում: Գործնականում դրանք անհամեմատ շատ են, ինչը բնորոշ չէ որեւէ իրավական ինստիտուտի:

Օրենսդրության մեջ տեղ գտած լուրջ բացթողումները խիստ բացասաբար են անդրադառնում մարդու իրավունքների և ազատությունների, անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխավորվածության, նշված ոլորտում պետական կառավարման, ինչպես նաև վարչական զանցանքների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացման արդյունավետության վրա: Օրենսդրության հիշյալ բացթողումների պարագայում իրավասու պաշտոնատար անձինք հաճախ ղեկավարվում են ոչ թե կոնկրետ իրավական դրույթներով, այլ՝ հայեցողական որոշումներով: Մտահոգող է նաեւ այն, որ վարույթի համար սահմանված բազմաթիվ անհարկի առանձնահատկությունները գործնականում խիստ բարդացնում են վարույթն իրականացնող մարմինների կողմից իրենց գործառույթների իրականացման բնականոն ընթացքը: Դրա արդյունքում անխուսափելի են դառնում յուրաքանչյուր ոլորտին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն անցնելու լրացուցիչ անհրաժեշտությունը առաջացնող անհարկի ֆինանսական և մարդկային ծախսերը:

Հաշվի առնելով այն, որ հիշյալ խնդիրները բավականաչափ ծավալուն են և համակարգային, անհրաժեշտ է ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք, որը հարիր կլինի իրավական պետության արդի պահանջներին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը: Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում՝

1. Համակարգված սահմանվել են բոլոր վարչական իրավախախտումները, ինչպես նաև ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց պատասխանատվությանն առնչվող դրույթներ.

2. Ամրագրվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի միասնական կանոններ և պայմաններ, ինչը բխում է անձանց իրավահավասարության և տնտեսական ազատ մրցակցության սահմանադրական սկզբունքների պահանջներից.

3. Էականորեն բարեփոխվել է վարչական պատասխանատվության միջոցների շրջանակը, հստակեցվել և փոփոխվել է վարչական տույժերի համակարգը՝ հիմք ընդունելով արարքի համար պատասխանատվության համաչափության սկզբունքը.

4. Ներմուծվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի բնականոն ընթացքն ապահովող և անձանց իրավունքները երաշխավորող իրավական համարժեք ինստիտուտներ: Այդպիսիք են, օրինակ, վարույթի կասեցումը, կարճումը, վարչական հարկադրանքի հիմքերի և կիրառման պայմանների սահմանումը, սուբյեկտների շրջանակի հստակեցումը.

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով ևս կիրառվում են հարկադրանքի միջոցներ և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների այլ սահմանափակումներ, հստակեցվել են դրանց հիմքերը, դրանց կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներն ու պայմանները:

Այսպիսով, այս օրենսգրքի նախագիծը իրենից ներկայացնում է այդ ոլորտի բոլոր իրավահարաբերությունների կանոնակարգմանն ուղղված մեկ ամբողջական կոդիֆիկացված իրավական ակտ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունմամբ բոլոր վարչական իրավախախտումները կընդգրկվեն մեկ միասնական և համապարփակ

օրենսդրական ակտում: Բացի այդ, նոր օրենսգրքի ընդունմամբ էականորեն կբարեփոխվի վարչական պատասխանատվության միջոցների և վարչական տույժերի շրջանակը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի ընդունման դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում: